ՆՈՐ-ԱՅՐ

ԾՈՒԵՐՆԵՐ

ԵՎ ՍԻՊԱԿՆԵՐ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ



ՆՈՐ-ԱՅՐ

ՆՈՎԵԼՆԵՐ ԵՎ ՊԻՊԱԿՆԵՐ

1949

Կազմը, տիտուլը, Ձրոնտիսպիսը և սկզբնագրերը՝ նկարիչ
ՀՈՎՀ. ՇԱՎԱՐՇԻ

НОР-АИР

НОВЕЛЛЫ И ПОВЕСТИ

(На армянском языке)
Армгиз, Ереван, 1949

6 NOV 2011



ՆՈՎԵԼԱՆԵՐ

ԵՐԵՔԸ

1.

Նրանք՝ երեքը պահեստային զորագնդում իրար հանդիպեցին այն օրերին, երբ մեր զորքերը ծանր ու արյունալի կռիվներից հետո, ոտք դրին գերմանական հողը։ Երեքն էլ մասնակցել էին հայրենի հողում գերմանացիների դեմ մղված կռիվներին և իրենց վերքերը բուժել էին տարբեր քաղաքների զինվորական հիվանդանոցներում։

Պահեստային զորագնդում նրանց ընդունեց հետախուզական վաշտի հրամանատար լեյտենանտ Բորոդինովը։

— Ուրեմն դո՞ւք եք գվարդիայի ավագ Նիկոլայ Կոնստանտինովիչ Սոկոլը։

— Ես եմ։

— Լա՛վ, լա՛վ։ Իսկ ձեզանից ո՞րն է Միկոլայ Տարասովիչ Կայլուկը։

—Ես եմ,— ձգվելով պատասխանեց Սոկոլի կողքին կանգնած շարքային զինվորը։

— Դե, հասկանալի է, դուք էլ Իգնատ Սոլոմոնովիչ Պալյանն եք,— ձեռքը բարեկամաբար կարճահասակ երիտասարդի ուսին դնելով, ժպտալով ասաց լեյտենանտը։— Իսկ որևէ գանգատ ունե՞ք։

— Ոչ, ո՛չ մի գանգատ չունենք,— պատասխանեցին երեքով։

— Շատ բարի։ Ուրեմն բոլորովին առողջացել եք. շատ ուրախ եմ։ Կլինեք իմ վաշտում, կդառնաք հետախույզներ։ Իսկ այժմ,

ավագ Սոկոլ, տղաներին առաջնորդիր ճաշարան։ Տեսեք, որ պարապմունքից չուշանաք։

— Լսում եմ,— ձեռքը գլխարկի շքոցին մոտեցնելով՝ պատասխանեց Սոկոլը։

Ավագ Սոկոլը երեսունհինգին հասած, բոլորովին շիկահեր, պնդակազմ մի տղամարդ էր, չափազանց երկար թևերով, որոնք վերջանում էին արևածաղկի տերևների նման լայն դաստակներով։ Նրա աչքերը պարզ էին ամառային՝ անամպ երկնքի նման, որոնք դիմացինին նայում էին ուրախ ժպիտով։ Սոկոլը մինչև պատերազմը աշխատում էր Լենայի ոսկու հանքերում և վարում էր հետախույզ-տեխնիկի համեստ պաշտոնը։ Պատերազմի առաջին իսկ օրը նա կամավորագրվել էր՝ գործող բանակ մեկնելու համար։ Օրշայի մոտ ծանր վիրավորվելուց հետո, երկար ժամանակ բուժվում էր զինվորական հիվանդանոցում։

Միկոլայ Կայլուկը իր կյանքի գրեթե մեծ մասն անց էր կացրել կոմբայնի վրա։ Թխահեր, միջահասակ, լայնալանջ կոմբայնավարը գիրուկ էր։ Նրա լիք դեմքի վրա կարծես մեկը ներս էր հրել խաժ աչքերը։

Իգնատ Պալյանը մեծացել, ուսումն առել էր հայրենի գյուղում։ Տարիների ընթացքում նա շարքային կոլտնտեսականից հասել էր բրիգադիրի աստիճանին և իր երջանկությունը փնտրում էր բերքառատ այգիներում, ուր վաղ գարնանից մինչ խոր աշուն գործում էր իր մարդկանց հետ։ Իգնատը կարճահասակ էր, զարմանալի թուխ դեմքով, սև ու հաճելի աչքերով։

— Սատանան տանի, միթե՞ ինձանից հետախույզ դուրս կգա, — լեյտենանտից բաժանվելուց հետո, թթված դեմքով քրթմնջաց Կայլուկը։

— Այն էլ ինչպիսի՞ն,— հիացմունքով բացագանչեց Նիկոլայ Սոկոլը։

— Բայց ես լավ նշանառու եմ,— արդարանալ ցանկացավ Կայլուկը,— նախ քան վիրավորվելս մեր դասակում ամենամեծ հաշիվը ես ունեի։

— Մի՛ մոռանա, բարեկա՛մ, որ հետախույզը և՛ լավ նշանառու պիտի լինի,— խրատել ցանկացավ Պալյանը։

— Եվ դա ճիշտ է. ճիշտ այնպես, ինչպես և այն, որ ես արդեն

ձկան հոտ եմ առնում,— լայն ռունգերով օդը հոտոտելով ասաց Սոկոլը։

Ճաշարանում ուրախ խոհարարը երեքին ընդունեց հիացմունքով։

— Նոր թռչուններ եք երևում։ Դուք, աղավնյակներս, երբևիցե վառոդի հոտ առե՞լ եք,— աչքերը խաղացնելով հարցրեց նա։

— Ավելի լավ է դու քո անունն ասա,— փնչաց Սոկոլը։

— Սուդակը ձեզ ծառա։ Ամենքն էլ իմ անունը գիտեն։ Նախքան ուտելու մասին մտածելը, դուք պարտավոր էիք իմանալ ուտելիք պատրաստողի անունը։

— Այդ այնքան էլ կարևոր չէ. ուրեմն դու մեզ Սուդակ ձկո՞վ ես պատվելու, — կրկին հարցրեց ավագը։

— Ճիշտ այդպես։ Կասպիական է, հիանալի, աղ դրած։

— Հիմար բան է,— փնթփնթաց Սոկոլը։

— Օհո՜, խիստն եք երևում. այդ ի՞նչ է, դուք ձկա՞նը հիմար անվանեցիք, թե ի՞նձ։

— Ինչպես կամենաս. լեզվիդ զոռ տալու ժամանակը չէ։ Ես, անուշ մարդ, շատ քաղցած եմ։ Առ այս թուղթը և կերակրիր մեզ։

— Ա՜, դուք ավագ եք։ Այդպես, բերնիդ գոլից հասկացա։ Դուք՝ ավագներդ խոհարարներիս սիրում եք միայն այն ժամանակ, երբ քաղցած եք լինում։ Ինչ արած, ես ձեզ կկերակրեմ։ Պատվականիդ համար համով շիլա ունեմ, կարգադրված է տալ նաև ձուկ և, եթե դուք արդեն ձեր բաժին շաքարը չեք կերել, այդ դեպքում կարող եք մի կաթսայիկ էլ թեյ ստանալ,— այդ ասելով խոհարարը Սոկոլի ձեռքից վերցրեց կաթսայիկը.— խնդրեմ, վերցրեք ձեր շիլան, այս էլ հիմար սուդակի գլուխը՝ վզի յուղոտ մսով։ Ներեցեք, ընկեր ավագ, իսկ կարելի՞ է իմանալ ձեր անուն-ազգանունը, կամ թե ինչպե՞ս մեծարեմ ձեզ։

— Նիկոլայ Կոնստանտինովիչ։

— Հրաշալի է։ Իսկ Ազգանո՞ւնդ։

— Սոկոլ։

Խոհարարը թևերը ծալեց կրծքին, ուրախ խաղացրեց մեծ աչքերը։

— Այդ մեկը լավ չէ։ Խոստովանանք լինի, խելոք թռչունի անուն չէ,— ժպիտով ասաց նա, շարունակելով նայել երեքին։

Պալյանն ու Նիկոլայը ուրախ ծիծաղեցին։

— Հատուցե՛ց, հատուցե՛ց. արև՜ս վկա, լա՜վ կծեց,— ուրախությունից կռնչաց Կայլուկը։

— Դեռ մենք կտեսնվենք,— թթված դեմքով ֆշշացրեց Սոկոլը։

— Խնդրեմ, ես միշտ պատրաստ եմ սոված տեսնել ձեզ և դուք, աղավնյա՛կս, ինձանից միշտ կհեռանաք կուշտ ու երջանիկ։

2.

Կուշտ նախաճաշից հետո երեքն էլ քաղցր ղրույցով շարժվեցին զորանոցների կողմը։

— Իսկ ի՞նչ ես կարծում, ավա՛դ, եթե ես դիմեմ լեյտենանտին՝ նա չի՞ փոխադրի ինձ նշանառուների ջոկը։ Այնպե՜ս չեմ ուզում հետախույզ դառնալ... ասաց Կայլուկը։

— Հասկանալի է. դու աղավնյակս ուզում ես ճարպակալվել, դրա համար էլ տհաճ է քեզ հետախույզի դյուրաշարժ կյանքը։ Ի՜նչ արած, դիմիր,— ուսերը վեր քաշելով պատասխանեց Սոկոլը։

— Եվ կփոխադրի՞։

— Կարծում եմ դրա համար շարքի առաջ հանդիմանություն կստանաս։ Ի՞նչ է, եղբայր, դու ուզում ես ամեն ինչ քո քմահաճույքո՞վ լինի։

— Է՜, դու արդեն կատակում ես, իսկ ես քեզ լուրջ բան եմ ասում։

— Կատակել, իհարկե չեմ կատակում և խորհուրդ էլ չեմ տալիս դիմել։

— Մենք այստեղ եկանք միասին,— խոսակցությանը խառնվեց Պալյանը,— լավ կլինի միասին էլ մնանք։

— Հրաշալի՜ միտք։ Դուք կլինեք այն վաշտում, որի ավագ կնշանակվեմ ես։

— Ինչ արած, թող ձեր ասածը լինի,—համաձայնվեց Կայլուկը։

— Այդ լավ է,— ուրախացած խոսեց Սոկոլը։— Մեր բանակին պետք են փորձված մարդիկ։ Գերմանացին խորամանկ է, նրան այնքան էլ հեշտ չէ խաբել։ Եթե ուզում ես նրանից մի բան կորզել, կամ թե թիկունքն անցնել, հարկավոր է սովորել հետա-

խուզության բոլոր ձևերը։ Նախ պետք է այնպես անաղմուկ վերացնել ժամապահին, որ ճանճն անգամ չողջա, թե չէ ավտոմատի երկար հերթազարկերով աղիքներդ մաղի նման կծակծկեն։ Օղորմած տատս, լավ կին էր, ասուած հոգին լուսավորի. նա ինձ այնպիսի բարի խրատներ էր տալիս, որ սիրտս փառավորվում էր. «Նիկոլայ, սիրելիս, իմ անգին թոշնակս,— ասում էր նա ու պտղունցով բռնոթին հասցնում ռունգերի նուրբ տեղը, հետո ապմուկով փոշտում,— քանի-քանի անգամ եմ քեզ ասել կատվի ձարդերը գողացիր այն ժամանակ, երբ մայր կատուն այնտեղ չի լինում, թե չէ կճանկռտի սիրունիկ դեմքդ և դու, աղավնյակս, գյուղում մեն կգաս ուրուրի կտուցից փախած փետրաթափ հավիկի պես» ... Ուրեմն ի՞նչ եմ ուզում ասել։ — Խորամանկ է թշնամին, մենք նրանից ավելի խորամանկ ու հնարագետ պիտի լինենք։ Չեզոքացրու ժամապահին հետախուզության դուրս գալիս, երբ բռնում ես ֆրիցի կոկորդից՝ բերանը խցկիր գելարանակը, որ նրա աչքերը բնից դուրս թռչեն, հետո հանգիստ շարունակիր գործել։

Լենայի ափերին ոսկի փնտրող տեխնիկ Նիկոլայ Սոկոլը, որ պատերազմից առաջ միայն թերթերից գիտեր լայնածավալ ու հացառատ Ուկրաինայի, փոքրիկ ու չքնաղ Հայաստանի մասին, իր մեծ հոգով սիրեց Միկոլայ Կայլուկին և Իգնատ Պալյանին։

— Երբ վերջանա կռիվը, Իգնատ, քեզ հետ կգամ Հայաստան, կտեսնեմ Սևանա սիրուն լիճը, որի մասին այնքան լավ է գրել Գորկին, կդիտեմ ձեր պարերը, կգնանք Զանգեզուր։ Կարծում եմ դու դեմ չես լինի, այնպես չէ՞։

— Դե՞մ։ Այդ ի՞նչ ես ասում։ Ուր ցանկանաս կտանեմ, ախպերս. Նորքի այգիներում քեզ համար այնպիսի խորոված պատրաստեմ, որ մատներդ էլ հետը լպստես...

— Իսկ ի՞նձ։

— Քե՞զ, իմ սիրելի Գայլուկ...

Սոկոլը փոթկում էր։

— Նորից կծեց։

— Միթե՞ վատ բան ասացի,— կեղծ լրջությամբ հարցնում էր Իգնատը։

— Հազար անգամ եմ ասել, ասա՛ Կայլուկ, և ոչ թե Գայլուկ։ Ախր այդ ձեր լեզվով ուրիշ բան է նշանակում։ Ինչո՞ւ ես հոգուս հետ խաղում, տո քարանձավի զավակ։

— Ների՛ր մեղքս, ո՞վ իմ Գայլուկ։

Երեքով էլ ծիծաղում էին։

— Միկոլայ, միթե՞ քեզ պես մարդուն կարելի է մոռանալ,— հանդիսավոր լրջությամբ ասում էր Պալյանը.— մենք երեքս էլ պատերազմից հետո իրար տեսության կգնանք։ Ես կտեսնեմ, թե ինչպես Նիկոլայ Սոկոլը Լենայի ավազներն է խառնում, կամ թե դու կոմբայնիդ հեծած՝ դաշտերն ես հնձում. դուք էլ կտեսնեք, թե ինչպես եմ ես խաղողի այգիներում փարիզյան կանաչով վնասատուներին ջնջում, որ ձեր սեղանների վրայից անպակաս լինի գինին...

3.

Խոր աշնանը, զինվորական գնացքները ետևում թողնելով հայրենի երկիրը՝ պահեստային զորագնդի մարտիկներին հասցրեցին ռազմաճակատային կայարաններից մեկը։

— Ուրեմն, մենք գերմանացո՞ւ հողումն ենք,— ամենից առաջ ցած թռչելով վագոնից բացագանչեց Կայլուկը։

— Այո։ Անիծված գերմանացու հողում,— շուրջը նայելով ասաց Սոկոլը։

— Ինչ եք կարծում, վաղը կլինե՞նք առաջավոր գծում...

— Իհարկե, Իգնա՛տ, մեզ այստեղ բերել են կռվելու և ոչ թե կարկանդակ ուտելու համար։

Եվ զորագնդի մարտիկները քայլեցին պատերազմի ճանապարհներով։

Պրուսական հողը փորփրված էր։ Ճանապարհների աջ ու ձախ կողմերում թափված էին այրված ավտոմեքենաներ, սայլեր, ձիերի դիակներ, որոնց վրա բարակ շերտով նստել էր առաջին ձյունը։

— Ֆրիցի բանը բուրդ է,— ծիծաղելով ասաց Պալյանը։

— Այդպես է, չպիտի մոռանալ՝ փոս փորողը ինքը փոսը կընկնի։

— Տղերք, դուք չգիտեք, թե ինչպե՞ս էր ուզում ինձ կաշառել Ֆրիցը,— ծիծաղելով ասաց Սոկոլը։

— Ինչպես թե կաշառել,— զարմացած ասաց Կալյուկը։

— Պատմիր լսենք,— բացագանչեցին մարտիկները։

Սոկոլը վառելով ծխախոտը՝ սկսեց պատմել.

— Այո, կաշառել։ Դա պատահեց պատերազմի երկրորդ տարում։ Մեր գումարտակը այդ ժամանակ պաշտպանում էր Ն. քաղաքի մատույցները։ Գիշերը մենք գերի վերցրինք հինգ ֆրիցների։ Լույսը բացվելուն պես ինձ իր մոտ կանչեց գումարտակի հրամանատարը։ «Տա՛ր,— ասաց,— ֆրիցներին հանձնիր զորադնդի շտաբը. տե՛ս, զգո՛ույշ եղիր, չլինի ճանապարհին... Ես արդեն հայտնել եմ, որ ուղարկում եմ հինգ գերի, այնպես որ օր ծերությանս խայտառակ չանեք ինձ»։

Հետս վերցնելով երկու մարտիկ, ֆրիցներին առաջներս արած՝ շարժվեցինք։ Ամառ էր։ Սրտիս մեջ զարթնում էին խաղաղ ժամանակվա օրերի հուշերը։ Ա՜խ, մտածում էի. եթե չլինեին այս անիծված ֆաշիստները, մենք չէինք կտրվի տնից ու տեղից, ավեր չէին դառնա մեր գյուղերն ու քաղաքները և կապրեինք երջանիկ կյանքով։ Եվ ահա սրանք գողի նման հարձակվեցին մեզ վրա։ Այսպես մտածում էի ու աչքս չէի հեռացնում գերիներից։ Արդեն բավականին հեռացել էինք մեր դիրքերից. մտանք անտառը և գնում էինք խիտ ծառերի միջով, դուրս եկանք մի լայն բացատ։ Ֆրիցները կանգ առան. նրանցից մեկը բռնելով կողքը՝ նստեց կանաչի վրա։ Մենք ևս կանգ առանք։ Է՜, մտածում էի. երևի սատանան հոգնեց, թող մի փոքր հանգըստանա։ Տղաներն էլ սկսեցին հերթով ծխել։ Սպասեցինք մոտ կես ժամ։ Տեսնում եմ, ֆրիցները տեղից շարժվելու մտադրություն էլ չունեն։ Ես նշանով հասկացրի, որ շարժվեն, իսկ նրանք իրենց լեզվով մրթմրթացին։ Էհե՜, այս ինչ կատակ է, այս ինչ ֆրիցային խաղ է։ Տղաներին աչքով արի, որ մի փոքր մոտենան ու ինքս խզակոթը սեղմեցի նստած ֆրիցի կողքին։ Ֆրիցը ճչաց ու բարձրացնելով ձեռքերը՝ ասաց. «Ռո՛ւս, մի՛ սպանի»։ Ես կատաղած թքեցի։ Վեր կաց, ավանակ, ասացի, չեմ սպանի։ Ոտքի կանգնեցին, նորից բլբլացին իրենց լեզվով, ապա մեկը բավական տանելի ռուսերենով դիմեց ինձ. «Ռուս, բանից երևում է, դու լավ մարդ ես, խնայիր մեզ»...

Արյունը գլուխս խփեց. այ քեզ խայտառակություն։ Գետինը մտի, Նիկոլայ, ասում էի ինքս ինձ, որ թշնամիդ քեզ լավ մարդ է համարում. ուրեմն դու փալաս ես, թրջված հավ։ Ես կատաղությունից դողում էի ողջ մարմնով, կարծես հողը փախչում էր ոտքերիս տակից։ Իսկ նա շարունակում էր դուրս տալ. «...Դուք բաց թողեք

մեզ, մենք մի կերպ կհասնենք մերոնց և ձեր լավության տակը չենք մնա, որպես ընծա մեղանից կստանաք մեկական թեկ ժամացույց։ Քեզ, որպես դրանց մեծավորի, բացի դրանից կտանք տասը հազար մարկի արժողությամբ փիրուզե ակնով մի մատանի»։ Այդ ասելով նա սկսեց քանդել կեղտոտ վիրակապը ու մատից հանեց մատանին. մեկնեց ինձ։ Մյուսները թևներից արձակեցին ժամացույցները։ Լեղուս կապ ընկավ։ Ի՞նչ անեի, չգիտեի։ Սպանեի՞ այդ լրբերին. բայց ի՞նչ պատասխան տայի դումարտակի հրամանատարին ու շտաբի մեծերին։ Դուք կարծում եք գործը դրանով վերջացա՞վ. Ֆրիցը ծամոնի պես կպել էր ինձանից։ «Բարի մարդ, բաց թող մեզ, և մենք չենք մոռանա քեզ»։

Մեր տղաները ծիծաղում էին Ֆրիցի վրա, իսկ ես պայթում էի կատաղությունից։ Էլ չհամբերեցի, հրացանի խղակոթով բլբլացողի մեջքին տալով՝ գոռացի.— Ֆրից, անասուն, քայլիր առաջ, թե չէ աղիքներդ արևին ցույց կտամ։ Վախեցան, շարժվեցին տեղներից։

Քայլում էի ու մտածում աշխարհի բաների մասին։ Ուրեմն դերմանացին մեզանից ջարդ ուտելուց հետո էլ, նորից միտք ունի տիրել մեր երկիրը, դավաճան դարձնել մեզ։

Կես ժամ էլ դեռ չէր անցել, որ կողքը բռնելով, նորից գետին փռվեց էլի նույն Ֆրիցը։ Ի՞նչ անեի, ընկերներս հարցական հայացքով ինձ էին նայում։ Եվ ես որոշեցի վերջ տալ Ֆրիցային խաղին։ Մոտենալով նրան, հրամայեցի ոտքի կանգնել, իսկ նա իր ապակու նման պաղ աչքերով ինձ էր նայում։— Վե՞ր կաց,— գոռացի,— վե՞ր կաց, ոչխա՞ր, ուշանում ենք։— Իսկ նա անշարժ էր։ «Դու մեզ պիտի թողնես, դու լավ մարդ ես» կրկին խոսեց նա։ Հնարս ինչ, թող հինգը չլինի՝ չորսը լինի։ Էլ համբերել չէի կարող, չէ՞ որ համբերությունն էլ իր սահմանն ունի...

Մարտիկները լիաթոք ծիծաղեցին Սոկոլի պատմության վրա, իսկ Պալյանը գլուխն օրորելով՝ ասաց.

— Այդքան էլ համբերությո՞ւն։

— Իսկ ինչո՞ւ գերի վերցնել,— բացագանչեց Կայլուկը, ես այդ չեմ սիրում։ Ճակատում եղածս ժամանակ այդ Ֆրիցներին որին հանդիպել եմ՝ այն աշխարհն եմ ուղարկել։

— Օրենք կա, աղավնյա՛կս,— քնքշանքով ասաց Սոկոլը,— մենք օրենքից դուրս մարդիկ չենք։ Դու լսեցիր, թե ի՞նչպես վրա

պրծավ Պալյանը. «Այդքա՛ն էլ համբերությո՛ւն», իսկ չէ՞ որ հրամայված էր նրանց ձեռք չտալ։

— Այդ ի՞նչ օրենքի մասին է խոսում,— ետևից գոռաց մեկը։ Սոկոլը ետ դառնալով՝ խեթող հայացքով նայեց պեպենոտ դեմքով՝ կարճահասակ մարտիկին ու փնչաց.

— Հորաքույրդ սիրեմ, միթե՞ չգիտես որ, երբ ֆրիցը ձեռքերը վերև է բարձրացնում՝ այդ նշանակում է՝ դու պարտավոր ես գերի վերցնել մահվան սարսուռով դողացող ավանակին։ Ուրիշ բան է այնպես անես, որ նա ժամանակ չգտնի ձեռքերը վեր բարձրացնելու...

Տղաները ծիծաղեցին։ Լեյտենանտ Բորոդինովը Սոկոլի մեջքին խփելով ասաց.

— Չէ՛, Սոկոլ, քեզ հետ դժոխք գնալն էլ հաճելի է։

4.

Զորագունդը հասնելով ռազմաճակատի առաջին գիծը՝ դիրքեր գրավեց գերմանական Տ. քաղաքի հյուսիս-արևմտյան հատվածում։

Երբ կապույտ երեկոն տեղի էր տալիս խավարաշք գիշերին, «պատերազմի աստվածը» հուրը բորբոքելով այրվող տների մեջ՝ դեպի անհուն ու մութ երկինք էր պարզում կրակի հրեղեն լեզուները, որոնց հրացոլքերով դաժան կարմիր էին հագնում ծառերը, ողջ անտառն ու դետը։ Այրվող քաղաքի վրա գերմանացիների դիրքերից անընդմեջ բարձրացող հրթիռների խաղը շարունակվում էր մինչև լուսաբացը։

— Սատանան տանի, մի տեսակ սովորել եմ այդ հրթիռներին,— պառկած խրամատում, ծծելով ծխախոտի դառը ծուխը՝ ասում էր Սոկոլը։

— Իսկ ես այս բոպեին կուզեի տեսնել ֆրիցներին, հարցնել նրանց, թե հիշո՞ւմ են մեր քաղաքների հրդեհները,— փնթփնթաց Կայլուկը։

— Տեսնել ֆրիցին— իհարկե դեռ շատ կտեսնենք, այն էլ մոտիկից, գուցե իրար կոկորդ էլ ծամենք, իսկ ինչ դրության մեջ են նրանք, հիմա, այդ չեմ կարող ասել։ Դրա համար ասենք մասնագետ պիտի լինել, այն էլ հմուտ անասնաբույժ։

— Թքած ֆրիցի վրա, ես այնպես սոված եմ, որ կարծես մեկը խառնում է աղիքներս. եկեք մի բան ուտենք։

— Սկզբունքորեն դեմ չեմ,— կանչեց Պալյանը։

— Իսկ ես օղի ունեմ։

— Օղի՞ ... Ո՞րտեղից։

— Տղերք, միթե՞ դուք չգիտեք, որ ես դրստվել եմ խոհարար Վալոդյա Սուդակի հետ։ Նա օղի չի խմում. անցյալ օրը նա իր բաժինը ինձ տվեց. «Խմիր, անուշ արա, իմ հոգեառ,— ասում էր նա,— մենակ թե քաղցր խոսքերով (հայհոյանքներով) մի դիպչի ազիզ խաթրիս»։ Խմեցի նրա բաժին օղին, կերա շահել կովի տապակած մսից երկու կտոր և խոստացա պատերազմից հետո տեսության գնալ նրա յոթ փթանոց մորաքրոջը։ Այդ Սուդակ կոչվածը, հնարագետ է. «Նիկոլայ Կոնստանտինովիչ,— ասում է նա,— մորաքույրս քեզ շատ սազական է։ Ձերդ ազնվությունը եթե դեմ չէ, հենց վաղը պատկերդ կուղարկեմ նրան, որ սեղան նստելիս շատ ուտելու դեպքում նայի նկարիդ ու փակվի ախորժակը։ Ախր նրան շատ ուտել չի կարելի...»։ Մի խոսքով, նա այսօր ինձ տվեց իր երեք օրվա օղու բաժինը և պատվիրեց ձե՛զ էլ բաժին հանեմ. բացի դրանից կա սուդակյան մի ուրիշ նվեր էլ՝ տապակած մսի մի մեծ կտոր, որը հերիք կանի երեքիս։

Բաժակները, որոնք ոչ այլ ինչ էին, եթե ոչ տափաշշերի կափարիչներ, լցվեցին օղիով։ Նայելով այրվող քաղաքին ու հրթիռների խաղին, նրանք, երեքը սկսեցին հերթով բաժակաճառ ասել։

Ընթրիքից հետո, գետի խուլ վշշոցի տակ, փաթաթվելով մուշտակների մեջ՝ նրանք քուն մտան...

5.

Այրվող քաղաքի համար մղվող ճակատամարտը ընդունում էր արյունալի բնույթ։ Գերմանացիները օրական մի քանի անգամ անցնում էին հակահարձակման, որ վերջանում էր գետափին դիակների, այլանդակված ինքնագնաց հրանոթների ու տանկերի թիվը ավելացնելով. մի քանի օրվա արյունահեղ կռվից հետո զորագնդի հրամանատարն իր մոտ կանչեց հետախուզական վաշտի հրամանատար Բորոդինովին և նրան առաջադրանք տվեց՝ մանրազնին հետախուզել թշնամու ուժերի կուտակումները։

— Ուղարկի՛ր լավագույններին։

— Լսում ե՛մ։

— Զգուշացրո՛ւ, որ ինչ գնով էլ ուզում է լինի՝ թիկունք անցնեն առանց նկատվելու, առանց աղմուկի։

— Կուղարկեմ Երեքին։

— Երեքի՞ն։

— Ճիշտ այդպես, ընկե՛ր գնդապետ։

Գնդապետը մի բոպե լուռ մտածում էր։ Ինքն անձամբ մի քանի անգամ խոսել էր նրանց հետ. փորձված տղաներ էին։

— Հարմար ընտրություն է։ Հայտնիր, որ ես մեծ հույս ունեմ նրանց վրա։

Իրիկնադեմին Երեքը վաշտի հրամանատար Բորոդինովի դիտակետում լսում էին գնդապետի առաջադրանքի մասին։

— Նա, տղերք, մեծ հույս ունի ձեզ վրա։ Զգույշ, շատ զգույշ եղեք. մի կրակոց և ամեն ինչ կորած կլինի, կենդանի կընկնեք թշնամու ձեռքը...

Ուշ երեկոյան նրանք կազմ ու պատրաստ, նստած դիրքում՝ գրույց էին անում ու սպասում գիշերվան։

— Է՛, վերջապես դուրս ենք գալու խրամատներից,— ասում էր Իգնատը,— արևս վկա, չեմ սիրում նստակյաց կյանքը, մարդս ծածկված խմորի պես թթվում է։

— Իսկ իմ սիրտը խառնում է նստակյաց կյանքից այնպես, ինչպես ֆրիցի լեշը տեսնելիս,— ասում էր Սոկոլը։

— Ինձ համար միևնույն է. ուզում է՝ այստեղ, ուզում է՝ այնտեղ,— մեջ մտավ Կայլուկը։

— Մի խոսքով, կոմբայնավար լինելով հանդերձ՝ դարին ու ցորենը չես ջոկում իրարից։

— Այստեղ ոսկեխառ ավազ չկա, որ տոկոսը որոշես,— փրնթփնթում է Միկոլայը,— հարկավոր է մտածել՝ որ կողմից քաղաք մտնենք, որ ծուղակը չընկնենք, թե չէ ինչ ես կաչաղակի պես կըչկըչում։

— Կգնանք գետից հարավ, ամենից հարմարն այդու կողմիցն է։ Այո, այդպես էլ կանենք,— լուրջ տոնով նկատեց Սոկոլը։— Այդ արդեն վճռված է։

— Տղե՛ր, եկեք ասենք այս բոպեիս ով ի՞նչ կցանկանար,— առաջարկեց Իգնատը։

— Ես դիտեմ,— ծիծաղելով ասաց Սոկոլը,— Կայլուկը մտածում է ծոցագրպանում պահած թաշկինակները Գլաշային հասցնելու մասին։ Ախր, տղան սիրահարված է։

— Այ թե դատ՞ր,— դժգոհ ասաց Կայլուկը,— ասենք միթե՞ այդ վատ բան է։ Ինչ օգուտ, որ հետս տանեմ, դուցե ... անտեղի

կորչեն, իսկ եթե Գլաշայի մոտ լինեն՝ նա այնպես խնամքով կպահի և կգործածի այն ժամանակ, երբ կհիշի ինձ. կարբի արցունքոտ աչքերը...

— Դատարկ բաներ ես դուրս տալիս։ Գլաշան ինչո՞ւ պիտի բեզ նման փղի համար լաց լինի. ախր գերմանացու գնդակը չի կարող ծակել ճարպոտ մաշկդ։

— Լա՞վ կծեց,— ծիծաղեց Իգնատը։

— Իսկ դու ի՞նչ կցանկանայիր։

Մթան մեջ ոչ ոք չտեսավ Սոկոլի դեմքին փայլող երանական ժպիտը։

— Ես այս բոպեիս կցանկանայի տեսնել աղջկանս՝ Լյուբկային։ Նա արդեն տասը տարեկան է։ Օ՞, եթե նա այժմ ինձ մոտ լիներ, ես այնպես կարոտով կրծքիս կսեղմեի նրան, կհամբուրեի փոքրիկ թաթիկները, սիրունիկ դնչիկը...

Հետո մի պահ լռեցին։

Երեքից միայն Սոկոլն էր ամուսնացած։ Երկուսն էլ դիտեին Իգնատի սիրո պատմությունը։ Նա սիրել էր մի գեղեցիկ, սևաչյա ուսանողուհու. պատերազմի տարվա գարնանը որոշել էր աշնանը ամուսնանալ, իսկ աշնանը նա արդեն կռվում էր թշնամու դեմ։

Իգնատն ու Սոկոլը գիտեին և Միկոլայ Կայլուկի գլխին եկածը։

Կազանի զինվորական հիվանդանոցում բուժվելու ժամանակ նա սիրել էր Գլաշա անունով գթության քրոջը։

— Իսկ դու ի՞նչ կցանկանայիր,— երկուսով հարցրին Իգնատին։ Իգնատը մի պահ լուռ մտածում էր։ Հետո նա քնքշանքով ասաց.

— Ա՜խ, այնպես մի երգ կուզեի լսել...

— Երգ,— հառաչելով ասաց Միկոլայը,— երգը աղնվացնում է մարդուս սիրտն ու հոգին։

Սոկոլը մեղմորեն սկսեց երգել։ Նրան ձայնակցեցին ընկերները.

Սիրելի ընկերոջը՝
Աղջիկը հայտնում է լուր,
Որ նորբ սերը նրա՝
Չի մեռնի իզուր։
Այն, ինչ խորհում էին,
Բոլորը հիշում է հիմա,
Չի հանդչի վաղաժամ
Կրակը ոսկյա...

Հոգեզմայլ երգին սիրով ձայնակցում էին դիրքերում նստած մարտիկները։

Նրանից ոչ այնքան հեռու, հենված խրամատի թաց պատին, հոգեպարար երգն էր լսում լեյտենանտ Բորոդինովը։ Այդ երգը հարազատ էր և նրա սրտին. «Իմ ոսկե կրակ հեռավոր»... ո՞րքան լավ է ասված։

Ոչ ոք չնկատեց, թե ե՞րբ դիրքերից դուրս եկան ու խավարի մեջ սուզվեցին Երեքը...

6.

Անցնելով գետը, սողեսող հասնելով այրվող քաղաքին՝ երեքով մի լսողություն դարձած՝ որսում էին նույնիսկ չորացած խոտերի ու մացառների շշունջը քամու հետ։

Սոկոլի հրամանով Պալյանը թողնելով իր ծանր բեռը՝ ձեռքի նռնակներով լի տոպրակը, շարունակեց սողալ առաջ՝ դեպի քաղաքային այգին։

Հենվելով հաստաբուն մի ծառի՝ նա զննում էր շուրջը։ Ընդամենը հինգ քայլ էր նրան բաժանում գերմանական ժամապահից։ Յուրտ էր։ Թշնամու ժամապահը կծկված շարունակում էր մի ուղղությամբ ետ ու առաջ քայլել։ Աղմուկով քիթը մաքրելուց հետո նա հենվեց ծառին։ Պալյանի դաշույնը մի ակնթարթ փայլեց հրդեհների հրացոլքից։

Թաքնվելով ծառի տակ՝ նա նայում էր շուրջը։ Ոչ մի շարժում։

— Վերջացավ, գնանք,— մոտենալով Սոկոլին շշնջաց նրա ականջին։

Երեքը փաթաթված ձյունափայլ խալաթների մեջ, սողալով առաջ շարժվեցին։ Քաղաքի փողոցներն ամայի էին։ Ընտրեցին բարձրը շենքերից մեկը և անաղմուկ բարձրացան ձեղնահարկը։

— Հազալը, քիթ սրբելը կամ փռշտալը հետախույզի թշնամիներն են,— զգուշացրեց Սոկոլը։ Եվ ձեղնահարկում պառկած՝ նրանք սպասում էին լուսաբացին, որը քիչ-քիչ ցրում էր խավարը։

Լույսը բացվելու հետ գործի անցան։ Սոկոլը հայացքը չէր հեռացնում այրվող քաղաքից, ոչ հեռու կատարվող գործողություններից։ Բեռնատար մեքենաները նոր փորած դիրքերի մոտ անընդհատ թափում էին երկաթ, ցեմենտ։ Տասնյակ քարշակներ բերում

էին հրանոթներ։ Սոկոլը երբեմն նշումներ էր կատարում ծնկներին փռած փոքրիկ քարտեզի վրա։ Իգնատը ոտքերի ծայրերի վրա պտտվում էր հոլի պես, նշում դոտերի, կրակակետերի տեղերը՝ թշնամու պաշտպանության երկրորդ գծում, որի մասին մինչ այդ հետախուզությունը ոչ մի բան չէր կարողացել պարզել... Կայլուկը հսկում էր նրանց խաղաղ աշխատանքը, երբեմն հայհոյում անրզգույշ շարժումներ անող Իգնատին։

— Կամաց, կամաց, քարանձավի ծնունդ,— ատամների արանքներից թշշում էր նա։

Մինչ կես գիշեր Երեքը մնացին ձեղնահարկում։ Կես գիշերին իջան թաքստոցից, կորան խավարի մեջ...

7.

Երեքի վերադարձին սպասում էին լարված ու անհամբեր։ Գնդապետը մի քանի անգամ հարցում էր արել նրանց մասին։

Երբ ներկայացան՝ լեյտենանտ Բորոդինովը գրկեց նրանց.

— Կեցցեք տղերք, ամոթով չթողեցիք ջահելիս։

Գնդապետը նրանց ընդունեց սառը, պաշտոնական։ Լսելով Սոկոլի զեկույցը՝ նա երեքին էլ հրավիրեց նստելու։

— Ուրեմն, ամեն ինչ հաջո՞ղ անցավ։

— Ճիշտ այդպես, ընկեր գնդապետ,— ոտքի կանգնելով պատասխանեց Սոկոլը։

Խստաբարո գնդապետը մանրամասնորեն ծանոթացավ նրանց կատարած հետախուզության արդյունքներին, նշումներ անելով դեմը փռված քարտեզի վրա, ապա ամփոփելով կատարած աշխատանքը, ոտքի կանգնելով շտաբի պետին հրամայեց.

— Գվարդիայի ավագ Սոկոլին, շարքայիններ Կայլուկին և Պալյանին ներկայացնել կառավարական պարգևի։

— Լսում եմ։

— Գվարդիայի ավագ Սոկոլին ներկայացնել սպայական կոչում շնորհելու։

Տիրեց կարճատև հանդիսավոր լռություն։

— Այդպես է, տղաներ,—նայելով իր դեմը կանգնած Երեքին՝ ասաց գնդապետը,— Հայրենիքը գիտե գնահատել իր զավակներին։ Հայրենիք, միթե՞ հայրենիքից սուրբ բան կա աշխարհում։ Հայրե-

նիքի սերը չէ՞ արդյոք, որ մեզ հասցրեց աշխարհակործան այս որոշը։ Հայրենիքի սերն է, որ մեզ ուժ, կամք է տալիս փշրելու թշնամուն։ Հայրենիքի սերն է, որ ձեզ բոլորիդ դարձրել է մի մարդ և կռվի հանել մեր անկախությունն ու երջանկությունը խլել ցանկացող թշնամու դեմ։ Գնացե՛ք, հանդստացե՛ք, իմ քաջեր, վաղը կտեսնեք այն հոյակապ գործի արդյունքը, որն այնքան ճշտությամբ կատարել եք դուք։

Երբ Երեքը վերադարձան խրամատները, բառեր չէին գտնում արտահայտելու իրենց համակած զգացմունքը։

— Ես այս բանը չեմ մոռանա, չեմ մոռանա երբեք,— կրկնում էր Պալյանը։

— Շատ բան եմ տեսել— և լավ, և վատ, բայց այսօրվա տեսածս ուրիշ էր։ Ախ, մեկը հարցնող լինի, ի՞նչ ենք արել։ Մեր պարտքը կատարեցինք, և ահա պարգև, գովասանական խոսքեր և թշվառիս աստիճանի բարձրացում,— ասում էր Սոկոլը։

— Այդ բոլորը լավ է, բայց սրտովս չի, որ սպա ես դառնալու,— խոր հոգոց հանելով ասաց Կայլովը։

— Իսկ ինչո՞ւ,— հարցրեց Պալյանը։

— Քարանձավի զավակ, միթե՞ այդ հասկանալի չէ։ Երբ նա մի աստղանի դառնա, ձեռք կքաշի մեզանից։

— Ուր էլ գնամ, ես անբաժան կմնամ ձեզանից,— ծխախոտը վառելով ասաց Սոկոլը,— Օ՜, ինչպես կուզեի ապրել, ապրել հաղթանակի համար և տեսնել իմ աղջկան՝ Լյուբկային։

8.

Այդ օրվա առավոտը ռազմի դաշտի վրա բացվեց տարօրինակ լռությամբ։ Այրվող քաղաքից չէր լսվում ոչ մի պայթյուն։ Մեր դիրքերում մարդիկ դեռ զբաղված էին նախաճաշով, կարծես մոռացել էին երեկվա ահեղ մարտը, երբ գերմանական հետևազորը տանկերի պաշտպանությամբ մեծ հարձակման անցավ, նույնիսկ կարողացավ անցնել գետը։ Միայն արյունոտ սվինամարտից հետո ետ քաշվեցին գերմանացիները։

Ամպամած առավոտը կախվել էր ռազմի դաշտի ու այրվող քաղաքի վրա, կարծես դորշ ու ծանր ամպերը տաքանում էին հրսկայական խարույկից։

Երեքը զարթնեցին սովորականից շատ ուշ։ Նրանց շրջապա-

տեցին ընկերները։ Հրելով նրանց շրջապատողներին, հաստատամարմին խոհարարը հայտնվեց Սոկոլի կողքին և ձեռքերը կրծքին դնելով ու խոնարհ գլուխ տալով սվսվաց.

— Ձերդ պայծառափայլությունը ողջ և առո՞ղջ է։

Սոկոլը խեթ նայելով նրան՝ ատամների արանքից տնքաց.

— Էլի ի՞նչ է պատահել։ Չլինի՞ խժռել ես մեր նախաճաշը։

— Սոկոլիկս, ես մեղավոր չեմ։ Սերժանտը այսօր էլ ձեզ հանել է մատակարարումից, այնպես որ կարող ես ախորժակ չպահել. ինչ արած։

— Քեզ էլ, սերժանտին էլ գրողի ծոցը կուղարկեմ,— ահագին բռունցքը նրա դեմքին մոտեցնելով, քնկոտի ձայնով մռլտաց Սոկոլը.— դու պարտավոր ես կերակրել մեզ։ Իմացիր, որ եթե չկերակրես՝ քեզանից կարկանդակներ կպատրաստեմ։

— Այդպե՞ս, շատ բարի, ուրեմն նեղանում ես,— ասաց Սուդակը։— Ես միայն զարմանում եմ մի բանի վրա, թե այդ ինչպե՞ս է, որ մինչև օրս դիմացել եմ ձեռքիդ և ինչպե՞ս է, որ կնիկդ չի բաժանվել քեզանից։

— Բլբլում է թռչնիկը,— երեսը սրբելով ասաց Կայլուկը։

Սուդակը աչքով անելով Պալյանին, գրպանից հանեց օղու լիքը շիշը և մեկնեց Սոկոլին, ապա խոր գլուխ տալով՝ երկեցիկ ձայնով ասաց.

— Համեցեք, իմ մեծավոր, իմ տեր, արքայական սեղան կըպատրաստեմ քեզ համար։ Միթե՞ շոր գլուխդ կարծում էր, որ աղատ ծովերի սուդակը ծարավ կթողնի Երեքին։

Այդ ասելով նա իր կողքին կանգնած օդնականից վերցրեց մսով լի ամանը՝ կանգնեց Սոկոլի դիմաց։

Մարտիկները լիաթոք ծիծաղեցին, գովում էին Սուդակին նրա հնարամտության համար։

— Լավ խաղաց Սոկոլի հոդու հետ։

— Ազատ ծովերի սուդակ, հո՜-հո՜-հո՜։ Այ թե հնարեց։

— Սատանայից երկու օր առաջ է ծնվել։

Նրանք ծիծաղում էին, կատակում, ախորժակով ծխում։ Լսում էին Սուդակի ուրախ պատմությունները։

Երբ Երեքը նստեցին նախաճաշի, Սուդակը տափաշշի կափարիչի մեջ օղի լցնելով, ասաց Սոկոլին.

— Կենացդ։ Ես օղի չեմ խմում, բայց այս մեկը կխմեմ։ Աստ-

ված տա՝ միշտ տեսությանդ արժանանամ։ Առանց քեզ տխուր է անցնում խոհարարիս օրը։ Զմոռանաս մորաքրոջս։ Արժանանաս նրա տեսությանը։

Սոկոլը ժպտաց, իր լիքը բաժակը մոտեցրեց նրա բաժակին և քնքշանքով ասաց.

— Ազատ ծովերի դու հիմար սուդակ, լավ կանեիր, եթե մի անգամից ցույց տայիր օղին ու միսը։ Իմ մտքով չէր էլ անցնի քեզանից կարկանդակներ պատրաստել։ Ես ասածուն կխնդրեի, որ կյանքդ խոհանոցի կողքին անցկացնեիր։

Գոհ ու երջանիկ էին երեքը։ Կեսօրից առաջ նրանց մոտ եկավ լեյտենանտ Բորոդինովը։

— Ստացա՞ք նվերս։

— Ի՞նչ նվեր,— հարցրեց Սոկոլը։

— Սուդակի միջոցով ուղարկել էի մի շիշ օղի։ Մի՞թե նա ձեզ չի հանձնել։

— Շնորհակալ ենք, ստացանք,— ասաց Սոկոլն ու կծեց շրթունքը։

Բորոդինովի գնալուց հետո նա հայհոյում էր Սուդակին։

— Տեսա՞ք թե ինչ խաղ խաղաց մեր գլխին Սուդակ կոչված սատանան. չասաց, որ օղին լեյտենանտն է ուղարկել մեզ։ Իսկ ես հիմարս, քիչ մնաց համբուրեի նրան, կարծում էի, թե նա բարի է։ Ոչինչ, ես դեռ կխոսեմ նրա հետ...

9.

Կեսօրին սկսվեց հրանոթային այնպիսի կրակ որի նմանը մինչև այդ չէին տեսել մարտիկները։ Գետինը դողում, ցնցվում էր զարկերից։ Կրակի մի հեղեղ էր դա, որ խուժեց այրվող քաղաքը։ Սկսեցին անկանոն խփել նաև գերմանական հրանոթները։ Ահեղ հռնդյունով կարծես գետնից դուրս թռան ու քաղաքի վրա կախվեցին սավառնակները։ Հրանոթային զարկերին խառնվեցին ռումբերի պայթյունները։

Սոկոլը նայում էր ծխի ու հրի մեջ պարուրված քաղաքին։

— Մեր նշած կետերն են ռմբակոծում,—դոռաց նա Պալյանի ականջին։

— Տեսնում եմ, տեսնում,— պատասխանեց Պալյանը։

— Է՞, ինչպես կուզեի տեսնել հիմա ինչ են անում ֆրիցները։ Սոկոլը բարձրաձայն ծիծաղեց.

— Առանց ոտքերի՝ նրանց գլուխները օդում վերվերի են պարում։

Կայլուկը նայում էր վառվող քաղաքին ու մտածում ընկերների մասին։ Իր համար այժմ մեծ ցավ է բաժանվել նրանցից։ Նա շատ կցանկանար տեսնել Սոկոլին սպայական ուսադիրներով, այդ կգոհացներ իր սիրտը, բայց երբ մտածում էր բաժանման մասին, սիրտը կտրտվում էր ցավից։ Երևի Սոկոլը ինքն էլ ուրախ չէ բաժանման համար, նա էլ իր ու Իգնատի պես կտանջվի։

Սոկոլը նայում էր այրվող քաղաքին ու մտածում Իգնատի և Կայլուկի մասին։ Այո, ինքը սիրեց նրանց, սիրեց իր հոգու ողջ կարողությամբ։ Պատերազմը,— խորհում էր նա,— դաժան փորձություն է մարդու համար։ Ջինվորի շարքաշ, վտանգներով լի կյանքը անքակտելի կապերով մարդկանց իրար է կապում։ Սոկոլը պատրաստ է նրանց հետ դժոխք էլ գնալ, մահն էլ նրանց հետ սարսափելի չէ։ Միթե՞ ինքն Իգնատին ու Միկոլային իր հարազատ եղբայրներից ավելի չի սիրում։

Հրանոթների որոտը գնալով ավելի էր ուժեղանում, իսկ սավառնակները որս տեսած ուրուրի նման ճախրում էին գերմանացիների պաշտպանության երկրորդ գծի վրա։

Մինչ երեկոյան մութը շարունակվեց թշնամու դիրքերի ռմբակոծությունը։

10.

Գիշերվա կեսին հետախուզական վաշտի երկու դասակ դվարդիայի կրտսեր լեյտենանտ Սոկոլի հրամանատարությամբ գետն անցնելով՝ ուղղվեց այրվող քաղաքի կողմը, հետախուզություն մարտով, որի նպատակն էր խուճապ առաջ բերել թշնամու թիկունքում, շոշափել նրա պաշտպանության թույլ օղակը։ Սոկոլի սիրտը դողում էր հաճույքից։ Ուրախ էին նրա անբաժան ընկերները՝ Կայլուկն ու Իգնատը։ Նրանք հպարտ էին իրենց ընկերով։ Թփուտների միջով սողեսող առաջ էին գնում մարտիկները։ Մոտեցել էին գերմանական դիրքերին։ Կայլուկը առաջ անցավ, նրան հետևեցին Պալյանն ու էլի երկուսը։

Խոր լռության մեջ անցնում էին բոպեները։ Տրվեց ազդանշան. օդը սասանելով պայթեցին նռնակները։ Սոկոլը ոտքի կանգնելով գոչեց.

— Հառա՜ջ...

Հետախույզները սլացան առաջ։ Հանկարծակիի եկած գերմանացիները դուրս թռան դիրքերից և կարծելով, թե ընկել են շրջապատման մեջ, բարձրացրին ձեռքերը։

— Խփի՛ր, անցի՛ր առաջ,— խզված ձայնով կանչում էր Սոկոլը։

Հետախույզները լցվեցին քաղաքի փողոցները։

— Իմ ետևից դեպի քառահարկ շենքը,— հրամայեց Սոկոլը։

Հարկավոր էր հնարագիտություն և երիտասարդ հրամանատարը վճռեց.

— Հինգ հոգի մի գնդացիրով այս մուտքի վրա, երկուսը վերևում, երեքը ներքև։ Կայլուկ, տասը հոգու հետ երկու գնդացիրով բարձրացիր չորրորդ հարկը։ Իգնատ, յոթ հոգու հետ երրորդ հարկ, երկու ջոկ դիմացի շենքը, քսան հոգի նրա կողքի շենքը, մնացածները իմ ետևից՝ այս շենքի երկրորդ հարկը։ Կազմեցեք շրջաձև պաշտպանություն, կրակեցեք նպատակակետերին։ Կայլուկ, չորրորդ հարկից գնդացիրների կրակով և նռնակով կտրիր թշնամու՝ շենքին մոտենալու ուղիները։ Եղեք զգույշ և համարձակ, մենք պետք է մեզ վրա բևեռենք թշնամու ուշադրությունը՝ մինչև գլխավոր ուժերի մոտենալը, չէ որ նրանք այժմ գիտեն թշնամու թույլ օղակը, լսում էք, արդեն հարձակվում են։ Մարշ տեղներդ։

11.

Այրվող քաղաքում, լուսաբացից առաջ, գնալով ուժեղանում էին համազարկերը։ Գերմանացիները խելակորույս շարունակում էին վիճտրել քաղաք թափանցած խիզախ հետախույզներին, որոնք տարբեր շենքերում շրջաձև պաշտպանություն կազմելով՝ լռել էին և ուշադիր հայացքով հետևում էին թշնամու ուժերի տեղաշարժերին։

Երբ մեծ շենքի մոտից մարտական պատրաստությամբ անցնում էր թշնամու մի հետևակ գունդ, հետախույզները Սոկոլի հրամանով գնդացիրներից, ավտոմատներից և ավտոմատ հրացան-

ներից կրակ բաց արեցին։ Սկսվեց անօրինակ իրարանցում։ Հանկարծակի եկած գերմանացիները թողնելով զենքը՝ փախուստի դիմեցին։ Շենքի չորս հարկերից էլ փախչողների խմբերի մեջ էին նետվում նռնակներ՝ սալահատակների վրա փռելով հարյուրավոր մարդկանց։ Գերմանացիները ուշքի գալով՝ դիրքավորվեցին կիսավեր շինություններում, նրանց օգնության շտապեցին հրետանավորները։

Երկրորդ հարկի դիմացի կիսավեր շենքի պատուհանից իր դունչը ցցեց հաստոցավոր մի գնդացիր և սկսեց դիպուկ հերթաղարկեր բաց թողնել հետախույզների վրա։ Պատուհանի մոտ պառկած Սոկոլը սողեսող անցավ պատի կողմը և կրակող գնդացրի կողմը շպրտեց նռնակների մի կապոց։ Լսվեց ուժգին պայթյուն։ Սոկոլը նայեց բոցերով բռնկված շենքի կողմը. այլևս չէր երևում ծանր գնդացրի դունչը։ Հրակոծությունն ու պայթյունները քաղաքի տարբեր մասերում գնալով ուժեղանում էին։ Շենքի երկրորդ հարկում բռնկվեց հրդեհ, որի ծուխը փոշու հետ լցվում էր կովողների աչքերը։ Թշնամու հրետանին ճշտելով իր կրակը, մեկը մյուսի ետևից լռեցնում էր հետախույզների կրակակետերը։ Շենքի մեջ սկսեցին պայթել արկերը։ Արկի բեկորով վիրավորվեց կրտսեր լեյտենանտ Սոկոլը։ Պառկած տեղում նրա վերքը կապեց մարտիկներից մեկը։ Չորրորդ հարկում ևս իր թևերը պարզեց հրդեհը. սենյակից սենյակ էր վազում Պալյանը և մարտիկներին խրախուսում մինչև վերջ դիմադրել շենքը ներխուժել փորձող գերմանացիներին։

— Պինդ կացեք, տղերք, կես ժամից մերոնք այստեղ կլինեն,— կանչում էր նա։

— Զդադարե՛լ կռվելուց,— գոռում էր Սոկոլը,— կռվե՛լ մինչև վերջին շունչը։

Սոկոլի դեմքը սևացել էր ծխից։ Վերքը կապելուց հետո նա սողեսող մոտեցավ լռած գնդացրին և սկսեց կրակել այդու ծառերի միջով շարժվող գերմանացիների վրա։

— Առաջին հարկը գրավված է,— Սոկոլի ականջին ճչաց կապավորը։

Գերմանացիները շենքի առաջին հարկը գրավելուց հետո կրակի տակ էին պահում երկրորդ հարկը տանող աստիճանները և կրակի պաշտպանության տակ մագլցում էին վեր։

— Երրորդ և չորրորդ հարկերից թող բոլորը գան ինձ մոտ,— կապավորին կարգադրեց Սոկոլը։

Եվ այդ պահին հարձակվող գլխավոր ուժերի հետ քաղաքը թափանցած լեյտենանտ Բորոդինովի հայացքի տակ, վեր սլացավ կարմիր հրթիռը։ Այդ նրանք էին՝ Սոկոլի մարտիկները, որ ազդարարում էին իրենց գտնված տեղը։

— Տղերք, իմ ետևից,— գոչեց լեյտենանտը և վազեց առաջ։

— Նրանք կան, կովում են, հասնենք նրանց,— գոչեցին մարտիկները։

Մինչ Բորոդինովն իր մարտիկների հետ օգնության կհասներ, շենքի ներսում արդեն երրորդ հարկը թափանցած գերմանացիները օղակել էին այն սրահը, ուր գտնվում էին հետախույզները։ Վայրենի աղաղակ բարձրացնելով՝ նրանք գոռում էին.

— Ռո՛ւս, հանձնվի՛ր։

Շենքը կլանող բոցերի մեջ երկու կողմերը իրար հասան ու սկսվեց արյունահեղ մի ձեռնամարտ, ուր մարդիկ իրար կոկորդ էին ծամում, դաշույններով կտրատում իրար։ Սոկոլը հանկարծ երերաց գլխին հասցված ծանր հարվածից։ Բերանը լցվող տաք ու թանձր արյունը թքելով, նա տեսավ իրեն հարվածող գերմանացուն, որը փռվեց Իգնատի հարվածից։ Իգնատը աչքերը արյուն կոխած՝ հարվածում էր աջ ու ձախ։ Նրանից ոչ այնքան հեռու Կայլուկը մի քանի մարտիկների հետ կրակում էր իրենց մոտենալ ցանկացող գերմանացիների վրա։

Գոտեմարտը գնալով ավելի արյունալի էր դառնում։ Եվ հանկարծ այդ պահին դրսից լսվեց իրար հաջորդող հրաձգություն, որը մոտենալով լցվեց այրվող շենքը։ Պալյանը առաջինը նկատեց բոցերի միջից վազողներին։ Նա ճանաչեց լեյտենանտ Բորոդինովին.

— Մերո՛նք, լեյտենա՛նտը, խփե՛ք իժերին։

— Մերո՛նք,— գոչեցին կովողները։

— Մերո՛նք,— կանչեցին վիրավորներն ու փորձեցին ոտքի կանգնել։

— Խփե՛ք գարշելիներին,— գոռում էր Բորոդինովը։

Գերմանացիները սարսափահար ետ քաշվեցին, ապա վայր դցելով զենքերը՝ բարձրացրին ձեռքերը։

Բորոդինովը մոտեցավ ու գրկեց Սոկոլին։

— Նիկոլա՛յ...

— Առաջադրանքը կատարված է,— կապտած շրթունքների միջից շշնջաց կրտսեր լեյտենանտը։

Քաղաքը գրավված էր։ Ավերված էր նաև գերմանական պաշտպանության երկրորդ գիծը։ Թշնամուն կրնկակոխ հետապնդում էին մեր զորքերը։

Կուվի վայրը հասած զորագնդի հրամանատարը նայում էր շենքի շուրջը, այգում փռված թշնամու դիակներին։

Շենքից դուրս եկան կենդանի մնացած հետախույզները և նրանց օգնության հասած մարտիկները։

Մոտեցան հրամանատարին։

Սոկոլը ազատվելով իրեն տանողների ձեռքերից, հազիվ կանգնելով ոտքերի վրա՝ զեկուցեց.

— Ընկեր գնդապետ, հրամանը կատարված է։

Գնդապետն իր գիրկն առավ Սոկոլին, համբուրեց նրա կապտած շրթունքները, ապա դառնալով լեյտենանտ Բորոդինովին՝ հրամայեց.

Գիշերը քաղաք թափանցած երկու դասակի բոլոր մարտիկներին ներկայացնել շքանշաններով պարգևատրելու, իսկ Երեքին... Սովետական Միության Հերոսի կոչման։

1945 թ. փետրվար

ՎԻԼԼԻ

1.

Դոկտոր Վիլենքերդի միակ որդին՝ Վիլլին դրժելով հորը տված երդումը, դարձավ զինվորական։

Օքեր լեյտենանտ Վիլլին մասնակցեց գերմանական բանակի կռիվներին, եղավ Լեհաստանում, հետո իր գումարտակով անցավ ֆրանսիական հողով։ Փարիզի, Բորդոյի կաբակներում խմում էր գինի, պառկում հասարակաց կանանց հետ, թալանում ֆրանսիական գյուղացիներին ու կյանքի երջանկությունը գտնում էր դրա մեջ։ Մինթե՞ այդ բոլորը վատ էին։ Չէ՞ որ հոր կենդանության օրոք ինքը չէր հանդգնում նույնիսկ մի շիլինգի շռայլություն թույլ տալ։ Սիրող, բայց խստապահանջ հայրը որդուն հեռու էր պահում այդ կյանքից։ Երբ մտաբերում էր հորը, հեգնող ժպիտն էր ծաղկում դեմքին, հիշում էր նրա վերջին խոսքերը. «դու դնա գիտության զինվորի ճանապարհով, դու չես կորչի։ Հեռու մնա նացիստներից, նրանք քեզ դեպի կործանում կտանեն»։

Վիլլին ծիծաղում էր. խե՜ղճ գիտնական։ Նա մեռավ և նույնիսկ չտեսավ իսկական կյանքը, իսկ ինքը...

Ֆրաու Լուիզան ուրախ էր որդու հաջողություններով։ Նա ջերմ սիրով ընդունում էր Վիլլիի նվերները։ Երկրի տերերը որդու ծառայությունը բարձր էին գնահատում։ Երջանկությունն ու բախտավորությունը միանգամից ժպտացին նրան։ Տիկինը տեր դարձավ մի հրեա արդյունաբերողի ապարանքի։ Հրճվում էր ֆրաու Լուիզան։ Ապարանքը, իր թանկարժեք կահավորանքով՝ կաշեպատ օթոցներով, ծանր վարագույրներով, ոսկեզօծ ջահերով, ընտիր մահճակալներով երիտասարդացնում էին նրա սիրտը։ Բեռլինյան ճոխ հագուստների մեջ ֆրաու Լուիզան իրեն պատկերացնում էր Հիտլերյան Գերմանիայի համար առյուծասիրտ որդի ծնած թագուհի։ Նա ապրում էր իր նմանությունը չունեցող երկրորդ երի-

տասարդությունը և նողկանքով էր հիշում հիվանդոտ ամուսնուն, որը դեմ էր որդու՝ բանակի սպայության շարքը մտնելուն։

Վերջացավ ֆրանս-գերմանական պատերազմը։ Վիլլին հրաման ստացավ մեկնել հայրենիք։ Կարճատև հանգստից հետո նա մշտական ծառայության մեկնեց Կրակով քաղաքը։

2.

Կրակով... Վիլլին հիշում է այդ քաղաքում վարած իր կյանքը։ Նա երբեք այնպես երջանիկ չէր եղել, ինչպես այդ քաղաքում։

Կրակո՜վ... Երկու օր ինքը այնքան վարպետորեն խաղում էր տասնութամյա հրաշագեղ աղջկա սրտի հետ։ Կապույտ, երկնագույն աչքերով, նրբագեղ, դեռ կուսական կյանքով ապրող լեհ աղջկա հետ անցկացրած օրերը Վիլլին չէր կարողանում մոռանալ։ Նա աղջկան հանդիպեց գիշերային շրջադայության պահին, երբ ինքը մի խումբ զինվորների հետ ներս մտավ լեհ ծեր ուսուցչի տունը։ Տեսավ աղջկան ու կիրքը եռաց կրծքի տակ։ Նույն գիշերը նա բանտարկեց աղջկա հորը։ Հետո խոստացավ նրան ազատել բանտից, եթե աղջիկը հանձնվի իրեն։ Դառը վշտերի ծովը ընկած աղջիկը շուրթերին մոտեցրեց թմրեցնող խմիչքի բաժակը...

— Ի՞նչ կցանկանայիր նազելիս,— գրկելով նրան հարցրեց Վիլլին։

Չքնաղ աղջիկը օրորվելով արբեցնող խմիչքից, փակելով դեղեցիկ թերթևանունքներով աչքերը, մրմնջաց.

— Ես կցանկանայի, որ աշխարհի վրա իշխեր խաղաղության բարի հրեշտակը և բոլոր մարդիկ վայելեին սերն ու ազատությունը։

Վիլլին ծափահարեց, համբուրեց նրա անուշ բուրմունք արձակող մազերը։ Նա հրճվում էր իր հաղթանակով։

— Իսկ դու երբևէ սիրե՞լ ես։

Լեհուհու աչքերից, կարծես պարզկա երկնքից, կաթկաթեցին արտասուքի կաթիլները։

— Սիրում էի, այո... Նա, իմ սիրածը ջուխտակահար էր... Հիմա նա չկա։ Իմ Լիոնիդին սպանեցին, երբ նա նվագում էր։

Վիլլին լսում էր նրան... Նա հիշեց այն մեծ տոնախմբում-

բությունը, որ տևեց կես գիշերից մինչև լուսաբաց, ուր իրենց համար նվագում էին լեհ երաժիշտները... Այո, նա հիշում էր։ Կային և Բեռլինից եկած կանայք։ Լուսադեմին, երբ շամպանիան նոր շրջանառություն էր կատարում, քաղաքի կայազորի պետը ուզեց փորձել իր հոգու կարողությունը։

— Վիլլի, եթե դու մի գնդակով ծակես երաժիշտների երիտասարդ ղեկավարի ճակատը, ապա դու կարժանանաս այս գեղեցկուհուն,— այդ ասելով գնդապետը հրամայեց սեղանի վրա բարձրանալ մանկական դեմքով, խարտյաշ մազերով, մինչև ուսագլուխները բաց աղջկան,— իսկ եթե ոչ, այն դեպքում հեռացիր մեզանից։

Դոկտոր Վիլենբերգի որդին, որը դրժել էր հորը տված երդումը և թողնելով տիեզերագիտությունը՝ աստղեր էր փնտրում երկրի վրա, ոտքի կանգնեց։ Նրա հրամանով իր երաժիշտ ընկերներից հեռացավ երիտասարդն ու ձեռքին բռնած ջութակը, հանդիստ կանգնեց պատի մոտ։ Նա չդողաց, երբ տեսավ իրեն ուղղած հրազենի փողը, տասնյակ զույգ աչքերի լցիրշ հայացքը։ Նա կանգնած էր լուռ ու հանգիստ։ Թեթև ցնցվում էր Վիլլիի ձեռքը։ Հետո, երբ նշանացույցի ու հատիկի դեմ հավասարվեց երաժշտի լայն, դուրս ընկած, բարձր ու դեղեցիկ ճակատը, թնդաց հրազենը։ Սրսրվեց, ընկավ երաժիշտը ու մի պահ, քար լռության մեջ, վերջին անգամ տխուր լացեց ջարդված ջութակը...

— Ասա, ի՞նչ կանեիր, եթե հանդիպեիր նրան, ով սպանեց քո Լիոնիդին։

Վիլլին երբեք չի մոռանա նրա լայն բացված աչքերը. կարծես մի անբուժելի ձեռք այդ աչքերում կապույտ բոց բռնկեց։

— Ի՞նչ կանեի,— դողալով հարցրեց աղջիկը,— ես, ես իմ այս ձեռքերով կհանեի նրա օձային աչքերը, ատամներով կքրքրեի շնային կոկորդը...

Վիլլին լսում էր ատելությունից վառվող լեհուհուն ու ժպտում։ Աղջիկը, որ մինչ այդ զգվանքով էր ընդունում խմիչքը, դողացող ձեռքով վերցրեց շիշը, լիքը լցրեց իր բաժակը։ Վիլլին ծափահարում էր։ Մինչև վերջ ծծելով ռոմը, աղջիկը մի փոքր հանգստացավ։ Կարծես մոռանալով իր ուր լինելը, նա քնքուշ ձեռքը դնելով կրծքին, աղոթքի նման շշնջաց.

— Օ՜, աստված իմ, մթթե՞ ես կարժանանամ հատուցման այդ սուրբ ժամին, մթթե՞ ես կգտնեմ նրան սպանողին։

Վիլլին հիշում է։ Ինքը հրճվում էր իր հաղթանակով. լեհուհու բարակ իրանը առնելով իր գրկի մեջ...

Այո։ Կրակովը հիտլերյան բանակի սպա Վիլլին տվեց նոր հարստություն և աստվածանման լեհուհու գեղեցկությունը վայելելու հաճույքը։

Սակայն նա լեհուհու հետ ապրեց միայն երկու օր...

Երկրորդ օրը, լուսաբացից առաջ, ինքը զարթնեց և թիկնած փափուկ բարձին ծխում էր ու նայում մանկական քաղցր քնով քնած աղջկան, որի նուրբ այտերի վրա թեթև կարմրությունը նրան քնած հրեշտակի էր նմանեցնում։ Գուցե ինքը այդպես երկար նայեր ու հիանար բնության այդ գեղեցիկ զարդով, եթե...

Լեհուհին պարզելով թևերը ժպտաց, գրկեց իր պարանոցը, այդ այնքան դուր եկավ Վիլլին, որ ուզեց համբուրել նրա քնքույշ ու նուրբ շրթունքները։ Աղջիկը շշնջաց.

— Լիոնիդ, սիրելիս, միթե՞ երջանիկ չես դու։

Ցնցվեց Վիլլին, ատելության մի ալիք սեղմեց նրա կուրծքը։ Բռնելով քնի մեջ ժպտացող աղջկա մերկ ուսերից, նա կատաղաբար ցնցեց նրան.

— Դու, զզվելի կին, նորից հիշում ես երաժշտին, նրան եմ փարվում քնիդ մեջ... Դե՛, այժմ իմացիր՝ այնտեղ, դղյակում, նա ընկավ իմ գնդակից։

Վիլլին հիշում է ինչպես ճչաց աղջիկը և իր դեմքը այրվեց ապտակից։ Հետո մի ցնցող քրքիջով վիթի նման սենյակից դուրս թռավ լեհուհին։ Որքան կուզեր Վիլլին նորից հանդիպել նրան։

3.

Բեռլինում Մաքս Բեհերշտրասսեում Վիլլին վայելում էր ամուսնական կյանքի մեղրամիսը, երբ աշխարհը ցնցեց Սովետական երկրի վրա գերմանական զորքերի հարձակման լուրը։

Ջանցավ երկար ժամանակ և Վիլլին կանչվեց գլխավոր շտաբ։

Ինչ հոգ։ Ինքը նորից շարունակելու էր պարեսի արդյունավետ իր պաշտոնը՝ Սովետական երկրից գրաված քաղաքներում։

Ֆաշիստական Գերմանիայի բանակները սովետական զորքերի ծանր ու արյունալի հարվածների տակ, ետևում թողնելով

հրդեհների հրացոլքով բռնված քաղաքներն ու շենքերը, մտնում էին լայնարձակ երկրի ներսը։ Շարժվող զորքերի հետ իր պարետությունով Ղրիմի թերակղզին հասավ Վիլլին, նա, որ աստղեր էր փնտրում երկրի վրա...

Գեղեցիկ է Ղրիմն իր քարաժայռերով, ծովափնյա անտառներով, նմանը չունեցող հարուստ մրգաստաններով, ծաղկի ու ծառերի մեջ թաղված քաղաքներով ու գյուղակներով, և այդ ամենը միանգամից զվարթացրին օբեր լեյտենանտ Վիլլիի սիրտը։

Ղրիմում կարելի էր հանդստանալ, իսկ ծովափնյա Ս. քաղաքը, այգիների մեջ կորած, անվթար մնացած ապարանքները նրա առաջ բաց արեցին հարստանալու նոր ուղիներ։ Նա մորն ու երիտասարդ կնոջն էր ուղարկում ծանրոցներ, գրում էր նամակներ հիասքանչ թերակղզու անբավ գանձերի մասին, պատկերացնում այն օրը, երբ կվերջանա պատերազմը և ինքը կունենա իր լայնարձակ կալվածքը՝ Ս. քաղաքի մերձակայքում...

Սակայն Վիլլիի երջանկությունը երկար չտևեց... Ս. քաղաքից հարավ-արևմուտք, ուր բարձրանում են ծովափնյա ժայռերը, ուրկից սկսվում է և անտառը, սկսեցին հաճախակի դառնալ պայթյունները։

Վիլլին սկսեց կարոտով հիշել Կրակովը, չքնաղ Փարիզն ու Բորդոն, ուր անհոգ անցնում էին իր օրերը։

Երեկոները, երբ ծովի ու մրգաստանների վրա կախվում էր լուսինը, Վիլլին փակվում էր իր կացարանում։ Այո՛։ Պարտիզաններին մոտ լինելը Վիլլիին զրկեց քնից ու հանդստից։ Նա հաճախ տարվում էր մտքերով, ուզում էր հասկանալ սովետական մարդկանց անընկճելի դիմադրության իմաստը։ Ինչո՞ւ են նրանք դիմադրում, երբ իրենք գրավել են աշխարհի հացի ու ածուխի ամենահարուստ շտեմարանները, ավերել մետաղներ մշակող գործարանները և վերջապես գրաված երկրամասերումն են մնացել միլիոնավոր մարդիկ... Վիլլին խորամանկ ժպտում էր, ամփոփում մտածածը. «Չէ, շուտով կվերջանա ամեն ինչ և սովետական պարտված զորքերը վայր կդնեն զենքը»։

Վիլլին երազում էր այդ օրը։

4.

Պատահեց անխուսափելին։

Մի օր նրա պարետությունը ժամանեց գրոհային շտաբի պետն

ու նրան հանձնեց պարտիզաններին շրջապատելու օպերատիվ պլանը։

— Հուսամ, պարոն օբեր լեյտենանտ,— մեկնելու ժամանակ ասաց նա,— որ դուք հաջողությամբ կկատարեք ձեզ հանձնարարված գործը։ Կստանաք օժանդակ ուժեր։

Այդ օրվանից օբեր լեյտենանտ Վիլլին սկսեց հետախուզել անտառը։ Այնտեղ ուղարկած նրա հետախույզներից շատ քչերն էին վերադառնում... Վիլլին, որն այնքան ապահով կյանքով գլորել էր պատերազմի մի քանի տարիները, կանգնելու էր գնդակի առաջ։ Ո՞վ գիտի, մի գուցե հենց վաղը անտառում դարանակալած պարտիզանի գնդակը գետին գլորի իրեն։

Դառը մտածմունքների այդ պահին դեմը կանգնում էր հայրը. «Դու կկորչես Վիլլի, նրանք, նացիստները, քեզ անդունդ կգլորեն...»։

Տեղ ժամանած օժանդակ վաշտի հրամանատարի հետ երկար ժամեր նա նախագծում էր երկաթե օղակի մեջ առնել պարտիզաններին։

Հասավ գործողությունն սկսելու օրը։ Օբեր լեյտենանտ Վիլլիի հրամանով գումարտակի երկու վաշտը, օժանդակ վաշտի զինվորների հետ դեռ կես գիշերին շրջապատեցին անտառը։ Նստած դիտակետում՝ նա նայում էր կապտադույն ամպերի տակ բացվող արշալույսին։ Հրաման տվեց սկսել հարձակումը։

Անտառի չորս կողմերից դեպի կապտադույն ամպերը թռան հարձակումն ազդարարող հրթիռները։ Դիտակետից ոչ այնքան հեռու որոտացին հրանոթները, անընդմեջ կրակազարկերով նրանց ձայնակցեցին գնդացիրներն ու ավտոմատ հրացանները, վայոցով անտառը թռան արձակած ականները։

Մինչ ուշ երեկո շարունակվում էր գնդակոծությունը։ Սակայն անտառը լուռ էր և այդ լռությունը կատաղեցնում էր օբեր լեյտենանտ Վիլլիին։ Իրիկնադեմին, երբ նա պատրաստվում էր դադարեցնել կրակը, թիկունքում, երկաթգծի մոտ, մեկը մյուսին հաջորդեցին պայթյուններ և հրդեհի հրեղեն սյուները երկինք բարձրացան։

Օբեր լեյտենանտ Վիլլին վճիռ ընդունեց գնդակոծել պայ-

թյունների վայրը։ Սկսվեց երկու կողմերի կատաղի հրաձգությունը, որը տևեց մինչև լուսաբաց։

Բացվում էր առավոտը։ Ծառերի միջից հայտնվեց ու անհայտացավ սպիտակ մի դրոշակ։ Հետո այն երևաց կրկին ու կրկին անգամ։ Օ՜, օբեր լեյտենանտ Վիլլին վաղուց էր սպասում այդ ժամին... Ուրեմն ինքը ընկճեց գոռոզ պարտիզանների դիմադրությո՞ւնը։ Ուրախությամբ արտասուքներն աչքերին՝ նա տվեց դադարի նշան։ Վիլլին հրճվում էր։ Նա որոշեց հենց այդ օրը քաղաքի կենտրոնական հրապարակում կախաղան բարձրացնել մի տասնյակ պարտիզանների...

Նրա հրամանով օգնականը, որին հետևեցին զինվորները, ձեռքներին պատրաստ պահած ավտոմատ հրացանները, հաղթական քայլեցին դեպի փողփողացող դրոշակը։ Վիլլին մի պահ մոռացվեց։ Չլինի՞ իր քաջերը այնտեղ վերջ տան կենդանի մնացած պարտիզաններին և իրեն զրկեն նրանց կախաղան բարձրացնելու հաճույքից։ Նայելով հեռվում ծածանվող սպիտակ դրոշակին, հաղթողի հպարտ շուքով, շրջապատված իր թիկնապահներով նա շարժվեց անտառի կողմը, ուր հողը փորփրված էր արկերից ու ականներից, ծառերը տերևաթափ էին եղել, կարծես աշուն լիներ, այն ինչ դեռ ամռան առաջին ամիսն էր։ Վիլլին ձեռքերը կանթած կողքերին, նայում էր դեմը։ Սակայն ինչո՞ւ լուռ ու դլխակոր են իր մարդիկ, կարծես նրանք հաղթողներ չլինեն, իսկ ո՞ւր են պարտիզանները։ Նրան է մոտենում օգնականը.

— Թույլ տվեք զեկուցելու պարոն օբեր լեյտենանտ։ Գիշերը մենք կռվել ենք մեր խորտակված գնացքի կենդանի մնացած զինվորների դեմ, որոնք մեզ ընդունելով պարտիզանների տեղ, դրոշակ են բարձրացրել անձնատուր լինելու համար։

Դողացին օբեր լեյտենանտ Վիլլիի ոտքերը։ Խորտակված գնացքի զարհուրելի տեսարանը, աջ ու ձախ ընկած սպանվածների դիակներն ու վիրավորների հառաչանքները, գլխահակ կանգնած իր զինվորներն ու սպաները խելագար պարով պտտվեցին աչքերի դեմ։

Իրիկնադեմին ջարդված, բզկտված գումարտակի ու գիշերային սարսափը ապրած խորտակված գնացքի զինվորները քաշվեցին քաղաքը, ուր լեռնացած ալիքներով ափերն էին ծեծում Սև ծովի ջրերը։

5.

Հնարագետ է Վիլլին։ Նա դուսավ կործանումից դուրս գալու ելքը։

Նստած ապարանքի ծովահայաց գեղեցիկ պատշգամբում, նա հրամայեց գիշերը քաղաքի բնակիչներից հարյուր տղամարդու ու կանանց քշել ձորակը և վերջ տալ նրանց կյանքին։ Այդ «պարտիզաններն» էին. հետո հանդիսավոր կարգով զինվորական գերեզմանոցում թաղել տվեց սպանված զինվորներին ու սպաներին։ Ենամքով կազմված զեկուցագիրը արժանավայել ընդունելություն գտավ շտաբում։ Եվ ահա հայտնվեց շտաբային գեներալը, որը շնորհավորեց նրան պարտիզանների դեմ տարած հաղթանակի համար։ Վիլլին ստացավ կապիտանի կոչում, գեներալը նրա կուրծքը զարդարեց երկաթե նոր խաչով։

Սակայն կապիտան Վիլլին դողում էր իր կյանքի համար, նա հաճախ մորը՝ ֆրաու Լուիզային գրում էր իր ապրած սարսափների մասին, խնդրում նրան միջնորդությունների դիմել իրեն Ղրիմից դուրս բերելու համար...

Մայրը կատարեց որդու պահանջը։ Առատ ընծաներն իրենց գործը տեսան։ Կապիտան Վիլլիի Ղրիմում քաշած տանջալից օրերը վերջացան։

Նստելով գնացք, նա իր հուշատետրում գրեց. «... Այստեղ Ղրիմում, պարտիզանի ոխակալ աչքը ամեն վայրկյան տրիական ցեղի մարդկանց է փնտրում, ուր «հաղթող» լինելով հանդերձ, սարսափում ես կյանքիդ համար, դժվար է, նույնիսկ անկարելի՝ ընկճել սովետական մարդկանց կամքը։ Հուսամ, որ էլ երբեք չեմ տեսնի այդ երկիրը...»։

6.

Վիլլին իր ծանրոցներով Բեռլին հասավ։ Նա գոհ էր ու երջանիկ։ Հնարագետ մայրը բարձրանում էր որդու աչքում։

Մայրը որդուն ցույց տվեց հարստությունները։ Ե՞րբ է ինքը կարողացել այդքան բան ուղարկել։ Դաշնամուրներ, կովկասյան հրաշագեղ գորգեր, կերպաս, վարագույրներ, փղոսկրյա աղնիվ իրեր, ժամացույցներ՝ աշխարհի բոլոր ֆիրմաներից, տարբեր չա-

փի ու մեծության ոսկե ատամներ, ձուլած ոսկուց եկեղեցական խաչեր, մանյակ, գոհարեղեն։ Մի քանի միլիոն մարկի կարողության տեր էր դարձել Վիլլին։ Ու նա կրկին հիշեց հորը.

— Մայր, եթե կենդանի լիներ հայրս անշուշտ նա կընդուներ իր սխալը։

Ֆրաու Լուիզան հեգնանքով պատասխանեց.

— Եթե նա ողջ լիներ, մենք ծայր աղքատության դուռը կըհասնեինք, հետո՝ բանտ, համակենտրոնացման ճամբարներ։ Իսկ այժմ, խնդրեմ...

Վիլլին խորամանկ ժպտաց։

— Այո, մայր, դու ճշմարիտ ես...

Ֆրաու Լուիզան գովում էր որդուն, նրա ջանասիրությունը։

— Այժմ, սիրելիս, քեզ հարկավոր է մտածել պատերազմից ողջ դուրս պրծնելու մասին։

— Իսկ ի՞նչ կարող եմ անել ես։

Այո, Վիլլին ուզում էր ապրել։ Ապրել, վայելելու այն անբավ հարստությունը, որը դուրս է կորզել գրաված երկրներից։ Պառկած անկողնում՝ նա պատկերացնում էր այն օրը, երբ կվերջանա պատերազմը... Իր առաջ իրենց դռները լայն բաց կանեն խոշոր փայատիրական ընկերությունները և ինքը՝ դոկտոր Վիլենբերգի որդին, շրջանառության մեջ կդնի իր կապիտալը։

7.

Մոր ջանքերով Կրակով քաղաքում վերստին պաշտոնավարելու իրավունք ստանալով, Վիլլին նրա պատվերով, այնտեղ հասնելուց մեկ ամիս հետո անկողին մտավ։ Նա սկսեց գործադրել բարվարացու բոլոր հնարագիտությունները՝ պատերազմից անվթար պրծնելու համար։ Եվ այդ ուներ իր զորավոր պատճառը... Սովետական զորքերը մոտենում էին Վիսլային։ Սկսվել էր և օր-օրին ծավալվում էր ռուսների հարձակումը ամբողջ ռազմաճակատում։ Վիլլին կանչվեց լեհական ռազմաճակատի հրամանատարության շտաբը։ Սպայակույտի ընտրությունը կատարող նացիստ մոայլ դեներալը նույնիսկ չցանկացավ լսել նրա գանգատները։

— Դուք չեք եղել ռազմաճակատի առաջին գծում։ Այժմ մեր բանակում քիչ են այնպիսի կադրային սպաներ, ինչպիսին դուք

նք։ Հասել է ձեր հերթը... Ընտրեցեք երկուսից մեկը՝ կամ բոլշևիկների դեմ՝ առաջավոր դիծ, կամ՝ կախաղան։

Ապրելու տենչը սրտում Վիլլին դողաց իր մեծավորի առաջ։

Այնուհետև կապիտան Վիլլին իր վիշտն ուզում էր թաղել խմիչքի մեջ. լուսաբացից մինչև գիշեր նա ծծում էր ռոմը, սեղմում ատամները, որ չգոռա ցավից։

8.

Կապիտան Վիլլիի դումարտակը մեկնեց ռազմաճակատ։ Նա տխուր էր, մահվան դողն էր պատել սիրտը։ Առաջ չէր հավատում սովետական ուժին, իսկ այժմ սարսափում էր այդ ուժից։ Նրան թվում էր, թե ինքը գնում է մահվան դուռը... Տխուր ու մռայլ էին սպաներն ու զինվորները։

Խավար գիշերին Վիսլայի ափերին պատրաստած ամրություններում պաշտպանության դիծ բռնեցին գումարտակի զինվորները։ Վիլլին ոչ մի սպայի չէր ճանաչում. նրանց մեջ կային կորացած մեջքերով, տարիքավոր մարդիկ, դույլ և իր հորից մեծ էլ լինեին, կային և անբեղ, դեռ աղվամազով պատած դեմքերով պատանիներ։

Հնգօրյա ծանր մարտերում բզկտվեց Վիլլիի դումարտակը։ Նա սրտի դողով հաշվում էր օր-օրի վրա պակասող զինվորներին։ Նստած հրամանատարական կետում, կապիտան Վիլլին իրիկնադեմին լսում էր վաշտերի հրամանատարների զեկույցները, իսկ զինվորները դիրքերից դուրս էին քաշում սպանվածներին։

Վիլլին իրեն լավ չէր զգում։ Անդամ գիշերները ականջներում պայթում էին արկերը, ինքնաթիռներից ցած էին թափվում ռումբերը։

Անցնում էին օրեր։

Սկսվեց նոր ու մեծ հարձակումը։ Գերմանական բանակի հզոր ամրությունները դողացին, փլվեցին, երկինք թռան ցեմենտի, պողպատի կտորներ։ Հետո Վիսլան անցած Սովետական զորքերը գրոհի անցան։

Սկսվեց տագնապն ու խելակորույս նահանջը։ Գերմանական բանակի զորամասերը, նրանց հետ և Վիլլիի արյունաքամ գումարտակը բռնեցին փախուստի ճանապարհը՝ անթաղ թողնելով սպանվածներին, տրորելով վիրավորներին։

Ռուսական զորքի ահեղ հարձակումից կապիտան Վիլլին ուշքի եկավ Կրակով քաղաքից ոչ այնքան հեռու, երբ նրան ստիպեցին գլխավոր ուժերի հետ միասին դիրքեր գրավել քաղաքամերձ կայարանում։

9.

Գիշերները լուսածիր ռումբերի լույսի տակ սովետական ինքնաթիռներն ու հրանոթները գնդակոծում էին թշնամու զորքերի դասավորության շրջանները։ Վիլլին, կպած հրամանատարական կետի ցեմենտե հատակին, չէր շարժվում տեղից։ Օ՜, նա պատրաստ էր իր ողջ հարստությունը տալ, դեթ մի ժամով դուրս պրծնելու համար կրակի բոցերից, ուր պայթող ռումբերի հետ երկինք էին թռչում մարդկային մարմնի մասերը։

Լուսաբացին նոր ուժով որոտացին հրանոթները, նորից երկինք բարձրացան հարյուրավոր ինքնաթիռներ։ Սարսափահար Վիլլին նույնիսկ չէր մոտենում դաշտային հեռախոսին։ Ամենակարող ռումն անգամ չէր աղդում նրա վրա։ Կապույտ կանաչ բոցերով բռնկվեց հրամանատարական կետը։ Վիլլին դուրս թռավ այնտեղից։ Պայթեց մի նոր արկ և ամեն ինչ խառնվեց նրա աչքերի առաջ։ Նրան թվում էր, որ գտնվում է տոնախմբության մեջ, ուր պայծառ լույսերով վառվում են ջահերն ու իր դեմ պարում են մերկ ֆրանսուհիները։ Նա ուրախ ծափ տվեց, պարզեց ձեռքերն ու նոր պայթող ռումբի հզոր օդային ալիքը նրան շպրտեց հրամանատարական կետի հատակին, նա ոտքի կանգնելով գոռաց...

Սակայն նրա ձայնը չէին լսում իր զինվորներն ու սպաները։ Նրանցից շատերը դերեզման էին գտել դիրքերի մեջ. ողջ շրջապատը փայլում էր բոցերի ու պայթյունների հրացոլքով...

Կապիտան Վիլլիի ավերված հրամանատարական կետի դռանը հայտնվեցին նռնակներով զինված մարտիկներ։

Վիլլին դուրս ընկած աչքերով նայեց նրանց։ Նա պարզեց ձեռքերը, հետո սկսեց քրքջալ ողջ մարմինը ցնցող մի քրքիջով, նստեց գետնին, սկսեց փետել մազերը։

— Ցնորվել է սատանան,— ծիծաղելով ասացին մարտիկներն ու ոտքի կանգնեցրին նրան։

Լեհական հինավուրց գեղեցիկ քաղաքի վրա ծածանվում էին գույնզգույն դրոշները, անցնում էին հաղթողների գնդերը...

Նրանց մոտենում էր ցնցոտիապատ, խոշոր, կապույտ աչքերով, նիհար ուսերով լեհուհին։

— Գիտե՞ք, դերմանացի սպան իմ Լիոնիդին սպանեց... ասացեք, դուք կգտնե՞ք նրան։ Լիոնիդին սպանեցին, երբ նա նվադում էր։

Աղջիկը մերթ ծիծաղում էր, մերթ հեծեծում և մեծ ու կապույտ աչքերով նայում անցնող զորքերին...

Կեսորին կապիտան Վիլլիին, որի կուրծքը զարդարված էր խաչերով, տանում էին քաղաքի կենտրոնական փողոցով։ Նրա դեմ կանգնեց ցնցոտիապատ լեհուհին։ Խոժոռադեմ սպան, որի աչքերի առաջ կարծես դեռ կապույտ, կանաչ բոցերով պայթում էին ռումբերը, կանգ առավ, նայեց լեհուհուն։

— Միթե՞ նա է։

Ցնցոտիապատ աղջիկը լայն բացելով աչքերը, ծափ տվեց ու թրթռաց։ Վիլլին տրորեց ճակատը, հիշեց կապույտ աչքերը, կապույտ աչքերի բոցը ու նրանց հայացքները հանդիպեցին իրար, մեկը որ մարդասպանին էր որոնում, իսկ մյուսը՝ որ դադարեց աստղեր փնտրել երկրի վրա։

1945 թ. ապրիլ

ԼԵՌՆՑԻՆ

1.

Զորագունդը պատրաստվում էր հարձակման։ Հետախույզները պիշեր ու ցերեկ դադար չունեին։

Սակայն վաշտի հրամանատարը կարծես մոռացել էր նորերս գինվորական հիվանդանոցից վերադարձած սերժանտ Արամյանի գոյությունը։ Սմեն անգամ իր մարդկանց «ոգսի» ուղարկելիս ավագ լեյտենանտ Զեռնովը կարդալով նրա անունը՝ ժպտում էր շեկ բեղի տակ։

Նորից իր վաշտը վերադառնալը, որ առաջին օրերին ուրախությամբ էր համակել Վարոսի սիրտը, տեղի էր տվել տխրության։ Օրեր շարունակ հետախուզության չուղարկվելը հուզում էր նրան, ու նրա սիրտը սողոսկեց մահվան չափ դառը մի միտք։ Չլինի՞ իր սիրելի հրամանատարն այլևս չի վստահում իրեն... բայց ինչո՞ւ համար։ Ինչո՞վ է ինքն սրժանացել դրան։ Գիշերները քունը մոտ չէր գալիս աչքերին։ Նա տանջվում էր անորոշությունից։

Վարոս Արամյանը, կամ ինչպես վաշտում ընկերներն էին անվանում լեռնցին, իրենց գյուղի միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո բանակ կանչվեց։ Նա կադրային գինվոր է, կռվել է ֆիններին դեմ։ Հայրենական Պատերազմից առաջ ստանալով սերժանտի կոչում՝ սովորեց և դարձավ հետախույզ։ Սրտով սիրեց վտանգներով լի գինվորական այդ արվեստը։ Արամյանը վաղուց չէր եղել իր ծննդավայր Լոռում, և տխրում էր դրա համար։ Վաշտում ամենքը հարազատ էին նրան, նա միակ հայն էր ոչ միայն վաշտում, այլև գնդում։ Նրան ոչ միայն ավագ լեյտենանտ Զեռնովն էր ճանաչում, այլև գնդապետ Վալիկոն։ Վարոս Արամյանը քսանհինգ տարեկան, միջահասակ, լայնալանջ, սրծվաքիթ մի երիտասարդ էր՝ պարզ, հաճելի, ընկերասեր բնավորությամբ։

Արամյանը ստալինգրադյան մարտերում ծանր վերքեր ստանալով՝ տարվեց զինվորական հիվանդանոց։ Բուժվելուց հետո ընկնելով հավաքակայան և այնտեղ տեղեկանալով իրենց գնդի ուղղության մասին, ներկայացավ հավաքակայանի պետին, խնդրեց իրեն նախկին վաշտն ուղարկել։

— Հավատացած եղեք, ընկեր պետ, ես կգտնեմ մեր գունդն ու վաշտը։ Գնդապետ Վալկոն և ավագ լեյտենանտ Զեռնովն էլ ուրախ կլինեն։ Ախր, միշտ նրանց հետ եմ եղել թե Ֆիննական կռվում, թե Հայրենական Պատերազմում։ Մեր վաշտում ես լավ հաշիվ ունեցողներից եմ։ Ճիշտ է, Դմիտրին գերմանական գնդապետին ծուղակը գցեց, բայց ես էլ նրանից ետ չեմ մնացել։

Հավաքակայանի պետին դուր եկավ լեռնցու պարզությունն ու վճռականությունը և նա կատարեց Վարոսի խնդիրը...

Ընկերները դիտեին Վարոսի տխրության պատճառը։ Բայց ինչո՞վ կարող էին օգնել նրան, երբ ամեն ինչ կատարվում է հրամանատարի կամքով։ Չէ՞ որ հրամանատարի ասածը օրենք է զինվորի համար։ Ամեն կերպ աշխատում էին ամոքել տղայի սիրտը, կատակներ էին անում նրա հետ, խորհուրդներ տալիս.

— Մի տխրիր։ Քեզ հանդիսատ է պետք,— ասում էր վաշտի ավագը։

— Միթե՞ ես հոգնել եմ,— տխրությամբ պատասխանում էր Վարոսը։

— Հասկանալի է,— գուշակում էր մեկ ուրիշը,— այդ, ախպերս, մի տեսակ ստուգում է։ Հմուտ բժշկի հոտառություն ունի մեր ավագ լեյտենանտը. նրան ոչ ոք չի կարող խաբել։ Այժմ նա ստուգում է քեզ, ուզում է իմանալ արդյո՞ք չեն թուլացել ջղերդ, արդյո՞ք չես կորցրել հետախույզի սառնասրտությունը։

— Եվ այդ ճիշտ է,— բացագանչում էր Դմիտրին՝ Վարոսի ամենասիրելի ընկերը՝ վաշտի հռչակավոր հետախույզներից մեկը, որին հաջողվել էր Զեռնովի առաջ կանգնեցնել գերմանական մի գնդապետի,— երդվում եմ պատվով,— կուրծքը ծնծելով ասում էր նա,— որ այդ ճիշտ է։ Նա ստուգում է քեզ, և եթե խելքիդ փչի աղմուկ բարձրացնել՝ հետախուզության գնալու համար, նա անպայման ետ կուղարկի քեզ և դու դրանով մեծ վիշտ կպատճառես մեզ։ Լավ է լռես, և կարևորն այն է, որ շատ քնես։

— Է՛, ինչ ես մտածում,— ասում էր խոհարարը,— նորից

Ֆրիցների որսի կգնաս։ Միթե՞ արժե դրա համար պառավի նման թթվել։ Քնիր գիշերը, քնիր ցերեկը, իսկ եթե քունդ չի գալիս, արի ինձ մոտ։ Ես կարտոֆիլ կմաքրեմ, իսկ դու ծոր տալով եզդ կասես, և երբ միասը եկի՝ միասին կփորձենք, կամ թե, ինչպես ինտելիգենտ մարդիկ են ասում, առաջինը մենք կճաշակենք, իսկ եթե այդ չես ուզում, ձեր լեռնցիների պես կրակի վրա միս կխորովենք, մի-մի կում էլ օղի կխմենք և ամեն ինչ իր կարգին կդնա։

Ընկերների ուրախ կատակները քիչ էին օգնում Վարոսին։ Նա տխուր էր։ Արամյանի տխրության մասին գիտեր ինքը՝ ավագ լեյտենանտ Զեռնովը, որ՝ ամեն 'անգամ լսելով վաշտի ավագի զեկույցը լեռնցու տրամադրության մասին,՝ փառ-փառ ծիծաղում էր։

Եվ մի օր նա իր մոտ կանչեց Վարոսին։

— Հը, ինչպե՞ս ես Վլադիմիր Սեդրակովիչ,— մտերմական տոնով հարցրեց նա։

Արամյանը տարիների իր ծառայության ընթացքում ոչինչ չէր թաքցրել հրամանատարից։ Նա անկարող էր ստել, ուստի և ասաց.

— Տխուր են անցնում օրերս, ընկեր ավագ լեյտենանտ։

— Ինչո՞ւ համար,— կարծես զարմացավ Զեռնովը։

— Անգործ եմ։ Ձանձրանում եմ անգործ մնալուց։

— Իսկ ես կարծում էի, որ դու գոհ պիտի լինես ինձանից։ Միթե՞ վատ բան է հանգիստը։ Ես ցանկանում եմ, որ դու հանգստանաս։

— Շնորհակալ եմ։ Արդեն հանգստացել եմ, իսկ երբ տուն կընկնամ, այն ժամանակ ավելի կհանգստանամ։ Հոսպիտալում էլ քիչ չհանգստացա։ Սպանիչ է ձանձրույթը։

Զեռնովը բարձրաձայն ծիծաղեց։

— Այ թե համառ տղա ես։ Ոչինչ։ Հենց այս գիշեր որսի կընդնաս,— ասաց նա, ու աչքի տակով նայեց նրան և տեսավ, թե ինչպես մի կրակ լուսավորեց տղայի դեմքը, սև աչքերը փայլեցին ուրախ ու երջանիկ։

— Լսում եմ, հրամայված է պատրաստվել,— նստած տեղից վեր ցատկելով և ձգվելով պատասխանեց Արամյանը։

— Ես քեզ համար նորություն էլ ունեմ ասելու։ Այսօր շարքի առաջ կհայտարարվի։ Երբ դու վերադարձար, առաջին օրը գրեցի

շտաբ աստիճանդ բարձրացնելու վերաբերյալ։ Այժմ դու ոչ թե սերժանտ ես, այլ ավագ սերժանտ։ Աստիճանի արժանավոր բարձրացում։ Շնորհավորում եմ, իմ լեռնցի։

— Ծառայում եմ Սովետական Միությանը,— հստակ շեշտելով բառերը՝ բացագանչեց Վարոսը։

— Քեզ հետ կլինեն քո տղաները, որոնց թվում և Դմիտրին։ Սա առաջադրանքը...

Եվ Ջեռնովը մանրամասնորեն Արամյանին բացատրեց առաջադրանքը։

— Հասկանալի՞ է,— վերջում հարցրեց նա։

— Ճիշտ այդպես։

— Այժմ ճաշ և հանգիստ քուն։ Մնացածը ինքդ դասավորիր։

2.

Ընկերներն սպասում էին Վարոսի վերադարձին։ Եվ երբ, նա ուրախ դեմքով մոտեցավ նրանց, անմիջապես շրջապատեցին նրան։

— Հը,— սրտատրոփ հարցրեց Դիմիտրին։

— Գնում ենք։

— Շնորհավորում ենք, բարեկամ,— գոչեցին բոլորը միասին։

— Իսկ ո՞ւմ հետ,— հարցրեց նրա մշտական «որսի» ընկերներից մեկը՝ Վոյտենկոն, որին հետախույզները ուղղակի Դոնեցի էին կանչում Դոնի Ռոստովում ծնված լինելու պատճառով։

— Հասկանալի է ում հետ։

— Այսինքն,— վրա տվեցին ամեն կողմից։

— Նորից մեր կազմով։

Տղաները գրկեցին և շնորհավորեցին նրան, իսկ Դմիտրին ասաց.

— Չէ, ինչպես երևում է մինչև պատերազմի վերջը մենք միասին ենք լինելու,— հետո խորամանկորեն կկոցելով աչքերը, սկսեց ինքն իրեն նախատել.— չեմ հասկանում, տղերք, վերջերս ինչոր վատ բան է կատարվում ինձ հետ, սկսել եմ հիմարություններ

դուրս տալ. ինչպես թե մինչև պատերազմի վերջը: Չէ՞ որ ես և Վլադիմիր Սեդրակովիչը պատերազմից հետո էլ միասին ենք լինելու: Ախր ես նրա քրոջ՝ Անուշի իգիթ ամուսինն եմ լինելու և իմ հարսանիքին լոռեցիները պարելու են «Զորանների պարը» ուսերին մի-մի դաս առած:

Տղաներն ուրախ ծիծաղեցին

— Բայց և կարող է հրաժարվել իր խոսքից,— կատակեց Վոյտենկոն:

— Եվ դու այդ չես մոռացե՛լ,— Դմիտրիի ուսին խփելով գոչեց Վարոսը:

— Ինչպե՞ս, այդ ի՞նչ ասացիք,— կոմիկական լրջությամբ բացագանչեց Դմիտրին,— դուք, պատվականդ իմ, խաղում եք երիտասարդիս սրտի հետ: Ո՞ւր է իմ դաշույնը,—ասաց նա և կատվի ճարպկությամբ մերկացնելով կողքից կախած հետախույզի սրածայր դանակը խրոխտորեն կանգնեց Վարոսի առաջ:— Պարոնայք,— դառնալով հավաքվածներին՝ կանչեց նա,— արդարամիտ դատավոր եղեք: Այս մարդը գրկում է ինձ երջանկությունից: Պարոն, մի գրկեք ինձ կյանքից: Ասացեք ձեր խոսքը և նախ քան ձեր խոսքն ասելը՝ իմացեք կամ ձեր Անուշ քույրը իմ կինը կլինի, կամ թե ձեր ոտքերի տակ կթափվի արյունս:

Ընկերներից մի քանիսը փորները բռնած՝ կպել էին գետնին, նրանց լիաթոք ծիծաղին մասնակից էր և Զեռնովը, որ թաքնված հաստաբուն ծառի ետևը՝ նայում էր այդ տեսարանին, մարում ծիծաղից:

Մինչ ճաշ շարունակվում էր նրանց ուրախ կատակը: Նայելով ժամացույցին՝ Վարոսը ոտքի կանգնեց և երջանիկ, ուրախ հայացքով նայելով ընկերներին՝ ասաց.

— Իսկ այժմ, սիրելի ընկերներ, կուշտ ճաշ, որից հետո հանդիսատ քուն:

Երբ Արամյանն իր խմբով մոտեցավ ծառերի մեջ քողարկված դաշտային խոհանոցին, քրտնաշաղախ խոհարարը ձեռքերը կանթելով կողերին և ուշադիր նայելով նրան՝ կոնչաց.

— Ուրեմն Արևմտյան ճակատում ամեն ինչ խաղաղ է:

— Ճիշտ այդպես, ձերդ պայծառափայլություն,— լեզուն հանելով կատակեց Վարոսը:

— Հասկանում եմ,— փնչաց նա,— առանց խմելու դու ար-

դեն հարբել ես։— Հուսամ, որ ձերդ ազնվությունը այսօրվա համար տրվող կրկնակի նորմա օդին մենակ չի կոնծելու և բաժին կհանի իր դառը օրերի ընկերոջը։

— Հուսացեք։ Այժմ ճաշ, հանգիստ քուն և հետո...

— Որսի,— այծի պես մկկաց Դմիտրին՝ խոհարարին մեկնելով իր կաթսայիկը։

— Այո, որսի,— ձեռքերը հետևը դնելով՝ ասաց Վարոսը,— ես, ախպերս, ձանձրացա քո խոհանոցի հոտից։

— Լսո՞ւմ եք, բարեկամներս, թե ինչպես է երգում թռչնիկը։ Իսկ երեկ, անցած օրը ինչո՞ւ ձայնդ փորդ էիր գցել։ Ասա, երգիր, աղավնյակս, տեսնո՞ւմ ես չեմ նեղանում։ Այդպես է մեր անիծված արհեստը։ Կերակրում ես մարդկանց, գիշերները չես քնում, մտածում ես ի՞նչ անես, որ համով լինի շիլան, իսկ ուտելուց հետո մոռանում են քեզ։

— Դե, դու մի բարկանա, Միտրիչ, չէ՞ որ մենք գնահատում ենք քո շերեփը։ Միթե՞ այդ դու չէիր, որ հալթական շերեփը ձեռքիդ՝ մարտի նետվեցիր։

Ընկերները ծիծաղեցին։ Այո։ Նրանք չեն մոռանում։ Շուլգայի պատմությունը բոլորը հիշում էին... Այդ դեպքը պատահել էր ամռանը. գերմանացիների դետքը անտառում շիլայի անուշ հոտ առնելով, քրտինք մտած փնտրում ու գտնում է խոհանոցը։ Դետքը կազմված է լինում յոթ հոգուց, իսկ Շուլգան մենակ։ Գերմանացիներին առաջինը նկատելով՝ նա թողնում է, որ մոտենան իրեն ու մի քանի քայլ հեռավորության վրա ավտոմատով հնձում է վեցին։ Ֆրիցներից մեկը, որ թեթև վիրավորված է լինում, ուզում է փախչել։ Շուլգան ընկնում է նրա ետևից և իր ծանր շերեփի հարվածով դետին է գլորում նրան։ Կրակոցների ձայնի վրա տեղ են հասնում ընկերները և ականատես են լինում այդ ամենին ու հետո հավատացնում են, որ խոհարարը յոթին էլ շերեփով է սպանել...

Հաստ խոհարարը ուրախ ծիծաղում էր.

— Ուրեմն հասար նպատակիդ։

— Այժմ ճաշ...

— Իմ լեռնցուն ամենայուղոտ պատառը։

— Դեմ չեմ։

— Երկու հարյուր գրամ օղի։

— Ուրախությամբ։

— Հերթը ձեզ հասավ։ Կերեք, անուշիկներս, թող ձեզ ձեր մոր կաթի պես հալալ լինի իմ եփած մսապուրն ու շիլան, բայց եթե առանց Ֆրիցի վերադառնաք, էլ աչքիս չերևաք։

Անցան օրեր և նորից հետախուզական վաշտում թնդաց Արամյանի ինքնակի անունը։

3.

Ծովից քաշվող ձկնորսի ուռկանի պես ռազմաճակատը գնալով սեղմվում էր։ Վաղուց արդեն հեռավոր թիկունք էին դարձել Լեհաստանը, Բալկանյան երկրները։ Սովետական զորքերը ահեղ մարտեր էին մղում Բրանդենբուրգյան հողում։

Գերմանացիները կառչում էին ամեն մի թփից։ Սակայն Բեռլինի վրա թռչող սովետական ինքնաթիռներն իրանց թևերի վրա այնտեղ էին հասցնում հրանոթների մոտեցող որոտը։

Ավագ լեյտենանտ Զեռնովը զորագնդի շտաբից վերադառնալուց հետո իր մոտ կանչեց Արամյանին։ Երկուսով երկար ժամանակ կռթնած դաշտային ծալովի փոքրիկ սեղանին՝ ուսումնասիրում էին քարտեզը։ Հետո մի զննող հայացքով նրան նայելով, հրամանատարն ասաց.

— Մեզ է բախտ վիճակվել։ Պետք է ոչնչացնել։ Այո, ծանր, շատ ծանր խնդիր է։ Երկու օր ժամանակ է տրված։ Պատկերացրու, ավիացիան մի քանի անգամ ռմբակոծել է, սակայն ապարդյուն։ Ինչպես երևում է՝ տեղանքը ճիշտ չէ որոշված։ Սա, ինչ-որ հանելուկային բան է։ Կարո՞ղ ես կատարել։

— Ուրիշ տվյալներ կա՞ն,— հրամանը ուշադիր լսելուց հետո, հարցրեց Արամյանը։

— Եվ ոչ մի բան։ Հայտնի է այն, ինչ բացատրեցի։

— Պատրաստ եմ կատարելու։

Զեռնովը թեթև շունչ քաշեց։

— Իմացիր, իմ լեռնցի, այդ գործողությունից է կախված մեր պատիվը։ Ամբողջ ռազմաճակատը հարձակման կանցնի, եթե մեջտեղից վերանա այդ ստորերկրյա լաբյուրինթոսը, որ գենք, վառոդ, արկ ու ական է մատակարարում մեր դեմ կանգնած թշնամուն։ Դա ոչ միայն զինանոց է, այլ սատանան տանի, նաև սննդի գլխավոր աղբյուրն է, և պետք է ոչնչացնել։ Դու այդ գործի մաս-

նագետն ես, իմ աջ թևը։ Քո իննյակով ցույց տուր, որ Ջեռնովի տղաներն էլ կարող են հերոսներ դառնալ։

— Առաջադրանքը կկատարվի։

— Եթե ուզում ես կազմը փոփոխել, փոփոխիր։ Հենց հիմա հրաման կտամ այդ մասին։

— Ոչ երբեք։ Իմ տղաներով կկատարվի առաջադրանքը։

— Ինչպես ուզում ես։

Գիշերը ավագ սերժանտ Արամյանի իննյակը թողեց դիրքերը։ Վերջին պահին Ջեռնովը ամուր, շատ ամուր սեղմելով հետախույզների ձեռքը, դրկեց Վարոսին.

— Բարի ճանապարհ իմ բաղեներին։ Տեսեք չշտապեք։ Մի մոռանաք հետախույզի զգուշությունը։ Պայմանավորված ժամին։

— Վստահ եղեք։

Եվ գնացին։

Լուսադեմից առաջ թշնամու դիրքերն անցնելուց հետո, հետախույզները անտառի մեջ պահված՝ սպասում էին լուսաբացին։

— Այս տեղանքն անծանոթ է մեզ։ Հարկավոր է լավ ուսումնասիրել,— բացատրում էր իր մարդկանց Արամյանը։

Լույսը բացվելուն պես նրանք իրենց թաքստոցներից սկսեցին դիտել շրջապատը։ Հետո նրանք շարժվեցին անտառով։ Հաջորդ օրը իրիկնամթին մոտեցան նշված նպատակակետերից ոչ այնքան հեռու գտնվող ագարակին։ Գիշերվա ուշ ժամին հասան ատորերկրյա զինանոցի արևմտյան կողմը։

Լայնածավալ դաշտավայրում, ուր երբեմն ցածլիկ բլուրներ էին ցցվում, մթության մեջ, հետախույզների առաջ, վխտում էին դերմանական զինվորները։ Երբեմն բուի պես կռնչում էր մեկը, պատասխան ծվծվոցով լալիս էր մեկ ուրիշը։ Լսվում էին պահակապետերի խուլ մոլտոցները, որոնք փոխվում էին դառնադին կաղկանձի. ամեն ինչ ահավոր ու խորհրդավոր էր Բրանդենբուրգյան նենգ ու դաժան գիշերվա մեջ։

— Փոխում են գիշերային պահակների վերջին հերթը,— կողքին պառկած Դմիտրիին շշուկով բացատրում է Վարոսը։

Գիշերը, դանդաղ մեռնում էր դաշտերի ու անտառների վրա... Վաղուց լռել էին ձայները։ Արամյանն իր հետ վերցնելով Դմիտրիին ու Վոյտենկոյին՝ սուզվեց խավարի մեջ։ Ատորերկրյա աշխարհը տանող առաջին պահակակետում երկու պահակներն էլ

հավիտենապես քնած մնացին։ Ոչ ոք չլսեց նրանց ճիչը, որ մարեց անակնկալ հարվածի ու բերանները խցկած շորագնդի տակ։

Հետախույզները՝ վերևում սպանված գերմանական պահակների կողքին կարգելով իրենց պահակները, կարծես գետնի տակն անցան։ Երբ լիցքառատ, պայթման մեծ ուժի ականները դրված էին բացված խոռոչների մեջ՝ Վարոսը հրաման տվեց թողնել ստորերկրյա աշխարհը։ Եվ չորեքթաթ, երբեմն էլ սողալով հետախույզները կծկել սկսեցին դարձի ճանապարհը։

— Արագ, արագ։ Շուտով զինանոցը հոգս կցնդի ու նրանք մեզ կվնտրեն,— շտապեցնում էր Արամյանը։

Հետո խավարի մեջ վազել սկսեցին նրանք, ընկնում էին, բարձրանում, սակայն համառորեն առաջ էին սլանում։ Ինչ որ տեղից վեր սլացան հրթիռները։ Հետախույզները կպան գետնին։

— Սողալով, միայն սողալով,— կրկին հրամայեց Արամյանը։

Սողալով շարժվում էին մարդիկ, արյունոտվում էին նրանց ծնկները, ձեռքերը։ Եռևում մնաց ագարակը. հեռու չէր և անտառը. և նրանք հասան անտառը՝ հաշվելով յուրաքանչյուր վայրկյանը։

Անտառում հետախույզները ոտքի կանգնեցին ու խոր շունչ առան։

— Չծխել,— եղավ Արամյանի հրամանը,— երկու ոտքերից հետո շարունակելու ենք ճանապարհը։ Մի մոռանաք, որ դեռ մոտ ենք կրակին։ Բոլորս կխլանանք, հեռանալ է պետք։

Իննյակը նորից շարունակեց իր ճանապարհը։ Ծառերի չոր ճյուղերը քերծում էին նրանց դեմքերը, պատառոտում զգեստները։

Հանկարծ զարհուրելի մի որոտ ցնցեց անտառը։ Վաղքի ժամանակ հետախույզներն իրար գլխի թափվեցին։ Հորիզոնը արնակարմիր հագավ և խավար գիշերի սիրտը սողացին բոցերի հրեղեն սյուները։ Պայթյունները գնալով սաստկանում էին։

Հետախույզները շունչները պահած՝ ուրախ հայացքով նայում էին ահեղ տեսարանին։ Ահռելի էին զարկերը, կարծես գերմանական ողջ հողն էր պայթում։

Կարճ դադարից հետո՝ հետախույզները շարունակեցին ճանապարհը։ Հեռու չէր լուսաբացը և դա անհանգստացնում էր նրանց։

— Դու կրակ նկատեցի՞ր,— մոտենալով Արամյանին շշնջաց Դմիտրին։

— Կրա՞կ։

— Այո։ Լավ նայիր։

Ծառերի միջից առկայծում էին ինչ որ լույսեր։

Հետախույզները կանգ առան։

— Դոնեցին իմ ետևից, մնացածներդ պատրաստ եղեք։— Եվ նրանք տեսան խիտ ծառերի մեջ, խոր փոսում վառվող կրակը։ Գերմանական մի խումբ զինվորներ նստել էին կրակի շուրջը։

— Ետ դարձիր։ Հարկավոր է հեռանալ այստեղից,— ասաց Վարոսը։

Լուսաբացից առաջ, պայմանավորված վայրում ինֆյակին դիմավորեց Զեռնովը։

Նրա տրամադրությունը բարձր էր։

Զեռնովը ամուր սեղմելով Արամյանի ձեռքը՝ ասաց.

— Երբ հորիզոնում երևացին կրակի սյուները, ես գեներալին զեկուցեցի առաջադրանքը կատարած լինելու մասին, երբ այժմ դուք ողջ և առողջ վերադարձաք, ինքս կգնամ նրա մոտ։ Ապրեք տղերք։ Գեներալը հրամայեց ձեր ինֆյակին ներկայացնել կառավարական պարգևի։

Հաջորդ օրը ռազմաճակատի այդ հատվածում սկսվեց սովետական զորքերի նոր ու հզոր հարձակումը։

1943 թ. նոյեմբեր

ՁԻՆՎՈՐԻ ՆԱՄԱԿԸ

Վերջալույսին, երբ արևը իր ոսկե շողերն էր հավաքում Մասիսի գագաթից, երկօրյա լարված ու անընդհատ աշխատանքից հետո, տուն էր վերադառնում ճարտարապետ Սահերյանը։

Ճարտարապետը հոգնած էր։ Անքուն գիշերներն իրենց կնիքն էին դրել նրա լայն ու թուխ դեմքին։ Մեքենան արդեն ետևում էր թողել արվարձանը, արագացնելով ընթացքը սլանում էր կենտրոնական պողոտայով, սակայն ինչ որ բանից դժգոհ, նա փնթփնթում էր։ Միտքը չէր կտրվում կիսատ թողած գործից։ Ինչո՞ւ իրեն ստիպում են տուն գնալ հանգստանալու, մինթե՞ ինքն այնքան հոգնած է, որ այդ արդեն նկատելի է ընկերների, դիրեկտորի համար։ Տուն հասնելով նա նախասենյակում հանեց վերարկուն, անշտապ մոտեցավ լվացարանին։ Երկար ժամանակ սառը ջրով զովացնում էր դեմքը, պարանոցը, քունքերը։ Նրա կողքին հայտնվեց մայրը, որը գորովագութ հայացքով նրան էր նայում։ Սահերյանը լվացվելուց հետո սանրված, թարմացած դեմքով նայեց մորը, ժպտաց ու նրան առավ իր լայն թևերի մեջ, ջերմորեն համբուրելով խորշոմներով պատած ճակատը։

— Անհանգիստ եմ լինում, որդի։ Գոնե գիշերները տուն արի,— մրմնջաց մայրը։

Սահերյանը ծիծաղեց։

— Ի՞նչ հարկ կա անհանգստանալու մայր, քեզ հայտնի է, որ գործարանից տեղ չեմ գնում։

Մայրը ու որդի թևանցուկ ներս մտան գեղեցիկ կահավորված, կաթնագույն լույսերի մեջ փայլող սեղանատունը, ուր ճարտարապետի երիտասարդ կինը արդեն պատրաստել էր ընթրիքի սեղանը։ Փոքրաթիվ ընտանիքը խաղաղ ու հանգիստ նստեց ընթրիքի։

Ընթրիքից հետո Սահերյանը անցավ յուր առանձնասենյակը ուր գրասեղանի վրա դրված երկու օրվա նամակներն ու հեռագրերը սպասում էին նրա ուշադիր հայացքին, սակայն նա անտրամադիր

էր։ Կարդաց հեռագրերը, որոնցից մեկը՝ Օդեսայում ապրող ավագ քրոջից էր։ Քույրը խնդրում էր գրել ռազմաճակատում գտնվող կրտսեր եղբոր մասին։ Հետո նա վերցրեց տարբեր գույնի ու մեծության ծրարներ և թեթևակի աչքի անցկացրեց։ Կարդում էր ուղարկողների հասցեները և նորից դնում իրենց տեղը։ Ուշադրությունը գրավեց վարդագույն մի փաթեթ, որի վրա դրոշմված էր՝ «գործող բանակ» եռանկյունի կնիքը։

Խնամքով բաց անելով փաթեթը, ճարտարապետը այնտեղից հանեց կապույտ կազմով սովորական մի տետրակ, որի առաջին էջի վրա տղամարդու ուղիղ ձեռագրով գրված էր՝ «Բարեկամիս՝ ճարտարապետ Սահերյանին»։

— Հետաքրքրական է,— կիսաձայն ասաց նա ու վառելով ծխախոտը, նստեց սեղանի մոտ, ձեռքը վերցնելով կապույտ տետրակը՝ զինվորի նամակը։

«Մենք չենք տեսել իրար,— սկսեց կարդալ նա,— մենք հեռու ենք գտնվում իրարից, բայց մենք մտերիմ բարեկամներ ենք և ահա թե ինչու։ Դուք ճարտարապետ եք, իսկ ես զինվոր։ Դուք ստեղծագործում եք հայրենի երկրի փառքի համար, իսկ ես զենքը ձեռքիս կռվում եմ նրա հավերժության ու ազատության համար։ Ուրեմն միևնույն է մեր նպատակը, մոտ ու հարազատ են մեր սրտերը։ Ինչ ասեմ իմ մասին։ Ես զինվոր եմ և այդ բավական է ձեզ համար։ կավելացնեմ միայն, որ ազգությամբ ռուս եմ։

Այսօր մենք գրավեցինք գերմանական քաղաքներից մեկը։ Չգիտեմ ինչու, ցանկություն զգացի նամակ գրել ձեզ, պատմել մեր զորագնդի հրամանատարի մասին, որի հետ Կովկասյան լեռներից հասանք ռեյնների ոստայն՝ Գերմանիան...

Իմ հրամանատարը, որի մասին պիտի պատմեմ Ձեզ, երիտասարդ էր։ Մենք սիրում էինք պարզ ու անբիծ հոգու տեր այդ մարդուն, մարդ, որը չգիտեր ինչ բան է երկյուղը։ Հանգստի թե կռվի ժամին միշտ մեզ հետ էր լինում։ Սիրում էր մարտիկներին, անձամբ ճանաչում նրանց։ Իսկ ես անբաժան էի նրանից։ Դառնանում էր նրա սիրտը, երբ կռիվներում կորցնում էինք մեկն ու մեկին։ Երիտասարդ էր, ուներ սիրող հայրական սիրտ։ Հիշում եմ, կարծես այսօր լիներ, երբ մենք ծանր ու արյունալի կռիվներից հետո հասանք Դնեպրին...

Մեծ ու խաղաղ այդ գետի վրա իմ հրամանատարին բախտ

վիճակվեց առաջին դետանցը կառուցել։

Լայնահորդ, երբեմնի խաղաղ այդ գետը ահեղ զարկերից կընճռոտվում էր, վեր շպրտում ջրի հսկայական սյուներ, կարծես բողոքի ու ցասման պոռթկումից լինեին դրանք, որոնք Նիագարայի ջրվեժից գահավիժող ջրերի պես ամեհի ուժով ցած էին թափվում, առաջացնելով սև, պղտոր ալիքներ, որոնց վրա տաշեղների պես օրորվում էին ծանր բարձած լաստանավերն ու հարյուրավոր նավակները։

Կես գիշերը վաղուց էր անցել։ Իրար ետևից ձգվող կամրջակապերը ետևում էին թողել գետի լայնությունը։ Մենք մեր հրամանատարի հետ աջ ափին արդեն լսում էինք ալիքների մեղմ խշշոցը ավազների մեջ, երբ գերմանացիները նկատեցին մեզ ու մեր վրա ուղղեցին կրակի հեղեղը... .

Զախ ափից խոսեցին և մեր հրանոթները՝ օդը սասանելով իրենց ահարկու զարկերով։

Իմ հրամանատարի հնարամտությունն անսահման էր. իր նախընթացը չունեցող թափով առաջ տանելով հսկայական շարժվող կամուրջի կառուցումը, նա ճիշտ որոշում էր պայթող արկերի ու ռումբերի տեղը, կատարում տեղաշարժեր, շտալով մարդկային ուժի մեծ զոհեր։

Լուսաբացին գերմանացիները սարսափեցին, երբ տեսան գետի լայնության վրա կառուցված տասնյակ ու հարյուրավոր գետանցներ։

Մեր կառուցած կամուրջի վրայով բոցեղեն լեզուները դուրս գցած սլացան ինքնագնաց հրանոթներն ու տանկերը։

Կանգնած աջափնյա կամրջագլխին, իմ հրամանատարը նայում էր ղենքի ու զորքի փառավոր երթին։ Նա արծվային հայացքով զննում էր թշնամու ռումբերից ու արկերից ծակծկված գերանները։ Արդյո՞ք կդիմանան հզոր ճնշմանը՝ զորքերի ու տեխնիկայի անընդհատ հոսանքին։ Այո՛։ Նա իր մարտիկների հետ բռնեց փայլուն քննություն, դրա լավագույն ապացույցն էր տանկային դիվիզիայի հրամանատարի խոսքերը, որը զրահապատ մեքենայով անցնելով աջ ափը, դուրս եկավ մեքենայից, մոտեցավ նրան, հարազատ եղբոր պես գրկեց, համբուրեց ու ասաց.

— Ձեր խիզախությունը երբեք չի մոռացվի։

Հենց այնտեղ, նա բարձր հրամանատարության հանձնարա-

թությամբ իմ հրամանատարի կուրծքը զարդարեց փառքի ու հերոսության նոր շքանշանով։

Նայելով հեռացող, դեպի թշնամին խոյացող հարազատներին, ցնծում էր նա, իր սրտի խորքում բարի երթ մաղթում անօրինակ պայքարի մեջ մտած միլիոնավոր բախտակիցներին, նրանց, որոնք իրենց դեմքի վրա ամեն վայրկյան մահվան շունչն են զգում, որոնք հայրենիքի ազատության համար անձնազոհությամբ արհամարհում են դաժան մահը...

Թշնամին չէր հաշտվում այն մտքի հետ, որ մենք հասանք ու անցանք ջրային այդ մեծ պատնեշը, որը համարվում էր անառիկ, և դրա համար սև ալիքների նման գրոհի էր նետվում, երկինք հանում հազարավոր ինքնաթիռներ։ Գետը եռում էր թափվող ռումբերի, արկերի ու գնդակների տարափից։

Սակայն իզուր էին նրանց ջանքերը։ Աշխարհում և ոչ մի ուժ չէր կարող կանգնեցնել մեր մարտիկներին, նրանց, որոնք պատերազմի ճանապարհներին տեսել էին նենգ թշնամու կողմից հրո ճարակ դարձած հոյաշեն քաղաքներն ու լի շենները, մեր մարդկանց թափած արյունը։

Ահեղ կռվի պահին, թշնամու ինքնաթիռները հրկիզող ռումբերով այրեցին մեր կառուցած շարժվող կամուրջը։ Մի պահ դադարեց լավայի պես հոսող զենքի ու զորքի ընթացքը։ Մարտիկներից առաջ մեր հրամանատարը ինքը նետվեց դեպի հրեղեն բոցերով վառվող կամուրջը։ Այդ դժոխային մի պայքար էր մարդկանց ու կրակի միջև՝ ոռնացող արկերի ու ռումբերի ահասարսուռ կարկուտի տակ, որը և վերջացավ կրակի պարտությամբ. նորից վերանորոգված կամուրջի վրայով դեպի մարտ սլացան տանկերն ու ինքնագնաց հրանոթները։

Այդ օրվանից ես ավելի ջերմ սիրով սիրեցի իմ արծիվ հրամանատարին։ Նա ևս սիրում էր մեզ, սիրում էր մի առանձին սիրով, որը հատուկ է մեծ սիրտ ունեցող մարդկանց։

Եվ մենք անցանք ռազմի ճանապարհներով։ Հեռավոր թիկունք դարձան Բալկանները։

Այսօր մենք գրավեցինք գերմանական Տ. քաղաքը, իսկ հարձակման նախօրյակին ես ստացել էի մորս նամակը։ Ես ունեի հայր, կին ու երկու արևանման մանկիկներ։ Տխուր էի ես, զարմանալի տխուր։ Թվում էր ինձ, որ կողքիս կանգնած էր սևազգեստ

մայրս ու իր դեղնոցի ծայրով վշտից կուրացած արտասուքոտ աչքերն էր սրբում։ Մոտեցավ հրամանատարս՝ «Տխուր ես»,— ասաց։ Տխուր եմ, պատասխանեցի ես ու նրան մեկնեցի մորիցս ստացած նամակը։ Այո, ես ունեի հայր, կին, երկու պայծառ մանկիկներ, որոնց տեսության էի կարոտում, իսկ նրանց ողջ-ողջ այրել էին գերմանացիները. մայրս գրում էր, որ վրեժխնդիր լինեմ ու առն չվերադառնամ մինչև արյան մեջ չխեղդվի թշնամին։ Հրամանատարս մարտիկների համար բարձրաձայն կարդաց նամակը, հետո լուռ սեղմեց ձեռքս, իսկ լուսաբացին տվեց հարձակման հրամանը։

Գերմանացիները կատաղի հակադրոհների էին դիմում, բայց մենք լեռնացող ուժով ետ էինք մղում նրանց հակադրոհները և քայլ առ քայլ մոտենում քաղաքին։

— Հա՜ռաջ, միշտ հա՜ռաջ իմ քաջեր,— կռվի տաք պահին լսում էինք մեր հրամանատարի ձայնը։

Եվ մենք կռվում էինք։ Մոռացել էինք ամեն բան, մենք տեսնում էինք թշնամուն և կռվում էինք նրան կործանելու համար։

Այդ քաղաքի համար մղվող վերջին մարտը արյունով ներկեց այնտեղ ամեն քար ու թուփ...

Օ՜, եթե կռվի ահեղ ժամին տեսնեիք նրան՝ մեր հրամանատարին, կցնծար ձեր սիրտը, նոր թևեր կառներ ստեղծագործ ձեր միտքը։ Նա մերկացնելով սուրը վերջին դրոհի տարավ մեզ։

Երբ առավոտը, որ մեր աշխարհի վրա բացվում է խաղաղ ու հեղ, այստեղ բացվեց ավարտվող մարտի հրացոլքով ու մեր հաղթանակով, քաջի մահով ընկավ իմ հրամանատարը։

Բռնելով արյունոտ կուրծքը, նա հրաման տվեց.

— Բարձրացնել մեր սուրբ հայրենիքի դրոշը։

Այն շենքի մոտ ուր վիրավոր կրծքով ընկավ իմ հրամանատարը, բարձրացավ հուրհրան մեր հայրենիքի փառքի նվիրական դրոշը՝ բարձր բոցերից, բարձր պայթյուններից ուր հրացոլքերից ամպերն էին շիկնել։

Հետո փակվեցին իմ հրամանատարի աչքերը, դադարեց բաբախել վեհ ու ազնիվ սիրտը։ Մենք երդվեցինք վրեժ, սուրբ վրեժ լուծել ոսոխից։ Չէ՞ որ մեր ամեն քայլափոխին նորից մեզ հետ էր մեր հրամանատարի անմահ հոգին։

Այո, այսօր մենք գրավեցինք գերմանական Տ. քաղաքը ու իմ

մեջ ցանկություն զգացի դրել ձեզ այս նամակը, որ դուք միշտ հիշեք իմ հրամանատարի դյուցազնական տիպարը։ Կատարեք զինվորիս ցանկությունը՝ Արարատների դեմ փռված վարդագույն մայրաքաղաքում թող խոյանա իմ հրամանատարի արձանը։

Այսպես, իմ աղնիվ բարեկամ, գուցե այն օրվա գիշերից հետո, երբ մեր հաղթանակը աշխարհը ցնցեց, դուք ապրեցիք երկու հաղթանակ՝ այն, որ ռազմի դաշտում զենքով ու պատվով նվաճվեց և այն, որ ձեր լուսաշող մտքով ստեղծագործեցիք։ Ստեղծագործեցեք ի բարորություն մեր մեծ հայրենիքի, այն հայրենիքի, որի համար իր երիտասարդ կյանքը չխնայեց իմ հրամանատարը։

Հավերժ փառք հայրենի հողի համար ընկած հերոսներին։

Իմ հրամանատարը ձեր կրտսեր եղբայրն էր...»։

Երբ մայրը բաց արեց որդու առանձնասենյակի դուռը, տեսավ նրան կանգնած գրասեղանի առաջ։

— Ինչ բանի ես որդի,— գրկելով նրան հարցրեց մայրը,— քեզ, հոգիս հանդստանալ է պետք։

Սահերյանի աչքերից կախվեցին արտասուքի խոշոր կաթիլներ։ Նա դեմքը հպեց մոր կրծքին։ Լալիս էր նա ու համբույրներ քաղում այն կրծքից, որ արծիվ էր սնել հայրենիքի համար...

1945 թ. մարտ

ՔՍԱՆՀԻՆԳ ՏԱՐԵԿԱՆԸ

Վանդյանը արդեն քսանհինգ տարեկան է։ Բայց ե՞րբ լրացավ։ Տասնութամյա հասակում նա ոտք դրեց ինստիտուտի շենքը։ Ուսանողները տեսնելով նրան, հարցական հայացքներով նայեցին իրար։ Միթե՞ այդ վատառողջ, վտիտ պատանին որոշել է սովորել։ Չէ՞ որ ուսումը հեշտ ձեռք չի բերվում, հարկավոր է դիշեր ու ցերեկ սովորել, իսկ դրա համար ամենից առաջ պետք է ունենալ ամուր առողջություն։

Սակայն Վանդյանը ցույց տվեց, որ ինքը դիտե տոկալ։ Նրա հոգին թև էր առնում, սավառնում ճարտարապետ դառնալու անհագ ցանկությունից։ Երեք տարվա ուսանողական կյանքը ամրապնդեց նրա մեջ հավատը, որ ինքը կդառնա ճարտարապետ։ Դիշեր ու ցերեկ սովորում էր նա, գծում այնպիսի նախագծեր, որոնք արժանանում էին դասախոսների առանձին ուշադրությանը։ Նրա ուրախությանը չափ չկար, երբ ուսման երրորդ տարում նախագծային բյուրոյի կողմից ընդունվեց իր նախագծերից մեկը։ Այդ դեռ ուսանողական նստարանից, իսկ երբ ավարտի ինստիտուտը, այն ժամանակ նա հանդես կբերի իր նոր նախագծերը, որոնցով կառուցված շենքերը նոր փայլ ու շուք կտան քաղաքին։ Այո, այո Վանդյանը քիչ դիշերներ չի լուսացրել, ուսումնասիրելով ազգային ճարտարապետության նմուշները, որոնք այնքան հմայիչ են և գերող։

Քսանմեկ տարեկան հասակում լռակյաց ու ինքնամփոփ Վանդյանը սիրեց մի աղջկա։ Նրա սիրո էակը մի աշագեղ ուսանողուհի էր։

Նունուֆն էլ սիրում էր նրան, սիրում էր խելագարի սիրով. կարծես նա իր փրփրագեղ հույզերի մեջ ուզում էր հալել Վանդյանի մռայլ ու ինքնամփոփ բնավորությունը։ Նունուֆը նրա մեջ տեսնում էր բարձրացող նոր ճարտարապետի, որի պայծառ միտքն իր հզոր թռիչքով ստեղծելու էր հոգեզմայլ դեղեցիկը...

Հանգստյան օրերին նրանք երկուսով բարձրանում էին Նորքի այգեշատ բլուրը, որտեղ սվսվում էր քնքուշ հովիկը, զովացնում դեմքերը, իջնում տափարակի սրտին նստած քաղաքը, իր աներևույթ փափուկ թևերով թևահարում տոթը, շարժում ծառերի սաղարթները։ Նրանք պառկած կանաչների մեջ՝ նայում էին քաղաքին։

— Փակիր աչքերդ, իմ անգին Նունուֆ, և մտքով թռիչք կատարիր մի տասնամյակ։ Պատկերացրու, որ այդ ամբողջ տասը տարիների ընթացքում դու բացակայել ես մայրաքաղաքից։ Եվ ահա Արարատյան աշխարհի սրտով անցնող երկաթուղին, որի վրայով կսլանան էլեկտրական գնացքները, քեզ կհասցնեն քաղաքամերձ, ասենք «Արևելք» կոչվող կայարանը։ Դու ցած կիջնես վագոնից և մի փոքր հանգիստ առնելուց հետո դուրս կգաս, դիմացդ կբացվի մի հրապարակ, որի շուրջն աստղային ծիծաղով շարվել են բազմաքանդակ կամարակապ շենքեր. հրապարակի կենտրոնում, մարմարյա բարձր պատվանդանի վրա, ձեռքին բռնած բաց գիրքը, երկնքի կապույտին է նայում Մաշտոցի բրոնզե արձանը։

Ակամայից քայլերդ քեզ առաջ կտանեն, և դու կանցնես լայնարձակ, ծառաշատ պողոտայով, որի երկու կողմերում բարձրացած շենքերը կհմայեն քեզ իրենց պարզությամբ, գեղեցիկ ոճի ինքնուրույնությամբ։

Նունուֆն իր նուրբ մատներով խառնում էր սիրած տղայի գանգուրները, համբուրում լայն ճակատը, հավերժահարսի նման շշնջում նրա ականջին.

— Հավատում եմ քեզ, դիտեմ, որ կգա այդ օրը։

— Այո։ Եվ Զանգուն իր ընթացքը կփոխի... քաղաք կմտնի նոր հունով և նրա արտասուքի նման վճիտ ջրերում կարտացոլվեն հայրենյան բարդիները։ Կապուտակ ծովակից մինչև քաղաքը նրա ընթացքին զուգահեռ կբարձրանան բազմաթիվ գեղաքանդակ արձաններ։

Երիտասարդ Վանդյանը սիրում էր կյանքը, սիրում էր իր Նունուֆին և գիշեր-ցերեկ կլանում կյանքից, գիտական աշխարհից այն, ինչ անհրաժեշտ էր ստեղծագործական մտքի թռիչքի համար։

Սակայն աշխարհի վրա կախվեցին սև ամպերը, և դավադիր ու նենգ ոսոխը մտավ հայրենի հողը։

Վանդյանը վերջին անգամ նայեց Նունուֆին, գրկեց նրան, սեղմեց իր բաբախող կրծքին, համբուրեց նուրբ շուրթերը և հետո նրան հանձնելով իր նախադծերի կապոցը՝ տարիների երազը, գնաց ռազմաճակատ։

***

Քայլում էր ռազմի դաշտերով Վանդյանն ու խորհում Նունուֆի մասին, նրա, որի մոտ թողել էր իր սերն ու տարիների փայփայած երազները... Նա հիշում էր հայրենի երկիրը, որտեղ կապույտ մշուշի մեջ նազում էին նայիրյան բարդիները։

Այո, մեր լուսավոր կյանքը կործանելու համար են գալիս արյան մեջ լողացող նացիստական ոհմակները։

Նրա պաղ հայացքի տակ պայթում էր հրազենը, և ինքն իր արձակած գնդակից հետո ուզում էր իմանալ, թե արդյո՞ք ինքը չի վրիպել։

Օ՜, որքան ժամանակ է, ինչ Վանդյանը չի տեսել Նունուֆին, իսկ պատերազմի հրի ու ծխի մեջ անցնում են տարիները։ Ինչպե՞ս է ինքը մոռացել... Վաղը գարնան առաջին օրն է։ Նա աշխարհ է եկել քսանհինգ տարի առաջ, գարնան առաջին օրվա հետ միասին։ Քսանհինգ տարեկան։ Ուրեմն պատերազմի դաշտում է բոլորում իր կյանքի առաջին քառորդ դարը... Գուցե առաջին ու վերջին քսան և հինգ տարին։

... Վաղը գարնան առաջին օրն է, իր ծննդյան օրը։ Նա հիշում է մորը։ Հիշում է, թե ինչպես հարազատ մայրն իրեն գրկած սեղմում էր կրծքին ու ասում. «Դու ծնվեցիր գարնան առաջին օրը, դու լույս աշխարհ եկար, երբ գարունը բացվեց մեր աշխարհի վրա, և կանաչ գարունով կծաղկի կյանքդ...»։

Քսանհինգ տարեկան... Այժմ ավելի քան երբևիցե ինքն ուզում է ապրել, հաղթելու ու ստեղծագործելու համար։

Կրակում էր Վանդյանը, հազարավոր հրազենները ժայթքում էին կրակ ու բոց, և ռազմի դաշտը ծածկվում էր թշնամու նոր դիակներով։

Վանդյանը տեսավ, թե ինչպես իր կողքին խոցված կրծքով

ընկավ հրամանատարը։ Տեսավ նա ու կրծքի տակ սիրտը դարկեց լեռնացող մի մոլուցքով։

Ոչ ոք, բացի Վանդյանից, չլսեց հրամանատարի վերջին խոսքերը, գուցե և ոչ մի զինվորի սիրտ այդ պահին այնպես կրակիծ չապրեց, ինչպես նրանը...

Գալիս էին թշնամու զինվորները։ Մի ակնթարթ, և խրամատի առջևի եզրին կուտակված խոնավ հողաթմբի վրա հայտնվում է սվինակիր հրացանը գրկած, նիհար ուսերով երիտասարդ մարդը...

— Հանուն սուրբ հայրենիքի, եղբայրներ, ելեք սվինամարտի...

Հազարավոր զույգ աչքերի մեջ արտացոլվեց խրամատի վրա հրացանը գրկած Վանդյանի պատկերը։ Մարտիկները կռվի ահեղ աղաղակներով դուրս թռան խրամատներից, ու հողը տնքաց նրանց ոտքերի տակ... Գերմանացիները, որ խելակորույս ու օրհասական կռվի էին նետվել, դողացին, ցնցվեցին իրենց դեմ խոյացող սվինավոր մարտիկներից, ու ցույց տալով թիկունքը, փախան կռվի դաշտից...

***

Երբ արյունոտ սվինամարտը վերջացավ, երբ թշնամին փախավ կռվի դաշտից, օգնության հասած զորագնդի հրամանատարը մարտիկների հետ սկսեց փնտրել թաց հողաթմբի վրա բարձրացած նիհար ուսերով զինվորին, նրան, որն օրհասական ժամին սվինամարտի տարավ իր ընկերներին։ Գտան նրան շրջապատված թշնամու զինվորների դիակներով։ Նա ծանր վերքերից տնքում էր։ Տեսնելով զորագնդի հրամանատարին ու ընկերներին, նա բաթի ու սև աչքերով նայեց նրանց, ուզեց բարձրանալ, բայց չկարողացավ։ Նրան ոտքի կանգնեցրին ընկերները։

— Դո՞ւ տվիր սվինամարտի հրաման,— հարցրեց գնդապետը։

— Այո։ Ես, ընկեր հրամանատար։

Գնդապետը, գրկելով նրան, համբուրեց ճակատը։

— Քաջ ես, արժանի հայրենի երկրիդ։ Դեռ որքան էլ ջահել ես։ Քանի՞ տարեկան ես, իմ զինվոր տղա։

Գարնան առաջին օրն էր, այդ օրվա հետ նա աշխարհ եկավ. թշնամին ուզեց խլել գարնան այդ օրը, որ վերջինը լիներ նրա քսանհինգ տարին, և այդ օրն ինքը սվինամարտի գնաց... Նայելով իր հրամանատարին, Վանդյանը մեղմորեն պատասխան տվեց.

— Այսօր լրացավ քսանհինգ տարիս։

1943 թ.

ՓԱՐՈՍԱՎԱՌԸ

Սև ծովի ափին, սպիտակ տնակում ապրում էին ծերունի Արեսն ու Փիրուզան։

Վաղուց, շատ վաղուց էին նրանք ապրում այդ տնակում, իսկ տնակը հարազատ էր նրանց. աստղակիր նավերից այցի եկող նավաստի որդիները մի նոր ուրախությամբ էին լցնում այն։

Բայց եղավ ժամանակ, որ մարդկանց աչքից չքացավ ծանոթ տնակը...

Ո՞ւր գնացին նրա բնակիչները։ Ի՞նչ եղավ տնակը, չգիտեին մարդիկ։

***

Մոայլվեց ծովը, ծովից էլ մոայլ դարձավ Արեսը, երբ մի օր ծովափնյա նրա տնակը մտան թշնամի զինվորները։

— Այստեղից մենք կհսկենք երկինքը,— ասաց սպան,— իսկ դու, ծերուկ, կծառայես մեզ, պառավդ էլ մեր շորերը կլվանա։

Սրտի խորքում լացեց Արեսը։ Դառը արտասուքներ թափեց Փիրուզան։ Ահա թե ինչ է նշանակում տիրակալ։ Նրանք իր կյանքի վերջալույսն են ուզում մարել, ստրկացնել, որ հարբած երախներով ծիծաղեն մարդկանց խեղճության վրա։

Ծովափին, փարոսի բարձր աշտարակի մոտ դղրդոցով կանգ առան երկար փողերով ինքնագնաց հրանոթներ, երկնքի խուզարկու ձայնորսներ, շարժական փարոսներ։

Երկինքը խաղաղ չէր։ Երբ ամեն անգամ ծանոթ հոնդոցով սլանում էին աստղակիր սավառնակները, կրակ ու հուր էին ժայթքում երկարափող հրանոթները, գործի էին դրվում ամպերը թրատող լուսարձակները։

Ծերունին ջուր էր կրում, մաքրում գերմանացի սպաների

կոշիկները, իսկ Փիրուզան լվանում էր նրանց կեղտոտ շապիկները ու լվացքի տաշտակի մեջ դառը արտասուքներ թափում: Մոլուցքը հծկում էր ծերունի նավագնացի սիրտը:

Ուրախ ու գոռոզ էին գերմանացիները: Խմում էին Կովկասի անմահական գինին, վայելում ռուսական հացը:

— Այ, շուտով կվերջանա պատերազմը ու մենք կլինենք աշխարհի տերերը: Ինձ դուր է գալիս այս ծովափը: Այստեղ ես կառուցել կտամ իմ պալատը ու քեզ, ծերուկ, դոնապան կկարգեմ,— հաճույքից մարելով ասում էր գերմանացի սպան:— Կապրես իմ դռան առաջ քո պառավի հետ միասին, որն իմ հավերն ու սագերը կպահի: Ուրախ չե՞ս ծերուկ:

— Ինչու չէ,— կուլ տալով վիշտը, տխրությամբ պատասխանում էր ծերունի Արեսը ու մտքի մեջ փնտրում ելք՝ ոտոխին հպատակ չմնալու համար:

Ու մի գիշեր, որ առավոտ ծնեց, մռայլ ծերունին զարմանալի փոխվեց. անկարող էր իր միտքը Փիրուզային չհայտնել և շշուկով նրան պատմեց... Ուրախացավ և Փիրուզան:

— Ես գիտեի, որ դու պլուխ չես խոնարհի թշնամուդ առաջ,— համբուրելով ծերունազարդ ճակատը ասաց նա:

***

Այդ գիշեր նորից խնճույքի էին նստել գերմանացիները: Սպան տոնում էր Բեռլինաբնակ իր ֆրաուի ծննդյան տոնը:

Ծերունի Արեսն ու Փիրուզան ծառայում էին նրանց: Գինին հոսում էր գետի պես, ձկան պաղ աչքերով մարդիկ երգում էին ու խռպոտվում: Կես գիշերն անց էր, երբ ծովափին հայտնվեց Արեսը:

— Ո՞վ կա այդտեղ,— լսվեց պահակի ձայնը:

— Ինքն է, ծերուկը, գնդապետի հրամանով գալիս եմ քեզ մոտ:

— Ա՜, այդ դու ես ծերուկ: Խմում են բոլորը, իսկ ես մրսում եմ այստեղ:

— Ահա քեզ գինի, ինքը՝ բարի գնդապետն ուղարկեց և հրամայեց խմել իր ֆրաուի կենացը:

— Ինչ հրաշալի միտք, թող ֆյուրերը պահի նրան:

Եվ դողացող ձեռքերով նա վերցրեց գինու շիշը:

— Կենացը լինի մեր գնդապետի չքնաղ ֆրաուի։

Մթան մեջ ծերունու ձեռքին դաշյունը շողաց ու գետին տապալվեց զինվորը։ Արեսը հանեց հրանոթների փակաղակները ու ծովը նետեց, հետո ավազ լցրեց փողերի մեջ։ Երբ գործն ավարտված էր, նա դանդաղ քայլերով տնակի կողմը քայլեց։ Դռան մոտ նրան սպասում էր Փիրուզան։

— Ընկիր ճանապարհ, գնա ծովափով, չի անցնի կես ժամ և կենդանի չի մնա այստեղ ոչ մի մարդ...

Փիրուզան հպարտ քայլեց ծովափով, իսկ ծերունի Արեսը ականներ դրեց խրճիթի պատերի տակ։

Հոսում էր գինին Կովկասի, ռուսական հացն էին կրծում հարբած մարդիկ ու թնդում էր օտար երգը այն հարկի տակ, ուր իրենց բախտավոր ծերությունն էին անցկացրել Արեսն ու Փիրուզան։

Լեռնացած մոլուցքը սրտում ծերունին վառեց պատրույգն ու բռնեց ծովափնյա ճամփան։ Հետո անցան սպասումի դար թվացող րոպեները, ու հանկարծ խաղաղ գիշերվա սիրտը պատռեցին պայթյունները։

— Վրեժն իմ արդար,— գրկելով ահից դողացող կնոջը, հպարտ ասաց Արեսը,— հիմա, որ մեռնեմ, չեմ ափսոսա դրա համար...

Իսկ այդ պահին ծանոթ հոնդյունով դեպի մարտ էին խոյանում աստղակիր սավառնակները։

— Բարի երթ ձեզ օդային օվկիանոսների հպարտ բազեներ, ձեզ հետ է աշխարհը, ձեզ հետ եմ և ես...

***

Հետո հաղթանակ եղավ։ Եկան հարազատ մարդիկ ու ոսոխների համար դերեզման դարձած տնակի տեղը նորը կառուցեցին։

Հիմա էլ այնտեղ են ապրում ծերունի Արեսն ու Փիրուզան, որոնց աստղակիր նավերից ամեն անգամ այցի են գնում նրանց երախտապարտ որդիները, իսկ ամեն գիշեր ծովային մեծ ճանապարհների վրա ուրախ կրակներով վառվում են լույսերը և բարի երթի պայծառ աչքերով ուղեկցում աստղակիր նավերին։

1945 թ. Տուապսե

ԻՄ ԸՆԿԵՐ ՍՈՒՐԵՆԸ

1

Երբ ամեն անգամ հիշում եմ իմ ընկեր Սուրենին, հիշում եմ մեր գյուղը, գետակը, կարմիր ու սպիտակ ծաղիկներով ծածկված մարգագետինը, հիշում եմ գյուղին մոտ, գետակի վրա կառուցված կամարաձև կամուրջը, նրա տակ ջրերից դուրս ցցված երկու մամռոտ քարերը, որոնց վրա, ամռան շոգ օրերին, նստում էինք մենք ու կարթը ջուրը գցած՝ երազում աշխարհի ու արևի հավերժական երթի մասին։ Ամեն անգամ մեր խոհերը պայծառորեն էին վերջանում, թե խավար գիշերից հետո միշտ առավոտ է լինելու աշխարհի վրա։

Իմ ընկերը մեր գյուղի վարժարանի մինուճար որդին էր. վարժարանի տունը գտնվում էր գյուղի ծայրին, որտեղից հավերժական մրմունջը պաղ շրթերին հոսում էր գետակը։ Հաճելի էր ժամերով նստել գետափին ու նայել սառնորակ ու վճիտ ջրերին, հրճվանքով դիտել հոսանքն ի վեր ընթացող ձկների վտառների հոգեզմայլ խաղը, հետո լողանալ, դուրս գալ ափը, պառկել ու տաքանալ մանրահատիկ ավազների վրա։ Այդ ո՞ր մանկան սիրտը ուրախության ճիչ չի արձակել, երբ նրա պայծառ հայացքի տակ կարթի ծայրին ամրացրած խայծին է մոտեցել բկլիկ ձկնիկը։ Լիաթոք ծիծաղում էր իմ ընկերը, երբ խայծը կուլ տված ձկնիկը իր հետ քարշ էր տալիս թելը, որից ճկվում էր բարակ ու երկար ձողը և կլոր շրջաններ էր գծվում ջրի երեսին։

Սուրենը բարձրահասակ էր, սև ու բոլորակ աչքերով։ Երբ ծիծաղում էր՝ սպիտակ ատամնաշարի փայլն էր գծվում կարմիր շրթունքների վրա։ Նրա այտերը հացի միջուկի նման փափուկ ու լիքն էին։ Սիրում էր երգել։ Զնգուն ու քաղցրալուր էր նրա ձայնը, և այդ շարժում էր նախանձս։ Ինչքա՜ն եմ ուզել նրա պես երգել, քանի՜-քանի՜ անգամ նրանից ծածուկ վազել եմ տերտերի տան ետնաբակը, ուր ամեն տարի գարնանը արևահամի համար մշակ-

նները դուրս էին բերում ու իրար կողքի շարում հաստափոր ու դատարկ կարասները։ Գլուխս կարասի մեջ կախած, երջանկությունից խուսի աչքերով երգում էի ընկերոջս երգած երգերն ու նրա ձայնի պես զիլ ու քաղցր էր հնչում ձայնս։ Քանի՜-քանի՜ անգամ հպարտ ու ինքնագոհ, քրտնած գլուխս կարասից դուրս հանելիս հանդիպել եմ մտոս կանգնած ընկերոջս, որ ուրախ ծիծաղում էր։ Եվ մենք երկուսով ծիծաղում էինք, իսկ աշնանը մշակները իմ երգեհոն կաքաոները մառան էին փոխադրում։

Բարի ու դթասիրտ էր իմ ընկերը։

Քանի-քանի անգամ աչքերին արտասուք եմ տեսել, երբ դասի ժամանակ զայրացած վարժապետ հայրը քանոնով խփում էր աշակերտներից մեկն ու մեկի գլխին, կամ դուրս վռնտում դասարանից։ Տանը, տղան դառնում էր փոքրիկ մի դև. սեղան չէր նստում ծնողների հետ, լալիս էր ու ոտքերը հատակին խփելով, պահանջում էր հորից չծեծել երեխաներին։

— Մի ծեծի, խնդրում եմ մի ծեծի երեխաներին։ Եթե ծեծը լավ բան է, ապա ինչու ինձ էլ չես ծեծում, ես ամաչում եմ իմ ընկերներից, իսկ նրանց հայրերը չեն ծեծում ինձ։

Վարժապետը դյուղում ամենքին պատմում էր իր որդու մասին։

— Խելոք ու աղնիվ է տղաս։ Երբ մեծանա՝ ժողովրդի մարդ կդառնա նա։

Անբաժան էինք մենք։

Ձմեռները, երբ ուշ էր լինում, գիշերում էինք որիս տանը պատահեր։ Սուրենը սիրում էր տատիս, որ անհամար հեքիաթներ գիտեր։ Իսկ ես սիրում էի վարժապետին, որը մեզ պատմում էր աշխարհի ու օվկիանոսների մասին։ Երբ Սուրենն էր մեր տանը լինում՝ իջնող մթնշաղի հետ իրենց տան տափակ հողածածկ կտուրն էր բարձրանում վարժապետ հայրը, ուսերին գցած հնամաշ վերարկուն, նա տուն էր կանչում որդուն։ Տատս լսում էր վարժապետի ձայնը, խորհրդավոր ժպտում էր ու աչքով անելով՝ հորս ասում.

— Սուրենը այս գիշեր մեր տանն է մնալու, իսում կիսատ չեմ թողնելու հեքիաթը։ Գնա և իմաց տուր վարժապետին։

Եվ մենք շնորհակալական մեր հայացքներն ուղղում էինք սիրունատես պառավին։ Մինչ հայրս կտուրն էր բարձրանում պա-

տասխանելու վարժապետին, տատս ծնկի վրա նստ էր ծալում հինգ տակ իրար վրա հագած գույնզգույն շորերը և տակի գրպանից դուրս էր բերում քթախոտի հին ու մաշված տուփը։ Խնամքով բաց էր անում հնամաշ տուփի իրար վրա հեծած կափարիչները, պրտղունցով վերցնում քթախոտը ու մոտեցնում ռունգերին։ Նա իր ձեռքի շարժումի հետ տանում էր ուշադիր ու չարաճճի մեր հայացքները։ Առաջին փռշտոց... Ուրախ ճչում էինք մենք, թավալգլոր գալիս թաղիքով ծածկված լայն թախտի վրա՝ օդան լցնելով մեր հոգեթով կանչերով, իսկ տատս շարունակում էր փռշտալ։

— Հա՜... փի՛, ա՛, փի՛-ա, փիա...

Հետո հանգստանում էր ու շարունակում արծվի թևով ճամբորդող քաջ երիտասարդի հեքիաթը։

Իմ ընկերը երազող էր։

— Կավարտենք մեր ծխականը,— հաճախ ասում էր նա,— քաղաք կգնանք, մեծ մեծ շենքեր, օվկիանոսներ ու ծովեր կտեսնենք։ Եթե տա աստված՝ փող էլ ունենանք, կսովորենք ու բժիշկ կդառնանք, սպեղանի կդնենք մարդկանց վերքերին։ Լավ է, չէ, կարեկից լինել մարդու վշտին, ամոքել նրա ցավերը։

Ինչ լավ ու պայծառ էր իմ ընկեր Սուրենը։

Մեր հայրերն էլ էին մտահոգված։

— Չէ, չէ,— գլուխն օրորելով ասում էր վարժապետը,— սրանց իրարից բաժանել չի լինի, պետք է մի բան մտածել, որ միասին քաղաք գնան։

Այո, մեզ բաժանել չէր լինի իրարից։ Մեզ բաժանեց աշխարհի վրա բարձրացրած ամենակով պատերազմը, որ մի օր էլ իր արյունոտ ճիրանները պարզեց մեր գյուղի վրա...

2.

Այն տարվա ամառը դեռ իր հաշիվը աշնանը չէր հանձնել, երբ սուգ ու շիվանը բռնեց գյուղը։ Գալիս էր անօրեն ու անգութ վաղեմի ոսոխը, լալիս էին մայրերը, լալիս էին հարս ու աղջիկ։ Տղամարդիկ մռայլ էին, հայացքները՝ շարագուշակ, նրանք բարձում էին սայլերը, գոմերից ու բակերից դուրս էին բերում ոչխարի հոտերը, կովերի նախիրները։ Կես գիշերին իրար ետևից ճռնչալով շարժվում էին սայլերը։ Քանի օր ու գիշեր գնացինք, չգիտեմ։ Շոգ

էր ու մեծ ճանապարհից բարձրացող փոշին արևի դեմքն էր բրոնել։ Սայլերի ետևից կապած շները կարմիր ու չորացած լեզուները դուրս գցած, հազիվ էին քարշ գալիս։ Կարծես դրանք այն շները չէին, որ կուշտ ու կռուշտ, պառկած բարձր ու բուրմունավետ խոտի դեզերի վրա, ահարկու ու արնակալած աչքերով հսկում էին շրջապատը, կամ տափակ կտուրներին պրպզած, դունչները վեր ցցած՝ լուսնահաչ տալիս, վախեցնում հավատացյալ պառավներին ու քունը աչքերին մոտ չեկող մանուկներին։

Քանի՜-քանի՜ անգամ իրենց սայլից ցած իջավ ու մեր սայլի կողքից քայլեց իմ ընկերը։ Քա՜նի-քա՜նի անգամ կարոտած սիրտը ծուլ եղավ նրան տեսնելով և քանի անգամ փորձ արեցի իջնել սայլից։ Հայրս աչալուրջ հսկում էր և առաջին անգամ բարկացավ ինձ վրա, երբ փորձեցի նրանից ծածուկ իջնել սայլից, վազել ու գրկել իմ ընկերոջը։ Նա ծանր տնքաց, պարզեց հաղթանդամ թևը, բռնեց վզիցս ու, ինչպես տանը եղած ժամանակ էր աներես լակոտին դուրս շպրտում շեմից, շպրտեց ինձ իրեղեններով բարձած ծածկված սայլի խորքը։ Ես լաց եղա, առաջին անգամ զգացի վիրավորանք և այն վտանգը, որ ահավոր թևերը թափահարելով գալիս էր մեր ետևից։ Իմ արտասուքները տեսավ ընկերս, նրա աչքերն էլ արցունքակալեցին ու նա գլխահակ հեռացավ մեր սայլից։

Լուսաբացին մեր գլխի վրայով սուլել սկսեցին գնդակները։ Մենք հասել էինք մեծ գետին, և լուսաբացին մեծ գետի ջրերը մարդկանց արյունով ներկվեցին։

Ո՞վ ինձ հասցրեց լուսավոր այս ափը։ Բայց երբ վտանգն անցավ՝ փնտրեցի իմ ընկերոջը ու էլ չգտա նրան...

3.

Անցան տարիներ...

Հեռու հեռավոր հուշ դարձավ մեր գյուղը, գետակը, կարմիր ու սպիտակ ծաղիկներով ծածկված մարգագետինները, բայց սրտումս անմեռ մնաց իմ ընկեր Սուրենի լուսապայծառ պատկերը։ Որքան եմ նրա մասին մտածել, որպիսի ահավոր մտքեր են

անցել գլխովս։ Ո՞վ գիտի, մի գուցե անօրեն Թուրքի յաթաղանը նրա սիրտը պատռեց՝ ու նրա դին գետը ծովի հատակը հասցրեց ու նրանով կշտացած՝ ծովաձուկը հաճույքից լողաց նավերի ետևից. գուցե վշտացած Արաքսը ափ շպրտեց նրա դին ու մինչև լուսաբաց արյունոտ վերքերը լիզեցին բորենիները, հետո կշտացած սկսեցին սարերն ու անտառները շափել...

Որքան լավ ու պայծառ էր իմ ընկերը. ես չկարողացա մոռանալ նրան։ Անդրանիկ որդուս անունը Սուրեն դրեցի, տարիներ հետո գտա նրա նկարը, մեծացրեցի ու կախեցի սնարիս վրա։ Երբ քունը մոտ էր գալիս աչքերիս՝ բարի գիշեր էի ասում նրան, երբ լուս առավոտն էր մեր աշխարհը գրկում, բաց էի անում աչքերս ու հոգիս խնդություն էր ապրում. միշտ անպակաս էր ժպիտը նրա պատկերից։

Վիշտ, զրկանք ու ցավ տեսած մարդն ապրում էր երջանիկ ու բախտավոր՝ կառուցում էր նորն ու գեղեցիկը, երբ մահի ասպետները մահ սփռելով Հռենոսի, Վիսլայի ափերին՝ իրենց աշխարհակործան բանակները նորից ուղղեցին մեր հայրենիքի վրա։ Հրով ու սրով նրանք անցան Դանուբն ու Դոնը, սև ամպի պես շոքեցին Վոլգայի ափին։

Վերջին անգամ ես կանգնեցի իմ ընկերոջ պատկերի առաջ ու խոսեցի նրա հետ.

— Տեսնում ես իմ մանուկ օրերի դու պայծառություն, նորից գալիս է գորշազգեստ պրուսացին, որ արյան խրախճանք կատարի, որ գետերը արյուն դառնան ու լացից կուրանան մայրերը։ Օ՜, եթե դու կենդանի լինեիր, որպիսի մոլուցքով կկռվեիր ոսոխի դեմ, քանզի դու նույնպես մոռացած չէիր լինի արյունոտ այն տարիները։

Եվ մենք, որ սուրբ ազատությունն էինք վայելել, անցանք Դոնն ու Դանուբը, Վիսլան ու Օդերը, և մահվան ասպետների սփռած մահը իրենց բաժին դարձավ։ Մեր հաղթական բանակներն անցան Բրանդենբուրգյան դարբասներով ու այնտեղ կոխեցին ազատության մեր դրոշակները։

Օտար ափերում ես նորից հիշում էի իմ պայծառ ընկերոջը։ Օ՜, որպիսի խնդություն կզգար նրա սիրտը, եթե ապրեր նա ու տեսներ մեր մեծ հաղթանակը...

Զինվորական հիվանդանոցի պատուհանները բաց էին կանաչ պարտեզի վրա։ Օդը խնկարկում էր ծաղկանց բույրը ու ազատության երգն էին երգում մարդիկ։

— Այստեղ, այս հիվանդանոցումն է պառկած պարտիզանական ջոկատի հայ հրամանատարը,— ասաց իմ պետը։— Ես տանում եմ նրան գերագույն հրամանը, միասին գնանք։

Եվ մենք գնացինք։

Պառկած էր նա անկողնի ձյունե սպիտակության մեջ։ Դալուկ էր դեմքը։ Դողդոջ ձեռքերով բռնեց հրամանաթերթը, մոտեցրեց աչքերին ու կարդաց։ Եվ ինձ ծանոթ մի ժպիտ լուսավորեց նրա դժգույն դեմքը։

— Ծառայում եմ ժողովրդին,— շրթունքներին սեղմելով Գերագույն Գլխավոր Հրամանատարի հրամանը, արտասվաթոր աչքերով ասաց նա։

Հետո մեր հայացքները հանդիպեցին իրար։ Նա դողդոջ ձեռքերով շփեց ճակատը, սև աչքերի մեջ ուրախ վառվեցին կրակները, և ես հիշեցի մեր գյուղը, դետակը, մարգագետինը։ Մենք վազեցինք կարմիր ու սպիտակ ծաղիկներով ծածկված մարգագետինով ու քամին վը՛, վը՛, վը՛, վը՛, վը՛, վը՛ սուլեց մեր ականջներում։ Օ՜, մանկական աչքերի անմար կրակներ, մի՞թե կարելի է մոռանալ ձեզ։

— Դուք հայ ե՞ք,— կամացուկ հարցրեց նա։

— Այո։

— Եվ անշուշտ Ղ.—ից։— Ու նա ժպտաց,— մի՞թե մոռացել եք ձեր ընկերոջը։

Նա էր, իմ ընկեր Սուրենը։ Ես վախենում էի թարթել աչքերս. կարծես անկողնի սպիտակության միջից դալուկ դեմքով մարդու փոխարեն ինքը՝ իմ մանուկ օրերի ընկերը բարձրացավ ու նրա դրնդուն երգը օրոր ասեց ջրերին, նա կրկին նախատինքով խոսեց վարժապետ հոր հետ, և ես լսեցի նրա խոսքերը. «Մի ծեծիր, եթե լավ է ծեծը, ինձ էլ ծեծիր»։

Այո, ես վախենում էի թարթել աչքերս. կարծես երազ ու պատրանք էր այդ, նույնիսկ չէի շնչում։ Նա փակեց աչքերը, ժպտաց խուժ աչքերով ու կամացուկ շշնջաց.

— Մենք գտանք իրար։ Մոտեցիր ու գրկիր ինձ։ Կյանքում ամեն ինչ պատահում է։

Ու կարոտակեզ մեր շրթունքները իրար հպվեցին։

— Ինչ լավ է, որ հանդիպեցինք։ Ցիր ու ցան եղանք այն դժնի օրը, անցանք պարսից հողը, հետո հայրս բնակություն հաստատեց սլավոնական այս երկրում։ Ազատության զինվոր դարձա ես։ Տեսնում ես, ծանր եմ շնչում, վայրկյաններով եմ հաշվում այն կյանքը, որի համար արյուն թափեցինք։ Տար զավակներիս Սովետական մեր հայրենիքը, թող տեսնեն ու սիրեն նրանք մեր լեռներն ու շմոռանան ազատության զինվոր իրենց հորը...

Լռեց։ Դաժան մահը իր դեղին մատներով սեղմում էր կոկորդը։

— Մանուկ օրերի պես ամուր գրկիր ինձ, ես ուզում եմ վերջին պահին հայրենի երկրի կարոտն առնել քեզանից...

Իմ գրկում հանգած նա, դադարեց բաբախել մեծ ու ազնիվ նրա սիրտը։

Իսկ ես երբե՞ք, երբե՞ք չեմ մոռանա իմ ընկեր Սուրենին...

1947 թ. փետրվար

ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայրենական Պատերազմի օրերին, Հովասափը մայրաքաղաքում ավարտելով գյուղատնտեսական բարձրագույն դպրոցը, չմտահոգվեց պաշտոնավարելու մասին, նա կամավորագրվեց Սովետական Բանակին՝ նպատակ ունենալով զենքը ձեռքին կռվել թշնամիների դեմ։

Բայց կատարվեց անսպասելին։ Ռազմական բարձրագույն հաստատությունից Հովասափի դիմումն ուղարկեցին Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատ, իսկ այնտեղ նրան քարտեզի վրա ցույց տալով Օ. գյուղը, ասացին։

— Թիկունքում էլ աշխատողներ են պետք։ Մեկնիր այս գյուղը։

Հովասափը համառեց, աղաչանք արավ։ Ապարդյուն։ Եվ նա գյուղ մեկնեց։

Մեծ է Օ. գյուղը։

Կոլեկտիվ տնտեսության դաշտերն ու այգիները տարածվում են Կարմիր լեռներից մինչև Արաքսի ափը։ Հովասափը օրեր շարունակ շրջեց դաշտերն ու այգիները, եղավ Արաքսի ափին, այնտեղ հանդիպեց սահմանապահ զորամասի ուղեկալի պետին, ծանոթացավ նրա հետ ու սրտով սիրեց նրան։ Եվ Հովասափի հոգում հուշեր զարթնեցին, գծվեցին արյունի ու արցունքի տարիները։ Արաքսի ջրերն այն տարիներին կարմիր էին հագել հարազատ մարդկանց արյունից։ Ամեն ինչ լափող բոցերի մեջ վառվում էին շենքերն ու գյուղերը... Որպիսի՜ ժամանակներ էին։ Այդ թոհ ու բոհի մեջ էր, որ կորցրեց ծնողներին... Հիշեց և մանկության օրերը։ Իրիկնադեմին հարազատ գյուղը գծվեց ընդարձակ հարթության վրա, սպիտակ ու բարակիրան բարդիները նազեցին մայրամուտին։ Ահա գյուղի մոտից անցնող գետակը պաղ ջրերով։ Եղբոր հետ անցնում են գետակով, և ջրերի կոտրված հայելու մեջ քայ-

լում, դողում է իրենց պատկերը։ Մայրը, բարի ու գթառատ մայրը, կտուրի վրայից կանչում է իրենց։ Ի՞նչ եղան ծնողները։ Ո՞վ գիտե, մի գուցե այն պահին, երբ որդեկորույս մայրն իրեն է փընտրել արտասուքն աչքերին, անօրեն Թուրքի յաթաղանն է պատռել նրա սիրտը, և ճանապարհի տրորված հողը ներկվել է մայրական արյունով։

Ուղեկալի պետը, որ նույնպես խորհում էր, հայացքը հեռուներից չկտրելով, կարծես ամփոփելով գյուղատնտեսի միտքը, ասաց.

— Ոճիրներ, նողկալի ոճիրներ են կատարվել այս վայրերում։ Այստեղ, անմեղ հայի արյունն է թափվել։

— Եվ նրանք մենակ չեն կատարել։ Ուր կա արյուն այնտեղ է գերմանացին։

— Դուք ճշմարիտ եք ասում։ Բայց այս անգամ հավետ ծունկի կգա թշնամին։

Կոլտնտեսականները սիրեցին Հովասափին։

— Իր գործին գիտակ է, —ասացին նրանք։

Երեսունհինգ տարեկան, թիկնեղ, ռաֆայելյան դեմքով գյուղատնտեսը, լինելով ուշիմ ու խստապահանջ, ոչ մի ջանք չէր խնայում օգնելու հողի մարդկանց՝ պատերազմի տարիներին հողից վերցնելու այն ամենը, ինչ պետք էր հաղթանակի համար։

Գյուղից՝ ռազմաճակատներում կռվող իրենց հարազատներին գրած նամակներում կոլտնտեսականները չէին մոռանում և Հովասափի մասին գրել, գովում էին նրան։

Սակայն գյուղում գտնվեց մեկը, որ չսիրեց գյուղատնտեսին։ Եվ սկսեց չարախոսել նրա հասցեին։ Դա հաշվապահ Վարանցոն էր։

Հովասափի համար տարօրինակ էր հաշվապահի դիրքը։ «Ի՞նչ է ուզում ինձանից, մտածում էր նա, ինչ վատ բան եմ արել նրան։ Եթե խելոք մարդ է նա, ապա պետք է հաշվի առնի, որ այն ինչ կատարում եմ, միայն արդյունք է բերելու կոլտնտեսությանը»։ Եվ հաշվապահից դառնացած գյուղատնտեսը այդ մասին պատմեց կոլտնտեսության նախագահ Լիպարիտին։

— Ես էլ եմ լսել, որ Վարանցոն չարախոսում է քեզ։ Մի երկու անգամ դիտողություն եմ արել։ Դու նրան մի լսիր, մենք գոհ ենք քեզանից։

Վարանցոյի մոտիկ մարդկանցից էին բանջարաբուծական բրի-

գաղի բրիգադիր՝ Նուշիկի հայրը՝ քեռի Բարսեղը, պահակ Վարոս ապերը։

Երբ պատերազմի վերջին տարվա բերքը ամբարները հասավ ու կոլտնտեսականների հասնելիքի մասին տեղեկացավ քեռի Բարսեղը, մի օր էլ մռայլված դեմքով ընդունեց Վարանցոյին։

— Բանից երևում է,— ասաց նա,— որ քո բոլոր ասածները հիմք չունեն ու ժողովրդի համար աշխատող, դաղափարով երիտասարդ է մեր գյուղատնտեսը։

— Ճտերը աշնանն են հաշվում, այս դեռ հեչ, մարդկանց աչքերին թոզ է փչում նա, իսկ գիտես ինչ ծախսեր ենք անում նրա երեսից. հա՛յ պարարտանյութի համար դրամ տվեք, հայ պարարտանյութը կայարանից փոխադրենք, հայ գոմաղբը դաշտ տարեք ու այդպես անվերջ։

— Ասում ես ճտերը աշնանն են հաշվում։ Հաշվեցի ու հիմա գտնում եմ, որ աղջիկս ճիշտ էր ասում Հովասափի մասին։ Մարդը գլուխը դրել է գործի համար. չէ, երևում է հալալ կաթնակեր է։

— Սաջի հացի պես շուտ ես շուտ գալիս, այ Բարսեղ,— սրբտնեղած պատասխանեց Վարանցոն։ Աղջիկդ ուրիշ բան ասել չէր կարող. դու դեռ շատ բան կիմանաս...

***

Հաղթանակի լուրը ցնծությամբ ընդունեցին գյուղում։ Ուրախության արտասուքներ էին թափում պատերազմի երկար ու ձիգ տարիներին իրենց կյանքն ու վաստակը հայրենիքին նվիրաբերած մարդիկ։ Ռազմաճակատներից վերադառնալ սկսեցին հերոսական մարտիկները, ծայր առան խնճույքներն ու հարսանիքները։

Գյուղատնտես Հովասափի կրծքի տակ սիրտը ուժգին բաբախեց ընտանիք կազմելու ցանկությամբ։ Ինքը, վաղուց նկատի ուներ քսանհինգամյա սիրունատես Նուշիկին, բայց երբեք սիրտը բաց չէր արել նրա առաջ։ Այո, նա իրավունք չէր համարում իրեն, պատերազմի ժամանակ ընտանիք կազմելու մասին մտածել։ Իսկապես, Նուշիկն էլ կարծես անտարբեր չէ իր նկատմամբ, մի գուցե սիրում է...

Եվ պատահեց այն, ինչ հաճախ է պատահում երիտասարդ մարդկանց հետ։ Նույն տարվա ամռանը, երբ արծաթափայլ մի գիշեր հարսանիք կար և զուռնան կարծես լուսնին աչքով էր անում, մարդիկ երգով ու պարով նորապսակներին տուն էին տանում,

Նուշիկի կողքին հայտնվեց Հովասափը։ Նրանք ժպտացին իրար։ Հետո չզգացին էլ, թե ինչպես ետ ընկան հարսանիքավորներից... Դարավոր ընկուզենու տակ նրանց հայացքները հանդիպեցին իրար։

— Սիրում եմ,— հազիվ կարողացավ շշնջալ Հովասափը,— ասա՛, դու էլ սիրո՞ւմ ես ինձ...

Նուշիկը լուռ էր։ Նա շիկնել էր հացթուխի բատաթին պատրաստ թոնրի շրթի պես։ Աղջկա լռությունը Հովասափի սրտում նոր ուժով բորբոքեց սերը։ Նա վերցրեց Նուշիկի ձեռքը, որը իր լայն ափի մեջ դողդողաց վանդակ ընկած թռչնիկի պես, ապա մյուս թևը փաթ տվեց նրա կարապի նման բարձր ու ճերմակ պարանոցով և նրանց հայացքներն ու շուրթերը հանդիպեցին իրար։ Հետո ծիծաղեցին երկուսով և որպես մոտիկ բարեկամներ, ձեռք-ձեռքի բռնած հասան խնդությամբ համակված մարդկանց...

Գյուղում մարդիկ սկսեցին խոսել նրանց սիրո մասին։

— Լավ է,— ասացին կոլտնտեսականները,— Հովասափն էլ մեր գյուղից չի գնա, տուն-տեղ կդառնա։

Ծերունիները գոհ սրտով ընդունեցին այդ լուրը և անհրաժեշտ համարեցին արագացնել նրանց հարսանիքի պատրաստությունը։

***

Հովասափի և Նուշիկի սիրո մասին Վարանցոյից իմացել էր նաև ծերունի Բարսեղը։

— Տղան մեր գյուղում մնացող չէ, սրտմությամբ ասել էր Վարանցոն,— ով գիտի, որ գնաց, էլ նրան որտեղ կարող ես գտնել, մի թողնի, քեռի Բարսեղ, որ աղջիկդ կապվի նրա հետ, մի անբախտացնի Նուշիկի պես սիրուն բալիդ։

— Ասում ես գյուղում մնացող չէ՞։

— Հա։ Ինքն է ասել։

— Ուրեմն աղջիկս էլ նրան ուզող չէ։

Եվ այդ օրվանից Վարանցոն հաճախակի հանդիպում էր քեռի Բարսեղին, նա վերստին նվաճել էր նրա սերը, իսկ քեռի Բարսեղը սկսել էր խուսափել Հովասափից։

— Տո մի ասող լինի, ինչ է արել Հովասափը, որ ամեն տեղ մարդիկ նրա լավի մասին են խոսում։

— Վա՛, Բարսեղ, էդ որ օրվանից է, որ խիղճդ կորցրել ես ու

Հովասափի մասին վատն ես խոսում,— ասում էին կոլտնտեսականները,— Հովասափը սրտով աշխատող մարդ է, ով էր տեսել որ Շեկ հողերի այգիները բերք տան, հիմա մի գնա տես, ինչ է դարձրել, մարդը գաղափարով աշխատող է երևում...

— Ասում են, որ ուզում է մեր գյուղից հեռանալ։

— Հեռացողը չի, հարկավոր է նրան մեր գյուղում պահել, էդ էլ քո շնորհքից է կախված, ախր Նուշիկը սիրում է...

— Է՛, շատ բան են ասում, դու ինձանից հարցրու,— սրտնեղած պատասխանում էր քեռի Բարսեղն ու անիծում Վարանցոյին, որ նորից կասկած էր գցել իր սիրտը։ Թե որ սիրում է աղջկանս, ինչո՞ւ մի օր ինձ հետ չի խոսում։ Ե՞ս եմ պահել, մեծացրել նրան, թե ինքը...

Նուշիկը գիտեր հոր մտադրությունը։ Եվ չէր զարմանում, որ քանի մոտենում էր աշունը, նա այնքան հաճախ ակնարկներ էր անում նշանադրության մասին։

— Բալաս, անցյալ օրը մեր Վարոսը կտրեց առաջս, թե քեռի Բարսեղ Վաղոն ոնց տղա է, դե ես էլ ասի, որ նրա նմանը գյուղում չկա։ Նա էլ՝ ուրեմն հավանում ես, ես էլ թե ոնց կարելի է ուսումնական մարդուն չհավանել, համ էլ իմ աչքի առաջն է մեծացել, լավ էլ ծնողներ ունի, որ էդպես է, ասում է, քեռի Բարսեղ, շուտով նրա հերն ու մերը խնամախոս են գալու։

— Ես ինքս ինձ համար փեսացու կընտրեմ, հայրիկ, մի՞թե դու համաձայն չես դրան։

— Նայած թե ով է։

— Կիմանաս, մի օր էլ նրա կողմից խնամախոսներ կգան։

— Չլի՞նի գյուղատնտեսին ես ընտրել։

— Ասենք թե։

— Հա, բա շուտ ասեիր էլի, որ աղա փեսացուիս աչքը վրաս քաղցր լիներ։

— Դու ծաղրո՞ւմ ես։

— Բա, որ քեզ թողնի ու քաղաք գնա։

— Այդ Վարանցոյի հնարած բանն է։ Նա կմնա մեր գյուղում, իսկ եթե գնա էլ մենք երկուսով կգնանք։ Իմ քույրերից որն է մնացել գյուղում։ Ինչ վատ բան է։

— Տես, չսխալվե՛ս։

— Անհոգ կաց, բայց դու սիրիր նրան հայրիկ, նա ազնիվ

մարդ է, լավ ու բարի սիրտ ունի։ Ես երբեք ու երբեք չեմ կասկածում նրա ազնվության վրա։

Եվ աղջկա հետ ունեցած զրույցից հետո, քեռի Բարսեղը, որ տարիներ շարունակ հիվանդության պատճառով դաշտ չէր գնացել, որոշեց գնալ Շեկ հողերի այգիները և իր սեփական աչքով տեսնել այն ամենը, ինչի մասին խոսում էին կոլտնտեսականները։

Մի քանի օր անց կոլտնտեսականները զարմացած հայացքներով շափեցին ծերունի Բարսեղին, որը քայլում էր այգիները տանող ճանապարհով։

— Էդ ո՞ւր բարով,— ծերունու ձեռքը սեղմելով հարցրեց կոլտնտեսության նախագահ Լիպարիտը։

— Շեկ հողերի այգիներն եմ ուզում տեսնել։

— Չես ճանաչի, ուրիշ բան են դառել։ Դե սպասիր կարգադրեմ կառքը գա, միասին գնանք,— ասաց նախագահը։

Ողջ ճանապարհին Լիպարիտը պատմում էր գյուղատնտեսի մասին։

— Աշխատող է, ասում եմ, աշխատող։ Սիրտը ցավում է ամեն մի վազի համար։ Նրա ղեկավարությամբ տնկած նոր այգիներն էլ այս տարի բերք են տալու, պետք է շնորհավորել նրան, քեռի Բարսեղ, ասում են Հովասափը սիրում է Նուշիկիդ, լսել ե՞ս։

— Ասում են։

— Ասում են, որ Վարանցոն տակից գլխից դուրս է տալիս ու դու էլ նրան ես լսում։

— Ո՞վ է ասում։

— Ասում են,— ծիծաղելով պատասխանեց Լիպարիտը,— որ ասում են, ուրեմն մի բան կա։

Ամռան վերջին ամիսն էր ու այգիների վրա, օդի մեջ կախված էր հասունության բույրը։

— Ահա և Շեկ հողերի այգիները,— կառքից ցած թռչելով ասաց Լիպարիտը,— մի բերքին նայիր քեռի Բարսեղ։ Արևս վկա, այս տարի աշխորին երկու կիլոգրամ խաղող այստեղից կբաժանենք, իսկ հիշում ես, որ Վարանցոն առաջարկում էր քանդել Շեկ հողերի այգիները։

— Հիշում եմ։ Ասում էր ստացածը, ծախսած աշխատանքի արժեքն էլ չի հանում։

— Բաս, մարդու գործը այստեղից է երևում։ Լավ փեսացու է Հովասափը, դեմ մի կանգնիր, Նուշիկի սիրտն էլ մի կոտրիր։

— Դեռ կտեսնենք,— վազերի միջից կիսաձայն ասաց ծերունին,— բերքի մասին ասելիք չունեմ, թե որ ձեռքերովս չտնտղեի խաղողի ճիթերը, չէի հավատա։

— Արդեն երկու տարի է ինչ այսպիսի բերք ենք հավաքում։ Հիմա գնանք բոստանները։ Դու մի տես ինչ ենք վերցնում այնտեղից։ Հիշում ես չէ՞, քեռի Բարսեղ. Էլի Վարանցոն չէ՞ր, որ կուրծք էր ծեծում թե Արաքսի ափի հողերում բոստան կամ այգի չի լինի, մեր պապերը շատ են փորձել ու դատարկ են նստել, հը, հիշո՞ւմ ես։

— Հիշում եմ։

— Չե՞ր ասում, որ գյուղատնտես Հովասափը ծախսեր անելու հետ շատ գլուխ ունի, հողբաժնումն էլ դեռ դեմ էր խոսել մեր կազմած պլաններին։ Բա հիմա ոնց է կոտրած ձեռքով ամեն օր մուտք գրում, իսկ ծախս չկա, հավաքիր բերքը թե որ կարող ես։

— Էդ մի քիչ էլ իմ աղջկա շնորհքիցն է,— հպարտությամբ ասաց ծերունին։

— Չեմ ժխտում, այստեղ աշխատողները, բրիգադիր Նուշիկի հետ միասին կարող են օրինակ դառնալ բոլորի համար։

Տեսնելով մոտեցող կառքը, Հովասափն ու Նուշիկը ընդառաջ գնացին։ Գյուղատնտեսը մոռացած իրեն հասցրած վիրավորանքները, մեծ հարգանքով ու սիրով ապագա աներոջը պատմում էր.

— Աշնանը այս բոստանների տեղը գառան դմակ տեսակի խաղողի մատներ կտնկենք և մի քանի տարուց հետո հրաշալի բերք կվերցնենք։ Բերրի են այժմ այս հողերը, շատ բերրի։

Ծերունին փորձառու մարդու համառությամբ շարունակում էր դնել փարթամորեն աճած թաղերը, որոնք փռվել էին ածուներում։ Ամբողջ ժամանակ նա լուռ էր։ Երբ հասան վերջին ածուները, ուր կանայք զամբյուղներով հավաքում էին ծերը ծաղիկ, կանաչ ու ախորժակ դրդող վարունգներ, քեռի Բարսեղը կանգ առավ.

— Հա՞, հիմա որ հասկացա։ Դրուստ են ասում, գիտություն ասածը լավ բան է։ Այ, ինչ եմ ասել։ Յոթանասուն տարեկան մարդ եմ, բայց մեր գյուղում էսպես հրաշք բան չէի տեսել։ Ապրես

որդիս։ Շնորհավորում եմ։ Քեզ էլ, աղջիկս, լավ կամքի տեր ես։ Էլ ինչ ասեմ, բարով հասնեք ձեր մուրազին,— և ծերունու ձայնը կերկերաց, ուրախության արտասուքները կախվեցին արծվային աչքերից։

Նուշիկը շրջեց դեմքը, նա իր կյանքում երբեք այդպես բախտավոր չէր եղել։ Ուրախ էր և նախագահ Լիպարիտը։

— Այգեկութից հետո հարսանիքի թամադան ես եմ լինելու, ասենք ես էլ խնամախոս կդամ։

***

Ճաշից հետո Հովասափը ձեռքը վերցրեց Միշուրինի աշխատությունը։ Նա չզդաց էլ թե երբ գյուղի վրա իջավ երեկոն ու երբ գիշեր եղավ։ Քնել էր և դարձյալ Արաքսի ափին էր։ Նուշիկն էր ժպտում նրան, այն պայծառ աղջիկը, որը դաժան պատերազմի տարիներին անբաժան էր իրենից։ Դռան վրա կրկնվող զարկերը արթնացրին նրան։

— Կեսօր էր, իսկ հիմա արդեն գիշեր է,— մթության մեջ գլուխը երերալով փնթփնթաց նա։

Դռան վրա կրկնվեցին զարկերը։

— Ո՞վ է,— ձայնեց նա։

— Ես եմ Հովասափ ջան,—դրսից լսվեց պահակ Վարոսի ձայնը։

— Խեր լինի Վարոս ապեր,— էլեկտրական լամպի կոճակը պտտելով խոսեց Հովասափը, ապա բաց արեց դուռը։

— Խեր չէ, բա ինչ պիտի լինի,— կիսաբաց դռնից ներս մըտնելով ուրախությամբ պատասխանեց կարճահասակ, սապատավոր քթով ու կարճ բեղերով Վարոս ապերը,— եկա որ մի արաղ անուշ անեմ։

— Շատ էլ լավ ես արել։ Ես, իսկույն, Վարոս ապեր,— հյուրասիրաբար ասաց գյուղատնտեսը և պահարանը բաց անելով սեղանի վրա դրեց օղիով լի շիշը։

— Սաղ լինես, որդի, բարով-խերով հասնես մուրազիդ։ Հ՞ը, Բարսեղը էլի՞ քացի-քացի է անում,— հանկարծ հարցրեց ծերուկը։

— Չէ, չէ,— ծիծաղելով պատասխանեց Հովասափը։ Այսօր դու այնտեղ չէիր. նա դաշտ էր եկել, մենք հաշտվեցինք։

— Իշալլա, ուրեմն սաղ ու սալամաթ լինես, Նուշիկի հետ մի բարձի ծերանաք,— բարեմաղթեց նա ու լիքը գավաթը մոտեցրեց շուրթերին։

Հովասափն էլ մի գավաթ օղի ըմպեց։

— Հա՛, արաղը իրա տեղը, համա դրա համար չեմ եկել։ Էգուց կիրակի է, բոստաններում աշխատանք չկա։ Բայց դու արի, կարևոր բան պիտի ցույց տամ քեզ։

— Ի՞նչ նոր բան ես մտածել, Վարոս ապեր,— ժպտալով հարցրեց Հովասափը։

— Արի, կիմանաս, լավ բան է, լավ բան։

— Լավ, շատ լավ, Վարոս ապեր,— քո ազիզ խաթրի համար առավոտյան անպայման կգամ։

— Ես էլ թոռս կգցեմ ու քեզ Արաղի ձկով զոնաղ կանեմ,— բարի գիշեր մաղթելով ասաց Վարոս ապերն ու դուրս գնաց։

***

Իր սովորության համաձայն Հովասափը վաղ առավոտյան բաժանվեց անկողնուց։ Լվացվելուց հետո թեթև նախաճաշեց։ Ժամը ութին դուրս եկավ տանից... Երկու կամուրջների վրա նկատեց ուղեկալի պետին, որը սպիտակ նժույգ նստած, վարդով, երեք հեծելակների հետ դեպի գյուղ էր գնում։ Ուղեկալի պետը հասնելով Հովասափին, քաշեց ձիու սանձը։

— Դեպի բոստանն՞ը,— ջերմորեն սեղմելով գյուղատնտեսի ձեռքը, հարցրեց նա։

— Ճիշտ այդպես,— ժպիտով պատասխանեց Հովասափը։— Հարկավոր է դեռ երկար ուսումնասիրել այս հողերը։ Ձեզ հայտնի է՞ արդյոք, որ մեր վարչությունը որոշել է աշնանը բոստանների տեղը նոր այգիներ տնկել։

— Այո։ Ի սրտե շնորհավորում եմ ձեզ։ Գիտեք,— Հովասափին ծխախոտ առաջարկելով խոսեց նա,— չգիտեմ ինչու, երբ ամեն անգամ տեսնում եմ ձեզ, ակամայից հիշում եմ ընկերոջս։ Երեք տարի նրա հետ միասին, կողք կողքի կռվեցինք գերմանացիների դեմ։ Նրա երակներում սովետական մարդու արյուն էր հորդում։ Հիշում եմ, թնդանոթների ահեղ որոտից հետո, նա հաճախ պատմում էր ինձ իր կյանքի մասին։ Վերջին գիշերը նա ջերմ, շատ ջերմ ու պարզ կերպով արտահայտեց իր մտադրությունը, «Հաղթանա-

կից հետո,— ասաց նա,— քաղաք չեմ վերադառնալու։ Գնալու եմ հայրենի իմ գյուղը. այնտեղ մենք ունենք «Կուրգաններ» կոչվող հանդամաս ուր չի բուսնում և ոչ մի հասկ։ Փոքրիկ ջրանցք կհանենք, ջուրը կհասնի այդ հողերը և ես այնտեղ կտնկեմ խնձորի մի այգի, թող մեր սերունդները հիշեն, որ եղել է մի ռազմիկ, կռվել է ու հաղթանակով տուն եկել, տնկել է այս այգին...»։ Այժմ դուք կատարում եք այն, ինչ իմ ընկերն էր տենչում։ Այո, իմ ընկերը զոհվեց ռազմաճակատում, իսկ դուք իրականացնում եք նրա իղձը։

Ուղեկալի պետից բաժանվելուց հետո, Հովասափը ավելի գանդաղեցրեց քայլերը։ Իսկապես, ի՞նչ արտակարգ գործ է կատարել ինքը, որ ամենքն այնպես սրտով են ընդունում իրեն։ Այ, ուրիշ բան է ուղեկալի պետը, նրա ընկերն ու էլի քա՞նի-քա՞նի հազար մարդիկ։ Որպիսի պայծառ միտք հայտնեց ուղեկալի պետը... քայլում էր Հովասափը և մտքի թևերով սլանում մի հնգամյակ առաջ։ Այո, Կարմիր լեռներից մինչև Արաքսի ափը հարյուրավոր հեկտար նոր այգիներ կփռվեն Արարատների դիմաց, իսկ որպիսի երջանկություն կբերեն կոլտնտեսականներին առատության աղբյուր հանդիսացող այդ այգիները... Բոլորի կամքով այգիների կենտրոնում ինքը կառուցել կտա մի աղբյուր հուշարձան, հայրենիքի ազատության համար իրենց կյանքը նվիրաբերած հերոսների հիշատակին։ Բազմաքանդակ աղբյուր հուշարձանի մարմարիոնաչանչ ճակատին գրել կտա Իմաստուններից Իմաստունի խոսքերը. «... Մեր մարդկանց թափած արյունը անտեղի չանցավ և տվեց իր պտուղները...»։ Այո՛, այդպես էլ կլինի։

Հասնելով բոստանները, Հովասափը կանգ առավ և տիրական հայացքով նայեց այնտեղ աճած փարթամ բուսականությանը։ Կարծես գետնի տակից նրա կողքին բուսնեց ծերունի Վարոսը։

— Եկա,— ծերունու պարզած ձեռքը սեղմելով ասաց Հովասափը։

— Մեր աչքի վրա եկար։ Գնանք հոլայը, մի նստիր հանդրստացիր,— ուրախաձայն պատասխանեց կարճահասակ ծերունին։

— Է՛, Վարոս ապեր, դու էլ էիր ասում, որ Արաքսի ափի հողերը բար չեն տա։ Բա ո՞նց տվեցին։

— Ինչ իմանայի։ Դիտություն ունեցող մարդիկ Մասիսն էլ կծակեն։ Հիմա ես էդ բանը հասկացել եմ։

— Այդպես է Վարոս ապեր։ Եթե մենք գիտություն չունենանք և սրտով չսիրեինք մեր հայրենիքը, չէինք կարող հաղթել թշնամուն։

— Հա՛, դրուստ ես ասում,— փնթփնթաց ծերուկը։— Գնանք, գնանք հոլայը։

Երբ երկուսով ներս էին մտնում տնակը, սեմի վրա գյուղատնտեսը հանկարծակիի եկած, կանգ առավ, այնտեղ էր հաշվապահ Վարանցոն, որը թիկն էր տվել փալասով ծածկված թախտի վրա։

— Դու, այստե՞ղ,— չկարողանալով թաքցնել իր հուզմունքն ու զարմանքը, հարցրեց Հովասափը։

— Հա՛, ես այստեղ եմ,— շողոմ ժպիտը դեմքին պատասխանեց Վարանցոն,— ի՞նչ կա որ, ուզում եմ քեզ հետ առանձին խոսել։ Գործ ունեմ։

— Գործ ունե՞ս,— ավելի տարակուսած հարցրեց Հովասափը։— Մի՞թե այդ մասին չէիր կարող ինձ հետ խոսել գյուղում։

— Չէ, գործը երկուսիս է վերաբերում...

Հաշվապահը աչք ունքով Վարոս ապորը հասկացրեց, որ նրա բացակայությունը ցանկալի է։

— Հա՛, է, ոնց էի մոռացել։ Մի գնամ տեսնեմ ինչ եղավ թոռս, չլինի անտեր ձկները տարած լինեն,— ասաց ծերուկն ու դուրս գնաց...

***

— Ես գործ ունեմ քեզ հետ Հովասափ, դրա համար էլ կանչել եմ այստեղ,— ուղիղ նայելով գյուղատնտեսի աչքերի մեջ և տեղից չշարժվելով խոսեց հաշվապահը։

— Ի՞նչու անպատճառ այստեղ,— կրկին հարցրեց Հովասափը և նրան համակեց վատ նախազգացումը,— ի՞նչ է ուզում անել իրեն այդ չար մարդը։

— Գաղտնիք է,— հողագույն, խոշոր աչքերը կկոցելով պատասխանեց Վարանցոն,— կան բաներ, որ մեր մարդիկ չպետք է իմանան։

— Մեր մարդիկ չպետք է իմանա՞ն։ Տարօրինակ է։

— Պատահում է։

— Ուրեմն ասացեք, ես ձեզ լսում եմ։

— Եկեք լինենք անկեղծ։ Դուք գիտեք, որ ես ձեզ չեմ սիրել։ Բայց այժմ դուք իմ բարեկամն եք, ահա իմ ձեռքը։

— Ինչպես հասկանալ այդ։ Ուրեմն դուք զգացիք ձեր անիրավացի լինելը իմ նկատմամբ։ Տեսաք, որ հաղթեց գիտությունն ու աղնիվ աշխատանքը,— հաշվապահի ձեռքն սեղմելով ասաց նա։

— Ես այդ մասին չէ, որ պետք է խոսեմ ձեզ հետ։ Մի կողմ թողնենք մեր հին վեճը։ Այդպես էլ պետք էր։ Բանից երևում է, որ դուք շատ խակ եք քաղաքականության մեջ։ Իսկ այժմ, աղնվորեն պատասխանեք իմ հարցերին։

— Ես, Վարանցո, իմ կյանքում միշտ էլ աղնիվ եմ եղել,— վիրավորված շեշտով պատասխանեց Հովասափը։

— Լավ, այդ դեպքում ասացեք,— խորամանկ ժպիտը դեմքին խաղացնելով, մի պահ լռությունից հետո վերստին խոսեց հաշվապահը,— ինչ ազգականներ ունեք Արաքսի այն ափին։

— Արաքսի այն ափի՞ն,— Հովասափը դառնորեն ժպտաց։— Ո՞վ պիտի ունենամ։ Հայկական ջարդերի տարիներին կորցրեցի ծնողներիս։ Նրանք կենդանի լինել չեն կարող։ Ես ոչ ոք չունեմ այնտեղ։ Իսկ ինչո՞ւ եք հարցնում այդ մասին։

— Կարևոր է։

— Բայց, ներեցեք, ինձ դուր չի գալիս ձեր խոսակցության եղանակը։ Դուք հանդես եք գալիս որպես քննչական մարմնի աշխատող։ Խնդրում եմ վերջ տվեք ձեր յուրօրինակ հարցաքննությանը։

Հաշվապահը վառեց ծխամորճը։

— Ուրեմն ոչ ոք չունե՞ք։

— Ասացի ոչ ոք։

— Իսկ եթե կենդանի լինեն ձեր հարազատները։

— Այդ անկարելի է։

Վարանցոն գրպանից դուրս բերեց մի լուսանկար և մեկնեց Հովասափին.

— Մի գուցե կճանաչեք այս մարդկանց։

Հովասափը վայրկենապես խլեց նրա ձեռքից լուսանկարը։ Մի պահ դծվեց հայրենի գյուղը, հարազատները։ Նա ճանաչեց։ Այդ իր ծնողների նկարն էր։

— Ինչպե՞ս... միթե այս պատրանք չէ։

— Ոչ բարեկամ, բայց մի շտապեք։ Վերցրեք այս նկարը ևս և ասացեք՝ այս ձեր ավագ եղբորը՝ Սամսոնի նկա՞րն է, թե՞ ոչ։

Երկար ժամանակ Հովասափը նայում էր նկարին, նա սկսեց ողջ մարմնով դողալ, ճանաչեց եղբոր նկարը։ Այո, հարազատ դիմագծերը չեն մոռացվում, թեկուզ անցնեն տասնյակ տարիներ։

— Խոսեցեք վերջապես։ Այս ինչ անլուծելի հանելո՞ւկ է,— կերկերուն ձայնով ասաց նա։

— Հանգստացեք, սիրելի բարեկամ։ Ես ամեն ինչ կբացատրեմ ձեզ։

— Եղեք բարի և ոչ մի բան միք թաքցնի ինձանից։ Հասկացեք, ես ոչինչ, ոչինչ չգիտեմ նրանց մասին։

— Ես ձեր եղբոր՝ Սամսոնի բարեկամն եմ,— ծանր լռությունը խզելով սկսեց իր խոսքը Վարանցոն։ Մենք տեսնվում ենք... Նա ինքը գտավ ձեզ, երբ մեր հանդիպումներից մեկի ժամանակ ես հարց տվեցի նրան, թե այդ ինչպես է, որ ինքը ոչ մի բարեկամ չունի, նա խորին կսկիծով պատմեց, որ ոչ ոք չունի։ Հետո ասաց, որ ունեցել է կրտսեր եղբայր, որին կորցրել է գաղթի ժամանակ։ Իսկ դուք նրան շատ եք նման։ Ես պատմեցի ձեր մասին։ Նա խնդրեց, որ ես իրեն ցույց տամ ձեր լուսանկարը։ Ինձ հաջողվեց տանից վերցնել ձեր լուսանկարը։ Ես ցույց տվեցի նրան, իսկ նա լաց եղավ ուրախությունից։ Սամսոնը ճանաչեց ձեզ։ Ահա այն ամենը, ինչ կարող եմ ասել նրա մասին։ Իսկ ով եմ ես, կռահիր ինքդ։ Այստեղ ատում եմ ամենին։ Հայրս անգլոհպատակ էր, մանկությունս անց եմ կացրել Սիրիայում։ Այո, մենք այստեղ եկանք նրանց թելադրանքով. երբ մի անգամ հայրս անզգույշ գտնվեց ու բացվելու վրա էր կծիկը, նրա կյանքին վերջ տվեց հորեղբայրս։ Դա ինձ իր խնամքի տակ առավ, ես շատ բան սովորեցի նրանից։ Դուք ասում եք վերջացել է պատերազմը. ո՛չ, այն նոր պիտի սկսվի։ Առ այժմս այսքանը։ Ասացեք, խնդրեմ, չեի՞ք ցանկանալ երբևէ տեսնվել ձեր մեծ եղբոր հետ։

Վարանցովն ոտքի կանգնեց,—ես մի գնամ տեսնեմ ինչ եղավ Վարոս ապերը, իսկ դուք որոշեցեք՝ երբ եք ցանկանում տեսնվել ձեր եղբոր հետ։ Անշուշտ մենք կպայմանավորվենք։

***

Այն, ինչ կատարվեց հաշվապահի դուրս գնալուց հետո, մի քանի րոպեում, երբեք իր կյանքում չի մոռանա Հովասափը։

— Այստեղ եմ, եղբայրս,— տնակի խորքից լսվեց մի ձայն և հետ գցելով անկյունի ծածկոցը, նրա դեմ կանգնեց միջահասակ, դեղջկական շորերով թիկնեղ մի մարդ։ Ասա՛, չե՞ս ճանաչում քո Սամսոնին։

— Գյուղատնտեսը ցնցվեց։ Վատ երազի մեջ ընկած մարդու նման ուզեց ճչալ, որ շարը խափանվի, չկարողացավ։ Ուշքի եկավ եղբոր գրկում, որ նրան համբուրում էր ու կիսաձայն ասում.

— Ամեն ինչ պատահում է, մի արտասվիր, մենք գտանք իրար։ Որքա՞ն երջանիկ եմ ես։

Վարանցոն ու Վարոս ամին դռան մոտ կանգնած լսում էին նրանց խոսակցությունը։

— Ի՞նչ եղան ծնողներս, ապրո՞ւմ են նրանք,— կարծես երազից նոր արթնանալով, դողդողացող շուրթերով հարցրեց Հովասափը եղբորը։

— Նրանք չկան,— դառնությամբ պատասխանեց Սամսոնը,— մեր հայրը վաղուց է մահացել։ Մայրիկին գերեզման տարավ քո կորստյան վիշտը։

... Հետո Սամսոնը Հովասափին պատմեց իր կյանքի մասին։ Ծանր է եղել նրա վիճակը։ Շրջել է երկրից-երկիր, ծնողներին գտնելու համար վերադարձել է Թյուրքիա, և այստեղ է, որ կատարվել է նրա կյանքի դրաման։

— Ես ամեն, ամեն ինչ ասացի քեզ, եղբայրս։ Այժմ վերցրու այս լուսանկարը և իմացիր, որ իմ բախտը քո ձեռքումն է գտնվում... իմ պահանջը կատարելը երջանկություն կբերի և՛ քեզ, և՛ իմ երեք անմեղ մանուկներին, և՛ իմ կնոջը՝ քո անծանոթ հարսին, որ մի դուցե ամեն օր անկողին մտնելով արտասուքն աչքերին աղոթում է ամենակարող աստծուն, որ ողջ ու առողջ իրենց գիրկը վերադառնամ։

Գյուղատնտեսը լուռ էր։ Նա աչքերի անթարթ հայացքով նայում էր եղբոր ընտանիքի լուսանկարին, որտեղից երեք մանուկներ, մեկը մյուսին նման, իրեն էին նայում մանկական անմեղ հայացքով, իսկ գեղանի, անծանոթ կինը, որ այդ երեք մանուկների մայրն

էր, իր անծանոթ հարսը, նուրբ դիմագծեր ուներ և դեմքի վրա փայլող մի լուսաշող ժպիտ։

— Ծանր չի լինի քեզ համար, այն, ինչ պահանջում եմ ես... Իմացիր, որ եթե ես այդ քեզանից չստանամ, կզրկվեմ և՛ կյանքից, և՛ ընտանիքից։

***

Կեսօրին Հովասափը թողեց տնակը և բռնեց գյուղ տանող ճանապարհը։ Դալուկ էր նրա դեմքը, տարտամ էին նրա քայլերը։

Տուն հասնելով, նա սեղանի վրա դրված օղիով լի շիշը մոտեցրեց շուրթերին։ Ծարավ էր զգում, այրվում էր կոկորդը։ Մի քանի կում խմելուց հետո, նա շիշը դրեց իր տեղը և առանց կոշիկներն ու պիջակը հանելու մեկնվեց մահճակալի վրա։ Մերթ ընդ մերթ տրորում էր ճակատը, խառնում գլխի մազերը։

— Միթե՞ երազ չէ։ Սամսոնը Արաքսի ափի՞ն, հաշվապահ Վարանցոն ու Վարոսը... Ծանր հոգոց հանելով Հովասափը փակեց աչքերը։ Ու կարծես կրկին Սամսոնը խոսեց... Թաց էին նրա աչքերը, նա աղերսագին հայացքով իրեն է նայում՝ «Եղիր իմ դահիճը, եթե չես կատարելու պահանջս։ Այս մարդիկ չմատնվելու համար վերջ կտան քո կյանքին։ Մի համառիր, մի պտորիր ինձ եղբայրասպան լինելու արյունոտ ճանապարհը...»։

Հովասափը ոտքի կանգնեց, կրկին շուրթերին մոտեցրեց գավը, մոտեցավ լուսամուտին։ Իրիկնամութ էր և ապակու մեջ կարծես նորից երևաց եղբոր դեմքը։ Հովասափը գլուխը հենեց պատուհանին և նրա աչքերից թափվեցին արտասուքները։ Խոլական պարով մտքերը խառնվում էին իրար։ Նա դողդողջուն քայլերով մոտեցավ մահճակալին, երեսն ի վայր ընկավ անկողնու վրա և գլուխը թաղեց բարձերի մեջ։

Եվ Հովասափի դեմ, Արաքսի ափին փռվեցին այգեստաններ, բարձրացավ բազմաքանդակ աղբյուր հուշարձանը, Իմաստունների Իմաստունի խոսքերը ոսկետառ շողացին, հետո պատկերացրեց, որ կատարել է եղբոր պատվերը... Կեռ յաթաղանները շողացնելով, թրքական հրոսակները անցան Արաքսը, մտան Օ. գյուղը, երկինք բարձրացավ հրդեհների հրացոլքը և այդ բոցերի միջից մի զույգ աչքեր լի նախատինքով ու ցասմամբ գամվեցին իրան...

— Ո՛չ, այդ չի լինի Նուշիկ, ես չեմ դավաճանի իմ սուրբ հայրենիքին,— ճչաց նա։

Գիշեր էր, ու խորը գիշերվա մեջ լուսինն էր լողում գյուղի վրա։

***

Երեք օր անց, խավարչտին գիշերին գետակի թփուտների մեջ նստած զինավառ մարդիկ անթարթ հայացքով նայում էին դեմը։ Լսվեց ջրերի ճողփյուն և քիչ անց ափի ավազները խշշացին...

Լուսաբացին Սամսոնը, հաշվապահ Վարանցոն ու Վարոսը սիրթնած դեմքով նստած էին ուղեկալի պետի առանձնասենյակում։ Դրսում լսվեց ավտոմեքենայի շչակի ազդանշանը։

Ուղեկալի պետը ոտքի կանգնեց.

— Ժամանակն է,— ասաց նա,— ապա խորազնին մի հայացքով չափելով Սամսոնին, դրպանից հանելով քառածալ մի թուղթ, մեկնեց նրան։

— Վերցրեք, ձեզ է հասցեագրված,— ասաց նա։

Երկտողը Հովասափից էր.

— «Ես թանկ գնահատեցի հայրենիքը, նրա պատիվը։ Տարբեր էն մեր ուղիները։ Կար ու իմ հիշողության մեջ ապրում էր մանուկ օրերի եղբայրս։ Անակնկալ հանդիպեցի իր հայրենիքը ուրացած մարդուն և նա այլևս չի ապրի իմ սրտում...»։

— Մենք ձեզ գիտեինք, գիտեինք և այս մարդկանց։ Բայց լավ եղավ, որ այսպես վերջացավ։ Պարոն Վարանցոն այլևս կդադարի հալածելու ազնիվ մարդկանց,— ասաց ուղեկալի պետը։

Երբ ուղեկալի մեքենան կծկում էր Օ. գյուղը տանող ճանապարհը, երկու կամուրջների վրա Սամսոնը նկատեց Հովասափին ու Նուշիկին, որոնք բոստաններն էին գնում։ Նա ուռած շրթունքների արանքից կոնչաց.

— Նա, եղբայրս ինձ հանձնեց, ես այլևս չեմ տեսնի՞ իմ ընտանիքը։

Ուղեկալի պետը իր լուսաշող հայացքով նայելով զույգին, դորովանքով ասաց.

— Ինչ հրաշա՛լի, ի՛նչ պայծառ են մեր մարդիկ։

1947 թ. օգոստոս
Արտաշատ

ԱՌԱՋԻՆ ԱՆՁՐԵՎԸ

Երեկ դեռ ձյունով ծածկված էին դաշտերն ու այգիները։ Ձյունող ամպերն իրենց սառը ուսերն էին կախել Արարատյան դաշտի վրա ու թափվում էր ձյունը։ Ամենուր իշխում էր ձյան սպիտակությունը, անգամ ձյունեղեն էր թվում բիբլիական հսկայի նման երկինք խոյացած Արարատ լեռը։

Այդ երեկ էր։

Այս առավոտ Արաքսի վրա իջած ամպերը վեր բարձրացան ու ծանրացած ստինքները քսելով Արարատի ձյունածածկ փեշերին, պատեցին երկինքը։ Փչեց հարավի քամին։ Հարավի տաք ու հաճելի շունչը զգացվեց օդի մեջ ու տեղալ սկսեց գարնան առաջին անձրևը։

Առաջի՜ն անձրև...

Ո՞րքան թովչություն կա գարնանային անձրևի մեջ։ Գարնան առաջի՜ն անձրև։ Հիշում եմ...

***

Մեր դեմ փռված էին ձյունածածկ օտար դաշտերը։ Իրիկնամուտ էր։ Ընկերս մեջքի վրա պառկած, նայում էր գորշ ամպերով պատած երկնքին, իսկ գերմանական դիրքերի վրա, ամեն օրվա պես վեր էին սլանում հրթիռները, սատանայական ժպիտով ծվատում թանձրացող խավարը։

Եվ հանկարծ խորը լռության մեջ լսվեց ընկերոջս ուրախ բացագանչությունը.

— Ա՛նձրև, ա՛նձրև։

Մեր շուրջը ձյուն էր, հեռվում, խավարի մեջ շառաչում էր ծովը։ Տարեց մի զինվոր քրթմնջաց.

— Է՛—ո՞վ գիտի, երազի մեջ է տղան։

Ծիծաղեցին ամենքը։

— Եղբայրներ, միթե՞ ինձ չեք հավատում։ Երկու կաթիլ անձրև ընկավ դեմքիս,— հուզմունքից դողալով կրկին խոսեց ընկերս։

Տիրեց կարճատև մի լռություն։ Հետո խրամատներից ձայնեցին ուրիշները։

— Ա՞նձրև...

— Ա՞նձրև...

— Թո՞ն, թո՞ն է գալիս։

— Ախր, առաջին կաթիլը իմ դեմքին ընկավ,— ուրախ ժպիտով խոսեց ընկերս։

Եվ տեղաց գարնան առաջին անձրևը։

Խրամատներում մի նոր կենդանություն տիրեց։ Մարդիկ ուրախ աղմկում էին, լսվում էր ծիծաղի ձայնը։

Անհատական վրանի մեջ փաթաթված, խրամատում կողքիս նստել էր պատերազմի տարիների իմ սիրելի ընկերը։ Նա ուներ նուրբ դիմագծեր, պայծառ հայացք։ Ծնվել ու մեծացել էր Արտաշատում, խաղացել ծաղկած ծիրանի ծառերի տակ, կարոտով նայել հորդահոս գետին, ձյունագագաթ լեռանը։ Հաճախակի հիշում էր հայրենի տունը, կարոտում էր մորը, հարազատներին։ Սիրում էր երգել։ Երիտասարդ էր, խոստովանում էր, որ համբույր չէր առել սիրած աղջկա շուրթերից։

Այդ օրը, նա մորից նամակ էր ստացել։ Մայրը կատարել էր որդու ցանկությունը և նամակի հետ ուղարկել էր իր նկարը։ Ընկերս շինելի դրպանից շուտ-շուտ հանում էր մոր պատկերը և լուռ ու անձայն սեղմում շուրթերին։ Օ՞, որքան կուզեի լույսով տեսնել որդու ողջագուրանքները մոր պատկերի հետ։ Ո՞րպիսի սեր էր այդ։

Իրիկնամուտից մինչ լուսաբաց տեղաց անձրևը։ Մենք լսում էինք անձրևի խշշոցը։

— Ինչ լավ է գարնան անձրևը,— ասում էր ընկերս,— ես երբեք, երբեք չէի զգացել գարնան առաջին անձրևի հաճույքը։ Ինչ հոգ, որ կթրջվեմ։ Սիրտս ասում էր, որ շուտով կվերջանա պատերազմը և տո՞ւն, տուն կգնանք մենք։ Տես, չմոռանաս խոստումդ, առաջին անգամ գնալու ենք մեզ մոտ։ Ես մայրիկիս կպատմեմ գարնան առաջին անձրևի մասին։

Եվ նա ծիծաղեց այնպես անհոգ, լիքը կրծքով, որ մենք նրա կողքին նստածներս էլ սկսեցինք ծիծաղել։

Լուսաբացին գորշագույն դարձան դաշտերը։ Գարնան առաջին անձրևի հմայքով ապրած, թնդանոթների ահեղ որոտի տակ հարձակման անցանք։

Այդ կռվում քաջի մահով ընկավ արտաշատցի ընկերս։

Այդ գարնանը եղավ հաղթանակ։

Առա՜ջին անձրև...

Երեկ դեռ ձյուն էր գալիս։ Երկինքը պատած ձյունող ամպերը սառը հայացքով երկրին էին նայում։

Այդ երեկ էր։

Այս առավոտ Արաքսի վրա իջած ամպերը վեր բարձրացան, ծածկեցին երկինքը։ Փչեց հարավի տաք ու հաճելի քամին։ Օդի մեջ զգացվեց հարավի շունչն ու ընկան անձրևի առաջին կաթիլները։

Չգիտեմ ինչո՞ւ, երբ դեմքիս ընկան անձրևի առաջին կաթիլները, սիրտս անձկություն ապրեց։ Արդյո՞ք հիշեցի հաղթանակի գարնան առաջին անձրևը, թե հայրենիքի համար կյանքը տված արտաշատցի իմ զինվոր ընկերոջը։

Եվ ես փողոց դուրս ելա։

Մաղում էր գարնան առաջին անձրևը։ Այգիներն ու պարտեզները լողանում էին անձրևի տակ, թոթափում ձյունե ծածկոցը, որ վաղը փայլեն ու շողան կանաչ ժպիտով։ Արտաշատը էլեկտրական լուսե պայծառ աչքերն էր թարթում, որոնք հեռվից լուսատիկնների էին նման։

Լայն ճանապարհի երկու կողմերին, պարտեզների մեջ բարձրացած երկհարկանի տներից մեկի պատշգամբի վրա բացվեց դուռը։ Լույսը ցոլաց ճանապարհի վրա՝ ակնհայտ դարձնելով անձրևի հյուսքը, որը անընդմեջ իջնում էր երկնքից։

Պատշգամբում երևաց կանացի մի կերպարանք։ Կինը ցած նայեց։

Ուր էի գնում, ինքս էլ չգիտեի։

— Անձրև է, որդիս, կթրջվես, վեր բարձրացի, երբ անձրևը կտրվի, կշարունակես ճանապարհդ։

Ի՞նչը, արդյոք ի՞նչն ինձ տարավ այդ լուսավոր տունը...

***

Անծանոթ կինը, որն ուներ ալեխառն վարսեր, բարի ժպտացող դեմք, նախամուտքից առաջնորդեց ինձ իր համեստ կահավորված, հաճելի ջերմությամբ հագեցված սենյակը։ Սենյակի մեջտեղում դրված, սպիտակ սփռոցով ծածկված սեղանի շուրջը նստել էին մանկահասակ երեք աղջիկ և թիկնեղ, տասնութ տարուն մոտ մի պատանի։ Նրանք ոտքի կանգնեցին, տեսնելով իրենց հարկի տակ անծանոթ մարդու, հարգալից ընդունեցին ողջույնս։ Նրանց մայրը ինձ հրավիրեց նստել վառարանի մոտ, ինքն էլ նստեց իմ դիմաց։

Եվ մենք, որ կյանքում առաջին անգամ էինք հանդիպում, այնպես հարազատի պես զրույցի նստեցինք։ Դրսում մաղում էր անձրևը, կտկտում տանիքի վրա։

— Զինվոր եղե՞լ ես,— զրույցի ընթացքում հարցրեց ալեխառն վարսերով կինը։

— Եղել եմ։

— Իմ որդին էլ զինվոր էր,— ասաց նա ու նրա բարի ժպտացող դեմքը կարծես մի պահ մշուշվեց։ — Խելոք, բարի, քաջն էր իմ որդին... Նա հիմա չկա։ Նա ընկավ, երբ մոտ էր հաղթանակը։

Արտասուքի երկու շիթ գլորվեցին մոր այտերի վրայով։

— Արդյոք կարո՞ղ եմ տեսնել ձեր որդու նկարը,— ինչ որ հարազատ դիմագծեր տեսնելով մոր դեմքին, հարցրեցի ես։

Մայրն անխոս վեր կացավ, անցավ կից սենյակը և այնտեղից վերադարձավ որդու նկարը ձեռքին։

Նա էր, իմ երիտասարդ զինվոր ընկերը, որի հետ ճաշակել էինք նահանջի դառնությունը և հարձակման քաղցրությունը։

Ես գրկեցի մորը և նրա գլուխը իջավ իմ կրծքին։

— Քաջն էր որդիդ, մայր,— ասացի ես,— մենք կռվել ենք կողք-կողքի, նա միշտ ձեզ էր հիշում, հարազատներին...

Մենք անցանք կից սենյակը և մայրը թաց աչքերը սրբելով, խնդրեց պատմել որդու մասին...

— Ի՞նչ ասավ որդիս վերջին պահին,— հարցրեց նա։

— Նա խնդրեց, մա՛յր, գրել ձեզ, որ ինքը պատվով է կատարել իր պարտքը հայրենիքի հանդեպ։ Այսպես էլ արվեց։ Երբ հողին հանձնեցինք նրան, մեր հրամանատարը բոլորիս առաջ կար-

դաց այն նամակը, որ պիտի ուղարկեր ձեզ։ Միթե՞ չեք ստացել։

— Ճշմարիտ է, այդպիսի նամակ ստացել եմ...

Անձրևը բարակել էր։ Ես ոտքի կանգնեցի։ Պատշգամբում մայրը հարազատի պես համբուրելով ինձ, ասաց.

— Օ՜, ինչ լավ էր, որ հանդիպեցինք։ Եվ ի՞նչն եղավ պատճառը...

— Առաջին անձրևը, մայր, գարնան առաջին անձրևը,— պատասխանեցի ես։

1947 թ. մարտ
Արտաշատ

ԿԱՐՄՐԱԾԱՂԻԿ ԴԵՂՁԵՆԻՆ

Նվիրում եմ ազիտատոր Սանասարին

Այգիներն ու դաշտերը տանող յոթ ճանապարհ ունի Վ. գյուղը։ Վերջին ճանապարհն անցնում է կոլեկտիվ տնտեսության գյուղատնտես Տիրանի տան առջևով ու ձգվում մինչև Արաքսի ափը։

Հիասքանչ է Վ. գյուղը գարնանը։ Ի՛մ բարեկամ, ահա դու կանգնած ես հարթության վրա թառած Արտուտի բլրին ու նայում ես շուրջդ։ Հայացքդ իրենց են ձգում յոթ ճանապարհների երկու կողմերին աճած ծառերը։ Կարծես յոթ գունավոր գծեր են քաշված լայնածավալ դաշտի կրծքին։ Դու իջնում ես Արտուտի բլուրից ու քայլում առաջին ճանապարհով։ Անվերջանալի է թվում քեզ այդ ճանապարհը, անվերջանալի են թվում ճանապարհի երկու կողմերին հավասար հեռավորության վրա աճած ծիրանիները։ Ծառերի ճյուղերը հազար ու բյուր ծաղկեպսակներով են զարդարված, իսկ ծաղկաթերթիկները կարծես մանկան աչիկները երիզող արտևանունքներ լինեն։ Ահա մայր ջրանցքը. դու քայլում ես ափով։ Անուշ խոխոջով ջուրն է հոսում ներքևում և ջրերի մեջ կարծես լողանում են արծաթափայլ փշատենիները։ Հովն է խաղում մանրիկ տերևների հետ ու դեղնածաղիկ փշատենիներն են բուրում արբեցընող բույրով։ Նայիր հեռուն, տես, հորիզոնի հետ են մերվում փշատենիները։ Քայլիր առաջ, ի՛մ բարեկամ, քայլիր կեռասենիներով եզերված ճանապարհով, կարծես բյուր սպիտակ թիթեռնիկներ են թառել բարակիրան այդ ծառերի ճյուղերին։ Ահա կարճահասակ նռենիներով պճնազարդված ճանապարհը։ Մի՛թե հոգեթով չեն այդ թփերը, որոնք իրենց ծաղկեբաժակների արևային գինով խմում են մայր հողի կենացը։ Քայլի՛ր, քայլի՛ր առաջ, ի՛մ բարեկամ, տես մարդու ձեռքով ստեղծածը, որ փառավորվի հոգիդ, որ

ավելի ջերմ լինի հայրենի երկրի համար ունեցած սերդ, որ դու էլ ստեղծես նորը, գեղեցիկը։ Ա՜, դու կանգ առար, այլևս խոսքեր չես գտնում հիացմունքդ արտահայտելու։ Նայիր առաջ, նայիր հեռուն, քո դեմն է Արաքսի արծաթափայլ ժապավենը, իսկ շուրջդ վարդակարմիր դեղձենիներն են։ Կարծես վարդաջրով են ցողել դեղձենիների ճյուղերը։

Կյանքի հմայք կա այստեղ, հմայք ունի այստեղ աճած ամեն մի ծառ ու թուփ։

Այդ ծառերը տնկել են ծերունազարդ գյուղատնտես Տիրանն ու նրա կրտսեր որդին, որը կրում է սև ակնոց, իսկ ակնոցի տակ ունի հանգած զույգ աչքեր։

Ի՛մ բարեկամ, այստեղ աճած ամեն մի թուփ քեզ՝ մեր օրերի մարդուն կպատմի կարմրածաղիկ դեղձենիների մասին։

***

Տիրանը մանուկ օրերից սիրում էր ծառեր, խիստ հափշտակվում էր ծառերով։ Ամեն գարնան, երբ ծաղկում էին ծառերը, նա ժամերով նստում էր առվի թմբին ու նայում նրանց ծաղիկներին։ Աշնանը ուտում էր անուշահամ մրգեր, կորիզները թաղում սրեվատես հողում, գարնանը նրանք ծիլեր էին արձակում, իսկ աշնանը նրանց նուրբ, դալար ուղեշները քնքշանքով էին նայում մայր հողին...

Տիրանը մեծ զրկանքներով սովորեց ու գյուղատնտես դարձավ։ Նա նոր էր պատվաստի համար ճյուղը ձեռքն առել, երբ աշխարհի վրա կախվեցին պատերազմի մահաբեր ամպերը։ 1914 թվական... Այգիների երիտասարդ սիրահարը ցավով ու ափսոսանքով բաժանվեց իր տնկած ծառերից ու քայլեց ռազմի ճանապարհով։ Ապրեց նա բոլորի տառապանքը և տառապեց միլիոնների հետ։ Երբ տուն վերադարձավ, արևի նման պայծառ ազատությունը շողաց հայրենի երկրում։ Նա տուն եկավ ազատագրության լուրը շուրթերին։ Խոպան դաշտերում հորովելի անուշ ձայնը լսվեց։ Զրնգաց բահը անմշակ այգիներում, ու խրճիթներից ազատության մանեման ծուխը բարձրացավ։

Տիրանը ձեռքը վերցրեց պատվաստի ոստը։ Նա նոր կյանք մտավ՝ նոր մարդու համար ստեղծելու այն ամենը, հանուն ինչի

արյուն թափեցին իրենք։ Տարիներ անցան և երիտասարդ մարդու կինը յոթ արու զավակ պարգևեց բերկրանք ապրող ամուսնու ու աշխարհի համար։ Խնդությունը նրանց խրճիթը մտավ մանուկների ճիչերով... Հետո անցան տարիներ ու գյուղում կոլեկտիվ տնտեսություն կազմակերպվեց։ Ազատ հողի ու ջրի մարդիկ Տիրանին գյուղատնտեսի պաշտոն տվեցին ու համայնական դաշտում նա տնկեց առաջին պտղատու այգին։

***

Գյուղատնտես Տիրանի որդիները մանկուց սիրեցին ծառերը, ցանկացան գյուղատնտես դառնալ, տիրանալ. հոր մասնագիտությանը։ Հայրը գովեց նրանց։

— Լավ եք մտածել,— գորովանքով ասաց նա,— մեր երկրում ծառերը երջանկություն են բերելու մարդկանց։ Սիրեցե՛ք, աճեցրե՛ք անուշ ու հյութալի պտուղներ պարգևող ծառերը։

Երբ անդրանիկ որդին՝ Հայկակը ավարտեց ուսումը, հայրը նրան ցույց տվեց դաշտերն ու այգիները տանող առաջին ճանապարհն ու ասաց.

— Որդյա՛կ իմ, տնկիր այս ճանապարհի երկու կողմերին քո սիրած պտղատու ծառերի մի տեսակից։

Հայկակը ճանապարհի երկու կողմերին ծիրանիներ տնկեց։

Մեկ տարի հետո ուսումն ավարտած՝ ծնողներին ներկայացավ Հայկակից կրտսերը։ Հայրը նրան ցույց տվեց դաշտերն ու այգիները տանող երկրորդ ճանապարհը և ասաց.

— Տնկիր, Վահան, սիրածդ պտղատու ծառերի մի տեսակից։

Վահանը նրբիրան կեռասենիներ տնկեց։

Երբ Վահանից փոքրը՝ Մհերը ավարտեց ուսումը, այդ տարի Զանգվի ջրերը նոր հուն մտած՝ հասան ջրասակավ դաշտավայրը։

— Հրաշալի ջրանցք է,— ասաց հայրը։

— Այո, հայր իմ, բուրաստան կդառնա մեր երկիրը։ Որքա՞ն, որքա՞ն նոր այգիներ կարելի է գցել...

— Ինչո՞վ կարող ես երախտահատույց լինել քեզ կյանք ու գիտություն պարգևած հայրենիքիդ,— հարցրեց Տիրանն իր որդուն։

— Եթե պահանջվի, կյանքով, հա՛յր, կյանքովս ու իմ արյամբ։

— Փշատենիներով զարդարիր կյանքը հորդացնող այս ջրանցքի ափերը, — ասաց հայրը, որ բուրեն սուր ու ախորժ բույրով։

Մհերը փշատենու դալար ճյուղեր տնկեց մեծ ջրանցքի ափերին։

Հետո իրար ետևից ուսումն առած ծնողներին ներկայացան մյուս որդիները։ Արամը իրեն բաժին ընկած ճանապարհի երկու կողմերին խնձորենիներ տնկեց, Միհրանը նռենիներ, Մուշեղը տանձենիներ։

Քաղաքումն էր մնացել ծերունի գյուղատնտեսի կրտսեր որդին՝ Սանասարը, որ դեռ շարունակում էր ուսումը։

***

Ծերունի Տիրանի որդիները՝ երիտասարդ գյուղատնտեսները աշխատանքի անցան շրջակա գյուղերում։ Սակայն չքեցին հայրենական տունը, այն օրրանը, որտեղից սնունդ էին առել իրենք, սիրելի ծառերը. զարմանալի հափշտակվել ծառերով։ Սանասարին բաժին ընկած վերջին ճանապարհի վրա կողք-կողքի բարձրացան նրանց տները, մեկը մյուսից շքեղ այգիներով։

Այդ օրվանից ծերունի հոր և ուսումնավարտ որդիների մեջ սկսվեց ծառեր պատվաստելու, նոր ու հյութալի պտուղներ ստանալու մի մրցություն։ Կոլտնտեսականները սիրով սովորում էին նրանցից և հիացմունքով խոսում նրանց անձնուրաց աշխատանքի մասին։ Նրանց ձեռքով դցված նոր այգիները դարձան բերքառատ, իսկ պտուղները՝ արևահամ։

Ծերունու և նրա գյուղատնտես որդիների համբավը տարածվեց ողջ երկրով մեկ։

Գնացքը Արարատի մոտից նրանց տարավ ու հասցրեց աշխարհի կենտրոնը, ուր դիշերն է նիրհում սուտակե աստղերի փայլի տակ ու հայրենի մեծ երկրի համար միշտ առավոտ է ապրում Իմաստուններից Իմաստուն մարդու սիրտը...

Ծերունի գյուղատնտեսը պատմեց Արարատյան աշխարհի ու նրա մարդկանց մասին, որոնք ունեն մի սիրտ, մի կամք ու մի հայր, որին պարտական են իրենց գոյության ու հայրենիք ունենալու համար։

— Մեր հայրը դու ես, դու, որ սիրով ես լցնում մեր սրտերը։ Այդ քո հայրական շնչից է, որ այնպես ծաղկում են մեր դաշտերն ու այգիները։ Փափաքում էի տեսությանդ, արժանացա և երդվում եմ քո առաջ, որ ես ու իմ զավակները շուտով մարդկությանը կտանք կարմրածաղիկ դեղձենի, որի պտուղները վարդ կբուրեն, խնդությամբ մրգանուշի կնստի մեր հայրենիքի երջանիկ քաղաքացին։

Ժողովրդի հայրը սեղմեց ծերունու ձեռքը, գորովագութ դրկեց նրա որդիներին, սեղմեց իր մեծ կրծքին, ու ասաց.

— Գնացեք ու նոր բուրաստան դարձրեք Արարատյան աշխարհը...

Հուզվեց ծերունի գյուղատնտեսը, հուզվեցին նրա որդիները և սուտակե աստղերի տակ երդվեցին երախտահատույց լինել Իմաստուններից Իմաստուն՝ մարդուն ու հայրենիքին։

***

Այդ օրվանից ծերունի Տիրանը իր յոթ որդիների հետ տընկարաններում պատվաստումներ անելով սկսեց ազնվացնել դեղձենիները։

Եվ ամեն գարուն նոր խնդություն էր բերում նրա սրտին։

— Եվս մի քանի տարի,— պատմում էր նա կոլտնտեսականներին,— և մենք կունենանք ցրտակայուն, լիմոնագույն մեծ-մեծ պտուղներով կարմրածաղիկ դեղձենիներ։

Կոլտնտեսականները լսում ու հավատում էին ծերունի գյուղատնտեսին, հավատում իրենց վաղվա պայծառ օրվան, երբ հանկարծ բռնկվեց նոր ու ահեղ պատերազմը, որի հրացոլքից արյունագույն դարձան երկինք ու գետին։ Նորից կռվի ասպարեզ էին մտել արյան ու արցունքի ծարավ դորշազգեստ պրուսացիները։

Յոթ որդիները հավաքվեցին հայրական հարկի տակ։ Տխուր էին նրանք։

— Ի՞նչ են մտածում իմ զավակները,— խորը վշտով հարցրեց ծերունազարդ հայրը։

— Մենք ռազմի դաշտ կգնանք, հայր,— ասացին եղբայրները։

Ծերունին նայեց, նայեց որդիներին ու նրանց աչքերի մեջ կարդաց այն վճիռը, որ ինքը, հայրենիքն ու Առաջնորդն էին դրել։

Թող ձեր կամքը լինի,— պայծառացած դեմքով ասաց հայրը։

Բայց յոթից բանակ վերցրին երեքին։

Ռազմի դաշտ գնացող իր երեք որդիներին հայրական օրհնություն տվեց ծերունի Տիրանը։

— Գնա, ի՛մ Հայկակ, գնա և դու, արիասիրտ ի՛մ Մուշեղ, գնա, ի՛մ կրտսեր Սանասար։ Ես՝ ձեր ծեր հայրը, օրհնում եմ ձեզ, որ կարուկ լինի ձեր սուրը, անվրեպ ու կայծակից էլ շանթող լինեն ձեր զարկերը։ Մենք չենք դադարեցնի ձեր գործը։ Ես գիտեմ, որ հաղթանակը մերը կլինի։ Հաղթանակը մենք կնշանավորենք՝ սրնկարաններից այգիները տանելով կարմրածաղիկ դեղձենիները։

Եվ ռազմի դաշտ գնացին նրա երեք որդիները։

Հայրը շրջում էր գյուղից գյուղ, սրտի խոսք ասում հաղթանակի համար քրտինք թափող կոլտնտեսականներին։ Լսում ու նրան հավատում էին կոլտնտեսականները. գիտեին, որ ծունկի կգա թշնամին և տոնն ու խնդությունը կրկին կվերադառնա իրենց հարկի տակ։

Բայց եղավ մի պահ, որ ծերունի Տիրանի հոգուն սև ամպ իջավ։ Նա կքեց վշտի տակ, երբ գյուղ հասավ ահեղ մարտում քաջի մահով ընկած Հայկակի մահվան գույժը։ Դառը արտասվեց նա, բայց չդադարեցրեց աշխատանքը...

Օ՜, ինչպե՞ս կարելի էր զսպել որդեկորույս ծերունու ատելությունն առ թշնամին, որ խորն էր, ինչպես նրա սերը դեպի կյանքն ու բնությունը։

Բացվում էր հաղթանակի գարունը։ Ծերունին պատրաստվում էր այգիներն ու դաշտերը փոխադրել կարմրածաղիկ դեղձենիները, երբ գերմանական հողից հայրենի տուն վերադարձավ Սանասար որդին։

Քաջի պես էր կռվել նա։ Նա Հաղթանակի համար մարտերի մեջ էր եղել ու հանդել էր աչքերի լույսը։

— Ազնիվ իմ հայր,— գրկելով ծերունուն ասաց նա,— ես իմ հայրենիքի համար տվեցի այն, ինչ թանկ է մարդու համար։ Ահեղ ճակատամարտերում զրկվեցի աչքերիս լույսից, ու հիմա լուսավոր ու պայծառ է մեր հայրենիքը։

Բացվում էր հաղթանակի գարունը և ծերունին, կուլ տալով վշտի դառը բաժակը, իր մոտ կանչեց որդիներին։

Բոլորն էլ այդտեղ էին՝ հայրական հարկի տակ։ Սեղանատան պատից կախված գորգի վրայից խաղաղ հայացքով ծերունի հորը և եղբայրներին էր նայում Հայկակի մեծադիր նկարը, որի տակ թավշե բարձիկների վրա ամրացված էին կռիվներում ստացած նրա շքանշանները։ Հայկակի նկարի կողքին կախված էր առյուծասիրտ Մուշեղի նկարը, որը այդ պահին Օդերի ափից կրակ էր թափում գերմանացիների վրա, իսկ սեղանի շուրջը նստած էին նրանց եղբայրները, որոնց մեջ էր սև ակնոցն աչքերին կրտսեր Սանասարը։

— Բացվում է գարունը, զավակներս, բացվում է հաղթանակի գարունը։ Այս գարնանը ես նվեր եմ բերում կարմրածաղիկ մեր դեղձենին։ Ես ու Սանասարը կծառազարդենք դաշտերն ու այգիները տանող վերջին ճանապարհը, իսկ դուք մեր կոլեկտիվ տընտեսության տնկարաններից տարեք ու ամենուր տարածեցեք հաղթանակի կարմրածաղիկ դեղձենիները...

— Այո, հայր ի՛մ, թող ամենուր ծաղկեն հաղթանակի կարմրածաղիկ դեղձենիները, իսկ ես կշրջեմ դաշտերն ու այգիները և կարմրածաղիկ դեղձենիներ պատվաստող կոլտնտեսականներին կպատմեմ, թե ինչու թշնամին ուզում էր մեր երկրին տիրել. ես մարդկանց հոգիները կվառեմ սրբազան սիրով դեպի հայրենի երկիրը և սուրբ ատելությամբ դեպի թշնամին, որ էլ երբեք ու երբեք արևի լույսից չզրկվեն ինձ նման երիտասարդները։

ՁԿՆՈՐՍՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ամեն օր, լուսաբացին, հայրենի Սևանա ծովակի դարավանդ ափին՝ ձկնորսականի դիմաց հայտնվում էր բարձրահասակ երիտասարդ մարդը։ Կանգնում էր նա ու նայում դեմը։ Նրա ոտքերի տակ ծովակի կապուտակ ջրերն էին վետվետում վաղորդյան հովից, իրենց հայելու մեջ անդրադարձնելով շառագունող ամպերը։

Ձկնորսականից ոչ հեռու գտնվող գյուղակից ուրախ կանչերով դուրս էին գալիս աղջիկները սափորներն ուսած։

Երիտասարդ մարդը հայացքը կտրում էր ծովակից, նայում մոտեցող աղջիկներին ու նրա դեմքին՝ բացվող առավոտվա պես պայծառ ժպիտն էր ծաղկում։

Աղջիկները սափորները սառնորակ ջրով լցնելով, գյուղ էին վերադառնում։

Երիտասարդ մարդը ուրախ երգի մի եղանակ սուլելով, իջնում էր ցած՝ ջրերի վրա օրորվող նավակների մոտ, ուր հավաքվում էին ձկնորսները...

Ո՞վ էր այդ երիտասարդ մարդը։

***

Ձկնորսականում ու գյուղակում բոլորը ճանաչում էին Նահապետ պապի թոռան, ուստա Իվանեի որդի ձկնորս Ավետին։

Ավետը ծնվել էր ձկնորսականին մոտիկ գտնվող գյուղակում։ Աչքը բաց անելով նա տեսել էր ու սիրել ջրերի և երկնքի կապույտը, ծովակի վրա կախվող խոր ու աստղազարդ գիշերները, լսել՝ վայրի բադերի թևերի բախումը։

Մանուկ Ավետը ժամերով չէր հեռանում ձկնորսների մոտից։ Նա ուրախ կանչերով թռչկոտում էր ափ հանած ուռկանի կողքին, որի մեջ թփրտում էին ձկները։ Փոքրիկ ձեռքերը ցանցի արանքից

ներս պարզելով նա բռնում էր իշխան ձկները, ագահությամբ նայում նրանց վրայի կարմիր կետերին, եղունգներով քերում կարմիր թեփուկներն ու յուրաքանչյուր ծիծաղում։

Բարի ու սիրող պապը տղային պատմում էր հին-հին պատմություններ՝ ծովակի ափին եղած կռիվների մասին։ Հայ զորավարների թրերի շառաչը, տապալվող թշնամիների ճիչերը նա լսում էր երազում, իսկ առավոտները օդի մեջ խաղացնելով փայտյա սուրը, նա մանուկների խմբի դլուխն անցած արշավում էր վանքի մոտ, ջրերի վրա լողացող վայրի բադերի վրա, որոնք թափահարելով թևերը, երկարաձգելով վզիկները ճիչերով կտրվում էին ջրից, թռչում հեռո՜ւ, հեռո՜ւ, իրենց թևերի վրա տանելով ուրախ մանուկների կանչերը...

Ավետը ծնողների կրտսեր զավակն էր, Նահապետ պապի սիրելին։ Վերջինս շարաճճի տղային տվել էր ազատ իրավունք։ Տան մեջ ոչ մեկը չէր համարձակվում խոսել նրա վրա։ Պապն էր նրա հոգին, նա էր նրան սանձահարողը, նա էր Ավետի տնային ուսուցիչը։

Միջնակարգ դպրոցի վերջին դասարանում Ավետի սիրտը գերեց ձկնորսակայանի վարիչի տասնվեցամյա աղջիկը՝ աչագեղ Նվարդը։

Գեղեցիկ էր Նվարդը։ Ուներ սլացիկ հասակ։ Երկար արտեվանունքների միջից ժպտացող խոշոր աչքերը կապույտ ու ջինջ էին հայրենի ծովակի ջրերի պես...

Երբ Ավետն ավարտեց դպրոցն ու ծնողներին ներկայացրեց ստացած դիպլոմանագիրը, պապն ու հայրը համբուրեցին նրա ճակատը.

— Այժմ քո առաջ բաց են համալսարանի դռները, գնա և սովորիր,— ասաց հայրը։

Սակայն տղան միտք չուներ թողնել գյուղն ու ձկնորսակայանը։ Ծովակի ափին նա ուխտ էր կապել Նվարդի հետ՝ սպասել նրան, միասին գնալ մայրաքաղաք՝ ուսումը շարունակելու։

— Ուզում եմ մի երկու տարի աշխատել,— պատասխանեց նա հորը։

Իվանին շատ զարմացրեց տղայի պատասխանը։

Նահապետ պապը համաձայնվեց։

— Իվանե,— ծանր լռությունից հետո, ասաց նա,— թող տղայի ասածը լինի, վնաս չունի։ Թող ձկնորս դառնա։ Ուսում էլ կըստանա, բան չկա, դեռ ջահել է, սիրտը մի կոտրի։

Ավետը ձկնորս դարձավ։

Նվարդի հայրը, ձկնորս Վրթանեսը, տղային ընդունեց անբարյացակամ.

— Առավոտյան աշխատանքի կգաս,— ասաց նա ու դեմքը շրջեց նրանից։

Ավետը ձկնորսների սիրելի էր։ Նա արթնանում էր վաղ առավոտյան, վերցնում նախաճաշիկը և շտապում ձկնորսակայան։ Նա գյուղակի ու ձկնորսակայանի միջև ընկած տարածությունն անցնում էր մի քանի րոպեում։ Ամեն օր նույն ժամին կանգնում էր ծովափին, սպասում աղբյուրը ջրի գնացող աղջիկներին։ Գիտեր, որ Նվարդը նրանց հետ է լինելու։

Նվարդն էլ գիտեր, որ հանդիպելու է Ավետին ու դրա համար առավոտները աղջիկների հետ ջրի էր գնում։

Դեռ հեռվից ժպտում էին իրար։ Ավետը գլխարկը շտկելու պատրվակով բարձրացնում էր ձեռքը, Նվարդն էլ սափորը մեկ ուսից փոխադրում էր մյուս ուսի վրա։ Այդ գործողությունը կատարելիս վարպետորեն գլխից վեր էր բարձրացնում ձեռքը, ընկերուհիներից աննկատելի շարժում նուրբ մատները։ Սիրող զույգի ողջույնն էր այդ։

Նվարդն ամենքից ուշ էր լցնում իր սափորը, դողունի հայացքով մեկ Ավետին էր նայում, մեկ կռունկի աչքի պես զուլալ ջրերին, ուր իր պատկերն էր արտացոլված։ Նվարդը երազում էր այն օրը, երբ Ավետի հետ գնալու է մայրաքաղաք ուսումը շարունակելու։

Վրթանեսը չգիտեր իր դստրիկի սրտի գաղտնիքը։

Նվարդը վախենում էր հոր մռայլ բնավորությունից և գյուղում, ձկնորսակայանում Ավետին հանդիպելիս, խնդրում էր նրանից.

— Թատրոնում կամ կինոյում հանդիպելիս շատ մի նայիր ինձ, աշխատիր շտարվել, թե չէ հայրս կնկատի ...

Ավետն ամեն կերպ աշխատում էր չվշտացնել աղջկան, ջանում էր դուր գալ հին ձկնորսին։

Ձկնորսները ուռկան էին քաշում, իսկ նա նավակի մեջ նստած մեն-մենակ՝ երեք հոգու փոխարեն պահում էր ուռկանի գլխամասը։

Ավետի համար երգը վշտի թե տխրության ժամին միշտ էլ մեծ մխիթարություն էր։ Իսկ Ավետն ուներ անուշ ձայն, դիտեր շատ երգեր ու իրենից անբաժան էր պահում երգարանը։

Վաղ առավոտյան պարզում էին ուռկանը։ Երգում էր Ավետը։ Նրա երգին ձայնակցում էին ձկնորսները։ Ալրանք երգում էին սիրով ու զգացմունքով։ Երգը հնչում էր ազատ, համարձակ։ Երգում էին և ուռկանը ջրից դուրս քաշելիս, կարծես իրենց փռած ցանցի մեջ վերջին հրավերն էին կարդում ծովակի տիրակալ իշխանին։

Ավետից գոհ էին ընկերները։ Գոհ էր և ձկնորսակայանի պետը։ Սակայն, երբ ամեն անգամ միտքն էր գալիս տղայի ուսումը կիսատ թողնելու պատմությունը, մռայլվում էր.

— Փղի ուժ ունես, ոսկի ձեռքեր, զանգակի պես էլ զնգուն ձայն, բայց որ սովորելու չգնացիր, սիրտս քեզ չի կպչում,— դառնությամբ ասում էր նա։

— Եկող տարի անպայման գնալու եմ սովորելու,— դլուխը կախելով ասում էր նա։

— Գնա, թեկուզ էս տարի։ Ուսում առեք, առանց ուսումի մարդը գրող չարժե։

Նվարդը շուտով պիտի դպրոցն ավարտեր։ Ավետը երազում էր այդ օրը։ Չէ՞ որ երկու տարի շարունակ դառնությամբ կուլ էր տվել հոր և Վրթանեսի նախատինքները ու ոչ ոքի չէր հայտնել իր սրտի դաղտնիքը։

***

Այդ օրերին էր։

Դեռ կեսօրից առաջ Վրթանեսը նավակով մեկնեց տրեստի կառավարչի մոտ։ Ավետը ցանկացավ տեսնվել Նվարդի հետ։ Նա, իր Նվարդին հասցրեց մի երկտող։ «Հայրդ կվերադառնա առավոտյան։ Դիշերվա ժամը տասին եղիր վանքի մոտ»։ Իրիկվա դեմ նա ստացավ աղջկա պատասխանը։ «Սպասիր նշանակածդ ժամին»։

Հինավուրց վանքի մոտ, ալեկոծ ծովակի ափին, նրանք երազում էին առաջիկա աշնան մասին, երբ անթափանց խավարի մեջ, ծովակի վրա երևաց ու հանգավ մի լույս։ Այնուհետև այն կրկնվեց մի քանի անգամ։ Ազդանշան էր այդ, մոլորված նավից տրվող ազդանշան։

Ձկնորսակայանում մարդիկ իրար անցան։

Սիրող զույգը տագնապը սրտում հետևում էր խավարի միջից երևացող ու հանգչող թույլ լույսին։

Նվարդը դողաց, ցնցվեց ողջ մարմնով։

— Այդ, մի դուցե հայրս է մոլորվել,— հազիվ կարողացավ արտասանել նա։

Նրանք վազեցին դեպի փոքրիկ նավահանգիստը, ուր հավաքվել էին ձկնորսները։ Ձկնորսները աղաղակում էին, գոռում։

— Ես կգնամ օգնության,— ցատկելով նավակի մեջ, գոչեց Ավետը։

Հայրը լուռ մնաց։ Արտասվում էր Նվարդը։ Նավակն անհայտացավ խավարի մեջ ուղղություն վերցնելով դեպի օգնություն աղերսող լույսը։

Լալիս էր Նվարդը... Ինչո՞վ է վերջանալու տարերքի այդ դաժան խաղը։

Լուսաբացին նավակը մոտեցավ ափին։

Ավետը, իր երկու ընկերների հետ, թևերից բռնած ցած իջեցրեց դունատ ու դողդողջուն Վրթանեսին։ Բաղմությունը շրջապատեց նրանց։ Վրթանեսը գրկեց Իվանեին.

— Հավիտյան պարտական եմ քեզ, Իվանե։ Ավետը փրկեց կյանքս,— կապտած շրթունքների արանքից ասաց նա։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Զկնորսների մեջ մինչև օրս էլ պահպանվում է հին սովորությունը։ Նրանք տոն օրերին միատեղ են անցկացնում հանգիստը։

Զմռանը, հավաքվում են ընկերների տները։ Ուտում են ողջ դիշեր թոնրի մեջ եփած հարիսան, կարմրացրած իշխան ձուկը, խմում թունդ օղի ու պատմում իրենց նպատակների մասին...

Գարնանը, մայիս ամսից կիրակնօրյա հանգիստը նրանք անց են կացնում ծովակի ափին։ Դեռ վաղ առավոտյանից տներում սկսվում է եռ ու գեռը՝ թխում են լավաշ, եփում ամենաընտիր կերակուրները։

Հունիս ամսին էր. օրը կիրակի։ Զկնորսները կրկին հավաքվել էին ծովակի ափին գտնվող աղբյուրի մոտ։

Կեսօրից առաջ դորգերի վրա բացվեցին սփռոցները։ Մեջտեղ բերվեցին մարդաբոյ լավաշ հացեր՝ կարմիր փքուն բշտիկներով։ Խոր ափսեներով մի քանի տեղ դրվեցին մոթալի պանիրը, սառը քյուֆթան, համեմունքի մեջ տապակած իշխան ձուկը, բանջարաեղեղներից բերված ու աղբյուրի սառնորակ ջրով ցողված կանաչեղենը։

Ուրախ ու երջանիկ էին մարդիկ։ Ուտում էին, խմում, հիացմունքով խոսում երիտասարդների մասին, որոնք նավակներով շրջում էին ծովակի վրա ու երգեր էին երգում։

Թամադան հին ձկնորս Նահապետ պապն էր, որի կենացը խըմեցին լիքը բաժակներով և ոտքի կանգնած։

Հպարտ, ինքնագոհ վաթսունհինգ տարեկան ծերունի Նահապետը շտկվեց բազմած տեղից, կանգնեց ոտքի, բարձր պահելով լիքը բաժակը դիմեց իր բախտակից մարդկանց։ Նրա պատկառելի, մինչ գոտկատեղը հասնող ձյունափայլ միրուքը թեթև հովի հետ տարուբերվում էր, հիշեցնելով հայրենի դաշտերում հասունացող ցորենի արտերը։

— Ձեր բոլորի կենացը, առողջ լինեք, սրտով միշտ ուրախ։ Մենք էլ, ծերունիներս, տեսնելով ձեր բախտավորությունը, փառք կտանք մեր աշխարհը բախտավորացնողներին...

Ծերունու վերջին խոսքերը ծածկվեցին ուրախ ծափերով, որոնք բաղերի երամների պես թռան ծովակի հարթության վրա...

***

Սահում էին ուրախ, երջանկությամբ լի ժամերը...

Ձկնարդյունաբերողների ժամանակ խեղճ էին ձկնորսները։ Լոտաբացից մինչև մութ երեկո մեջքները կքած քաշում էին հին ուռկանը, օթևանում գյուղակի դետնափոր տնակներում։

Հաստատվեց սովետական կարգը։ Այդ օրվանից անցած ամեն մի տարին նոր բարիք բերեց ձկնորսներին։ Նոր ուռկաններով հեշտացավ աշխատանքը, շատացավ վաստակը։ Ծովակի ափին մեկը մյուսի կողքին սունկերի պես հայտնվեցին սպիտակ շենքեր, ստեղծվեց միջնակարգ դպրոց, գյուղ եկան ուսուցիչներ, կառուցվեց ակումբ, բաղնիք, հիվանդանոց։ Հինավուրց գյուղակը փոխեց իր դեմքը։ Դետնափոր խրճիթները իրենց տեղը զիջեցին երկհարկանի տներին... Իսկ երիտասարդությունը... Ի՞նչն է պակասում նրան։

Հիշելով անցյալը, ծերունիները հառաչում էին, որ իրենց կյանքի մայրամուտին ստեղծվեց նորը, չտեսան բախտավոր երիտասարդություն։ Նրանք մխիթարվում էին ապրելով երջանիկ ծերություն, տեսնելով իրենց զավակների ու թոռների ուրախ կյանքը։

Լի սփոռոցների մոտ նրանց սրտերն ուռչում էին ուրախությունից, թև էին առնում հոգիները, ճախրում ծովակի կապույտ ջրերի վրա։ Եվ հանկարծ...

Պա՜... տե՜... բա՛զմ... պա՜.. տե՜ բա՛զմ...

Մարդիկ իրար նայեցին հարցական հայացքներով.

— Ի՞նչ ...

— Ցնդվե՞լ է։

— Պատերա՜զմ, պատերա՜զմ...

Ձկնորսակայանի հաշվապահ Տիրանը թափահարելով երկայն թևերը, գոռալով մոտենում էր նրանց։ Նրա խռպոտ ձայնը հասավ ծովակի վրա նավակներով շրջող երիտասարդությանը...

— Պատերա՛զմ,— կանգնելով մեծ աղբյուրի գլխին գոչեց Տիրանն ու ինքն էլ սարսափեց այդ խոսքից։ Ահավոր բառը անցավ բերնե-բերան ու օդի մեջ, մարդկանց դեմքերից կախվեց պա-

տերազմը։ Կապույտ ծովակի վրա սառած մնացին Ավետի հոգեզմայլ երգի վերջին հնչյունները, ջրերի մեջ անշարժացան թիերը։

Ծովափը դատարկվեց։ Կարծես մի աներևույթ ձեռք մարդկանց հայացքներից դողացավ, սրբեց ջրերի վրայից նավակները։ Պըղտորվեց ջրերի ջինջ հայելին, ափերը ծեծել սկսեցին փրփրաբաշ ալիքները։

Ավետը Նվարդին գտավ աղբյուրի մոտ. նրանց հայացքներն իրար հանդիպեցին։

— Պատերազմ,— դողալով շշնջաց աղջիկը։

— Ես կգնամ պատերազմ,— պատասխանեց տղան։ Եվ այդ պահին բաժանման կսկիծն այրեց նրա սիրտը։ Ո՞ւր մնաց մայրաքաղաքում միատեղ սովորելու վառ ձգտումը։

Կրծքում լեռնացող հույզերն Ավետին պոկեցին կանգնած տեղից։ Նա շտապ քայլերով հեռացավ սիրած աղջկանից։

***

Այդ օրը ողջ գյուղը չքնեց։

Ահավոր լռություն էր թագավորում ձկնորսակայանում։ Փարոսավառ ծերունի Աբելն էլ չվառեց ծովակի աչքերը։

Առավոտը ծովակի վրա բացվեց տխրությամբ։ Լույսը բացվելուն պես Ավետն ուսերին գցեց կիրակնօրյա կապույտ պիջակը, դնաց կանգնեց դարավանդ ափին։ Սակայն չերևացին աղջիկները։

Արտասուքն աչքերին ձկնորսակայանի ու գյուղի երիտասարդությանը ճանապարհ դրեցին մարդիկ։

Գյուղից հեռու կամուրջի մոտ մայրերը գրկախառնվեցին որդիների հետ, ջահել հարսները կրծքներին սեղմեցին մեկնող ամուսիններին։ Ավետը թափառական հայացքով բազմության մեջ փնտրեց սիրած աղջկան, նա տեսավ Նվարդին կանգնած հոր կողքին։ Նրանց հայացքները գրկեցին իրար։ Արտասունքները հորից թաքցնելու համար, Նվարդը շրջեց դեմքը։ Ալեկոծվեց երիտասարդ տղայի սիրտը. կուլ տալով արտասուքները նա գոչեց.

— Պա՜ր, պարել եմ ուզում։

Հնչեց զուռնայի ձայնը։

Ավետը պարզեց հաղթանդամ թևերը, հոլի նման պտտվեց

կրունկների վրա։ Թմբուկն ուրախ օրերի նման իր թնդոցով պահ մի մարդկանց սրտերից քամեց վիշտը։ Շրջանի մեջտեղը թռան տղա ու աղջիկ։

— Ծա՜փ, ծա՜փ,— խելագար պտույտների հետ գոչում էր Ավետը։ Ծափ էին տալիս ծեր ու մանուկ։

Պարում էր չքնաղ ծովակի երիտասարդ ձկնորսը, խիզախ լողորդը, նայում ծովակին, նայում հարազատներին և ո՞վ գիտեր այդ պահին ինչ էր կատարվում նրա սրտում։

Մինչև ծովափնյա շրջանային քաղաքը մայրերը ուղեկցեցին իրենց որդիներին։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Գնացին ձկնորսակայանի ու գյուղի երիտասարդները։ Կյանքը կարծես պահ մի դադարեց։

Տխուր էին ձկնորսները. ինչի՞ց սկսել, ի՞նչ անել։ Տխուր էր Նահապետ պապը։ Տխուր ու մռայլ էին Իվանենն, Վրթանեսը։ Պատերազմը, որ բարձրացել էր աշխարհի վրա, նրանք գիտեին, որ դաժան է լինելու։ Մահացու վտանգ էր կախվել սովետական հայրենիքի վրա։

Տխուր էր և Վրթանեսի միակ դուստրը։

Գնացին ձկնորսակայանի ու գյուղի երիտասարդները, և ուրախությունը դուրս թռավ մարդկանց տներից։ Նրանք մոռացան կիրակնօրյա հանգիստը միատեղ անցկացնելու սովորությունն էլ։

Պատերազմ...

Ինչպե՞ս հանգիստ սրտով սեղան կնստի մայրը, կամ էլ փափուկ անկողին մտնելով, քունը մոտ կգա՞ աչքերին, երբ սիրասուն զավակը կյանքի ու մահի կռվի է բռնվել չար ոսոխի հետ։

Ոչ։ Ո՛չ, ոչ մի ծնող չի կարող մոռանալ իր զավակին, ոչ մի սիրող սիրտ չի կարող չապրել այնտեղ՝ ռազմի դաշտ մեկնած սիրած երիտասարդով։ Չէ՞ որ պատերազմի ահեղ որոտի մեջ պետք է վճռվի կյանքի ու մահու, սիրո ու երջանկության հարցը...

***

Անցան առաջին օրերը։ Մարդիկ սթափվեցին, սկսեցին խորհել պատերազմի ժամանակի կյանքն ու աշխատանքը կազմակերպելու մասին։

Այդ օրերին էր, որ ձկնորսական եկավ երիտասարդ մասնագետ Ռուբենը։

Վրթանեսը նրան ընդունեց հարգանքով.

— Բարով եկաք,— սեղմելով Ռուբենի ձեռքը ասաց նա,— գիտեք, չէ, ինչ ժամանակներ ենք ապրում։ Երկու ամսից հետո սկսելու ենք աշնան որսը, իսկ գործը տեղից չի շարժվում։ Մենակ եմ մնացել, կարոտ եմ ձեր օգնությանը։

— Կաշխատեմ ուժերիս ներածին չափ,— համեստորեն պատասխանեց Ռուբենը։

Նույն օրը Վրթանեսը տուն հրավիրեց Ռուբենին.

— Միասին կճաշենք, համ էլ զրույց կանենք, սիրտս շատ է նեղվում,— ասաց նա։

Ռուբենին դուր եկավ Նվարդը։ Այո, դեղեցիկն էր նա։

***

Ձկնորսները սիրեցին երիտասարդ մասնագետին։ Նա պարզ հոգու տեր մարդ էր։ Սիրում էր կատակել, զարմանալի աշխատասեր էր։ Տրեստի պահանջի համաձայն նա կազմեց որսի տեղերի օգտագործման նոր պլան։ Իր խորհուրդներով նրան օգնում էր Նահապետ պապը.

— Իշխան ձուկը Զաղին մոտենում է սառույցը հալելուց հետո, մեկ էլ աշնան դլխին, Օրդոյի քարին՝ ապրիլի կեսերին և աշունքվա հոկտեմբեր ամսին, Լոթոլանում՝ մայիսին ու մեկ էլ հունիսին — և նա մատները ծալելով թվում էր որսատեղերի անուններն ու ձկների ծվարման ժամկետները։

— Մենձ թոռի տեղերն էլ սրանք են,— մատը դնելով Ռուբենի գծած տեղագրական քարտեզի վրա, բացատրում էր պապը։

Ռուբենը լսում էր պապի բացատրություններն ու զարմանում նրա գիտակ լինելու վրա։

— Ձուկ բռնելը մենձ փեշակ է, ամեն մարդու գործը չէ,—

փստացնելով երկար չիբուխը, հաճախակի խրատում էր պապը,— թե վախտին չհասար, թոռիդ մեջ գորտ էլ չի ընկնի, թե հասար՝ տղամարդ ես, էն վախտը մարդ բեր, որ ծաներացած թոռդ քաշեն, էդպես է, բա՜...

Ձկնորսները պատրաստվում էին պատերազմական տարվա առաջին որսին: Շատ էին պակասում մարդիկ:

Վրթանեսը ծեծում էր տրեստի դրասենյակի դռները:

— Տո, մարդ տվեք է՞, մարդ: Երկու շաբաթից հետո ձուկը կմոտենա, ես ինչ պիտի անեմ: Մեկ տարվա պլան եք տվել՝ մի սեզոնի համար:

Եվ նա ավելի մռայլ ու քչախոս դարձավ: Անցնող յուրաքանչյուր օրը նոր վերք էր բացում նրա սրտում: Վրթանեսը հիշում էր բանակ կանչված անվանի ձկնորսներին: Ովքե՞ր են մնացել: Միթե՞ հնարավոր է նրանցով պլան կատարել: Իսկ գյուղում մնացել էին ծերունիները: Ծերունինե՞ր... վաղ առավոտից մինչ ուշ երեկո հենված ձեռնափայտերին, կամ էլ նստած պատերի տակ, նրանք իրենց օրը զրույցով էին անցկացնում: Իսկ կանա՞յք: Ե՞րբ են կանայք ուռկան քաշել:

Մի օր էլ, երբ Վրթանեսը մի խումբ մարդկանց հետ խորհրդակցում էր, Ռուբենը վերջում ասաց.

— Հարկավոր է խոսել հին ձկնորսների հետ: Նրանք մեզ կօգնեն:

— Բան դուրս չի դա: Շատ են նրանք ծեր,— պատասխանեց Վրթանեսը:

***

Հայրենական Պատերազմի ահեղ որոտը գնալով սաստկանում էր: Հայոց աշխարհը հասան վիրավորները: Այդ օրերին էր, որ ձկնորսակայանը սկսեց ապրել մի ուրույն կյանքով: Վրթանեսին ներկայացան ծովակի հին ձկնորսները, որոնք մի տասնամյակ առաջ հրաժեշտ էին տվել ուռկանին և խաղաղ ու հանդիստ վայելում էին իրենց բազմամյա վաստակի համար տրվող պետական կենսաթոշակը:

Ծեր ձկնորսների գլուխն էր անցել Նահապետ պապը: Անվանի ձկնորսը սեղմելով Վրթանեսի ձեռքը, նայեց շուրջը հավաքվածներին ու ասաց.

— Եկել ենք աշխատելու։ Կռվող զորքին ու ժողովրդին սընունդ է պետք։ Էդպես է ասում Ստալինը՝ մեր սիրտը։

Վրթանեսը դողաց հուզմունքից։ Նա համբուրեց ծերունու ձեռքը, սրբելով արտասվաթոր աչքերը, հազիվ կարողացավ արտասանել.

— Այո, կռվող զորքին ու ժողովրդին մեր օգնությունը ցույց տանք։

Տեխղեկ Ռուբենը ծերունիներին ընդունեց խորին .հարգանքով.

— Աշխարհն էլ ձեզ չի մոռանա,— սեղմելով նրանցից յուրաքանչյուրի ձեռքը ասում էր նա...

***

Երիտասարդությունը կռվի դաշտ մեկնելուց հետո Նահապետ պապը հրաժարվեց լի սեղանից ու գինու բաժակից։

Ծերունիները վաղ առավոտից մինչ ուշ երեկո ուռկան էին պարզում, ուռկան էին քաշում երիտասարդների հետ։ Կանայք, պատանիները տեսակավորում և արկղների մեջ էին դասավորում ձկները։

Ծերունու մռայլ հայացքի տակ աշխատում էին նրա հարսները, աղջիկները, թոռները։ Անսովոր էր նրանց համար ձկնորսի աշխատանքը։ Բայց ինչպե՞ս չաշխատել, երբ ինքը Նահապետ պապն էր աշխատում։ Դժվար էր և իրեն ծերունու համար, անընդհատ աշխատանքից տնքում էին ոսկորները, բայց նա չէր տրտնջում, խրոխտ ու բարձր էր պահում ծեր գլուխը, խրախուսական խոսքեր էր ասում ջահելներին։

Գիշերները, երբ գլուխը դնում էր բարձի վրա, պապի աչքի առաջ էր գալիս սիրելի թոռը, նրա կողքին շարվում էին բարի ու խելացի դեմքերով իր տոհմից ծնունդ առած էլի մի տասնյակ երիտասարդներ։ Նա հիշում էր գյուղակից ու ձկնորսակայանից գնացած երիտասարդներին, մտքում թվում նրանց անունները։ Ինքը՝ պապը փափաքը թեք դրած պարել էր նրանցից շատերի հարսանիքներում, մասնակցել նրանց զավակների ծննդյան տոներին...

***

Փարոսավառ Աբելը, տասը տարուց ավելի էր, ինչ կատարում էր նաև նամակատարի պաշտոնը։ Նա մինչև պատերազմը աննկատելի մարդ էր ձկնորսակայանում։ Կարծես ծնվել էր նրա համար, որ ամեն երեկո վառեր փարոսի լույսերը, իսկ ցերեկը նամակներ ու թերթեր բաժաներ։ Չնայած վաթսուն տարին թողել էր ետևում, առույգ էր, գլխի ու միրուքի մազերի մեջ դեռ իշխողը սևն էր։ Կլոր դեմքի վրա միայն հաստ շրթունքներն էին սկսել մի փոքր դողդողալ։ Կարծես մի ուժ ներքև էր քաշել վարի շրթունքը։

Եվ ահա ռազմիկների մայրերի ու հարսների սիրելին դարձավ Աբելը։ Էլ ոչ ոք նրան «կախ մռութ Աբել» չէր կանչում։ «Մեր Աբելը ուշացավ», «Մեր Աբելին, երեկ Վարդանիս նամակը բերելու համար մի փիլիջ տվեցի», «ոսկի սիրտ ունի մեր Աբելը»—այսպես էին խոսում նրա մասին կանայք։ Երբ կեսօր էր դառնում ու նա չէր երևում, մարդիկ սկսում էին լուրջ կերպով անհանգստանալ։

— Ի՞նչ պատահեց մեր Աբելին,— սրտնեղած փնթփնթում էր մեկը։

— Հա՜, կարծես ուշացավ հալիվորը,— ասում էր Նահապետ պապն ու ձեռքը ճակատի վրա հովանի պահած երկար նայում խճուղու կողմը։

Դեռ շատ հեռվից ճանաչում էին նամակատարին։ Ուռկան քաշողներն ուրախ բացագանչում էին.

— Եկա՜վ, եկա՜վ։

Բոլորը գիտեին ում մասին է խոսքը։

— Դե, մի ձեն տվեք, թող գա,— կարգադրում էր Նահապետ պապը։

Պատանիները սկսում էին բարձր կանչել։

— Աբել, հե՜յ, հե՜յ, այ Աբե՜լ...

— Էստեղ արի՜, էստեղ արի՜։

Լսելով իրեն կանչողների ձայները, Աբելը բարձրացնում էր ձեռքը։ Այդ նշան էր, որ ինքը լսեց նրանց կանչերը։

— Այ դու աստծու բարին եկա՜ր,— ասում էր Նահապետ պապը,— մի տոպրակդ բաց արա, տեսնենք ինչ կա մեջը։

Աբելը բարևում էր ձկնորսներին, նստում ավազոտ ափին, աչքերին դնում հին ու մաշված ակնոցները, հետո հին ու տրորված

կաշվե պայուսակից հանում նամակները, սկսում էր կարդալ ու բաժանել.

— Էս մեկը Թուքուշի մարդից՝ Հապետնակ տղեն է գրել, էս մեկն էլ վարժապետ Հոլեսի Վաղգեն տղից, էս էլ Նահապետ ախպորս թոռն է ղրկել։

— Այ դու շատ ապրես, Աբել,— ձայնում է պապը, վերցնելով նամակը համբուրում ու տալիս է Իվանեին։

— Առ, կարդա մի տեսնեմ ինչ է գրել իգիթս,— ուրախացած ասում է նա։

— Էս մեկն էլ ուստա Վահանի տղա Մեսրոբից, էս էլ լոդկչի Կնյազի փեսա Սամվելից...

Աբելը նամակների բաժանումը վերջացնելուց հետո, անցնում էր թերթերին ու ամսագրերին։

Նահապետ պապը ամեն անգամ, երբ Ավետից ստացած նամակի մասին խոսում էր Վրթանեսի հետ ու թոռան ողջույնն էր հաղորդում, լսում էր «շնորհակալ եմ» բառը։ Ներքուստ պապը վիրավորվում էր։

— Հա՜, չմոռանամ, Ավետիս անուշ բարևը Նվարդին էլ կհասցնես։

— Լավ,— ասում էր Վրթանեսը և լռում։

— Դուք բարեկամնե՞ր եք Նահապետ պապի հետ,— մի անգամ հարցրեց Ռուբենը, երբ ծերունին ուրախ ժպիտը դեմքին թոռան ողջույնը հաղորդելով Վրթանեսին, հեռացավ նրանից։

— Չէ, բարեկամներ չենք,— եղավ Վրթանեսի պատասխանը։

— Բայց Ավետը չի մոռանում ձեզ և ամեն անգամ ջերմ բարևներ է ուղարկում Նվարդին։

— Մի դպրոցում են սովորել,— ցրված ուշադրությամբ պատասխանեց Վրթանեսը։

Նահապետ պապը չէր կարողանում տանել Վրթանեսի մասամբ սառը վերաբերմունքը։ Ինչո՞ւ է նա այդպես, միթե՞ մոռացել է իր կյանքը փրկողին։ Չէ՞ որ իր թոռը ազատեց նրան, երբ կործանվում էր ալիքների խաղալիք դարձած նրա նավակը։ Բայց երբ հանդիպում էր Նվարդին ու նրան հաղորդում Ավետի ողջույնը, աչագեղ աղջիկը շիկնում էր մասրենու պես։

— Շատ և շատ շնորհակալ եմ պապի ջան։ Նամակ գրելիս իմ կողմից էլ բարև արեք։ Գրեք, որ նրան չենք մոռանում մենք։

— Կգրենք, բալա ջան, բա չենք գրի։ Դու էլ քո անուշ լեզվից մի նամակ գրի, որ թոռս ուրախանա։

Ռուբենը ձկնորսական դալու առաջին օրվանից սիրեց Նվարդին։ Նա հանդիստ չուներ։ Սակայն Նվարդը անտարբեր էր նրա նկատմամբ։

— Ինչո՞ւ Նվարդը չի շարունակում ուսումը,— մի օր հարցրեց նա Վրթանեսին։

— Երկու առարկայից շատ է կաղում։ Պետք է պատրաստվի, որ գալող տարի գնա սովորելու։

— Իսկ ո՞ր առարկաներից։

— Մաթեմատիկայից և ռուսաց լեզվից։

Ռուբենը ծիծաղեց։

Այդ հեշտ բան է։ Այդ առարկաները ես բավական սովորել եմ Լենինգրադում, եթե ցանկանաք, ես կպարապեմ ձեր աղջկա հետ։

— Ուրախ կլինեմ։

Այդ օրվանից Ռուբենն սկսեց պարապել Նվարդի հետ։

Վրթանեսը սիրեց Ռուբենին։

— Կրակի կտոր է,— գլուխը երերելով ասում էր նա,— այ, թե ինչ է նշանակում ուսումնական լինել։ Տրեստում առաջվա նման էլ մեզ չեն հայհոյում. պահանջված ամեն մի հաշվետվություն, պլան, կազմում է ժամանակին։ Լեզու է գտել ծերունիների հետ ու գործը առաջ է տանում։ Չէ, Ռուբենը ազիզ աշխատող է։

Նվարդը լսում էր հոր գովեստները Ռուբենի մասին, հիշում պարապմունքների ժամերին նրա կրակոտ հայացքներն ու տրխրում։

Մի օր էլ, երբ սենյակում երկուսով էին, Ռուբենը մի խոր հայացքով աղջկա աչքերի մեջ նայելուց հետո, ասաց.

— Չէի՞ք պատմի ինձ Ավետի մասին։

— Ավետի՞ մասին։ Ի՞նչ պատմեմ,— տարակուսած հարցրեց Նվարդը։

— Այ, կուզեի իմանալ, ինչպիսի՞ տղա է նա։

Նվարդը մի պահ լուռ էր։

— Ավետը քաջ տղա է,— ուրքի կանգնելով պատասխանեց նա։

— Միայն այդքա՞նը։

— Էլ ի՞նչ կցանկանայիք իմանալ նրա մասին,— սրտնեղած հարցրեց Նվարդը։

— Իսկ ինչո՞ւ նա իր նամակների մեջ միշտ հիշատակում է ձեր անունը։ Չէ՞ որ դուք բարեկամներ չեք։ Ձեր հայրը ինձ ասաց, որ դուք բարեկամներ չեք, մի գուցե նա սիրում է ձեզ։

Նվարդի խաղաղ, պայծառորեն ժպտացող դեմքը մռայլվեց։

— Թողնենք,— խստորեն ասաց նա։— Ես սիրով ընդունում եմ նրա բարևները և այդ իմ գործն է...

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԴԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Զկնորսակայանում մարդիկ ապրում ու շնչում էին ռազմաճակատի համար։ Փարոսավառը Նահապետ պապի համար ամեն օր կարդում էր օրվա լրագիրը։ Լարված հետաքրքրությամբ ծերունիները լսում էին նրան։

— Մերդ չմեռնի, ռո՛ւս,— ասում էր Նահապետ պապը,— ռսի հունարը ուրիշ է, ես նրանց հետ շատ եմ ախպերություն արել։

Ռուբենը սիրում էր Նահապետ պապին։ Նա հաճախակի ներկա էր լինում նրա զրույցներին։ Երիտասարդ մարդուն ուրախություն էին պատճառում այդ մարդիկ, որոնք գիտեն աշխատել, ունեն մեծ սիրտ և մի զարմանալի ջերմ սիրով սիրում են երիտասարդներին։

— Ուրեմն, Նահապետ պապի, գերմանացին չի՞ հաղթի,— ժպիտը դեմքին հարցնում էր Ռուբենը։

— Չէ,— պատասխանում էր պապը,— ֆրանցուզն էլ ուզեց տիրել, բան դուրս չեկավ։ Կնյազ Կուտուզովը, լույս դառնա գերեզմանը հա՞, իր զորքով ջարդեց Նապոլեոնի զորքին։ Հիմի էլ նեմեցն է ուզում աշխարհքս տիրել։ Բան դուրս չի գա։ Դրանք իրենց թափած արնի մեջ կխեղդվեն։ Ստալին կա, Ստալին։ Աշխարհքս նրա ետևից է գնում։

Այդ օրերին էր, որ զինվորական հիվանդանոցից տուն վերադարձավ ուսուցիչ Հոլեսի տղան՝ Վազգենը։

Երբ Նահապետ պապը ներս մտավ, ուսուցչի տանը ասելիք գցելուց տեղ չկար։ Զկնորսներն իրար սեղմելով ճանապարհ տվեցին նրան։ Ծերունին համբուրելով երիտասարդ ռազմիկի ճակատը, նստեց նրա կողքին։

— Դե, մի ապրես, պատմի տեսնենք ինչպես են կռվում մեր տղերքը։ Ո՞նց են, ո՞վ է սպանվել, ո՞վ կա, ո՞վ է յարալու։

Վազգենը շոյված ինքնասիրությամբ, որ իրեն Նահապետ պապը է լսելու, հայացքը չհեռացնելով նրա դեմքից, սկսեց հանգիստ պատմել այն զորագնդի մասին, որի կռվողների մեծ մասը պարգևատրության էր արժանացել։ Վազգենի կրծքին էլ փայլում էր շքանշանը։

— Ավետն էլ, Հապետնակն էլ, Սամվելն էլ շքանշաներ են ստացել։

— Ապրեն մեր տղերքը, հա՞...,— ընդհանուր հիացմունքով արձագանքում էին հավաքվածները։

— Չէ, հալալ կաթնակերներ են,— ձայնեց մի ուրիշ ծեր ձկնորս։

— Իսկ Ավետին երկրորդ շքանշանի են ներկայացրել, աստիճանն էլ բարձրացրել են, հիմա նա ավագ է։

— Պա, ասա քաջ է էլի,— ձայնեց փարոսավառը։

— Ավագն ի՞նչ բան է, Վազգեն ջան,— խորհրդավորությամբ հարցրեց պապը։

— Ստարշինա,— կոմանդիրի օգնական։

Պապն ամբողջ դեմքով ժպտաց։

— Ասլանի բալա է, ասլանի բալա,— գլուխը տմբտմբացնելով բարձր ձայնով ասաց նա։

— Այ, հետս բերել եմ մեր ռազմաճակատի թերթը։ Ավետի նկարն են տպել ու գրել, թե ոնց գերմանացու սավառնակը խփեց։

— Ի՞նչ,— կարծես նրա ասածին չհավատալով ձայնեցին այս ու այն կողմերից,— նեմեցի աերոպլան է խփե՞լ։

Վազգենը գոհ ժպտաց, որ իր հաղորդած լուրը նման տպավորություն գործեց ընդհանուրի վրա։ Նա շտապով իր բերած կանաչ գույնի տոպրակի միջից հանեց մի քանի թերթեր։

— Ահա տեսեք։ Էս հոդվածը մեր լեյտենանտն է գրել։

— Վայ, ես քո լեն դեմքին մեռնեմ, տղա, տո լսեցի՞ք ինչ է արել Թոռս, վայ ումուդ, ես քո էդ աչքերիդ մեռնեմ, որ էդպես ուրախ են,— համբուրելով Թոռան նկարը կրկնում էր պապը։

Թերթերը ձեռքից-ձեռք անցան։

— Ավետն ու նեմեցի աերոպլա՞ն, այ գիդի հա՞,— բացագանչում էին ծերունիները։

***

Նվարդը սովորում էր մայրաքաղաքում։ Նա կանոնավոր նամակագրական կապ էր հաստատել Ավետի հետ։ Այդ մասին չգիտեին նրանց ծնողները։

Պատերազմի վերջին տարում գյուղ հասավ նրանց նամակագրության լուրը։ Հարևան ու բարեկամ շնորհավորում էին մայրերին։

Լուրը տարածողը Նվարդի հորեղբոր աղջիկն էր, որի երիտասարդ ամուսինը պատերազմի առաջին օրվանից անբաժան էր Ավետից։ Երիտասարդ ռազմիկը մեկ ամիս կնոջից նամակ չըստանալով զայրացած գրել էր. «...Թուխուշիկս ինչո՞ւ նամակ չես գրում... Սի մոռանա, որ քո գրած նամակները կարոտած սրտիս հանգստություն են տալիս։ Գոնե ամաչիր Նվարդից։ Նա Ավետին էնքան նամակներ է գրել, որ խեղճ տղի գրպաններում էլ տեղ չի մնացել։ Երկու անգամ էլ նկարն է ուղարկել։ Բա ինչո՞ւ մենք իրար նեղացնենք, գոնե նամակով կարոտներս առնենք։ Գրի՛ր Թուխուշիկս, անպայման գրիր»։

Երբ երիտասարդ աղջիկներից ու հարսներից մեկը չէր հավատում իր լսածին, շտապում էր Թուխուշի մոտ։

— Աղջի, Թուխուշ, ճիշտ են ասում, որ Նվարդը Ավետին նամակ է գրո՞ւմ։

— Սուտ բանը չի ասվի,— պատասխանում էր նա ու հանելով ամուսնուց ստացած նամակը, բարձրաձայն կարդում էր այն տեղը, որը վերաբերվում էր Ավետի ու Նվարդի նամակագրական կապին։

Եվ լուրը պտտվում էր տնից-տուն։ Այդ մասին լսեցին և ծերունիները, որոնք գլուխները տմբտմբացնելով ասում էին.

— Դա սեր է։

— Սե՛ր, էն էլ ինչ սե՛ր։

— Թե որ գնդակի առաջ կանգնած տղան իր սիրած աղջկան չի մոռանում ու աղջիկն էլ տղային, նրանք կյանքում ամենից բախտավորը կլինեն։

***

Ավետի ու Նվարդի նամակագրության մասին գիտեր Նահապետ պապը։ Սակայն նա այդ մասին չէր խոսում որդու հետ, Վրթանեսի մոտ եղած ժամանակ էլ ցույց էր տալիս, որ ինքը անտեղյակ է այն ամենից, ինչի մասին խոսում են ձկնորսները։

Երեկոները պապը սովորություն ուներ մտնել դրասենյակը։ Հաշվապահ Տիրանի հետ տեսնվելուց հետո, անցնում էր վարիչի առանձնասենյակը, բարևում նրան ու նստում իր սովորական տեղը՝ կապույտ մախմուրով ծածկված պատի դիմաց, ուր կախված էր Ստալինի մեծաղիր նկարը, իսկ Առաջնորդի նկարի ներքևում՝ ձկնորսակալանից ռազմաճակատ գնացած երիտասարդների նկարները։

— Է՛, ինչպես է տրամադրությունդ,— աչքը չհեռացնելով թոռան նկարից, դիմում էր նա Վրթանեսին։

— Շնորհակալ եմ Նահապետ պապի, դուք որ կաք, մենք լավ կլինենք։

Եվ Վրթանեսը ծերունուն մեկ առ մեկ հաշիվ էր տալիս այդ օրվա կատարած աշխատանքի մասին։ Պապը լսում էր նրան, ծխում իր երկար չիբուխն ու ասում.

— Ուրեմս գործերը լա՞վ են։

— Ողջ կենաս, վատ չեն։

— Դեռ լավը նոր պիտի լինի։ Հիմա տեսնում եմ, որ նեմեցի վերջը գալու է։

***

Ուրախ ու հպարտ էր Նահապետ պապը։

— Էնքան չմեռնեի,— ասում էր նա,— Ավետս տուն գար, մի նրա հարսանիքին էլ լավ պարեի ու նրանից հետո ինչ ուզում էր թող լիներ։ Յոթ օր, յոթ գիշեր քեֆ եմ անելու հա՞...

Այդպես ուրախ կանցնեին պապի օրերը, եթե ձմռան կեսերին չդադարեին Ավետի նամակները։ Երկու ամիս թոռից նամակ ու լուր չստանալով, Նահապետ պապը սոսկումով զգաց, որ ինքը ծեր է, զարմանալի ծեր, որ իր ապրելն աշխարհում ավելորդ է և նույնիսկ անտանելի բեռ հարազատների համար։ Նա մռայլվեց։ Սակայն ետ չկանգնեց աշխատանքից։ Հին չուխան գցած ուսերին, նա ժամերով դուրս չէր գալիս արհեստանոցից, ուր Իվանեի գլխավորությամբ մարդիկ վերանորոգում էին ուռկանները։

— Է՜, այ հեր,— Ավետիս նամակը շատ ուշացավ, ամեն անգամ ասում էր Իվանեն ու ծանր հառաչում։

— Գործիդ եղի, սիրտդ մի կոտրի։ Մի օր էլ մենք լավ խաբար կստանանք։

Հարսն էր արտասվում։ Դառնացած ծերունին ծծելով իր չիբուխը, նրան էլ էր հուսադրում.

— Մի լա, ոմուդդ մի կտրի, ախր Վաչե Թաթոյի Զաքարե տղից կռվի առաջին օրվանից խաբար չկար։ Եկա՞վ։ Մենք էլ կուրախանանք։

Սակայն մենության ժամերին, երբ տարվում էր տխուր մտքերով, ծեր աչքերից թափվում էին արտասուքները։

— Չէ, չէ, իմ Ավետը կգա,— ինքն իրեն մրմնջում էր նա։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Նվարդը գյուղ էր եկել ծնողների մոտ անցկացնելու ձմեռային կարճատև արձակուրդը։

Վրթանեսը նրան ընդունեց առանց անհրաժեշտ ջերմության, սակայն ոչ մի խոսք չասաց ձկնորսականում ծայր առած խոսակցությունների մասին՝ հավատարիմ մնալով կնոջը տված իր խոստմանը— չկոտրել աղջկա սիրտը։ Նրան ճնշում էր նաև Ավետի անհայտ վիճակը։

Ռուբենը Նվարդին դիմավորեց սրտի ցնծությամբ։ Սակայն տեսնելով աղջկա սառը, պաշտոնական վերաբերմունքը, տխրեց։

Նահապետ պապը լսելով Նվարդի գալստյան լուրը, շտապեց նրան տեսության։

— Այ դու միշտ էդպես շնորքով մնա՜ս,— համբուրելով աղջկա մետաքսի նման փափուկ և բուրումնալից մազերը, ասաց պապն ու թույլ տվեց, որ նա հանի իր չուխան։

— Բարև, Ռուբեն ջա՜ն, էսօր քեզ չեմ տեսել։ Բա Վրթանեսը ո՞ւր է,— տեսնելով ոտքի կանգնած երիտասարդ մարդուն, հարցրեց պապը։

— Նոր դուրս գնաց, հիմա կգա,— սեղանի վրա դնելով օղիով լիքը շիշը, պատասխանեց Նվարդի մայրը՝ Նունուֆարը։

— Բարով ես եկել աղջիկ ջան,— վերցնելով լիքը բաժակը բարեմաղթեց պապը,— չենք մեռնի, ու մի օր էլ Ավետիս բարի տեսությանը կարժանանանք։

— Իհարկե, պապի ջան, սիրտդ լեն պահի, Ավետն էլ կգա,— կրկին նրա բաժակը լցնելով ասաց Նվարդը։

— Է՜, Ռուբեն ջան, դու ոնց ես, քիչ մնաց հա, դուրս կգանք որսի, էս տարի քամիները քիչ են, էդ նշան է, որ ձուկը շուտ կմոտենա։

— Շնորհակալ եմ, պապի ջան։ Դու որ կաս, մենք լավ կլինենք։ Ձեր կատարած գործը աշխարհը չի մոռանա։ Ամեռը դեռ կես չի եղել, համա ուռկաններն ու նավակները պատրաստ են։ Ուստա Իվանեին օր չես տալիս, գիշեր ու ցերեկ աշխատեցնում ես մարդկանց, ինքդ էլ քուն ու դադար չունես։

— Բա գործը էդպես պիտի անես, թե չէ ծակ թոռով, որ ձուկ բռնելու գնացիր, ծակ շալվար կմնաս,— ծիծաղելով պատասխանեց պապը։

Հետո պապը երկար ու բարակ հարց ու փորձ էր անում Նվարդին մայրաքաղաքի կյանքի մասին։

— Թե որ Ավետս էս ամառ եկավ, գնալու եմ Երևան։ Էնպես հավաս ունեմ խաս բաղերում քեֆ անելու, որ էլ ասել չեմ կարող։

Ռուբենը ոտքի կանգնեց։

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց Նունուֆարը։

— Գործ ունեմ. հարկավոր է մի գրասենյակ էլ հանդիպել։

Նվարդն ուղեկցեց նրան։ Երբ նրանք դուրս ելան, Նունուֆարը ծանր հառաչեց.

— Տեսնում ես պապի ջան, Ռուբենն ինչ ազիզ տղա է։ Երևում է Նվարդիս շատ է սիրում...

Սակայն Նունուֆարը չկարողացավ շարունակել խոսքը։ Պապի դեմքն այլայլվեց, դողդողալ սկսեցին նրա ձեռքերը։

— Վա՜յ, քոռանամ ես, Նահապետ պա՜պի, Նահապետ պա՜-

պի ինչ պատահե՞ց։ Ամա՛ն, մարդը մեռնում է,— ձեռքերն իրար խփելով ցավագարի պես ճչաց խեղճ կինն ու ուզեց դուրս թռչել օգնություն կանչելու համար։

Նահապետ պապը հազիվ կարողացավ բռնել նրա փեշից։

— Լից,— բաժակը ցույց տալով, հուզմունքից դողալով հազիվ կարողացավ արտասանել նա։

Իրար ետևից երկու բաժակ օղի խմելուց հետո, պապը մի փոքր հանդարտվեց, ապա լուռ ու անձայն ոտքի կանգնեց, հագավ չուխան, գլխին դրեց մոթալի մեծ ու սուր փափախը, վերցնելով ձեռնափայտը, արյունոտ աչքերը Նունուֆարի վրա հառելով, խուլ ձայնով մոլտաց.

— Խելքի արի, Մնոյի աղջիկ։ Իմ թոռը կա ու էս գլուխը դեռ չի մեռել, որ նրա ուզած աղջկա վրա խորթ նայող լինի։

Նունուֆարը, որ պատահարից հազիվ էր ուշքի եկել, սթափվեց, առաջ ընկավ.

— Նահապետ պապի, ոտքդ պաչեմ, ախր մի սպասի, ինչի՞ նեղացար։ Ես խոմ չասացի, թե Նվարդն էլ սիրում է նրան։

— Չէ, վերջացավ,— զայրացած ասաց պապն ու իր ետևից փակեց դուռը։

Ցանկապատի մոտ տեսնելով Նվարդին ու Ռուբենին, խոժոռված դեմքով նայեց նրանց։

— Ինչո՞ւ ես շտապում, պապի ջան, հայրիկս ուր որ է, կգա, գրույց կանեք,— մոտենալով ծերունուն, ժպտալով ասաց Նվարդը։

Ծերունին չպատասխանեց։

Տղան ու աղջիկը սառած հայացքով իրար նայեցին։ Նվարդը կծկվելով ուսերին գցած վերարկուի մեջ, լուռ ու անձայն հեռացավ Ռուբենից։

Սկսվեցին գարնանային որսի աշխատանքները։

Ուռկաններով բարձած նավակները դուրս ելան բաց ծովակը։

Նահապետ պապն առաջինը նստելով նավակի մեջ, ասաց.

— Թող էս գարունը մեր հաղթանակի կանաչ գարունը լինի։ Ռազմաճակատից հասնող լուրերը նոր խնդությամբ էին լցնում ձկնորսների սրտերը։ Հերթը հասել էր Գերմանիային։ Պատերազմի հրով ու ծխով էին բռնկվել կենտրոնական Գերմանիայի քա-

զաքներն ու գյուղերը և այդ իրավական հպարտություն էր ծնում նրանց սրտերում։

Հույսով ու հավատով էր ապրում պապը։

— Աբել, էն օրը, որ Ավետիս նամակը բերիր, իմացիր, կարմիր ղոչը գետնով եմ տալու,— ամեն անգամ փարոսավառին տեսնելով, ասում էր նա։

Տխուր ժպտում էր Աբելը և կամացուկ ասում.

— Համա խոսքիդ տերը կաց, ուստա Նահապետ, կարմիր ղոչը լավ պահի, որ չնիհարի։

— Դու գործիդ նայի, դմակը մի փթից ավելի կլինի։

Մերունին կշտամբում էր որդուն։

— Փալաս մի դառնա, Ավետս կա, ինչ անենք, որ նամակը ուշանում է։ Գիտես ինչ կռիվներ են գերմանու հողում։

Սակայն պապին տանջում էր Նունուֆարի վերաբերմունքը։ Նա այդ մասին չխոսեց ոչ ոքի հետ։

Երբ մի օր, աշխատանքից հետո, պապը նստած ձկնորսների սենյակում վառարանի մոտ շորերն էր չորացնում, ուրախ ժպիտը դեմքին նրան մոտեցավ Ռուբենը։

— Բարով պապի։

— Շատ բարով, Ռուբեն ջան, տեսնում եմ ուրախ ես երևում։

— Բա ոնց ուրախ չլինել այս օրվա որսից հետո։ Հինգ ուռկանով հանված է մեկ ամսվա պլանով տրված ձուկը։ Ախր Սևանն իր պատմության մեջ այդպիսի բան չի տեսել։ Այդ էլ դարձյալ ձեր շնորհիվ։ Եթե Վրթանեսի ասածով Լոթոլանից սկսեինք, գուցե օրվա պլանն էլ չկարողանայինք կատարել։ Իմաստուն ես, Նահապետ պապի։

— Մոտս նստի, Ռուբեն ջան, գործ ունեմ քեզ հետ,— տխրությամբ ասաց պապը, վառելով չիբուխը։

— Մի ծխախոտ չէիր ծխի՞,— նրա կողքին տեղավորվելով հարցրեց Ռուբենը, բաց անելով թանկարժեք գլանակների տուփը։

— Չէ, շատ սաղ լինես, ես չիբուխ եմ քաշում։

— Լսում եմ, պապի ջան։

— Գիտես ինչ կա, Ռուբեն ջան, դու էլ իմ թոռի տեղն ես։ Վնաս չունի, լավ էլ գաղափարով տղա ես երևում։ Համա սխալ գործ մի բռնի։

— Թե որ սխալ գործ եմ բռնել, ուղղիր, շատ շնորհակալ կլինեմ, պապի ջան,— ժպտալով պատասխանեց Ռուբենը։

— Դու իմ Ավետի մասին լսել ես,— ավելի մռայլվելով հարցրեց պապը։

— Լսել եմ,— սրտում ինչ որ տագնապ զգալով հուզված պատասխանեց Ռուբենը։

— Օղորմի պապերիդ։ Գիտես չէ՞, Ռուբեն ջան, նեմեցի դեմ է կռվում Ավետս։ Գիտե՞ս, հը՞։ Բա դու ոնց ես աչք դրել նրա սիրածին։ Բոլորն էլ էստեղ գիտեն, որ նա իմ Ավետի սիրածն է, պազիցից էլ նամակ էր գրում նրան։ Հիմի դու ուզում ես խելքից հանել աղջկա՞ն... բա դա նամարդություն չէ՞։

Ծերունին լռեց. ծանր տնքաց, ներս ծծելով դառը ծուխը, շարունակեց.

— Էդ որ լսել եմ քնից զրկվել եմ, էլ տուն, տեղ, սևացել են աչքիս։ Էդ նամարդություն է։ Դու նամարդ մարդ չես։ Ձեռ քաշի... Մինչև կռվի վերջանալը էլ Նվարդի բոլորը չերևաս։ Էն վախտը ով գիտե... Մի բան է... Ես էլ կմեռնեմ ու քեզ...

Ծերունու ուսերը ցնցվեցին։ Նա գլխից վերցնելով փափախը, դեմքը թաղեց նրա մեջ։

Ռուբենը օրորվելով դուրս ելավ սենյակից...

Դռան մոտ կանգնած հաշվապահ Տիրանը, որ ականջը դեմ արած լսում էր նրանց խոսակցությունը, տեսնելով Ռուբենին, չարախնդորեն ծամածռեց դեմքը և, երբ նա միջանցքից դուրս գնաց, ակնոցները ճակատի վրա բարձրացնելով, ձեռքը նրա ետևից թափահարելով, ասաց.

— Չէ, պապը լավ դաս տվեց։ Դե հիմա գնա և ուրիշի սիրածին աչք գցի։

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՐԴ

Ամպշող առավոտը նոր էր բացվում ծովակի վրա, երբ ռազմական կոմիսարիատի պաշտոնյա — ավագ լեյտենանտ Սիմոնյանը բախեց Վրթանեսի տան դուռը։

— Ո՞վ է,— ներսից լսվեց տանտիրոջ խռպոտ, քնատ ձայնը։

— Ես եմ, Արամը։

— Սիմոնյանը՞։ Խեր լինի Արամ,— նրա դեմ դուռը բաց անելով հարցրեց Վրթանեսը։

— Առանձին խոսելիք ունեմ քեզ հետ,— կամացով պատասխանեց Սիմոնյանը։

— Խնդրեմ, անցիր իմ սենյակը, ես իսկույն կհագնվեմ,— դուռը փակելով ասաց Վրթանեսը։

Մի քանի րոպե անց կիսահագնված Վրթանեսը հայտնվեց իր աշխատանոցում, ուր գրասեղանի մոտ նստած նրան էր սպասում խոժոռ դեմքով զինվորականը։

— Դե, խոսիր Արամ, լսում եմ քեզ։

— Տխուր լուր եմ բերել, Վրթանես,— խորը հառաչելով ասաց Սիմոնյանը։— Դիշերս ստացանք Ավետի սև թուղթը։

— Ի՞նչ, Ավետը զոհվե՞լ է,—խայթված պես վեր թռավ տեղից Վրթանեսը։— Եվ այդ հաստա՞տ է։

— Դժբախտաբար այո։ Կա և հրամանատարության նամակը։ Առ և կարդա։

Վրթանեսը, որի ձեռքերը ջերմախտով հիվանդի նման սկսեցին դողդողալ, վերցրեց նամակը։ Գրում էր գվարդիական գնդի հրամանատարը։

«... Մեր հարազատներ։ Ձեր որդին Ավետ Իվանիչը Հայրենական Մեծ Պատերազմի հենց առաջին օրվանից գտնվում էր գվարդիական մեր զորամասում։ Շնորհակալություն ձեզանից և Սևանի ձկնորսներից, որ դաստիարակել էիք այդպիսի մեծ սրտի տեր, անվեհեր մարտիկ։ Հայ ժողովրդի պանծալի զավակ Ավետ Իվանիչը իրեն պսակեց փառքով, նա ցույց տվեց թշնամու դեմ մղվող կռիվներում բացառիկ արիություն և անձնազոհություն։ Ձեր որդին պարգևատրված է հինգ շքանշանով և երկու մեդալով։ Ինչպես ձեզ հայտնի է ինֆորմբյուրոյի հաղորդագրություններից վերջին ամիսների ընթացքում ծանր մարտեր մղվեցին Հունգարիայում։ Մահվան սարսափ ապրող թշնամին կառչում էր ամեն մի թփից, գործի էր դնում ամեն միջոց՝ կասեցնելու մեր հաղթական ընթացքը։ Իսկ մեր մարտիկները կռվում էին քաջի պես։ Բուդապեշտի տակ տեղի ունեցան արյունալի մարտեր։ Խելակորույս գերմանացիներն ու հունգարները չէին դադարեցնում հակագրոհները նույնիսկ գիշերները։ Եղավ, որ շրջապատման վտանգի մեջ ընկավ մեր զորամասը։ Ավետ Իվանիչը հրաման ստացավ ճեղքել

օղակը, անցնել թշնամու թիկունքը և իր վաշտով խուճապի մատնել նրանց, իսկ մեր գլխավոր ուժերը պետք է հարվածեին թշնամուն ձախ թևի վրա։ Լուսաբացից առաջ կրտսեր լեյտենանտ Ավետ Իվանովիչը հանկարծակիի բերելով թշնամուն իր գնդացիրային ու ականանետային կենտրոնացրած կրակով, պատռեց շղթան, իսկ մեր ուժերը հրետանային ուժեղ պատրաստությունից հետո, դրոհի գնացին ձախ թևի վրա։ Թշնամին շղթմացավ, փախուստի դիմեց, մենք մտանք քաղաքի գետափնյա արվարձանը և մեր գլխավոր ուժերի հետ միասին ավարտեցինք Բուդապեշտի պաշարումը։ Այդ կռվում քաջի մահով ընկավ հայ ժողովրդի անվեհեր զավակ, կրտսեր լեյտենանտ Ավետ Իվանիչ Զարզանդյանը։ Հավերժ հիշատակ նրան...»։

Վրթանեսը սեղանի վրա դրեց նամակը։ Պահ մի նա լուռ էր, հանկարծ ցնցվել սկսեցին նրա ուսերը, գլուխը դնելով նամակի վրա նա դառը կերպով հեկեկաց։ Սիմոնյանը շտապով գրպանից հանեց ծխախոտը։

— Դե՛, խոսիր Վրթանես։ Տա՛լ Իվանեին նամակն ու սև թուղթը։

— Ո՛չ, ո՛չ, ինչ ես ասում։ Այդ շատ ծանր կլինի։ Թող ինձ մոտ մնա, թող առայժմ նրանք չիմանան այդ մասին։ Պատերազմից հետո, ես ինքս կհայտնեմ։

Սիմոնյանը ոտքի կանգնեց։

— Թող այդպես լինի։

***

Վրթանեսը Սիմոնյանի դուրս գնալուց հետո բաց արեց աշխատասենյակի անկյունում դրված անկիզելի արկղը, նամակը դրեց այնտեղ իր անձնական փաստաթղթերի մեջ, հետո շտապով հագնվելով, դուրս ելավ տանից։

Հասնելով ձկնորսներին Վրթանեսը բարևեց նրանց, մոտեցավ և սեղմեց բրիգադիր Իվանեի ձեռքը։

— Ասում ես մինչև սեզոնի վերջը երկու տարվա պլա՞ն ես կատարելու։

— Թե որ էնպես գնա ու քամիները չխանգարեն, վայ թե երեք տարվա պլան էլ կատարենք։ Բրիգադի անդամները էնպես

են տաքացել, որ կես գիշերին էլ թոռն են գցում։ Ո՞վ էր տեսել էսպես բան։ Պատերազմից առաջ հաղիվ էինք պլանը կատարում։

— Գիշերն ստացա տրեստի կառավարիչի հրամանը։ Քո բրիգադայի անդամները պարգևատրված են։ Պահանջել են ամենից աչքի ընկնողներին ներկայացնել՝ կառավարական պարգևի։ Առաջին թեկնածուն դու ես։ Շնորհավորում եմ։ Այդ ասելով Վրթանեսը կրկին ամուր, շատ ամուր սեղմեց Իվանեի ձեռքը։

— Շնորհակալ եմ, ավելի լավ կաշխատենք։ Այսօր մեր բրիգադի հերթն է զինվորական հիվանդանոց գնալը։

— Գնացեք, բայց դատարկ չգնաք։

— Բացի անհատական նվերներից, որոշել ենք վերջին թոռից դուրս եկած ձուկն էլ տանել։

— Տարե՛ք, լավ եք մտածել։

Երբ Վրթանեսը հեռացավ, Իվանեն վեր քաշեց ուսերը։

— Չէ, կասես բարություն է մտել սիրտը։ Այ քեզ բա՜ն. էսօր երկու անգամ ձեռք տվեց։ Էստեղ են ասել՝ կակղես, կոտես,— կամացուկ փնթփնթաց նա ու ինքն իրեն ծիծաղեց։

Նրան սթափեցրեց քրոջ ձայնը։

— Իվանե, հերս եկավ։

Իվանեն ընդառաջ գնաց հորը։ Նա դժգոհ թոնթորաց.

— Գիշերս տաքության մեջ էր, հիմի էլ աշխատանքի է գալիս։ Ի՞նչ անեմ ես էս հալիվորին։

— Դուրս գալու մո՞տ է,— որդուն դլխի շարժումով ողջունելով հարցրեց Նահապետ պապը։

— Հա, շատ չի քաշի։

— Տեսնենք, էսօր ինչքան ձուկ կհանձնես։

— Տեղ ու դադար չկա։ Թոռ քաշողներն ասում են, որ էսօր ավելի դժվար է թոռը դուրս գալիս։

— Ուրեմն ծանրացել է. շատ լավ է։ Համ մեր գործն է հաջող, համ էլ կռվող զորքինը։

— Էդ բոլորը հասկանալի է, այ հեր։ Բա դու ինչո՞ւ ես էսօր տանից դուրս եկել։

— Աշխատող մարդը տանը նստել չի կարող,— հպարտորեն պատասխանեց ծերունին։ — Ոչինչ, որդի, թող իմ չանն էլ Ստալինին մատաղ լինի։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳԻՂՈՒՆ Ա.ՌՈՒՆՋԻՆ

Գարնանային լուսնկա գիշերն աստղերի մաղով սուզվել էր ծովակի անշարժացած ջրերի մեջ։

Շուրջը խաղաղ էր, խաղաղ ու լռին։ Ձկները հմայված աստղային խաղով ջրերի տակից լողում էին վեր, վայրկենական թռիչքով պոկվում հարազատ տարերքից, խաղում օդի մեջ ու լուսնի փայլն առած թաց մարմիններին նորից ջուրն ընկնում։ Լսվում էր նրանց ընկնելու շրմփոցն ու նորից ամեն ինչ թաղվում էր անհուն լռության մեջ։

Ձկնորսակայանում, դյուղակից չէր լսվում ոչ մի ձայն, թվում էր, որ այդ պահին ողջ աշխարհն է քուն մտել։

Սակայն կար մեկը, որ դեռ չէր քնել։ Դրասենյակում վառվում էր լույսը։ Նստած իր մեծ սեղանի մոտ, որի վրա թղթերի կույտեր կային, աշխատում էր հաշվապահ Տիրանը։ Դժգոհ էր նրա դեմքը։ Ակնոցների միջից դեմը փռված թերթերին էին նայում կարմիր կոպերով մանր աչքերը։

Գիշերվա ուշ ժամին Տիրանը ծալելով գրամատյանները, սեղանի վրայից հավաքեց ցրված թղթերը, ոտքի կանգնեց, ծմրկտաց, հանելով ակնոցները՝ տրորեց հոգնած աչքերը։

— Այսօր էլ չկարողացա վերջացնել,— թոնթորաց նա։

Գլխավերևում պատից կախած ռադիո-բարձրախոսը սկսեց խռխռալ, ինչ որ անորոշ ձայներ արձակել։ Տիրանը բարձրացրեց գլուխը, զարմացած հայացքով նայեց բարձրախոսին։ Ու այդ պահին կարծես սրտի միջից ծոր տվեց հարազատ Մոսկվայից քաղցրալուր կանչը։

Տին տա, ռա՜, տիրա՜, ռա՜ ռա՜-ռա՜, տին, տա, ռա՜, տիրա՜, ռա՜, ռա՜,-ռա՜...

Հաշվապահի հոնքերը զարմանքից վեր բարձրացան։

— Վա՜, էս ինչ խաբար է, գիշերվա էս ժամի՞ն,— բարձրաձայն ասաց նա ու վերստին նստեց իր տեղը։

Եվ հետո գիշերվա մեջ որպես լույսի պայծառ խուրձեր սփռվեցին հաղթանակի ավետաբեր խոսքերը...

***

Տիրանը գլխաբաց դուրս թռավ դրասենյակից։ Նա ինքն էլ չիմացավ ինչպես հայտնվեց հրապարակի կենտրոնում, ուր ծածկոցի տակ կախված էր մեծ զանգը։

Ու խավար գիշերը կարծես բոցավառվեց ահեղ զողանջից։

Դըն՛գ, դը՛նգ, դը՛նգ...

Դեպի հրապարակ էին վազում մարդիկ, լսվում էին խռպոտ բացագանչություններ։

— Ի՞նչ է, որտե՞ղ է։

— Ասում են հրդեհ է։

— Կրակ չի՞ երևում...

Իսկ զանգը նոր ուժով զողանջում էր։

Դը՛նգ, դը՛նգ, դը՛նգ...

— Տիրանն է,— առաջինը հասնելով զանգի մոտ, բացագանչեց Ռուբենը։

— Տիրա՞նը,— ի՞նչ ես ասում,— լսվեց Վրթանեսի ձայնը։ Նա մարդկանց հրելով հայտնվեց ծածկոցի տակ։

Ռուբենը հաշվապահի ձեռքից խլեց պարանը։

— Տո, էս ի՞նչ գործի ես, խոմ դու չես գժվել,— նրա վրա գոռաց Վրթանեսը, ի՞նչ է պատահել...

Տիրանը, որի դեմքը ողողված էր քրտինքով, լայն բաց արեց թևերը, գրկեց Վրթանեսին ու բոլորին լսելի ձայնով կանչեց.

— Հա՜ղթանակ, Մոսկվան հաղորդեց հաղթանա՛կ։ Պատերազմը վերջացել է...

Հրապարակը թնդաց ուրախ կանչերից ու մարդկանց դեմքերից օդի մեջ կախված մնաց հաղթանակ բառը։

Հրապարակը լուսավորվեց տասնյակ պայծառ լույսերով։ Տեղ հասավ և Նահապետ պապը։ Նա ծանր շունչ քաշելով հարցրեց.

— Ո՞վ առաջինն իմացավ։

— Տիրանը, բուխալտեր Տիրանը,— ձայնեցին մի քանիսը։

— Մաշալա, ես իմ հոդին նամուսով մարդ է եղել։ Թե որ առավոտը իմանայինք, խայտառակ կլինեինք։ — Մի հաշվապահին էս կողմ բերեք,— կարգադրեց նա։

— Շնորհավոր հաղթանակ,— բռնելով պապի ձեռքը ժպտալով ասաց Տիրանը։

— Շնորհքով մնաս. այ խալխ մի կամանց,— բարձր ձայ-

նով կանչեց նա,— հիշում եք չէ, կլինի չորս տարի առաջ, որ տիպրի մոտ Տիրանը կռվի խաբարը բերեց։ Էնվախտվանից աչքիս մի տեսակ փուշ էր դարձել։ Հիմա ուրախության խաբարը էլի նա հասցրեց, սրտիս մարդը դարձավ,— ասաց նա ու դրկեց հաշվապահին։

Հրապարակը թնդաց ծափերից և ուրախ կանչերից։ Գրասենյակի մոտ թնդաց թմբուկը։

— Դե, տղերք, մի ձեզ տեսնեմ,— զուռնաչիներին դիմելով ասաց Վրթանեսը։

Երգում էին ու պարում ձկնորսները։ Թև—թևի տված պարում էին Վրթանեսը, Տիրանը, Իվանեն, Ռուբենը։ Թև—թևի տված նրանց հետ ջահելի պես թռչում էր Նահապետ պապը։ Ջուռնի նվագի տակ շորորում էին հարսները, ջահել աղջիկները, ռազմիկների մայրերը... Այդ հաղթանակի կլոր պարն էր, նոր երջանկության սկիզբը...

***

Հաղթանակը նոր երջանկություն բերեց ձկնորսներին։ Ռազմաճակատներից վերադառնալ սկսեցին մարտիկներ։ Նահապետ պապը բոլորից առաջ էր իմանում վերադարձող երիտասարդների մասին և շտապում էր նրանց տեսության գնալ։ Հարազատի պես համբուրում էր նրանց, հարցնում առողջությունը, լսում նրանց պատմությունները կռիվների մասին և հետո հարց ու փորձ էր անում թոռան՝ Ավետի մասին։

— Ասում ես Ավետիս չես հանդիպե՞լ էլի։

— Չէ, պապի ջան, չեմ հանդիպել։ Տարբեր ռազմաճակատներ ենք ընկել։

Ամռան սկզբներին իր հարազատների գիրկը վերադարձավ լոդկի Կնյազի փեսա Սամվելը։

— Հիմա, որ կիմանամ Ավետիս մասին,— Սամվելի գալստյան լուրը լսելով տանեցիներին ասաց պապն ու շուխան հագնելով շտապով դուրս գնաց տանից։

Նահապետ պապին տեսնելով, Սամվելը ոտքի կանգնեց, ընդառաջ գնաց նրան։

— Այ դու բարո՞վ, հազար բարո՞վ ես եկել, որդի,— երիտասարդի դեմքը համբույրներով օծելով ուրախաձայն ասաց պապը։

— Վերև համեցի, պապի ջան,— ծերունու թևից բռնելով խոսեց Սամվելը։

— Այ կանաչ մնա արև՛դ, որդի։ Մի ասա տեսնենք, ասլան թոռս ուր է, բա երբ պիտի գա։

Սամվելը մի վայրկյան վարանեց, քրտինքի կաթիլներ երևացին նրա ճակատին, մեծ ճիգ գործ դնելով, նա կմկմաց.

— Ավետի՞ն, Ավետին, պապի ջան, հա, չեմ տեսել։ Առաջ միասին էինք, հետո բաժանվեցինք։

— Յա՜, ուրեմն չես տեսել։

— Չէ, պապի ջան, չեմ տեսել,— ճակատի քրտինքը սրբելով պատասխանեց երիտասարդը։

Փարոսավառը, որ նստել էր Վրթանեսի կողքին, սեղանի տակ սեղմեց նրա ոտը։

— Ճիշտ չի ասում։ Ես նրանից իմացա։ Ասում է իր աչքի առաջ է խփվել,— շշնջաց նա։

Վրթանեսը դժգոհ հայացքով նայեց փարոսավառին, ատամների արանքից մռլտաց.

— Դու լավ կանեիր, որ լռեիր։

— Բա ես գիտեի, որ միասին էիք,— ծանր ու ճնշող լռությունը խզելով և կարծես ոչ ոքի չդիմելով թոնթորաց պապն ու ոտքի կանգնեց։

Չնայած երիտասարդի, նավակավար Կնյազի ու Վրթանեսի խնդրանքին, պապը, հակառակ իր սովորության, չսպասեց ճաշի։

— Չէ, շնորհակալ եմ,— ընդհանուրին պատասխանեց նա,— լավ չեմ զգում, տուն պիտի գնամ։

Ծանր, հոգնատանջ քայլում էր պապը։ Նա ընկել էր դառը մրտքերի ծովը։ Ինչո՞ւ Ավետի անունը լսելիս գունատվեց Սամվելը։ Ինչո՞ւ լեզուն կապ ընկավ ... Չէ, չէ, էստեղ մի բան կա, ինձանից պահում են,— մտածում էր նա։ Պապը չէր նկատում իր կողքից անցնողներին, որոնք խոնարհ գլուխ էին տալիս նրան։ Քայլում էր նա ու ծեր աչքերից թափվում էին արտասուքի խոշոր կաթիլները։

— Յարաբ մեկ էլ անուշ ձենդ կլսեմ, Ավետ ջան,— մրմնջում էր նա։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Վրթանեսը մի օր էլ հայտնվեց Իվանեի տանը։

Նահապետ պապը սիրով ընդունեց նրան։ Վաղուց էր, ինչ չէին

հանդիպել և Վրթանեսը նկատեց, որ պապը զարմանալի փոխվել էր այդ օրերին։ Նրանք առանձնացան։

— Շատ ես մտածում, Նահապետ պապի, այդպես չի կարելի։ Ախր, մենք չենք, որ քեզ խելք պիտի սովորեցնենք։ Նայիր շուրջդ, տես քանի-քանի մարդիկ քեզ են նայում։ Թոռներ, հարսներ ունես, գոնե խնայիր դրանց։

— Հա, դրուստ ես ասում, համա ինչ արած չեմ կարողանում մոռանալ։

— Իսկ մենք կարողանում ենք մոռանա՞լ։ Ո՞վ կարող է մոռանալ Ավետին։

— Ես արդեն գիտեմ, որ էլ չկա թոռս։ Նրա հետ եղել են ծովինարցի երկու տղա։ Գնացի մոտները, աղաչանք արի, ասի ինձանից մի պահեք։ Նրանք, պատմեցին եղելությունը։ Վենգրում է զարկվել։

— Ես էլ այդ գիտեմ,— տխրությամբ ասաց Վրթանեսը,— իսկ Իվանեն գիտե՞։

— Հա, չկարողացա պահել, նրան էլ ասացի։

Վրթանեսը ծոցագրպանից հանեց Սիմոնյանի տված նամակը։

— Այ, էս նամակում գրված է, թե ինչպես է զոհվել,— ասաց նա և սկսեց հանդարտորեն կարդալ նամակը։

Երկար չիբուխը ծխելով, պապը լսում էր, նրա ծեր աչքերից թափվում էին արտասուքի կաթիլները։

— Իմ հերոս բալա, իմ ազիզ Ավետ,— արտասուքների միջից մրմնջում էր նա։

Մինչ կես գիշեր Վրթանեսը, Նահապետ պապը և Իվանեն առանձնացած զրուցում էին։

— Անմահ կմնա Ավետի անունը մեզ համար,— ոտքի կանգնելով և ծերունու, Իվանեի ձեռքը սեղմելով ասաց Վրթանեսը։— Հավերժ հիշատակ նրան։

Վրթանեսի գնալուց հետո հայր և որդի պահ մի լուռ էին։

— Ինչ ասեմ, որդի։ Ավետս էլ չկա։ Բայց լաց ու կոծով էլ բան դուրս չի գա. թող մնացածները ողջ լինեն։ Մարդս պետք է ցավին դիմացող լինի։ Մարդկանց մոտ գլուխդ մի կախի։ Այ, տես, թե Ավետիս մասին ինչ է գրել ռուս հրամանատարը,— այդ ասելով ծերունին Իվանեին հանձնեց նամակը,— կարդա ու իմացիր, որ ասլանի պես է կռվել։

Իվանեն նամակը կարդալուց հետո, այն սեղմեց դեմքին. թաց էին նրա աչքերը։

— Իմ բալի գերեզմանին մատաղ, նրա էն ձեռքերին ու խումար աչքերին մատաղ։ Լավ ես ասում, այ հեր, ես գլուխս բարձր պիտի պահեմ, չէ որ մեր բալեն քաջի պես է ընկել...

***

Մայիս։ Հաղթանակի առաջին տարին։

Ծովափին գտնվող ձկնորսակայանի ակումբը շողում էր պայծառ լույսերի մեջ։ Երիտասարդները խումբ-խումբ զբոսնում էին կանաչ պուրակում։ Նրանց մեջ էր նաև տխուր ու դլխակոր Նվարդը։

Վրթանեսը, Նահապետ պապը, Իվանեն, հաշվապահ Տիրանը, Ռուբենը կանգնած նավահանգստի տախտակամածի վրա զրուցում էին։

Վառվեցին փարոսի լույսերը։ Լուսե ճառագայթները՝ պատռելով խավարը իջան ջրերի վրա։

— Ինչո՞ւ այսքան ուշ,— զարմացած հարցրեց Ռուբենը և մթության մեջ լայն բացվեցին նրա աչքերը, նա էլի ինչ-որ բան էր ուզում ասել, բայց չկարողացավ, միայն անձայն շրթունքները շարժեց։ Լռեց երգն ու ծիծաղը։

Լռություն իջավ շրջապատի վրա, մարդիկ քարացան տեղնեռում, նրանց հայացքները բևեռվեցին լույսի պայծառ շերտին։ Ծովակի հարթության վրա լույսերով պարուրված Ավետի հարազատ պատկերն էր ժպտում ամենքին։ Կարծես ջրերից ծնվեց զինվորի նկարը։

— Այ քեզ հրաշք,— շշնջաց Տիրանը։— Եվ ո՞ւմ գործն է այդ։

— Միշտ էսպես պայծառ մնաս տղաս,— ուրախության արտասուքները աչքերին, մրմնջաց Իվանեն։

Ծերունի Նահապետը լուռ էր։ Նա մի անգամ ևս նայելով ծովակի կողմը, դանդաղ քայլերով հեռացավ։ Փարոսի մոտ նստած էր Աբելը։ Տեսնելով պատկառելի ծերունուն, նա ոտքի կանգնեց։ Նահապետ պապը լուռ ու մունջ սեղմեց նրա ձեռքը, կանգնեց կողքին։ Ջրերի վրա, փարոսի պայծառ լույսերով պարուրված՝ նորից ամենքին էր նայում Ավետի հարազատ պատկերը։

1946—1947

ՍԵՎԱՆ—ԱՐՏԱՇԱՏ

ԱԻՐՈ ՈՒԺԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1.

Առավոտյան աշխատանքային սովորական ժամին պահածոների գործարանի դիրեկտորի տեղակալ Վարդան Ոսկանյանը գըլխավոր մուտքի առաջ ցած իջնելով մեքենայից, ժպիտը դեմքին բարևեց այնտեղ հավաքված բանվորներին, ապա դանդաղ քայլերով բարձրանալ սկսեց գրասենյակ տանող աստիճաններով։

Ընդունարանում երիտասարդ քարտուղարուհին տեսնելով նրան, ոտքի կանգնեց, հարգալից բարևեց, շտապով ետ քաշեց գզրոցը, հանեց այնտեղից առանձնասենյակի բանալին, մեկնեց նրան։ Վարդանը ներս մտավ իր առանձնասենյակը։ Քիչ անց գրասեղանի վրա դրված հեռախոսը ուժեղ զանգահարեց։

— Ալո։ Ես եմ, Վարդանը։ Բարև ձեզ ընկեր մայոր։ Շնորհակալ եմ։ Այսօր արդեն երկու անգամ զանգահարե՞լ եք։ Կներեք, շինարարական տրեստումն էի։ Ի՞նչ, ուրեմն Կենտրոնական Կոմիտեում համաձայնվեցի՞ն։ Շատ ուրախ եմ։ Ի՞նչ եք ասում. ժողկոմս աղմո՞ւկ բարձրացրեց։ Ոչինչ։ Ես Վահան Նիկիտիչի հետ կխոսեմ։ Վաղը չէ, մյո՞ւս օրվա համար, ես պատրաստ եմ թեկուզ այսօր ևեթ մեկնել։

Դնելով լսափողը Վարդանը բարձրացրեց գլուխն ու ժպտաց.

— Լավ է, լավ։

— Ուրեմն գնո՞ւմ եք, Վարդան Սարիբեկովիչ,— հարցրեց քարտուղարուհին, որ ներս էր մտել և անխոս կանգնած էր կապույտ մահուդով ծածկված սեղանի մոտ։

— Այո։ Սակայն դուք չմոռանաք հեռագրերը։

Քարտուղարուհին մանրիկ քայլերով դուրս գնաց առանձնասենյակից և չանցած մի քանի րոպե կրկին վերադարձավ՝ սեղանի վրա դնելով հեռագրերը։

Վարդանը, հեռագրերն աչքի անց կացնելուց հետո, պատվիրեց կանչել գործերի կառավարչին։ Նրան հանձնելով մակագրված հեռագրերն ու մի շարք գրություններ ոտքի կանգնեց, մոտե-

ցավ լայն բաց արած պատուհանին։ Խոհը դեմքին նա դիտում էր գործարանի կանաչապատ բակը, ուր հովասուն ծառերը խիտ շարքերով կարծես նիրհում էին ամռան արևի տակ։ Շուրջը խաղաղ էր ու հանդիստ։ Մարմարիոնապատ ավազանների միջից շատրվանները ջուրը ցայտում էին ծառերից էլ բարձր։ Ջրի թափվող կաթիլներն արևի ու կանաչի մեջ շողշողում էին ադամանդների ցոլքով։ Անուշ բուրմունք էին արձակում բազմերանգ ծաղիկները։

Ոսկանյանը քառասունի մոտ, միջահասակ մարդ էր։ Մեծ, արծվի կտուցի նման կեռ քթով և կարճ խուզած բարակ ու սև բեղիկներով, որոնք ավելի սոլիդ էին դարձնում նրա դեմքը։ Ոսկանյանին ինքնամոռացությունից հանեց գործարանի դիրեկտորը, որը շիտակ քայլերով մոտեցավ նրան։ Վարդանը ջերմորեն ողջունեց Տիգրան Սիմոնիչին։

— Զմայլվո՞ւմ ես,— հարցրեց բարձրահասակ, ժամանակից շուտ ծերացած մարդու հոգնած լիքը դեմքով Տիգրան Սիմոնիչը ինքը ևս կանգնելով նրա կողքին։

— Այո, գուցե և վերջին անգամ,— հայացքը ցայտող ջրերից չկտրելով պատասխանեց Վարդանը։

— Արժե զմայլվել։ Կատարյալ դրախտի տպավորություն է թողնում։ Բայց դա ինչ բան է՝ վերջերս սկսել ես առանց մեզ գործեր բռնել։ Այո՛, այդ արդեն աններելի է։

— Դու չպետք է նեղանաս ինձանից,— կռահելով Տիգրան Սիմոնիչի միտքը, մեղմորեն պատասխանեց Վարդանը,— հավատա, պատերազմը սկսվելու օրվանից անցած այս երեք շաբաթների ընթացքում չեմ կարողանում հանդիստ մնալ՝ կարծես ասեղների վրա նստած լինեմ։ Դատիր ինքդ, արդյոք ներելի՞ է ինձ նման երիտասարդ մարդուն բազմել դիրեկտորական աթոռին, երբ արյունահեղ մարտեր են տեղի ունենում։ Չէ՞ որ ես զինվորական եմ։ Կարմիր Բանակում ծառայել եմ երկու տարի, համալսարանը վերջացնելուց հետո սովորել եմ հրամանատարական կուրսերում և վերջապես երեք տարիների մեր համատեղ աշխատանքից ձեզ հայտնի է, որ գրեթե ամեն տարի մեկ կամ երկու ամսով գնում էի վերապատրաստման։ Այս բոլորից հետո, եթե դու լիներիր իմ տեղը, կհամբերե՞ր սիրտդ։ Իհարկե ոչ։ Դրա համար էլ դիմեցի մինչև Կենտրոնական Կոմիտե, խնդրեցի, որ ինձ ռազմաճակատ ուղարկեն և ահա հարգեցին խնդիրս։

— Գնա, բայց մի մոռանա մեզ։ Ճիշտն ասած դժվար է ինձ համար այս ծանր օրերին բաժանվել քեզանից։ Ժողկոմն էլ համաձայն չէ։ Ի՞նչ արած։ Թող լինի կամքդ։ Ես միշտ էլ գոհ եմ եղել քեզանից,— արդեն հաշտ եղանակով ու մեղմությամբ ասաց Տիգրան Սիմոնիչը,— երեք տարի մենք աշխատեցինք միասին և ամոթով չմնացինք հայրենիքի առաջ։

2.

— Ինչո՞ւ այսպես վաղ,— դուռը բաց անելով Վարդանի առաջ, հարցրեց երիտասարդ կինը։

— Չէ՞ որ պատրաստվել է պետք, Հռիփսիկս,— գրկելով նրան ասաց Վարդանը,— վաղը չէ մյուս օրը մեկնելու եմ։

Հռիփսիմեն իր սև ու գեղեցիկ աչքերի հայացքով նայեց ամուսնուն, հարցնելով.

— Ուրեմն գնո՞ւմ ես։ Արդեն վճռվա՞ծ է։

— Այո՛։ Հարկ չկա տխրելու,— պատասխանեց Վարդանը,— հույսով եմ, որ դու, իմ սիրունիկ, կհասկանաս ինձ։ Ես պետք է գնամ։

— Չէի՞լ ցանկանա մի բան ուտել, չպատասխանելով Վարդանին հարցրեց Հռիփսիմեն։

— Դեռ ախորժակ չունեմ։ Մի շտապիր, գիշերս գործարան չեմ գնալու։

Այդ ասելով Վարդանն անցավ իր առանձնասենյակը։ Հռիփսիմեն մենակ թողեց նրան։

Իր ետևից փակելով դուռը Վարդանը նստեց բազմոցի վրա, ձեռքը վերցրեց գրասեղանի վրա դրված բաց գիրքը, սկսեց թերթել։ Թերթեց մի քանի թերթ, ծալեց, վերստին դրեց նույն տեղը։ Առանց կոշիկները հանելու, նա մեկնվեց բազմոցի վրա, գլխի տակ դնելով երկայն ու ջլուտ թևերը։ «Ժողկոմն էլ դեմ է» հիշեց նա դիրեկտորի խոսքերն ու ժպտաց։ Ի՞նչ հոգ. մի՞թե ինքը հանցանք է գործել՝ առանց նրան ասելու Կենտրոնական Կոմիտե գիմելով։ Չէ՞ որ իր խնդիրն օրինական էր և դրա համար էլ գոհացում ստացավ։

Վարդանն ակամայից հիշեց իր կյանքը։ Ութ տարին նոր էր բոլորել, երբ սպանվեց հայրը։ Տասնմեկ տարիքի չէր հասել, երբ

մեռավ մայրը։ Ինքը որբ մնաց, բայց չխավարեց կյանքի արևը։ Սովետական նոր հայրենիքում մեծացավ մանկատանը, ստացավ միջնակարգ կրթություն, երկու տարի ծառայեց Կարմիր Բանակում, սովորեց և ավարտեց Պետական համալսարանը, աշխատեց դավառական քաղաքի պահածոների գործարանում, հետո առաջ քաշեցին մայրաքաղաքի առաջնակարգ գործարաններից մեկի դիրեկտորի տեղակալի պաշտոնին, մի գործարան, որ տարեկան արտադրում է միլիոնավոր տուփ պահածոներ։ Ինքը սիրեց բանվորներին և սիրվեց նրանց կողմից...

— Սակայն ինչո՞ւ մռայլվեց Հռիփսիմեն։ Չէ՞ որ նա պարտավոր է հասկանալ ու կարդալ իմ սիրտը,— ոտքի կանգնելով ինքն իրեն խոսեց Վարդանը։

3.

Երիկնադեմին ընտանիքը սեղան նստեց։ Իր սովորության համաձայն Վարդանը փորձեց կատակներ անել։ Սակայն Հռիփսիմեն դժկամեց, կախեց գլուխը և մինչև ճաշի վերջը չնայեց նրա կողմը։ Վարդանը չցանկացավ անհանգստացնել կնոջը։ Երկար լուռ մնալուց հետո, լցրեց բաժակը և դիմելով Հռիփսիմեին, ասաց.

— Մի տխրիր։ Ես չեմ կարող տանել տխուր մարդկանց։ Հասկանում եմ քեզ։ Լսիր խոսքս և հիշիր։ Սպասիր իմ վերադարձին, իսկ եթե ես վերադարձա, կդամ փառքով։ Խմում եմ մեր ապագա երջանկության կենացը...

Երբ Արարատյան դաշտից արևն իր ոսկեղեն շողերն էր հավաքում, Վարդանը ջութակը ձեռքին դուրս եկավ պատշգամբ։ Այնտեղ էր Հռիփսիմեն։ Ծնկներին դրած բաց գիրքը, ձեռքերը կրծքին ծալած, նա խորհում էր։

Հրաշագեղ ու հարուստ էին երիտասարդ կնոջ սև գիսակները։ Սև ու խոշոր աչքերին նայողը արևելքի հմայքը կգտներ այնտեղ։

Հռիփսիմեն այնքան էր տարված մտքերով, որ չնկատեց ամուսնու հայտնվելը պատշգամբում։

Վարդանը մոտեցավ նրան, դեմքը մոտեցնելով նրա նրբագեղ գլխին, քնքշալիր, հարցրեց.

— Ասա, Հռիփսիկս, ի՞նչ կցանկանայիր, որ նվագեի քեզ համար։

— Ի՞նչ,— սթափվելով հարցրեց կինը,— նվագիր ինչ որ ցանկանում է սիրտդ։

Վարդանը մի քանի րոպե խաղում էր ջութակի լարերի հետ, հետո սկսեց նվագել։

Շենքի մոտ բարձրացած ծառերից մեկը, որի ճյուղերը խոնարհվել էին պատշգամբի վրա, կանաչ վրան էր հիշեցնում։ Կանգնած պատշգամբում, այդ կանաչ վրանի տակ, իր ջութակն էր խոսեցնում Վարդանը։ Կանաչ ճյուղերի վրա խմբված թռչունները դադարել էին մեկ թփից մյուս թուփը ոստոստալուց։ Կարծես նրանց էլ հմայել էր հոգեբուխ նվագը։

Հռիփսիմեն խոնարհել էր գլուխը։ Տխուր էր նա։ Տխուր և թախծոտ էր Վարդանի նվագը։

Գիշերն անկողնում պառկած՝ Վարդանը Հռիփսիմեին պատմում էր իր կյանքի, իր զգացումների մասին։ Գրկած կնոջ պարանոցը, երբեմն էլ համբույրներ քաղելով նրա նուրբ շրթունքներից, նա երազանքով շշնջում էր։ Ինչե՞ր, ինչե՞ր ասես, որ չէր երազել դառնալ... Նա պատմում էր Հռիփսիմեի հետ իր հանդիպումների մասին, երբ սիրո կրակն էր այրում սիրտը...

— Ինչպիսի դառնագին օրեր էի ապրում՝ կարծելով, որ դու կմերժես սերս։ Իսկ նա... իմ վաղեմի ընկերը փայլում էր ժպիտից, այն մարդը, որ ուզում էր խլել քեզ, երջանկությունս...

Հռիփսիմեն լուռ էր։ Նա իր քնքույշ մատներով խառնում էր ամուսնու մազերը, երբեմն էլ համբույրով պատասխանում նրա ջերմ համբույրներին։

— Չորս տարի է անցել Հռիփսիկս, չորս տարի... Բայց ինձ թվում է, որ այդ դեռ երեկ էր։ Ա՛խ, ինչպես ցանկանում էի տեսնել մեր մանկիկին, հայր դառնալ... Իսկ հիմա բաժանվում ենք և այդ կարոտն է մնում սրտումս...

4.

Վարդանին ճանապարհելու համար երկաթուղային կայարան էին եկել ընկերները, պաշտոնակից մարդիկ, կնոջ ընկերուհիները։

Տիգրանուհին՝ Հռիփսիմեի մանկության ընկերը կատակներ էր

անում ամենքի հետ։ Այդ դուր էր գալիս Վարդանին։ Նա սիրում էր Տիգրանուհուն նրա պարզ ու անկեղծ բնավորության համար։

— Տես, հա, թե ուշացաք, քեզ էլ, Հակոբին էլ տուն չենք թողնի։

— Հակոբդ, Տիգուշ, ինձանից առաջ անցավ։ Լավ կլիներ, որ միասին լինեինք։

— Գտեք իրար։ Հռիփսիկը եթե յոթ սարի ետևն էլ գնացած լինի, ես կգտնեմ նրան։

Հռիփսիմեն չէր խառնվում խոսակցությանը, նա և գրեթե չէր լսում ընկերուհիների կատակները։

Կառամատույցի առաջին գծի վրա կանգնած ապրանքատար վագոնների լայն բացված դռների առաջ գնալով սաստկանում էր աղմուկն ու իրարանցումը։ Մոտենում էր գնացքի մեկնման ժամը։ Մեկնողներին գրկում, համբուրում էին հարազատները։ Կանայք շուտ-շուտ աչքերին էին սեղմում թաշկինակները։

Ոսկանյան զույգը բաժանվեց առանց արտասուքների։

Վարդանը ջերմորեն մնաս բարև անելով ընկերների հետ, քնքշանքով սեղմելով կնոջ ընկերուհիների ձեռքը, նրանցից յուրաքանչյուրին առանձին ասում էր.

— Չթողնեք, որ Հռիփսիմեն տխրի։

Հետո բռնեց Հռիփսիմեի ձեռքը, գրկեց նրան և նրանք պահ մի այդպես գրկված մնացին։ Համբուրելով կնոջ դողացող շրթունքները, Վարդանը բարձրացավ վագոն։

Գնացքը դանդաղորեն սկսեց առաջ շարժվել։

— Ցտխրես, առաջին իսկ հարմար բոպեին նամակ կգրեմ,— կանչեց նա։

Գնացքն արագացնելով ընթացքը, հեռացավ կայարանից։

Բազմությունն սկսեց ցրվել։ Չնայած ամուսնու ընկերների խնդրանքին, Հռիփսիմեն հրաժարվեց մեքենա նստելուց։ Ընկերուհիների հետ լուռ ու անձայն քայլեց կայարանամերձ հրապարակով, ուր դեռ լսվում էին հեկեկոցներ։

Երբ ընկերուհիներից բաժանվելուց հետո մնացին երկուսով, Տիգրանուհին տխրությամբ ասաց.

— Ինչ որ տարօրինակ է։ Ինձ թվում է, որ վատ երազի մեջ եմ։

— Ի՞նչ երազի մասին ես խոսում, հարցրեց Հռիփսիմեն։

— Չհասկացա քեզ։ Ի՞նչ զարմանալի արարք էր քո արարքը։

— Չկարողացա,— ըմբռնելով ընկերուհու հանդիմանության իմաստը, դլուխը խոնարհելով պատասխանեց նա ու հառաչեց։

— Ի՞նչ է նշանակում չկարողացա։ Միթե՞ դու չէիր սիրում նրան։ Երևակայիր, այնպես սառն ու անտարբեր էիր պահում քեզ, որ ես ցավից ուտում էի ինքս ինձ, կարծես քարե արձան լինեիր։ Ոչ ոք չէր ասի, որ դու կայարան էիր եկել ռազմաճակատ ճանապարհելու ամուսնուդ։ Այո, քո սառնությունն զգաց և Վարդանը։ Ես տեսա, թե ինչպես մի վայրկյան մոայլվեց ու դողաց նրա դեմքը։ Իսկ Տիգրան Սիմոնիչը անտեսել ցանկացավ այդ և իբր թե ուրիշ տեղ նայելու պատրվակով, շրջեց դեմքը, վեր քաշեց ուսերը։

— Այդ ինձ այնքան էլ չի հետաքրքրում,— վրդովված պատասխանեց Հռիփսիմեն։

— Բայց ի՞նչ կկարծեն մարդիկ։ Դու ցնդվել ես, ի՞նչ է։ Օ՜, ես չգիտեի, որ դու այդպիսի քար սրտի տեր ես։

— Է՜, չարժե այդ մասին խոսել։ Ինչ ուզում են թող այն էլ կարծեն մարդիկ։ Իսկ դու չափը մի անցնի։ Հարկավոր է հասկանալ։ Չկարողացա և ուրիշ ոչինչ։

Կարծես առաջին անգամ տեսնելով նրան՝ մտերմուհին զարմացական կմկմաց.

— Դո՞ւ, դո՞ւ...

— Թողնենք այս դառը խոսակցությունը,— շտապով նրա խոսքը կտրեց նա։ Խնդրում եմ, Տիգուշ, վերջ տուր, սիրուս նեղվում է։

Տիգրանուհին ծանոթ լինելով ընկերուհու բնավորությանը, հարկ համարեց լռել։ Մինչ տրամվայի կանգառը նրանք քայլում էին գլխակոր ու լուռ։ Վագոն բարձրացան, նստեցին առանձին տեղերում։

Մեծ հրապարակում Հռիփսիմեն ցած թռավ։ Նրան հետևեց Տիգրանուհին.

— Գնանք մեզ մոտ,— բռնելով ընկերուհու թևից, քնքշանքով ասաց նա։

— Չեմ կարող։ Ինչ որ վատ եմ զգում։ Ուզում եմ տուն գնալ։

— Այդ դեպքում երեկոյան ես կգամ քեզ մոտ։

Հռիփսիմեն չպատասխանեց։ Ընկերուհիները բաժանվեցին։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1

Քայլում էր Հռիփսիմեն ու տխուր հայացքով նայում մարդկանց։ Այդ ինչպե՞ս պատահեց, յուրովի հարց էր տալիս նա, որ նույնիսկ բաժանման վերջին պահին ինքը չկարողացավ գեթ մի կաթիլ արցունք քամել աչքերից։

Երիտասարդ կինն այնքան էր տարված մտքերով, որ չէր նկատում ծանոթներին, սիրտը կարծես այրվում էր Վարդանի աչքերի վառվող հայացքից։ Հռիփսիմեն չնկատեց իրեն մոտեցող բարձրահասակ, լայնաթիկունք մարդուն, որը դեռ հեռվից ուշադիր ու լարված հայացքով հետևում էր նրան։ Բարձրահասակ մարդը հավասարվելով նրան, վերցնելով գլխարկը ողջունեց.

— Իմ ջերմ ողջույնները Հռիփսիմեին։

Լսելով նրա ձայնը Հռիփսիմեն ցնցվեց, ապա տիրապետելով իրեն, մեղապարտի պես ժպտաց։

— Այդ դու ես, Երվանդ։ Ներիր, որ չնկատեցի։

— Ոչինչ, պատահում է,— քմծիծաղով պատասխանեց Երվանդը,— այդ ներելի է մանավանդ մեր այս օրերին։ Սոսկալի պատերազմի լուրը ցնցել է բոլորին։

— Այո։ Այդ այդպես է,— տխուր հարեց Հռիփսիմեն։

— Իսկ ինչպե՞ս է առողջությունդ։

— Շնորհակալ եմ։ Ապրում ենք էլի։

— Ամուսնյակդ քաղաքո՞ւմն է։

— Ոչ, ես նոր ճանապարհեցի նրան։ Նա ռազմաճակատ գնաց։

— Ա՜, արդ հասկանում եմ տխուր և շփոթված լինելդ։ Ի՞նչ արած, պատերազմ է։ Մի գուցե վաղը հերթը մեզ էլ հասնի։

— Թերևս ոչ ձեզ,— պատասխանեց Հռիփսիմեն,— չէ որ դուք զինտական աշխարհի մարդ եք։ Այստեղ էլ մեծ գործեր կան անելու, իսկ նա ժամանակին ստացել էր ռազմական դաստիարակություն։

— Այո։ Նա սիրում էր ռազմական գործը,— նկատեց Երվանդը։

— Սիրում էր ու դրա համար կամավոր գնաց։

— Բայց դուք, Հռիփսիմե շատ գունատ եք երևում։

— Խոստովանանք լինի Երվանդ, մի փոքր վատ եմ զգում։

— Չէի՞ր առարկի եթե ես ուղեկցեի։

— Շնորհակալ եմ, ես ինքս կգնամ։

— Խնդրեմ,— վիրավորված շեշտով ասաց Երվանդը և սեղմելով նրա ձեռքը, արագ քայլերով հեռացավ։

Քայլում էր Հռիփսիմեն դանդաղ, բարձր բռնած գլուխը։ Վեհ ու հանդիսավոր էր նրա դիրքը։ Քայլում էր նա ու մտածում թե ի՞նչպես, երբ միտքը տարված էր ամուսնով, կրկին հանդիպեց այն մարդուն, որին սիրել էր, որի համար տանջվել էր ամուսնական կյանքի չորս տարիների ընթացքում։ Բայց ինչո՞ւ չցանկացավ կանգնել և զրուցել նրա հետ։ Ի՞նչը հարկադրեց իրեն այդպես վարվել...

2.

Տուն հասնելով Հռիփսիմեն դուրս եկավ պատշգամբ։ Նստեց սաղարթախիտ ճյուղերից հյուսված կանաչ վրանի տակ դրված բազկաթոռին։ Տխուր էր։ Ու նա վերհիշեց իր կյանքը. ամուսնության պատմությունը։

... Լինելով ծնողների միակ զավակը, նրանց փայփայանքի ու սիրո առարկան՝ նա շատ էր երես առել։ Աչքը բաց անելով տեսել էր դավառական փոքրիկ քաղաքը՝ թաղված հավիտենական կանաչի մեջ։ Անտառապատ սարերից ծառերը կարծես իջել, հասել էին քաղաքի փողոցները, ու քաղաքն էլ իր գեղեցիկ պարտեզներով, մրգառատ այգիներով թվում էր անտառի շարունակությունն է կազմում, ուր համատարած կանաչի միջից հազիվ են երևում կղմինդրածածկ կտուրները։

Անտառին շատ մոտ գտնվում էր իրենց տունը, ուր ուրախ ու անհոգ անցավ մանկությունը։ Խնձորի ընդարձակ այգում, թիթեռներ էր բռնում վարդի թփերի վրայից, նայում գլգլան ջրերին, ժամերով պառկում առվակի ափին ու զմայլվում երկնքի անհուն կապույտով։ Հետո սկսեց դպրոց հաճախել և մի զարմանալի սիրով սիրեց ծնողների արհեստը՝ գորգագործությունը։ Նստում էր ծնողների կողքին ու նայում, թե ինչպես գույնզգույն թելերը վարժ ձեռքերի տակ հենքի վրա նոր փայլ էին ստանում ու այնտեղ վարդերն լին բացվում, կարծես ցողաթաթախ իսկական վարդեր լիներին դրանք, կամ էլ ծառերի արանքից անտառի քնքույշ եղնիկն լ.

իրեն նայում անմեղ աչքերով այնպես իրական, այնպես կենդանի, որ թվում էր ահա ինքը կլսի կենդանու բառաչը։ Սիրեց գորգագործությունը։ Տասներկու տարեկան հասակից սկսեց գործել։ Ծնողները նայում էին իր գործվածքին ու հիանում. «Գործիր աղջիկս՝ փեշակը լավ բան է»,— ասում էր հայրը։

Երբ լրացավ տասնհինգ տարին՝ դպրոցական ամառային արձակուրդների ժամանակ ինքնուրույն գործեց առաջին փոքրիկ գորգը։ Դաղգահից հանելով փռեց հոր ոտքերի տակ։ Հայրը գբրկելով նրան ասաց. «Դու ուսումդ ավարտիր, ես քեզ համար այնպիսի խալի կգործեմ, որ երազումդ էլ տեսած չլինես»։

Ավարտեց միջնակարգ դպրոցը։

Ծնողները չցանկացան բաժանվել իրենից։ «Ուսումը լավ բան է, համա առանց քեզ չենք կարող ապրել»,— ասաց հայրը։ Ծնողները որոշեցին, որ Հռիփսիմեն հեռակայի մայրաքաղաքի ինստիտուտներից մեկին։ Սիրով համաձայնվեց։ Իրեն համար ևս դժվար էր բաժանվել սիրասուն ծնողներից։

Երկու տարի հեռակայեց ինստիտուտին։ Գիշեր ու ցերեկ կարդում էր գրքեր, որ առատորեն գնում էին իր համար ծնողները և ինքը երջանկությունն ու կյանքը գտնում էր այդ գրքերում, ծնողների գուրգուրանքի մեջ։

3.

...Քսան տարին նոր էր լրացել, երբ ձմռան մի օր տանը հայտնվեցին երկու ընկերները՝ Երվանդն ու Վարդանը, որոնք եկել էին այդ քաղաքում պաշտոնավարելու։ Վարդանը նշանակվել էր նորակառույց պահածոների գործարանում, իսկ Երվանդը գլխավորելու էր էլեկտրո-բարձր-հոսանքի համար կառուցվող ենթակայանի սարքավորման աշխատանքները։ Վարդանին ինքը ճանաչում էր դեռ մանկուց։ Նա իր ծնողների ցանկալի հյուրն էր, նրանց սիրելին։ Ուսանող եղած ժամանակն էլ Վարդանը ամառային արձակուրդն անց էր կացնում իրենց մոտ և հայրը սրտի ցնծությամբ էր խոսում նրա մասին. «Վարդանը հոգեախորոտ պատկերն է,— նրա նման էլ մարիֆաթով։ Լույս դառնա դերեզմանդ Սարիբեկ, էս ինչ լավ ծաղիկ ես թողել երկրիս վրա»։

Վարդանը կրթված, զուսպ երիտասարդ էր։ Քիչ չէին եղել ժամեր, երբ հասունություն ապրող կուսական իր սիրտը տրոփել էր նրա համար...

Սակայն Երվանդը գերեց իր սիրտը։ Ինքը սիրեց Երվանդին, Երվանդն էլ իրեն սիրեց։ Ու մի օր գողունի հանդիպեցին խնձորի այգում։ Գարուն էր. դարնանային աստղազարդ լուսընկա գիշերն էլ կարծես արբեցած էր ծաղկանց բույրով։ Հռիփսիմեն իրեն զգաց Երվանդի բազուկների մեջ ու սիրտը դողաց կյանքի քաղցր դողով։ Այդ պահին սեր շշնջացին երկուսով ու ջերմ համբույրով սիրո սուրբ ու անխախտ ուխտ կապեցին... Խաղում էր մեղմ հովը ու հովի քնքուշ մատների տակ ձյան փաթիլների նման իջնում էին խնձորենիների սպիտակ ծաղկաթերթիկները։

Վարդանն իր փեսացուն էր, այդ գիտեր Հռիփսիմեն։ Ծնողները գոհ ու երջանիկ սպասում էին նրան և նա եկել էր։ Սակայն ինքը չէր կարողանում տանել Վարդանի ներկայությունը...

Տոնվում էր Երվանդը։ Նա սկսեց իրենց տունը հաճախել առանց Վարդանի։ Ծնողներն սկզբում ոչ մի վատ բան չէին մտածում, իսկ երբ տեսակցությունների ժամին նկատեցին իր ուրախությունը, սիրով լի հայացքները, այգում նրա հետ առանձնանալը, տխրեցին։ Հայրը Երվանդի ջերմ ողջույններին սկսեց լռությամբ, ապա թշնամանքով պատասխանել։ Մի օր էլ, նախամուտքից ետ դարձրեց նրան. «Մենք գործ ունենք, Հռիփսիմեն էլ հիվանդ է»։

Այդ լսեց ինքն ու սոսկաց։ Գիշերն անկողնում պառկած լաց էր լինում։

Այդ օրվանից ծնողներն սկսեցին ավելի հաճախակի խոսել Վարդանի մասին։

Հայրն արտասուքն աչքերին պատմեց իր ուխտի մասին.

«... Երբ մենք մեր քաղաքից գաղթված էինք, էս կողմերը կգայինք, ճամփին մեզ թալանեցին։ Ավազակ մարդիկ են դաշնակները։ Ո՞վ էր նրանց օրենք ու թասիբ տվել։ Թալանից հետո ձեռք գցեցին կանանց։ Էն անիրավներից մեկը ձեռքը մորդ դոշը տարավ։ Մերդ էլ էն ժամանակ քեզ նման մի թառլան ղուշ էր։ Հոգեախպերս՝ Վարդանի հայրը, լուս դառնա նրա գերեզմանը, չտարավ էդ անպատվությունը։ Դուրս քաշեց չուխի տակ պահած զա-

մեն ու անիրավի ջիգյարը խառնեց։ Էդ որ տեսան սպանված ավագակի ընկերները, տասը գյուլլա զսրկին դոշին։ Մենք ուշքի եկանք։ Օղորմածիկ քեռուդ հետ դետին գլորեցինք երկուսին, հրացանները խլեցինք նրանց ձեռքից։ Մեզ օգնության եկան ուրիշներն էլ. «Սպանեք դրանց» վերջին անգամ աչքերը բաց անելով ասաց Սարիբեկ հոգեախպերս։ Մենք էլ սպանեցինք նրա կյանքը մարդներին։

Հոգեախպորս վերքերը շատ ծանր էին։ Հոգին փչեց։ Թաղեցինք աղբյուրի մոտ ու ես նրա գերեզմանի վրա ուխտ կապեցի, թե որ դու ու նրա միակուսակ Վարդան տղեն անփորձ մնաք, բախտավոր զույգ պիտի դառնաք։ Սիրիր Վարդանին, աղջիկս ու դու բախտավոր կլինես»։

Մայրն էր համոզում. «Վարդանը լավ ծառի պտուղ է։ Նրա հերը, թող լուս դառնա նրա արդար հոգին, ինձ խայտառակությունից ազատեց։ Սիրե աղջիկս, Վարդանը լուսի պես տղա է»։

Իսկ ինքը չկարողացավ սիրել Վարդանին։ Երվանդի սիրո կայծերը հրդեհի փոխարինվեցին իր սրտում։

Վրդովեց ծնողների խաղաղ կյանքը։ Հայրը շարունակ կշտամբում էր մորը, որի արտասուքի անսովոր աչքերը այդ օրվանից միշտ թաց էին լինում։ Հայրը օրերով արհեստանոց չէր մտնում։ Տուն էր գալիս ուշ գիշերներին։ Գինին օրորում էր նրան։ Գոռում էր ամպի պես ու ձեռք էր բարձրացնում մոր վրա. «աղջիկդ ինձ գերեզման կտանի, նա ուզում է, որ ես մեղանչեմ Սարիբեկիս գերեզմանի առաջ։ Էդ բանը չի լինի... Մի օր էլ կիմմեմ, կերթամ մեշի ծառերից կկախվեմ»։

Մայրը վշտից անկողին ընկավ։ Անտեսանելի ցավը հալ ու մաշ էր անում նրան։

Ի՞նչ անել... ինչպես ամոքել ծնողների սիրտը։ Ինքը եղավ նրանց խաղաղ կյանքը թունավորողը։ Ի՞նչ արժե իր բախտավորությունն ու երջանկությունը, երբ վշտի մեջ տառապելու են նրանք։ Օրեր շարունակ դառը արտասուք թափելով խորհում էր ինքը։ Բայց ինչպե՞ս սիրել Վարդանին։ Ուրիշ բան էր այն ժամանակ, երբ չկար Երվանդը։ Մի դուցե կրկին վերադառնա այն սերը։ Չէ՞ որ ինքը դրանով կփրկե ծնողների կյանքը... Ու դրժեց Երվանդին տված սիրո խոսքը։

Այդ վճիռն ընդունելուց հետո, տուն հրավիրեց Վարդանին։ Երկուսով նստած պատշգամբում զրույց էին անում, երբ գինուց օրորվելով ներս ընկավ հայրը։ Նա անակնկալի եկած մարդու պես ապշած հայացքով նայեց նրանց, կարծես չհավատալով տեսածին, տրորեց ուռած աչքերը։ Վարդանն ուրախ էր։ Տեսնելով հորը Հռիփսիմեն ինքը ևս ժպտաց... Ժպտաց, սակայն կրծքի տակ լալիս էր սիրտը։ Ժպտաց ու ձեռքը դրեց Վարդանի ձեռքին։

«— Փառք քեզ աստված» բացագանչեց հայրը։ Նա ուրախությունից լալիս էր։

4.

Նույն տարվա աշնանը եղավ նրանց հարսանիքը։

Հռիփսիմեն գլուխը ձեռքերի մեջ առած հիշում էր։ Նրա աչքերից առատորեն թափվում էին արտասուքները։

... Աշնանային գույների մեջ վառվող անտառի միջով շարժվում էր հարսանեկան հանդեսը։ Պարում էին ընկերուհիները, պարում էր հայրը, չէ՞ որ նա հասել էր իր նպատակին։ Մեծ ուրախության համար պատրաստված մարդիկ գինով ու խնդությունով անցկացրած գիշերից հետո էլ, առույգ էին ու զվարթ։ Երբ երևաց կարմիր ժայռն ու մենավոր շիրիմը, անտառը գրկեց զուռնի տխուր մեղեդին։ Լռեց աղմուկն ու խնդությունը և կարծես մարդկանց օրորել սկսեց թախիծը... Հասան աղբյուրին, կլոր շրջանի մեջ առան շիրիմը։ Առաջ եկավ հայրը։ Շիրիմաքարի վրա դրվեցին բաժակները։ Փրփրեց կարմիր գինին։ Մայրը, ինքը, Վարդանը չոքեցին շիրիմի առաջ։ Մեղմ խշշում էին ծառերը, իրենց խշշոցի հետ դեղնած տերևներն էին թափվում մարդկանց գլխներին։ Հայրը սրբելով աչքերը, դիմեց վաղամեռիկ հոգեղբորը. «... Սարիբեկ ախպեր ջան, մուրազս կատարվեց, մի վեր կաց, ազիզ ախպեր, տես ովքեր են եկել քեզ տեսության, տես, ինչքան ախպեր տղերք ունես»։

Հայրը համբուրեց շիրիմաքարը, վերցրեց գինով լիքը բաժակը։ Նրա հետ բաժակ բարձրացրին էլի տասնյակ մարդիկ։ Շիրիմաքարի վրա դրեցին լիքը գավաթ, մի բրդոտ հաց ու միս, որի վրա իր ձեռքով աղ ցանեց հայրը։ Բոլոր բաժակները խփվեցին շիրիմաքարի վրա թողած գավաթին...

Խաղաղվեց ծնողների կյանքը։ Նորից գոհ ու երջանիկ էին նրանք։

Սակայն դառն ու տանջալի էր իր վիճակը։ Չսիրել մեկին և ապրել նրա հետ... Չսիրելով Վարդանին, ինքը սեր էր ցույց տալիս նրան, որ չխռովի ծնողների սիրտը, որ չամպոտի խելագար կերպով իրեն սիրող երիտասարդ մարդու հոգին։ Երբ երեք տարի առաջ ամուսնուն աշխատանքի նշանակեցին մայրաքաղաքում, Հռիփսիմեն գոհ մնաց դրանից։ Գոնե հեռու կլիներ ծնողներից ու նրանք չէին տեսնի իր տանջանքները, չէր խավարի նրանց խաբուսիկ երջանկությունը, որ ինքն իր տառապանքների գնով վերադարձրեց։

Հռիփսիմեն բարձրացրեց գլուխը։ Արևը մայրամուտ էր ապրում։ Երեկոյան համերգն էին սկսել ծառի ճյուղերի մեջ ոստոստացող թռչունները։ Ահա այդ պահին պատշգամբ էր մտնում Վարդանը։ Գոհ ու երջանիկ էր նա և ջութակի լարերը նրա վարժ մատների տակ գեղգեղում էին անուշ թովչանքով։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1.

Ծանր ու ահավոր պատերազմն իր ահռելի շրջապտույտի մեջ էր առել սովետական ողջ երկիրը։

Լի կյանքով ապրող արևաշող քաղաքը, կարծես դատարկվել էր։ Այլևս նրա ճոխ զբոսավայրերում, Նորքի հայտնի ծառաստաններում խմբովին չէին ճեմում ուրախ երիտասարդները։ Այգիներում լռել էր հայկական քաղցրալուր երգն ու նվագը։

Ամեն օր քաղաքային կայարանից շարժվում էին զինվորական գնացքները։ Նրանք տանում էին թշնամու դեմ ատելությամբ լցված երիտասարդ մարդկանց։

Օր-օրի վրա մռայլ էր դառնում քաղաքը։ Այլևս խանութների ցուցափեղկերում, բարձր տների մուտքերի վրա երեկոներին չէին փայլում բազմերանգ լույսերը, որոնք ստեղծագործ աշխատանքից հետո, հանգստի էին հրավիրում մարդկանց։ Վրա էր հասնում խավարը և վարդագույն շենքերը դառնում էին գորշ, անհրապույր։ Գիշերվա մեջ, մայթերի վրա երբեմն լսվում էին զինվորականների հատու քայլվածքի ոտնաձայները։

Սակայն խաբուսիկ էր մայրաքաղաքի գիշերային այդ անդորը։ Գործարաններում, արհեստանոցներում մարդիկ անդուլ գործում էին։

Գործում էր և գիտական միտքը։ Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար լսզունգը համակել էր մարդկանց...

Հոիփսմեից բաժանվելուց հետո, Սալյանը ինքնագոհ ժպտաց.

— Ուրեմն նա էլ գնաց, լավ, լավ,— ձեռքերը փրար շփելով կիսաձայն ինքն իրեն ասաց նա,— ինչ կա որ, իսկ ես կմնամ քաղաքում, ես պիտի մնամ քաղաքում և դու, իմ սիրունիկ, ինձանից հեռու չես թռչի...

Եվ Երվանդ Սալյանը մնաց քաղաքում։ Նա խուսափեց ստորագրելու ինստիտուտում իր հետ աշխատող մի խումբ ճարտարապետների և ինժեներների նամակը, որոնք կամենում էին ռազմաճակատ մեկնել։ Նա մնաց քաղաքում և սկսեց հաճախակի բացակայել աշխատանքից.

— Ինձ սպանում է ստամոքսային խոցը,— ասում էր նա իր ընկերներին։— Է՞, եթե այս անիծված հիվանդությունը չունենայի, կկամավորագրվեի, ռազմաճակատ կգնայի, ու այնտեղ ցույց կտայի իմ ով լինելը. բայց ինչ արած, ինձ վիճակված է մնալ քաղաքում, երբեմն կինս գնալ ու էկրանի վրա դիտել այն ամենը, ինչ կատարվում է մարտի դաշտերում։

Եվ մարդիկ հավատում էին նրան։ Սակայն Երվանդ Սալյանը չէր բացակայում և ոչ մի ժողովից, նա գիտեր պաթոսով ճառ ասել։ Ներքուստ գոհ էր իրենից։ Աշնանը, մեկ ամսից ավելի, նա պառկած էր անկողնում և մարդիկ սկսեցին կարեկցանքով խոսել նրա մասին։

— Լավ դասախոս է,— ասում էին ուսանողները,— բայց ինչ արած, որ հաճախակի հիվանդանում է։

— Իսկ ես չեմ հավատում նրա հիվանդության սուր բնույթին,— մի օր դասախոսների մոտ հայտարարեց ուսմասվարը, որը տարիներ շարունակ ճանաչել էր Երվանդին։— Ես չեմ հիշում, որ պատերազմից առաջ նա մի օր դանդաղեր այդ մասին...

— Կարիք չկա բամբասել մարդուն,— վրդովվեց ինստիտուտի

դիրեկտորը։— Այդ արդեն մեր խելքի բանը չէ, ես կարող եմ դյուրին կերպով վճռել շինանյութերի դիմացկունության մասին ամեն մի խնդիր, իսկ ստամոքսի խոցը եկեք թողնենք բժիշկներին։

Երվանդ Սալյանը երեսունհինգ տարին անց, բարձրահասակ, լայնալանջ մի տղամարդ էր՝ օժտված բնական գեղեցկությամբ։ Նրա սև աչքերի կրակոտ հայացքի տակ գեղեցիկ կանայք խոնարհում էին գլուխները, նա ուներ ճարտար լեզու, գիտեր դրավել մարդկանց։ Հռիփսիմեից մերժում ստանալուց հետո, նա չընկճվեց, այլ բռնեց Վարդանից վրեժխնդիր լինելու ճանապարհը։ Երբ Վարդանը ընտանիքով մայրաքաղաք տեղափոխվեց, ինքն էլ նրանից մի ամիս հետո աշխատանքի անցավ ինստիտուտում։ Քայլ առ քայլ հետևում էր զույգին,— առիթ բաց չէր թողնում Հռիփսիմեի հետ հանդիպումներ ունենալու։

Երբ նոր բացված զինվորական հիվանդանոցները հասան։ ռազմաճակատներից խոր թիկունք բուժման ուղարկված վիրավոր ռազմիկները, Սալյանը ցանկություն հայտնեց տեսնվել նրանց հետ։ Նա նվերների կապոցը ձեռքին մի խումբ դասախոսների հետ հայտնվեց ինստիտուտին մոտ գտնվող վիրաբուժական հիվանդանոցում։

Զինվորական հիվանդանոցի պետը, երկարամյա մի բժիշկ, նրանց առաջնորդեց երկրորդ հարկը, ուր պառկած էին ծանր վիրավորները։

Երվանդը զինվորական հիվանդանոցից դուրս եկավ ծանր տպավորությամբ. ահա քեզ պատերազմ. կարծես դեռ աչքի առաջն էր աջ ոտքից զրկված գումարտակի նախկին հրամանատարը։ Նա էլ էր ճարտարապետ եղել, իսկ երբ գերմանացիները հասել էին հարազատ քաղաքին, զենք էր վերցրել և անցած մի քանի տասնյակ զինված բանվոր-ծառայողների գլուխ կռվել էր, հետո միացել նահանջող Կարմիր Բանակի զորամասերին, թեժ կռիվներից մեկում փոխարինել գումարտակի հրամանատարին, ծանր վերքեր ստանալով դուրս էր եկել շարքից...

Եվ մարդը պետք է ապրի առանց ոտքի,— ողջ ճանապարհին ինքն իրեն մտածում էր նա։

Սալյանը ավելի՝ հաճախակի էր երևում հասարակական վայ-

բերում, նա մահվան երկյուղ էր ապրում, չինի թե որևէ մեկը վատ բան մտածի իր մասին, չէ որ ընկերները չգիտեին, թե ինչ է կատարվում իր հոգում...

2.

Սակայն Հռիփսիմեն առանձնացել էր։

Թախիծն էր սողում նրա մենավոր հոգին։ Ինչո՞ւ է ինքը տրտմում։ Ո՞ւմ համար. Վարդանի՞, որին չէր սիրում։ Երբ թափառ մտքերը հեռու էին տանում, նա որոշում էր չմտածել և ոչ մի բանի մասին։ Չէր կարողանում։ Գալիս ու իր դեմ կանգնում էր Վարդանը։ Նորից ապրանքատար վագոնի բաց դռան առաջ գրկում էր իրեն ու նրա վերջին հայացքը թրատում էր իր սիրտը։ Ուզում էր վանել նրա պատկերը, չէր կարողանում։ Ավելի պայծառ էր գծվում այն։

Հռիփսիմեն հիշում էր նրան, ապրում նրանով, նույնիսկ հաճելի էր դառնում հուշը և Վարդանին պատկերացնում էր այնպես, ինչպես էր նա գնալու օրը։ Ահա նա դուրս եկավ պատշգամբ։ Հաճելի էր լսել նրան, տեսնել խոհով պատած բարձր ու կանոնավոր ճակատը, տեսնել թարմ ու գեղեցիկ դեմքը, վեհություն արտահայտող հայացքը։

Ամեն, ամեն բան այդ հարկի տակ Վարդանին էր հիշեցնում, այո, ամեն ինչ կարծես ստեղծված էր նրա երջանկության համար։ Գեղեցիկ ճաշակով կահավորված սենյակների խաղաղությունն էլ նրա մեծադիր նկարի պայծառ հայացքի տակ դուրեկան ու հարազատ էր դառնում։ Իսկ նրա վերջին հայացքը... Կարծես այդ հայացքով նա թափանցեց իր սրտի խորքը։

Ամուսնուն ճանապարհելուց հետո, մի օր Հռիփսիմեն մտավ նրա առանձնասենյակը։ Նա տխուր հայացքով նայեց գրքերի մեծ պահարանին, պատից կախված նարնջագույն պատյանով ջութակին, զույգ փամփշտակալներով երկփողանի որսորդական հրացանին, գրասեղանին, որի վրա դրված օրացույցը ցույց էր տալիս նրա մեկնելու օրը, արծաթյա ոսկեզօծված շրջանակով իր լուսանկարին, որ ամուսնության առաջին օրվանից անբաժան էր նրա գրասեղանից։ Վարդանն իր ճաշակով էր կահավորել այդ սենյակը։ Հռիփսիմեն մի ժամի չափ այնտեղ մնալուց հետո, խնամքով

ծածկեց գրասեղանը, ջութակն ու հրացանը։ Դուրս գալով սենյակից բանալիով փակեց դուռը։

Նույն գիշերը անկողին մտնելուց առաջ վարդապետն ծածկոցով ծածկեց ամուսնու մահճակալը։

3.

Երիտասարդ կնոջը թվում էր, որ երազ էր ամուսնուց բաժանվելը։ Ճաշի ժամանակ ակամայից նայում էր ժամացույցին, իջնում էր երեկոն, ներքին մի ուժ նրան պատշգամբ էր մղում և նստած այնտեղ, կարծես սպասում էր, որ ահա ուր որ է Վարդանը դուրս կգա տնային խալաթը հագին ու ժպիտով կհարցնի. «Ասա սիրելիս, այսօր ի՞նչ նվագեմ քեզ համար»։ Գալիս էր հանգստի նախօրյակը, թվում էր, որ ահա կեսօրից առաջ պատշգամբի տակ ծանոթ սուլոցով կանգ կառնի մեքենան ու ինքը կլսի նրա ոտնաձայները աստիճանների վրա, ներս կմտնի Վարդանն ու ուրախ ժպիտը դեմքին կփարվի իրեն կանչելով. «Աղիզ, մեծ խմբով որսի ենք գնում Կարմիր սարը, տես, թե ինչպիսի վայրի այծ եմ բերելու»։ Մտնում էր անկողին. թվում էր, որ կլսի նրա կանոնավոր շնչառությունը և ուր որ է նա կպարզի բազուկներն ու կգրկի իր պարանոցը...

Մինչ թմրությունն իջնելը հուշեր, հուշեր էին զարթնում Հռիփսիմեի հոգում, որոնց մեջ փայլում էր Վարդանի պայծառ պատկերը։

Սակայն ինքը չկարողացավ սիրել նրան։ Բայց միթե՞ քիչ են եղել վայրկյաններ, երբ մոռացել է վիշտը, կարծել, թե արդեն սրտում հանգչում է Երվանդի սիրո վերջին ճառագայթը, թե այլևս չի տանջվի նրա համար։ Սակայն նա նորից հիշում էր առաջին համբույրը ծաղկած խնձորենիների այգում...

Հռիփսիմեին հանգիստ չէին տալիս Վարդանի գանգատները. կարծես կրկին լսում էր տխրությամբ լեցուն նրա խոսքերը. «...Միթե՞ Հռիփսիկս, մենք զավակ չենք ունենալու։ Ա՛խ, այնպես եմ փափագում տեսնել, գրկել իմ մանկան»... Այդ պահերին ինքը ժպտում էր նրան։ Սակայն լալիս էր սիրտը, թվում էր, թե կրծքի տակ կրկին զդում է ծանր զարկը։ Հիշելով Երվանդին, դեռ երա-

զելով իր կորցրած սերը, չցանկացավ, որ կրծքի տակ աճեր ու լույս աշխարհ գար մանկիկը։

Վարդանն այդ օրերին տխուր էր։ Արդյո՞ք նա հասկացավ, զգաց կնոջ կատարած հանցանքը ընտանիքի սրբության առաջ։ Ինչպե՞ս էր տանջվում նա, երբ ինքը գունատ էր ու դալուկ։

Հռիփսիմեն սկսեց անհանգիստ, անքուն գիշերներ լուսացնել։ Ինչո՞ւ էր ինքը տանջվում։ Չէ՞ որ ամուսնու ներկայությունը մինչև ռազմաճակատ գնալը իրեն համար հոգեկան անհրաժեշտ պահանջ չէր եղել։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

1.

Վարդանի ռազմաճակատ մեկնելուց մի քանի ամիս անց Հռիփսիմեին տեսության եկան ծնողները։ Նա ծերունիներին ընդունեց գրկաբաց, սրտի բերկրանքով, ամբողջովին նվիրվեց նրանց։

Գիշերները մոր հետ պառկում էր մի անկողնում, հիշում էր մանկության օրերը, գրկում, համբուրում մայրական ջերմությունը բուրող նրա կուրծքը։ Հորը՝ ուստա Աբգարին խնդրում էր ուրախ պատմություններ պատմել։ Նա կարծես ծնողների փայփայանքի ու սիրո մեջ ցանկանում էր խեղդել այն նոր թախիծը, որ սկսել էր պարուրել սիրտը։

Սակայն փորձառու և նրբազգաց ծնողները շուտ հասկացան իրենց դստեր հոգու անհանգիստ վիճակը։ Նրանց տանջում էր նրա անհանգիստ քունը, երբեմն էլ ծանր հառաչանքները, որ դուրս էին թռչում կրծքից։

Երբ մայր ու աղջիկ տանը մենակ էին լինում, Հռիփսիմեն հաճախ մոռանում էր մոր ներկայությունը, մոռանում սկսած խոսքը, տխրում ու հայացքը ուղղում էր ամուսնու նկարին։ Մայրը ձևացնում էր, որ չի նկատում այդ և երբ նա խաղաղվում էր, աղջկա վիշտը ցրելու համար սկսում էր որևէ պատմություն անել։

— Երեք տարվա պսակված էի, որ հորդ սալդաթության տարան։ Նոր էր ծնվել քեզանից մեծ Արտաշես ախպերդ։ Ա՜խ, աչքս քոռանա, հորդ տանելուց հետո մեռավ տղան։ Գիշեր ու զոր հորդ մասին կմտածեի, քիչ կմնար խելքս կորցնեի։ Էդ օրերին էր, որ մերս եկավ մեր տունը։ Տեսավ ինձ ու լացեց՝ «Վա՛յ, աղջի, ընչի տունդ կքանդես, մարդ է սալդաթության է գնացել, մի օր էլ կգա։

Դու որ քեզ քարերին ծեփիր, օգուտդ ինչ»։ Լավ կասեր մերս։ Նրան ականջ դրի։ Ձեռքս զարկի գործի։ Տուն ու տեղ կիստկեի, կովերը կկթեի, մեծ տալիս չորս երեխաներին կլողացնեի. մի խոսքով գործից աչք չէի բանա։ Ինչ ասես աղջիկս, գործը սրտիս մրմուռը թեթևացրեց։ Հմի քոնն է, բալես, շատ մտքերով մի տարվի։ Ո՞վ գիտե տերությունների գործը, մի օր էլ աստված էս կրակի վրա ջուր կլցնի, իրենց տուն ու տեղի վրա կդառնան ջահելները։ Վարդանն էլ կգա ու բախտավոր կապրենք...

— Ի՞նչ անեմ, մամա ջան, ուզում եմ չմտածել, բան դուրս չի գալիս,— անկեղծորեն խոստովանում էր Հռիփսիմեն,— միշտ մտքիս մեջ է... Ախր քանի այստեղ էր հեչ վեջս էլ չէր, չէի էլ սիրում, իսկ հիմա... դա է ինձ տանջողը։

— Գործի մտիր, տանը մենակ մի մնա։

— Է՞, կարծում ես մի բան դուրս կգա։

— Լավ, սիրտդ կթեթևանա։ Վարդանն էլ ուրախ կլինի։

Մայրն զգում էր, որ իր հորդորները չէին ազդում աղջկա վրա, նա շարունակում էր տարվել մտքերով։

Ամեն երեկո, սովորական ժամին, Հռիփսիմեն դուրս էր գալիս պատշգամբ, նույնիսկ երբեմն կիսատ թողնելով զրույցը։

— Մամ ջան, պատշգամբ գնանք,— ասում էր նա։

— Ախր, էդ ինչի՞ ամեն իրիկուն էս վախտ բալկոն կվազես։

— Գնանք, գնանք, էնտեղ լավ է, գուցե նվագ լսենք։

— Է՞, ով պիտի նվագե։

— Ոչ ոք, գնանք, սիրտս նեղվում է։

Մայրը նրա դուրս գնալուց հետո սրբում էր ծեր աչքերը։

— Խելքը կթռցնի,— ինքն իրեն մտմտում էր նա։

Տխուր էր նաև ուստա Աբգարը։ Միթե՞ այդքան զորեղ է եղել սերը, մտածում էր նա, որ այնպես հալումաշ է անում աղջկան։

— Աղջիկդ լավ վիճակի չէ, այ կնիկ,— ի վերջո ասաց նա։

— Ասա ձեռքից գնում է,— ազատություն տալով արտասուքներին, պատասխանեց կինը։

— Լավ, դու էլ քեզ մի տանջի, հնարքմ կգտնենք։

— Համոզի, որ մեր տունը տանենք,— պահանջեց կինը։

Ուստա Աբգարը բացասաբար շարժեց գլուխը։

— Չէ, կնիկ ջան, թե Հռիփսիկս Վարդանին կսիրե, նա էս տնից դուրս եկողը չէ։ Թե բան գիտես, շնորհքդ ցույց տուր։

2.

Մի օր էլ, երբ ճաշից հետո մայր ու աղջիկ զրույցի էին բռնվել, ուստա Աբգարը աչքով անելով իր կողակցին, դառնալով աղջկան կամացուկ ասաց.

— Հռիփսիկ, աչքիս կերևա, որ կտխրես։ Ասա, չէիր ուզի մեր տունը գնայինք։ Էնտեղ դու լավ կլինես, օդն էլ վերցնում ես, մենակ չես լինի, գալողն էլ ձմեռ է։

Հռիփսիմեն գլուխը կախեց...

— Ինչ ունես էս քաղաքում։ Որտեղ մենք, էնտեղ էլ դու,— աչքերը սրբելով սկսեց համոզել մայրը։— Մեր աչքի առաջ կլինես, մեր կերած հացն էլ հալալ կլինի, քոնն էլ։ Լա՛վ, Հռիփսիկ ջան, դու էստեղ, ես ու հերդ էլ էնտեղ։ Ինչ դուրս կգա դրանից։ Էլ քունը մեր աչքին մոտ կգա՞, էլ մեր աշխատանքը կերևա՞։

Հռիփսիմեն լուռ էր։

— Դե, խոսքդ ասա, աղջիկս, գալո՞ւ ես մեզ հետ։ Կմնաս մեզ մոտ մինչև կռիվը վերջանա։

Ծերունին չկարողացավ շարունակել խոսքը, պիջակի գրպանից շտապով հանեց դունավոր թաշկինակն ու սեղմեց աչքերին։

— Է՛, անբախտ մարդ եմ ես,— կերկերուն ձայնով շարունակեց նա,— թե բախտ ունենայի, հիշատակմ էլ հոդեախպորս տղից կունենայի։

— Դե ասա, բալիկ ջան, գալո՞ւ ես մեր քաղաքը։

Հռիփսիմեն բարձրացրեց գլուխը. նրա աչքերը թաց էին։

— Չէ մամ ջան, ես իմ տանը կմնամ...

Այդ գիշեր ավելի անհանգիստ քնեց նա։ Ողջ գիշեր իր հետ էր Վարդանը։ Նա նորից հարցնում էր իրեն. «մի թե՞ մենք զավակ չենք ունենալու, գիտես որքան եմ ուզում տեսնել իմ զավակին։ Օ՜, այնպես կսիրեի նրան...»։ Հետո նա տեսավ ամուսնուն շրջապատված ընկերներով, ինքն ու Տիգրանուհին կանգնել էին նրա կողքին։ Վարդանը գրկեց իրեն, ինքն իր կրծքի վրա զգաց նրա սրտի զարկերն ու իրենց շրթունքներն իրար հանդիպեցին։ Իսկ վերջին հայացքը համբույրի հետ...

Լուսաբացից առաջ Հռիփսիմեն բաց արեց աչքերը։ Սենյակում խաղաղություն էր տիրում։ Քնած էին ծնողները։ Քունն այլևս մոտ չեկավ նրա աչքերին։ Նա չէր շարժվում պառկած տեղում, որ

չխանգարի իր կողքին, վերմակի տակ կծկված մոր քունը։ Այնպե՞ս տանջված էր երևում մոր դեմքը։ Ինքը որքան կցանկանար, որ ոչ մի վիշտ չխոցեր նրա սիրտը...

Նորից ընկավ մտքերի ծովը։ Դարձյալ Վարդանը։ «Միթե՞ ես չեմ կարող մտածել ուրիշ բանի մասին», ինքն իրեն հարց էր տալիս Հռիփսիմեն և կրկին հիշում հրաժեշտի վերջին ժամը, Տիգրանուհու կշտամբանքը. «— Ինչ քար սիրտն ես եղել»։ Հիշեց, միտքը տարված էր հեռացող Վարդանով, երբ հանդիպեց Երվանդին... Այդ ի՞նչ զուգադիպություն էր։ Սակայն ինչո՞ւ նրան տեսնելով սիրտն ուրիշ օրերի նման խնդություն չապրեց։ Այդ ի՞նչ սառնություն էր, որ պարուրեց իր հոգին։

Հռիփսիմեն հիշեց մայրաքաղաքում ապրած երեք տարիները։ Կսկիծը, կորցրած սերը, երբեմն այնպես էր բռնկվում սրտում, որ նեղ ու ճնշող էր դառնում ամեն ինչ։ Կարծես սիրտը կտրտվում էր ցավից ու խելագարի պես ինքը փողոց էր դուրս գալիս։ Շտապ քայլերով հասնում էր տրամվայի ծանոթ կանգառը, սրտի դողով սպասում աշխատանքի վերջանալու ժամին, որ դար ու անցներ Երվանդը և ինքը գոնե հեռվից տեսներ նրան։ Եվ ահա գալիս ու անցնում էր Երվանդը։ Նույնիսկ չէր էլ նկատում իրեն։ Բայց ինքը գիտեր, որ անցնում է նա ու միտքը տարված է իրենով։ Քանի տարի է անցել իրենց հանդիպման առաջին օրվանից։ Ինքը չի կարողանում մոռանալ նրան, իսկ նա՞։ Այո, նա ավելի է տանջվում։ Եվ մի գուցե դեռ սպասում է...

3.

Լուսաբացի հետ տեղի մեջ շարժվեց հայրը։ Նա մանր հազաց ու բաց արեց աչքերը։

— Զարթնեցի՞ր, հայրիկ։

— Հա՞, զարթնեցի, Հռիփսիկս։ Էդ ինչո՞ւ ես վաղ զարթնել։

— Քունս չի տանում,— խոստովանեց նա,— վաղուց է, որ արթուն եմ։

— Մտածմունքից է,— եզրակացրեց ուստա Աբգարը ու նստեց տեղում։ Նա բարձի տակից հանեց ծխախոտի քսակը, անուշ բուրմունք արձակող ծխախոտը լցրեց ծխամորճը, որի վրայի արծաթյա նախշերը հին էին ու գեղեցիկ։

— Հայրիկ, երեկ ինձանից նեղացա՞ր,— քնքույշ հայացքով հորը նայելով հարցրեց Հռիփսիմեն։

— Չէ, ընչի նեղնամ, աղջիկս։ Ամեն մարդուս օջախն իրեն համար թանկ է։ Համա ես ու մերդ քեզ համար ենք մտածում։

— Առավոտն կանուխ, էլի ինչ մասլահաթի եք նստել հեր ու աղջիկ,— աչքերը տրորելով խոսեց մայրը։

— Հռիփսիկս ինձանից շուտ է զարթնել,— պատասխանեց ուստան։

— Համաձայնվե՞ց մեզ հետ գալ,— ուրախաձայն հարցրեց Շողակաթը։

— Մերս, մենք ուրիշ բանի մասին էինք խոսում,— հոր փոխարեն պատասխանեց աղջիկը։

— Հա, ըսածս էն է, որ քեզ խնայես։ Մենք էլ մեղք ենք։ Ախր, մեր ուրախությունն էլ, տխրությունն էլ դու ես։ Հանգիստ պահի քեզ, աղջիկս, մտածմունքը մարդուս տունը կքանդի։

— Էլ չեմ տխրի։

— Լավ էլ կանես,— շրջազգեստը գլխին գցելով ասաց մայրն ու ցած իջավ մահճակալից։

— Գիտես ինչ հայրիկ,— երկար լռությունից հետո խոսեց Հռիփսիմեն,— ինքս ինձ միտք էի անում ու մի բան անցավ մըտքովս։

— Ասա տեսնենք, լավ բան ես մտածել։

— Ուզում եմ աշխատանքի անցնել։

— Ես իմ հոգին լավ միտք է,— ուրախացած ասաց հայրը,— ֆիարիմ աղջիկս, շատ էլ լավ ես մտածել, հետո՞։

— Հետո էլ այն, հայրիկ ջան, որ աշխատանքից հետո տանն էլ մի զբաղմունք ունենամ։ Դու ինձ պիտի օգնես։

— Դու ուզածդ ասա,— բերանից բաց թողնելով կապտագույն ծխի քուլաները, պատրաստակամությամբ ասաց հայրը։

— Ինձ համար բեր քո ունեցած դազդահներից մեկը։

— Տո ի՞նչ ասիր. գորգագործական դազդա՞հ կուզես։

— Այո, գորգագործական, ինչո՞ւ զարմացար, հերս։

— Չեմ հասկանում ախր, ինչիդ է պետք։

— Ասացի որ աշխատանքից հետո տանն էլ ուզում եմ մի բանով զբաղվել։ Կբերե՞ս, հա, հեր ջան։

— Դատարկ բան է,— մռայլվեց ծերուկը,— դու էդ գործով պարպցողը չես։

Հռիփսիմեն տխուր հայացքով նրան նայելուց հետո, հառաչեց։

— Միթե՞ մոռացել ես հայրիկ։ Չէ՞ որ ես լավ գործել գիտեմ։ Ճիշտ չէ՞, մամ ջան։ Դու ասա, ախր միշտ գովում էիք ինձ։

— Հա՜, գիտեմ, լավ ես գործում,— հաստատեց արդեն շորերը հագած մայրը,— ասենք թե հերդ դազգահը բերեց։ Հետո ի՞նչ։

— Բա չսեցի՞ր, որ ասացի։ Ուզում եմ գործել։

Մնողներն իրար նայեցին հարցական հայացքով։

— Կատարիր աղջկանդ կամքը,— ժպտալով ասաց մայրը։

— Լավ,— կարճ լռությունից հետո համաձայնվեց հայրը,— ո՞ր սենյակում կուզես դնել դազգահը։ Երկու օրից տանդ կլինի ուզածդ... Եվ Հայրը կատարեց աղջկան տված իր խոստումը։

ԴԻԼՈՒՆԻ ՀԵՂԴԵՐՈՒՄԸ

1.

Մնողներին ճանապարհելուց հետո, Հռիփսիմեն ժամերով դուրս չէր գալիս մեծ սենյակից, ուր այլևս չէին փայլում հայելազարդ պահարանը, կաշեպատ զույգ բազմոցները, կաղնյա մեծ սեղանը, որի վրայից միշտ անպակաս էր լինում թարմ ծաղկեփունջը։ Պատերից հանված էին ոսկեզոծ շրջանակներով ծովանկարները, որոնց կապույտ ու դեղին փայլը հաճելի էր դարձնում սենյակը։ Այդ բոլորը նա հոր պատվերով փոխադրել էր մյուս սենյակները, թողնելով միայն առաստաղից կախված գեղեցիկ ջահը, որ և ծածկել էր կերպասից պատրաստած ծածկոցով։

— Խալի գործողը ոչ մի բանի վրա ուշադրություն չպիտի դարձնի,— գնալիս պատվիրել էր ուստա Աբգարը։

Սենյակի մեջտեղում բոլոր գեղեցիկ իրերի փոխարեն դրված էր գորգագործական դազգահ, որի վրայից, ինչպես արևի տակ փայլող ջրվեժի ջրերը, իջնում էին հենքի սպիտակափառ թելերը։

Հռիփսիմեին այդ անհրապույր դազգահն իր ոստայնով ուրախություն էր պատճառում։ Օրեր շարունակ նա գծում էր ապագա գորգի զարդանկարները...

Այդ օրերին էր, որ ռազմաճակատից ստացվեց Վարդանի գրած առաջին նամակը։

«Իմ սիրելի Հռիփսիմե.

Մենք արդեն գտնվում ենք դիրքերում։ Ռազմաճակատ. այդ պատկերացնելու և հասկանալու համար հարկավոր է տեսնել սեփական աչքերով, զգալ այն վտանգը, որ մեր ժողովրդի համար բերում են գերմանական լեշակերները։ Այստեղ լուսաբացից մինչ գիշեր կրակ ու մետաղ են ժայթքում ամեն չափի ու հզորության հրանոթները, ականանետները, տանկերը։ Նրանց դժոխային կրակին խառնվում է հրացանների, ավտոմատների, գնդացիրների ձայնը, ռումբերի ու նռնակների պայթյունները։ Հանգիստ չէ և երկինքը, ուր գիշերները, ուրուրների պես ճախրում են ինքնաթիռները։ Թշնամին ավերում է մեր քաղաքներն ու գյուղերը։ Նրանց ռումբերից ու գնդակներից զոհվում են և՛ կին, և՛ երեխա, և՛ ծերունիներ։

Հավատա սիրելիս, անարգ թշնամու ամեն մի վայրագություն ատելության նոր կրակ է բորբոքում մեր մարդկանց սրտերում։ Լարված են անցնում օրերս։ Ճիշտն ասած, հիմա ես նույնիսկ խառնում եմ օրերն ու շաբաթները։ Սոսկալի էին առաջին օրերը։ Ահեղ այս կռվի ընթացքում տեսա ու զգացի մեր մարդկանց ուժն ու կարողությունը։ Մենք կհաղթենք։ Այժմ կռվող ամեն մի մարտիկի համար պարզ է, որ արյունոտ կռիվները դեռ առաջիկայում են լինելու և որ այս պատերազմը կլինի երկար ու դաժան...

Սիրելիս, կարոտում, շատ եմ կարոտում քեզ և ահա գիշերային լռության մեջ, երբ դեռ օդը հագեցած է լինում վառոդի ծխով, և մարդիկ մի քանի ժամով հանգիստ են տալիս իրենց խոնջացած մարմիններին, ես քեզ հետ եմ լինում։ Դու գալիս ես ինձ մոտ, կարծես զգում եմ նուրբ մատներիդ հպումը ճակատիս վրա և ցնդում է հոգնությունս, այն տառապանքները, որ բաժին են ընկնում ինձ։

Ես, սիրելի Հռիփսիմե, հասկանում եմ քեզ, գիտեմ քո հոգին։ Չգիտեմ ինչո՞ւ միշտ հիշելով քեզ, հիշում եմ մեր բաժանման օրը։ Դու լուռ էիր, արտաքուստ հանգիստ։ Բայց գիտեի, որ լալիս էր սիրտդ։ Այո, մենք լացով չպիտի բաժանվեինք և այդ էր պատճառը, որ այնպես զաղրելի հնչեց ընկերներիս մեկի բառերը, երբ նա ասաց՝ «Չեղավ բարեկամ, սիրունիկ կնոջդ աչքերը մինչև վերջն էլ շոր մնացին»։ Ինչ հոգ, թող այդպես խոսեն մարդիկ։ Ես գիտեմ քեզ։ Միշտ վեհ ու ազնիվ են եղել զգացմունքներդ։ Եվ ահա

ուզում եմ խոսել քեզ հետ, ասել իմ խոսքը, որ սիրող սրտի խոսք է։ Մի՛ տխրիր, մի՛ հեռանա ընկերուհիներից։ Մենությունը, սիրելիս, այդ ձանձրույթ է, իսկ ձանձրացող մարդկանց հոգում ծնվում է թուլությունը, նրանք կորցնում են հավատի մեծ զգացումը, աշխատիր և հոգիդ միշտ կմնա անբիծ։

Քո Վարդան»։

2.

Ռազմաճակատում գտնվող ամուսնու նամակը Հռիփսիմեն կարդաց հափշտակությամբ, կարդաց մի քանի անգամ և օրերով խորհում էր նամակի յուրաքանչյուր բառի մասին։

Նրա սիրտը սուր նշտարի պես ծակում էր ամուսնու ընկերոջ հասցրած վիրավորանքը։

Այո, սիրտը քարացել էր կրծքի տակ և ամեն ոք, ով ներկա էր իրենց բաժանման ժամին, ուներ իրավունք մտածել այնպես, ինչպես նրա ընկերը։

Եվ այդ բոլորից հետո Վարդանն իր մեջ տեսնում է միայն լավը, ազնիվը։

Բայց միթե՞ ինքը՝ Հռիփսիմեն արժանի է նման սիրո։ Միթե՞ ազնիվ հոգու տեր, անզուգական այդ մարդը, որ բարձր, շատ բարձր է իր ձգտումներով և գիտե իր ողջ կարողությամբ սիրել, դեթ մի օր, մի վայրկյան չզգաց իր չսիրված լինելը, չթափանցեց կնոջ սիրտը, չզգաց, որ այնքան սիրելի կինը սիրում է մեկ ուրիշին, որ դեռ նրա սրտում վառվում է Երվանդի սիրո կրակը, որ ինքը լոկ ջերմություն է առնում ուրիշի սիրուց։

Ինչո՞ւ Վարդանը չորս տարվա միատեղ կյանքում նույնիսկ ակնարկ չարավ Երվանդի մասին, որին ատեց իր ողջ կարողությամբ։

Դառնաթախիծ էին դառնում Հռիփսիմեի մտածմունքները։ Ինքը սրտով հանգիստ կլիներ, եթե Վարդանն իր նամակում քարկոծեր, վատ, անհոգի, անսիրտ անվաներ իրեն։ Չէ՞ որ ինքը արժանի է դրան։

Ինչո՞ւ ինքը չսիրեց Վարդանին. այս միտքն էր, որ տանջում էր Հռիփսիմեին։ Չէ՞ որ ամենագեղեցիկ կինն անգամ, եթե նա

ունի սիրող սիրտ, ազնիվ զգացմունքներ, կարող էր բախտավոր ու երջանիկ զգալ իրեն՝ վայելելով Վարդանի սերը, մարդ, որ գիտե սիրել և սիրո մեջ գտնել կյանքի երջանկությունը։

3.

Վարդանից նամակ ստանալուց մի քանի օր հետո, առավոտյան երբ Հռիփսիմեն պատրաստվում էր տեսակցության գնալ Տիգրանուհուն, հնչեց դռան զանգի ձայնը։

— Ո՞ւմն եք ցանկանում,— դուռը բաց անելով և այնտեղ կանգնած երիտասարդ սիրունատես աղջկան տեսնելով, հարցրեց նա։

— Տիկին Ոսկանյանին։

— Ես եմ։ Խնդրեմ ներս համեցեք։

— Շնորհակալ եմ։ Ես եկել եմ ձեր ետևից։ Ինձ ուղարկել է ժողկոմը։

— Ժողկո՞մը, իսկ ի՞նչ գործով։

—Չգիտեմ, նա ուզում է ձեզ տեսնել։ Խնդրեմ վերցրեք այս նամակը։

Հռիփսիմեն շնորհակալություն հայտնելով վերցրեց նամակը, կարդալուց հետո ժպտաց.

— Շատ բարի։ Ես կգամ ձեզ հետ։ Իսկ նա ժամը տասին կլինի՞ հիմնարկում։

— Այո, եթե գործարաններում չի լինում, ճիշտ ժամին գրասենյակ է գալիս։

Հռիփսիմեն երիտասարդ աղջկա հետ դուրս ելավ փողոց...

Նշանակված ժամին նա հանդարտորեն բաց արեց ժողկոմի առանձնասենյակի դուռը։

Մեծ սեղանի մոտ նստած ալեխառն մազերով, գունատ ու հիվանդոտ դեմքով մարդը տեսնելով Հռիփսիմեին դռների մեջ, վեր կացավ նստած տեղից.

— Համեցեք,— ասաց նա ու մի քանի քայլ ընդառաջ գնաց նրան։

Սեղմելով Հռիփսիմեի ձեռքը, ժողկոմը սիրալիր ժպիտը դեմքին, հրավիրեց նրան նստելու սեղանի մոտ դրած բազկաթոռին։

— Գիտեք,— ծիսախոտը վառելով ասաց նա,— ես նամակա-

դրական կապ եմ պահպանում մեր ժողկոմատի ձեռնարկություններից բանակ կանչված գրեթե բոլոր ընկերների հետ։ Շնորհակալ եմ, բարեխղճորեն պատասխանում են նամակներիս։ Չնայած ինձ այնքան էլ իրավունք չեմ վերապահում պահանջկոտ լինել նրանց նկատմամբ։ Օրերս, նամակ ստացա և Վարդան Սարիբեկովիչից։ Ի սրտե շնորհակալ եմ նրանից այդ նամակի համար։ Դուք գիտեք, որ Վարդան Սարիբեկովիչն արդեն գտնվում է ռազմաճակատում։

— Այո, գիտեմ։ Ես ևս նամակ եմ ստացել,— հանդարտորեն պատասխանեց Հռիփսիմեն։

— Վարդան Սարիբեկովիչից ստացած նամակներում կա մի հարց, որ անձնապես ձեզ է վերաբերում։ Ասացեք խնդրեմ, չէի՞ք ցանկանա մեր սիստեմում աշխատել։

— Այո։ Վատ չի լինի։ Գիտեք, ես բոլորովին մենակ եմ։ Հասկանում եմ, որ այս օրերին տանը անգործ նստելը պատիվ չի բերի. ես էլ կարող եմ օգտակար լինել։ Ահա մի շաբաթ է, ինչ միտքս զբաղված է այդ խնդրով։

— Միանգամայն ճշմարիտ եք։ Ասացեք խնդրեմ, Հռիփսիմե Աբգարովնա, դուք որևէ մեկին դիմե՞լ եք աշխատանքի հարցով։

— Ո՛չ, ես այդ խնդրով և առհասարակ ոչ մի հարցով ոչ ոքի չեմ դիմել։

— Այն դեպքում ես եմ սխալ հասկացել,— ծիծաղելով ասաց ժողկոմը,— ես կարծում էի, որ դուք դիմել եք որևէ մեկին, գոհացում չեք ստացել և դրա համար էլ Վարդան Սարիբեկովիչը գրել է ինձ, որպեսզի օգնեմ ձեզ՝ աշխատանքի անցնելու համար։

— Նա այդպես է գրել քաջ գիտենալով, որ ես առհասարակ կդժվարանամ դիմել որևէ մեկին։

— Այժմ ինձ համար հասկանալի է։ Ուրեմն, ուզո՞ւմ եք աշխատել։

— Այո, դժվար է տանը անգործ մնալ և վերջապես պարտքի զգացումը...

— Որտե՞ղ եք ցանկանում աշխատանքի անցնել, ժողկոմատում, թե...

— Իսկ աշխատանքի ինչպիսի՞ տեղեր ունեք։

— Եթե ցանկանում եք կարող եք վաղվանից աշխատանքի անցնել ժողկոմատում։

— Գիտեք ինչ,— մի փոքր լռությունից հետո խոսեց Հռիփսի-

մեն,— ես ուզում եմ աշխատանքի անցնել գործարաններից մի-կում, թեկուզ և Տիգրան Սիմոնիչի մոտ։

Ժողկոմը մեղմորեն ժպտաց։

— Ես պաշտպանում եմ ձեր առաջարկությունը,— ասաց նա,— այդ հրաշալի միտք է։

— Դեռ մեր քաղաքում եղած ժամանակ,— իր միտքը հանգիստ բացատրեց Հռիփսիմեն,— երբ Վարդանն աշխատում էր այնտեղի գործարանում, սովորեցի դասընթացներում։ Ունեմ լաբորանտի կոչում։ Ուզում եմ այդ գծով էլ աշխատել։

— Ուրեմն, վճռվա՞ծ համարենք հարցը։

— Այո։

— Այսօր ևեթ ես կզանգահարեմ Տիգրան Սիմոնիչին և դուք կանցնեք աշխատանքի։

— Շնորհակալ եմ։

— Բայց ես, Հռիփսիմե Աբգարովնա, ձեզանից դժգոհ եմ։ Այո, դժգոհ։ Ձեզ քաջ հայտնի է իմ և Վարդանի մտերմությունը։ Մենք սիրում ենք իրար և նա, նույնիսկ գտնվելով ռազմաճակատում, չի մոռանում ինձ, իմ ընտանիքին, նամակներ է գրում։ Իսկ դուք չեք ցանկանում մեզ մոտ լինել։ Ինչո՞ւ եք խուսափում բարեկամությունից։ Սոֆիա Ալեքսեևնան նույնպես տարակուսում է։ Մի օր էլ կպել էր գլուխս, թե գնանք ու Հռիփսիմե Աբգարովնային մի լավ դաս տանք, որ մեզնից չխուսափի։ Զբաղված էի, թե չէ կգայի և ձեզ կամաչացնեինք։ Եկեք, կարիքի դեպքում էլ դիմեցեք։ Միթե կարծում եք, որ հայրենիքի պաշտպանների ընտանիքներին օգնելու համար կմերժենք որևէ հնարավոր բան։ Ամբողջ ընտանիքով Վարդան Սարիբեկովիչին պատասխան նամակ գրեցինք։ Սոֆիա Ալեքսեևնան իր գրած նամակում գանգատ գրեց ձեր վրա և անշուշտ Վարդանը չի գովի ձեզ, ձեր այդ արարքի համար...

4.

Հռիփսիմեն ժողկոմի մոտից դուրս եկավ թեթևացած սրտով։ Նա քայլում էր և ուրախ ժպտում վերհիշելով ժողկոմի նուրբ հանդիմանանքով ասված խոսքերը։ Զարմանալի մարդ, մտածում էր նա ամուսնու մասին. մահու կենաց կռվի մեջ էլ դարձյալ մտածում է կնոջ մասին, գրում է ընկերներին, որ աշխատանքի տեղա-

վորեն, որ չտխրի ինքը և չունենա ոչ մի հոգս։ Միթե՞ կարելի է մոռանալ նման մարդուն։ Որպիսի՞ սիրտ ունի Վարդանը։ Պատահական չէր, որ ժողկոմը այնպիսի քնքշանքով էր խոսում նրա մասին։

— Ողջույն Հռիփսիմեին։ Ի՞նչ է, դարձյա՞լ չնկատեցիր,—մոտենալով հարցրեց Երվանդը։

Հռիփսիմեն ժպտաց։

— Պատահում է։ Մի՞թե, զայրանում ես դրա համար։

— Զայրանալու հարկ չկա։ Սակայն ցավալի է։

— Դրա հարկն էլ չկա։ Անցնում էի և չնկատեցի։

— Ի՞նչ արած։ Թող այդպես լինի։ Ես իմ կյանքում միշտ դիջող եմ եղել։ Զիջում եմ և այս անգամ։

— Այդ դատարկ բան է։ Ասա, Երվանդ,ի՞նչպես է առողջությունդ։ Ինչո՞վ ես զբաղված։

— Առողջության մասին ուրախալի բան չեմ կարող ասել։ Կրկին ինձ տանջում է ստամոքսային խոցը։ Ասենք ինչ հոգեկան հանգիստ կարող է ունենալ երեսուն և հինգ տարեկան ամուրին, գումարիր դրան և պատերազմը։

— Նվ ամեն անգամ նույնը։ Բայց դու կարող ես շատ երջանիկ ու բախտավոր լինել։

— Երջանիկ, և այն էլ շատ բախտավոր։ Ինչ որ անասելի տարօրինակ է։ Հուսամ, որ այդ մխիթարելու իմաստով ասացիր։

— Միթե՞ իմ խոսքն այդքան մեծ նշանակություն ունի քեզ համար։ Ինձ թվում է, որ դու մխիթարվելու, առավել, կարեկցանքի կարիք չունես։

— Այո,— ծանր շնչելով ասաց նա,— և ոչ էլ կարեկցանքի։ Այդ լավ է։ Շնորհակալ եմ։

— Թողնենք այս տհաճ խոսքերը։ Դու չասացիր, թե ինչով ես զբաղված։

— Ինչով եմ զբաղված։ Մի՞թե չգիտես։ Նորից դասավանդում եմ. այս տարի ևս շրջանավարտներ կտանք։ Իհարկե, այս բոլորը այնքան էլ չի հուզում ինձ։ Սարսափով եմ կարդում այն ամենը, ինչ կատարվում է ռազմաճակատներում, իսկ գերմանացին առաջ է գալիս, շատ է խորանում և այդ ազդում է հոգուս վրա։

— Երբևէ քեզ չե՞ն կանչել։

— Ո՞ւր,— վախեցած հարցրեց Երվանդը։

— Ռազմաճակատ ուղարկելու։

— Դու կատակում ես, ինչ է. դև ես ինչ կռվող եմ. պարզապես ինձանից ձեռք քաշեցին։ Հա՛, ուզեցին քաղաքից տանել, չհամաձայնվեցի. ինչպես կարող եմ գնալ այստեղից, երբ դու ապրում ես իմ սրտում։

— Իսկ ես, Երվանդ, վճռել եմ աշխատել։

— Աշխատել,— տնքալով հարցրեց Երվանդը, չլինի կարիքի մեջ ես, եթե այդպիսի բան կա, ես պատրաստ եմ իմ ամբողջ ունեցածը դնել տրամադրությանդ տակ։

— Մի՞թե ես կարոտ եմ դրան։

— Ուրեմն չե՞ս սիրում ինձ։

— Ես պետք է աշխատեմ, այդ մեծ անհրաժեշտություն է։

— Երևի տխրում ես, Հռիփսիմե,— հարցրեց նա։

— Ո՛չ, ինչո՞ւ։ Ես ի սրտե ուզում եմ աշխատել։

— Գուցե ամուսինդ է պահանջում։

— Պահանջել։ Ինչո՞ւ ես այդպես կարծում։ Նա երբևիցե ինձանից ոչինչ չի պահանջել։ Այո, ոչինչ, թեպետ և ունի իրավունք պահանջելու։ Սակայն նա դիտե գնահատել ինձ։

— Իսկ ի՞նչ աշխատանք ես կատարելու։

— Աշխատելու եմ պահածոների գործարանի լաբորատորիայում։

Երվանդը հեգնանքով ժպտաց։

— Ուրեմն գնում ես փոխարինելու ամուսնուդ։

— Է՛, դու արդեն ծաղրում ես։ Այդ լավ բան չէ։

— Զանձրալի կլինի քեզ համար աշխատել լաբորատորիայում։ Գիտեմ, որ շուտով կհրաժարվես,— անփութորեն ասաց նա։

— Ոչ, ես սիրում եմ այդ աշխատանքը։

Հռիփսիմեն կանգ առավ։ Հոգնատանջ դեմքով նրա կողքին կանգնեց Երվանդը։ Նա նայեց ժամացույցին։

— Շտապո՞ւմ ես, —հարցրեց Հռիփսիմեն։

— Մի փոքր։ Հարկավոր է ինստիտուտ գնալ։

— Շա՞տ ես աշխատում, Երվանդ։

— Չհաշված յոթ-ութ ժամ, որ հատկացնում եմ հանգստի, քնի և ուտելու, մոռացա ասել և լրագիր կարդալու, մնացած ամբողջ ժամանակ աշխատում եմ։

— Երևում է, հոգնած ես։

— Ո՛չ, հոգնած չեմ։ Բայց սրտով ու հոգով, այո՛։ Ծանր է այս բոլորը։

Եվ նրանք բաժանվեցին

— Փոխվել է նա,— նայելով հեռացող Երվանդին շշուկով խոսեց Հռիփսիմեն,— շատ է փոխվել։ Իսկ ինչու է նա այդպիսին դարձել... Պատերազմ... այո, պատերազմը փոխում է մարդկանց։

5.

Երեկոյան, երբ Հռիփսիմեն՝ նստած պատշգամբի կիսաբաց դռան մոտ՝ տխուր հայացքով նայում էր խոնարհված ծառի տերևաթափ ճյուղերին և մտքով տարված էր Վարդանով, ներքևում հայտնվեց Տիգրանուհին։

— Այդ լավ է, որ եկար։ Չորս օր է, որ չեմ տեսել քեզ,— ուրախացած ասաց Հռիփսիմեն։

Ընկերուհիները երկար ժամանակ զրուցում էին։ Տիգրանուհին լսելով Հռիփսիմեի վճիռը աշխատանքի անցնելու մասին, շատ ուրախացավ։

— Այդ ուղղակի հրաշալի է,— ասաց նա։ Դու այլևս չես տխրի։ Պատկերացնում եմ, եթե այդ մասին Վարդանը լսի ո՛րքան կուրախանա։

— Իսկ դու ինչ ես մտածում, չե՞ս ուզում աշխատել,— իր հերթին հարցրեց Հռիփսիմեն։

— Ե՞ս։ Ես մեծ սիրով կուզեի աշխատել։ Ցավն այն է, որ ինձ սուրս է հիվանդ։ Նրան խնամել է պետք։ Երբ ոտքի կանգնի, ես աշխատանքի կանցնեմ։ Ինձ պես տեխնիկ շինարարի կարիքը այժմ շատ մեծ է։

Երբ թեյի նստեցին, Տիգրանուհին հարցրեց.

— Հռիփսիմե, ամոթ չլինի ասել, ինչո՞ւ ես մեծ սենյակիդ իրերը փոխադրել այստեղ։ Էլ չեմ ասում, որ խոհանոցում շարժվելու տեղ չես թողել։

— Դատարկել եմ էլի։

— Այսինքն ինչո՞ւ։

— Սիրտս այդպես է ուզում։

— Տարօրինակ ցանկություն, բոլորովին դատարկե՞լ ես։

— Բոլորովին։

— Հետաքրքիր է տեսնել այն գեղեցիկ, միշտ նախանձ շարժող սենյակը դատարկված։

— Ի՞նչ հետաքրքրություն կարող է ունենալ դատարկ սենյակը,— տհաճությամբ պատասխանեց նա։

— Բայց ի՞նչը ստիպեց քեզ դատարկել այն, վերջապես մի պատճառ պիտի լիներ։

— Ի՞նչ պատճառ։ Ցանկացա և դատարկեցի։ Ուզում եմ տրնվոր ունենալ,— ժպտաց նա։— Միթե՞ այդ վատ է։ Երբ Վարդանը դա, նորից դատարկել կտամ և կունենամ այն սենյակը, որ միշտ նախանձդ է շարժել։

— Շա՞տ ես մտածում Վարդանի մասին,— ինչ որ թաքնված հեգնանքով հարցրեց Տիգրանուհին։

— Իսկ դու քո ամուսնու՝ Հակոբի մասին չես մտածո՞ւմ։

— Մտածում եմ։

— Ապա էլ ինչո՞ւ ես նման հարց տալիս։

— Կասեմ պարզը,— շեշտակի նայելով ընկերուհու աչքերի մեջ, ասաց նա,— այսօր մեկը քեզ տեսել է Երվանդի հետ։ Չլինի՞ նորից միտքդ է ընկել նա։ Այստեղ գալուս պատճառն էլ հենց այդ է։ Իսկապես այդ ի՞նչ նորություն է։

Հռիփսիմեն նույնիսկ դեմքի հանգիստ արտահայտությունն էլ չփոխեց։

— Այո։ Այսօր մենք հանդիպեցինք։ Ի՞նչ կա որ։ Միթե՞ այդ հանցանք է, ես իրավունք չունե՞մ որևէ մեկի հետ տեսնվելու։

— Իրավունքը քոնն է։ Սակայն չարժե այդ մարդու հետ կապեր ստեղծել։ Այո, չարժե։ Երևի հիմա նա իրեն շատ ազատ է զգում և ուզում է փորձել կամքդ։

— Կամքս փորձե՞լ։

— Այո։ Մի գուցե ցանկանում է վրեժխնդիր լինել մերժված սիրո համար։

Հռիփսիմեն կամակոր աղջկա պես թափահարեց ձեռքը.

— Դատարկ բաներ ես ասում։ Նա այդպիսի մարդ չէ։

— Մի օր էլ, քեզ նրա հետ կտեսնեն Վարդանի ընկերները և պարտք կհամարեն խոսել հետդ, ինչպես ես եմ այժմ խոսում։ Դու չես ցանկանա լսել նրանց։ Լուրը կհասնի Վարդանին՝ այն մարդուն, որ պաշտում է քեզ։ Իսկ ինչ կստացվի դրանից։ Ի սեր

աստծո, մոտ մի թող նրան։ Այդ մարդն ընդունակ է օձը բնից հանելու, ոչ թե օձը կխայթի նրան, այլ ինքը՝ օձին։

— Զարությամբ ես լցված այդ մարդու նկատմամբ։ Սակայն ինչո՞ւ, այդ ես չգիտեմ։ Չէ՞ որ կար ժամանակ, դու նրան շատ էիր հարգում։

— Ես ատում եմ բոլոր նրանց, ովքեր իրենց կեղտոտ ձեռքերն են պարզում դեպի ուրիշի ընտանիքը։ Ո՞ւր էր նա առաջ, ինչո՞ւ հանդես չէր գալիս այն ժամանակ, երբ այստեղ էր Վարդանը։ Նա միանգամից վրեժխնդիր կլինի երկուսիցդ էլ, հավատացիր ինձ, նա ընդունակ է այդ բանին։

— Դու լավ չես ճանաչում Երվանդին,— տխրությամբ պատասխանեց Հռիփսիմեն,— նա ունի սիրող սիրտ։ Մեր առաջին հանդիպումից անցել են տարիներ, սակայն չի կարողանում մոռանալ մեր սերը։ Դժվար է և ինձ համար... Հասկացիր, նա չի կարող վրեժխնդիր լինել։

— Եվ դու չես պատկերացնում, թե ինչ կստացվի դրանից։ Քեզանից երես կդարձնեն բոլորը, կդառնաս ծաղրանքի առարկա. վատհոգի, դավաճան կանվանեն քեզ։ Կապրես նրա հետ մեկ, կամ երկու տարի ու հետո ցույց կտա իր իսկական դեմքը, որովհետև հասած կլինի իր նպատակին, այնուհետև կսևացնի օրդ՝ երեսովդ տալով անցյալը։ Հռիփսիմեն լուռ էր։

Այդ գիշեր քունը մոտ չեկավ Հռիփսիմեի աչքերին։ Ծանր մտքերը տանջում էին նրան։ Միթե՞ իրավացի է Տիգրանուհին։ Արդյո՞ք կարող է սիրող մարդը վրեժխնդիր լինել։

Եվ ակամայից մտքերն սկսեցին պտտվել Երվանդի շուրջը։ Հիշեց գարնանային այն կախարդ գիշերը, խնձորի այգին, թափվող ծաղկաթերթիկները, առաջին համբույրը։ Կարծես այդ դեռ երեկ էր։ Նա սիրում է իրեն, չի կարողանում մոռանալ և այսօր։ Երվանդը ապրում, շնչում է իր համար։ Բայց ինչո՞ւ իր սիրտը այժմ նրան չի ձգտում...

Երվանդի կողքին կանգնում է Վարդանը։ Նա հպարտությամբ ասում է. «Վեհ ու աղնիվ է քո տխրությունը...»։

Ահա ինքն անցնում է փողոցով։ Վարդանի ընկերները մոտենում են իրեն, սեղմում են իր ձեռքը, հարցնում նրա մասին, իրենց տուն հրավիրում, որ չտխրի ինքը։ Ահա ժողկոմի կինը նամակ է

դրում։ Վարդանի մասին են հարցնում նույնիսկ իրեն բոլորովին անծանոթ մարդիկ։

Հռիփսիմեն մտքի թևերով թռչում էր կանաչ քաղաքը, ուր ապրում են ծնողները։ Մի գուցե այդ երջանիկ զույգը հիմա էլ նստած կարդում է Վարդանի նամակը։ Նա ռազմաճակատումն է. նրանց սրտերը տրոփում են նրա համար։ Կարդում են Վարդանի նամակն ու պատասխան նամակ գրում յուրաքանչյուր բառի մասին խորհրդակցելով միմյանց հետ։ Մի գուցե հայրը նորից գրում է այնպիսի նամակ, ինչպիսին գրեց իր մոտ եղած ժամանակ «... Դու սիրտդ շեն պահի, Հռիփսիկս քեզ համար է մտածում ու կարոտդ է քաշում։ Շուտ սատկցրեք Հիտլերին, որ նորից բախտավորվենք...»։

Լուսաբացից առաջ սկսեցին խառնվել մտքերը։ Հռիփսիմեն ջանում էր փակել աչքերը, քնել, սակայն չէր կարողանում։

Կիսախուփ աչքերով նա նայում էր սենյակը ողողող կապույտ լույսին, որը դնալով բաց մանիշակի գույն էր ստանում։

Երկու օրից հետո նա աշխատանքի անցավ լաբորատորիայում։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1.

Լաբորատորիայում Հռիփսիմեին ընդունեցին սիրով։ Գործարանում մարդիկ գիշեր ու ցերեկ աշխատում էին ռազմաճակատի համար, պահանջվում էր լաբորատոր մեծ աշխատանք։ Պետք էր ժամանակին և ճիշտ որոշել արտադրվող պահածոների որակը, և լաբորատորիայի փոքրիկ կոլեկտիվն աշխատում էր լարած ժամացույցի պես։

Գործարանի լաբորատորիայում կատարած իր աշխատանքի մասին Հռիփսիմեն հաճախակի գրում էր ամուսնուն։

Հռիփսիմեն ընկերուհիների համար էլ հաճելի անձնավորություն դարձավ։ Նա աշխատանքի մեջ համարձակ էր, ուրախությամբ լսում էր նրանց խորհուրդները։ Արտաքուստ անմատչելի, ինքնամփոփ թվացող երիտասարդ կինը ուներ պարզ բնավորություն և այդ ստիպում էր մարդկանց հարգել նրա անձնավորությունը, մոտ լինել նրան։ Սակայն մեղմ տխրությունն անբաժան

էր նրա գեղեցիկ դեմքից։ Ընկերուհիները ամեն կերպ ջանում էին սրտակից լինել նրան, ուրախ զրույցներով փարատել տխրությունը։ Լաբորատորիայում եղած ժամանակ, Հռիփսիմեն սովորություն էր դարձրել աշխատանքից հետո ձեռքը վերցնել դիտողությունների գիրքը։ Ամեն անգամ այդ մեծ գիրքը թերթելիս, ակամայից բաց էր անում այն էջերը, ուր Վարդանը գրի էր առել իր դիտողությունները։ Կարդում էր ու տարվում մտքերով։ Որքան խորամիտ է եղել նա՝ թափանցել է ամեն մանրունքի մեջ, խնամքով շարադրել իր մտքերը, դրանով իսկ օգնել մարդկանց ավելի լավ աշխատելու։

Գործարանում, լաբորատորիայում բոլորը հետաքրքրվում էին Վարդանով։ Ուրախանում էին, երբ Հռիփսիմեն նրանց պատմում էր նրանից ստացած նամակների բովանդակությունը։ Ամենքն հիշում էին Վարդանին, չէին մոռանում նրա կատարած գործերը, ազնիվ վերաբերմունքը։

Հռիփսիմեն սիրեց գործարանում աշխատողներին։ Այդ մարդիկ ոմանք իրենց ուրույն աշխարհը։ Նրանք կյանքին, մարդկանց նայում էին այլ աչքերով, միշտ փնտրելով լավը, ազնիվը։ Եվ հաճախ նա ինքն իրեն հարց էր տալիս — ինչպե՞ս է, որ մինչ այդ ինքը չէր զգացել, չէր ճանաչել այդ մարդկանց։

Մի օր էլ, երբ աշխատանքից տուն վերադառնալիս, տրամվայի կանգառում սպասում էր վագոնի, նրան մոտեցավ բարձրահասակ մի կին, զարմանալի պարզ դիմագծերով, երկնքի նման կապույտ ու գեղեցիկ աչքերով։ Անծանոթ կինը ժպտաց ու կանգնեց Հռիփսիմեի կողքին։

— Դուք, ընկեր Վարդանի կինն եք, այնպես չէ՞,— զարմանալի անկեղծ տոնով, յուրահատուկ ժպիտով հարցրեց նա։

— Այո,— նայելով նրա գրավիչ ու անբիծ դեմքին, հաճույքով պատասխանեց Հռիփսիմեն։

— Ես ձեր մասին լսել եմ։ Շատ ուրախ եմ, որ մեզ մոտ եք աշխատում. ձեզ տեսնելով մեր սիրելի ընկերոջ կարոտն ենք առնում. գիտեք, չենք կարողանում մոռանալ նրան։ Նամակ ստանո՞ւմ եք։

— Այո, գրեթե ամեն շաբաթ նրանից նամակ եմ ստանում։

— Ես գիտեմ, որ նա չի թողնի, որ դուք տխրեք։ Վարդանն անգին սրտի տեր մարդ է։

Բաժանվելիս երիտասարդ կինը ասաց.

— Ծանոթներ լինենք. իմ անունը Արևհատ է, կոնսերվա եփող ցեխի վարպետի օգնականն եմ։ Ես այստեղից շատ մոտիկ եմ ապրում։ Այ, տեսնում եք դիմացի երեք հարկանի շենքը։ Այդ շենքի երկրորդ հարկում եմ ապրում։ Ամուսինս մեր գործարանումն էր աշխատում։ Սիրում էր օդաչուի գործը։ Պատերազմից առաջ ավարտեց կուրսերը և բանակ կանչվեց Վարդանի հետ միասին։ Շատ ուրախ կլինեմ, եթե մեզ մոտ գաք։ Եկեք, մեր տան դռները միշտ բաց են ձեր առաջ։

Մինչ տուն հասնելը Հռիփսիմեն մտածում էր այդ անծանոթ կնոջ մասին։ Որքան ջերմ էին նրա խոսքերը։ Նա Վարդանի մասին այնպես էր խոսում, կարծես նա այդ կնոջ հարազատը լիներ։ Բայց չէ՞, որ բոլորն են այդպես։ Ե՞րբ է կարողացել Վարդանը ճանաչել այդ մարդկանց, ե՞րբ է տիրել նրանց սրտերին։

Այո։ Վարդանն իր ազնիվ գործերով գրավել է բոլորի սրտերը, արժանացել նրանց սիրուն ու հարգանքին։ Իսկ ինքը ամուսնական չորս տարիների ընթացքում չի կարողացել հասկանալ նրան, սրտի մեջ խեղդել է նրա նկատմամբ ծնունդ առնող սերը։ Բայց ինչո՞ւ...

2.

Ստալինգրադի պարիսպների տակ սովետական զորքերը տալիս էին մահու և կենաց ճակատամարտ։ Ողջ աշխարհը մի ականջ, մի սիրտ դարձած հետևում էր այդ արյունահեղ կռվին, ուր վճռվելու էր կռվող կողմերի բախտը։

Վարդանն անցած իր գումարտակի գլուխը Ստալինգրադում մասնակցում էր արյունահեղ կռիվներին։ Հռիփսիմեն ամեն օր սրտի դողով սպասում էր նրա նամակներին։

Անցան օրեր ու ամիսներ։ Հետո աշխարհով մեկ թնդաց Ստալինգրադում սովետական զորքերի տարած մեծ հաղթանակի լուրը։

Ամենուր խնդություն էր։ Գործարանում բանվորները, մասնագետները իրենց ելույթներում իրավացի հպարտությամբ սրտի խոսք էին ասում, նշում ստալինգրադյան մարտերին մասնակցած իրենց ընկերների անունները, խոսում ռազմաճակատ ուղարկած տասնյակ վագոն պահածոների մասին, որ արտադրել էին իրենք պլանից դուրս և ամեն տուփի վրա դրոշմել «Ստալինգրադի պաշտպաններին։ Մերն է հաղթանակը» բառերը։

Մեծ հայրենիքում ծայր առավ սեփական միջոցներով ռազմաճակատին օգնելու շարժումը։ Այն, հասավ Հայաստան, անցավ քաղաքից-քաղաք, գյուղից-գյուղ, գործարանից-գործարան, տնից-տուն ու նորից վառ աստղի պես փայլեց հայի հոգին։

Երբ պահածոների գործարանի մեծ սրահում կարդում էին Գերագույն Գլխավոր Հրամանատար Ստալինի հրամանը՝ Ստալինգրադում սովետական զենքի տարած փառավոր հաղթանակի մասին, առաջ եկավ Արևհատը։ Նրա դեմքը փայլում էր վճռականությամբ։ Նա հանելով իր պարանոցը զարդարող ոսկյա շղթայով մեդալիոնը, բաց արեց այն, նրա միջից հանեց ամուսնու լուսանկարը և ասաց.

— Այս ոսկյա շղթան ու ոսկուց պատրաստած մեդալիոնը ես նվեր եմ ստացել մորիցս, մեդալիոնի մեջ ես պահում էի Ստալինգրադում կռվող ամուսնուս պատկերը։ Նրա պատկերը ես կպահեմ սրտիս մեջ։ Իսկ այս ոսկին պետք կգա մեր հայրենիքին։ Լի սրտով նվիրաբերում եմ պաշտպանության ֆոնդին։ Չխնայենք մեր ունեցածը, չխնայենք և մեր ուժերը, որ շուտ կործանվի թշնամին։

Մարդիկ միմյանց նայեցին քննող հայացքներով։ Կանայք առաջ նետվեցին, ոմանք մատներից հանում էին մատանիներ, մյուսները՝ այլ զարդեր։

— Ի՛նձ գրեցեք,— բարձրանալով մեքենայի վրա բարձր ձայնով կանչեց Արևհատի ծեր վարպետը,— ի՛նձ գրեցեք,— ամբողջ կոկորդով գոչեց նա։

Աղմուկը դադարեց։ Հայացքները ուղղվեցին ծերունազարդ մարդու կողմը։

— Յոթանասուն երկու տարեկան եմ, ինքս էլ պետական թոշակառու։ Գործարան վերադարձա, երբ որդիս այս ցեխից ռազմաճակատ գնաց։ Հինգ որդիներ եմ տվել հայրենիքին, հինգ ատելությամբ վառվող սրտեր, որոնք կրակ են թափում հիտլերյան մարդակերների գլխին։ Պաշտպանության ֆոնդին տալիս եմ իմ պսակի օրը հանդուցյալ ծնողներիցս նվեր ստացած արծաթյա գոտիս, տալիս եմ ոսկե ժամացույցս և հինգ որդիներիս ընտանիքների կողմից հինգ հազար ռուբլի։ Սուրբ է մեր գործը, մեր թափվող արյունը։ Մոտ է հաղթանակը, օգնենք, որ շուտ լինի մեծ հաղթանակը։

Ծերունին իջավ մեքենայի վրայից, բոլորի խանդավառ հայացքների ներքո նա գրկեց ու համբուրեց Արևհատին։

— Ապրե՛ս ալջիկս, դու մեր սրտից խոսեցիր։

Ու ծայր առավ նվիրատվությունը։

— Գրեցեք երեք հազար կանխիկ, ութ հազար փոխառության պարտատոմս։

— Ինձ էլ գրեցեք, խնդրում եմ. տալիս եմ երկու մատանի՝ թանկագին քարերով...

Նվիրատվության լուրը պտտվեց գործարանի կամարների տակ, հասավ լաբորատորիա։

— Ինձ առաջինը գրեցեք,— ասաց Հռիփսիմեն,— տալիս եմ արծաթյա սկուտեղ մեկ կիլոգրամ քաշով և երկու հազար ռուբլի կանխիկ դրամ։

Գործարանի դրամարկղն ամեն օր ընդունում էր ոսկեղեն, արծաթեղեն, տասնյակ հազարների հասնող կանխիկ դրամ, փոխառությունների պարտատոմսեր։

Այդ օրերին էր, որ Հռիփսիմեն ծնողներից ստացավ գորգի համար պատվիրած թելը։ Ամեն օր աշխատանքից տուն վերադառնալուց հետո, կամ ազատ օրերին նա իր ամբողջ ժամանակը անց էր կացնում մեծ սենյակում։ Նրա նուրբ մատների տակ դանդաղ, բայց սիրով հյուսվում էին թելերը։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1.

Ամեն անգամ Երվանդի հետ հանդիպելիս Հռիփսիմեն տագնապ էր ապրում. ինչո՞ւ այդ մարդը նորից հետամուտ է իրեն։ Միգուցե ճիշտ է ասում Տիգրանուհին... Բայց մի օր էլ տրամվայում հանդիպելիս ինքը առաջինը մոտեցավ նրան.

— Չես երևում, Երվանդ,— ժպտալով ասաց նա,— երևի խուսափում ես ինձանից։

— Ինչ ես ասում, անգամ քո մի խոսքը բախտավորություն է ինձ համար,— նկատեց Երվանդը։ Շատ և շատ շնորհակալ եմ ազնիվ վերաբերմունքիդ համար։

— Փոխվել ես, Երվանդ։

— Երևի կասես, որ ծերացել եմ,— ծիծաղեց նա։

— Չէ, այդ չէի ուզում ասել, հոգնած ես երևում։

— Բայց սրտով զվարթ, հոգով արի։

— Ուրեմն այլևս չես դժգոհում վիճակից։

— Դժգոհելու հարց չկա։ Ինչպես ամենքը, նույնպես և ես։

— Ի սրտե ուրախ եմ։

— Կրկին շնորհակալ եմ։ Իսկ ինչպե՞ս է քո թանկագին առողջությունը։ Գրո՞մ է ամուսնյակդ։

— Ես էլ վատ չեմ։ Ամուսինս, որի անունը համառորեն շարունակում ես չտալ,— տխրությամբ ասաց Հռիփսիմեն,— նույնպես ողջ և առողջ է։ Քաջության համար պարգևատրվել է։

Երվանդը շտապով գրպանից հանեց ծխատուփը.

— Ուրեմն ձեզ էլ կարելի է շնորհավորել։

— Շնորհավորիր, եթե սիրտդ ցանկանում է։ Այդ ասելով Հռիփսիմեն բաց արեց փայլուն ռիդիկուլը և Երվանդին մեկնեց Վարդանի վերջին լուսանկարը, որ ստացել էր նամակի հետ միասին։— Տեսնո՞ւմ ես, նրան որքան է սազում զինվորական տարազը։

Երվանդը նրա ձեռքից վերցնելով իր վաղեմի ընկերոջ լուսանկարը լուռ ու անթարթ հայացքով նայում էր։ Հետո ծանր հոգոց հանելով ասաց.

— Այո, ամուսինդ արժանի է շքանշանի։ Օրերս հանդիպեցի մի զինվորականի, որ գալիս էր Ստալինգրադից։ Պատմեց նրա մասին։ Չգիտեմ, որքան ճիշտ էր նրա պատմածը, սակայն ինչի մասին նա ասաց, այդ հերոսություն է։ Վիրավորվել է, բայց դուրս չի եկել մարտի դաշտից, մինչև վերջ մասնակցել է գերմանական պաշարված խմբավորման դեմ մղված կռիվներին։

Հռիփսիմեն, որ ուշադիր լսում էր Երվանդին, գունաթափվեց։ Այդ արդեն նորություն էր։

— Վիրավորվե՞լ է,— ծանր շնչելով հարցրեց նա,— բայց ինչո՞ւ ինքը այդ մասին ոչինչ չի գրել ինձ։

— Չի ցանկացել, որ տխրես։ Մի մոռանա, որ իմ նախկին բարեկամը՝ զինվորական լինելուց բացի նաև նուրբ դիվանագետ է։

Հռիփսիմեն տխուր ժպտաց։

— Ուրեմն երդվել ես չտալ նրա անունը։

— Այո, քանի սիրտս այրվում է մերժված սիրուց, որի պատճառը հանդիսացավ նա, ես չեմ կարող ներել նրան։ Օգտվելով

ծնողներիդ հովանավորությունից, նա տիրացավ քեզ, իսկ դու, դու, որ սիրում էիր ինձ, բռնեցիր դիմադրության թույլ ճանապարհը։ Բայց ինչու... Մի՞թե չգիտես, որ մինչև այժմ էլ տանջվում եմ ես։ Դու էլ ես տանջվում, բայց մինչև ե՞րբ։ Միթե՞ դու իմը չես լինելու։

Հռիփսիմեն բարվոք համարեց վերջ տալ անախորժ խոսակցությանը։

— Սրվանդ,— թախծագին ասաց նա,— մենք դեռ ադիթ կունենանք երկար խոսելու և դու կհամոզվես, որ պետք է վերջ տալ այս պատմությանը, իսկ այժմ ինձ պետք է իջնել այս կանդառում։

— Գնացեք բարով Հռիփսիմե Աբգարովնա և միք մոռանա ինձ։

2.

Տանը երիտասարդ կնոջը սպասում էր մի նոր անակնկալ։ Աստիճաններով վեր բարձրանալիս նկատեց իրենց դռան մոտ կանգնած անծանոթ մի զինվորականի։ Սիրտը կրծքի տակ խփեց այնպիսի տագնապով, որ նա այլևս չկարողացավ բարձրանալ և հենվեց աստիճանների բազրիքին։

— Ահա և նա,— ուրախացած բացագանչեց հարևանուհին։— Տիկին Հռիփսիմե, շուտ եկեք, ընկեր հրամանատարը Վարդանի մոտից է եկել։

Հռիփսիմեի սիրտը խաղաղվեց։ Դեմքը ողողվեց պայծառ ժպիտով։ Նա թեթևացած սրտով մոտեցավ անծանոթ մարդուն, սեղմեց նրա ձեռքը, դուռը բաց անելով ներս հրավիրեց նրան։

— Խնդրեմ, վերցրեք այս նամակը,— շնորհակալություն հայտնելով առաջարկված աթոռի համար, ասաց զինվորականը։ — Ես կանցնեմ ձեզ մոտ երկու օրից հետո։

Երբ սովորական հարց ու փորձը վերջացավ, տանտիրուհին հյուրի առաջ դրեց կոնյակով լիքը շիշը։ Հեռատես ծերունի հայրը գնալուց առաջ տուն բերելով կոնյակի այդ շիշը ասել էր. «Մով գիտե, ուրախության համար պետք կգա»։

— Անուշ արեք,— լիքը լցնելով ոսկեզօծ բաժակը անուշաբույր կոնյակով,— ասաց նա,— կներեք, ձեզ պես թանկագին հյուրին պետք էր ավելի լավ պատիվ տալ։ Դուք ռազմաճակատից եկած հյուր եք և արժանի եք ամեն պատվի ու հարգանքի։

Զինվորականը, որ կոչումով ավագ լեյտենանտ էր, խորին շնորհակալություն հայտնելով տիկնոջը սրտառուչ ընդունելության

համար, փոքրիկ կումերով կոնյակն ըմպելուց հետո, ուրախաձայն ասաց.

— Հրաշալի է։ Հիշում եմ։ Այն ծանր օրերին Վարդան Սարիբեկովիչը Ստալինգրադում փողոցային արյունահեղ մի մարտից հետո, ինձ կանչեց իր մոտ և խորամանկ ժպիտը դեմքին ասաց. «Վատ չի լինի, եթե միասին նախաճաշենք. մեզ բաժին է հասել Երևանյան մեր գործարանի բանվորների կողմից Ստալինգրադի պաշտպաններին նվեր ուղարկած պահածոներից։ Արարատցիներն էլ ետ չեն մնացել։ Նրանք էլ կոնյակ են ուղարկել։ Այդ ասելով նա աչքով արեց իր կապավորին. վերջինս գործի անցավ և մենք նստած մեծ շենքի երկրորդ հարկում, ուտում էինք, խմում և փառք տալիս մեր ժողովրդին, որը գիտե բարձր գնահատել իր պաշտպաններին։ Իսկ մի քանի օր ուտելիք չտացած ֆրիցները հինգերորդ հարկում թուք էին կուլ տալիս։ Մենք ամեն րոպե հիշում էինք, որ մեզ հետ է մեր ողջ ժողովուրդը, մեր ոգի ու հզորության հորդահոս, հավերժական անսպառ աղբյուրը։

Երիտասարդ կինը մեծագույն լարվածությամբ լսում էր հյուրին. երբեմն թրթռում էին նրա շուրթերը, սրտում ալեկոծվող հույզերը բոցավառում էին աչքերի հայացքը, ակամայից սեղմվում էին բռունցքները։

Ավագ լեյտենանտը նայելով ժամացույցին ոտքի կանգնեց.

— Ինձ կներեք,— ասաց նա,— շտապում եմ։ Եկել եմ մի շաբաթով և դեռ շատ ու շատ հանձնարարություններ ունեմ կատարելու. ընկերներիս հանձնարարությամբ պիտի տեսնեմ նրանց ընտանիքներին։

— Ներեցեք,— կարծես մի բան հիշելով հարցրեց Հռիփսիմեն,— վաղո՞ւց է ինչ Վարդանի հետ եք։

Զինվորականն ուրախ ծիծաղեց։

— Այն օրվանից,— պատասխանեց նա,— երբ կայարանում դուք ճանապարհեցիք նրան։ Ձեր կողքին կանգնած էին կինս, մայրս, աղջիկս։

Հռիփսիմեն ժպտաց։ Այո, այո. ինքը հիշեց այդ մարդուն։ Բայց որքան է փոխվել... Հիշեց ռազմաճակատից Վարդանի գրած առաջին նամակը. «... Ընկերներիցս մեկն ասաց՝ չեղավ բարեկամ, մինչև վերջն էլ չոր մնացին սիրունիկ կնոջդ աչքերը»։ Արդյո՞ք ասողը այս մարդը չի եղել...

Զինվորականին ճանապարհելուց հետո, Հռիփսիմեն շտապով բաց արեց ամուսնու նամակը։

«Իմ սիրելի Հռիփսիմե,

Այս նամակը գրում եմ քեզ, երբ հեռու թիկունք է դարձել մեզ համար Ստալինգրադը։

Այժմ ես իմ գումարտակով գտնվում եմ նոր ու ծանր կռիվների մեջ։

Որքան ժամանակ է մեզ բաժանում իրարից։ Կարոտում եմ քեզ. քո նամակներն են միայն, որ զովացնում են սիրտս։

Ես գիտեմ, որ կգա այն օրը, երբ մենք, սիրելի՛ս, կտեսնվենք նորից, երբ սիրով լի մեր սրտերը խաղաղությամբ լեցուն մեր հարկի տակ կգտնեն իրար։

Ստալինգրադում ես երկու վերք ստացա, մեկը ձախ թևիցս, իսկ մյուսը՝ կողքիցս։ Թշնամու նշանառուն ուզում էր իր երկու գնդակով վերջ տալ կյանքիս։ Բայց ինչպես ասում են՝ շաբաթը ուրբաթից շուտ վրա հասավ։ Նրան իր թաքստոցից վայր գլորեցին իմ արծիվները։ Ես մնացի շարքում, այժմ բոլորովին առողջացել են վերքերս։ Երկու անգամ մեծ Առաջնորդի շնորհավորանքին է արժանացել մեր ստորաբաժանումը։ Շատերը, որոնց թվում և ես, արժանացել ենք բարձր պարգևի՝ այն էլ երրորդ անգամ։ Հռիփսիկս, թանկագինս, այնքան բանի մասին եմ ուզում գրել քեզ, որ չգիտեմ որից սկսեմ, որ գոհացում տամ հետաքրքրությանդ։

Ընկերոջս հետ ուղարկիր մանրամասն նամակ մեր գործարանի մարդկանց մասին, ինչպես ես ապրում, ինչպես են ծնողներդ, մի խոսքով գրիր այն ամենի մասին, ինչ անհրաժեշտ ես համարում։ Չփորձես որևէ բան ուղարկել։ Մենք ունենք այն ամենը, ինչ պետք է ունենա պատերազմող մարդը։

ՔՈ ՎԱՀԻԱՆ»։

3.

Ամուսնու նոր նամակը մի նոր ջերմությամբ լցրեց Հռիփսիմեի սիրտը։ Լավ է ունենալ Վարդանի նման կյանքի ընկեր, որ գիտե թափանցել մարդկային հոգիները, իր մտքի լուսավոր թևերով ճանապարհ բաց անել սիրո և երջանկության համար։ Նույն օրը Հռիփսիմեն պատասխան նամակ գրեց։

«Սիրելի, իմ անզուգական Վարդան,

Ուզում ես որ գրեմ մանրամասն նամակ։ Սակայն անկարող եմ այդ բանին, քանի որ նոր եմ կյանք մտնում, նոր եմ ըմբռնում այն ամենը, ինչ վաղուց եղել է քո իմաստությունը։ Այժմ ես հասկանում եմ քեզ և դա բախտավորություն է ինձ համար։ Մի ժամանակ ես կյանքը պատկերացնում էի կարդացածս գրքերի և ծնողներիս գուրգուրանքի մեջ. նեղ, շատ նեղ էր իմ աշխարհայացքը։ Քո բացակայությունը, այս պատերազմը բաց արեցին աչքերս և ես այժմ կյանքին ու մարդկանց նայում եմ իսկական կյանքը ճանաչող մարդու աչքերով։ Գործի մեջ պետք է տեսնել, կարդալ մարդու սիրտն ու հոգին, զգալ կյանքի էությունը։ Ամիսներ առաջ ես հանդիպեցի քո մտերիմ ընկերներից մեկի մինչ այդ ինձ անծանոթ կնոջը. անունը Արևհատ է։

Որքա՜ն ջերմ ու աղնիվ էր նրա վերաբերմունքը։ Մեր առաջին հանդիպման օրվանից ես սիրեցի այդ կնոջը, սիրեցի բուռն կերպով և այժմ նա շատ բանով նույնիսկ առավել է մեր Տիգրանուհուց։ Պատճառը կյանքի նրա ճանաչողությունն է, անբասիր, մաքուր սիրտ ունենալը։ Գործարանում ամենքը խոսում են նրա մասին, նա օրինակ է բոլորիս համար։ Կարծես այս բոպեիս էլ ես նրա շունչն եմ զգում. չեմ մոռանում այն օրը, երբ նա առաջինն իր պարանոցից հանեց ոսկյա մեդալիոնը, մի ձեռքում ամուսնու նկարը, մյուս ձեռքում ոսկեղեն այդ զարդը բռնած՝ նա հայրենիքի ազատության համար նվիրական խոսքն ասելուց հետո հաղթանակի համար նվիրեց իր վերջին ունեցվածքը։ Նրա նկարը փակցրել են պատվո տախտակին՝ քո նկարի կողքին։ Ձեր պատկերները պայծառ ժպիտով իրար են նայում։ Նա թիկունքի հերոս է, իսկ դու, իմ թանկագին, ռազմաճակատի։

Իմ անզուգական ընկեր.

Այս տողերը գրելիս սրտիս անհուն բերկրանքով շնորհակալական խոսքս դարձյալ քեզ եմ ուղղում և հաճույքով հիշում այն օրը, որ գործարան մտա։ Այն մարդիկ, որոնց հետ աշխատել ես դու և որոնց հետ աշխատում եմ այժմ ես, շատ բան տվեցին ինձ, սովորեցրին ճանաչել իսկական կյանքը և թեթևամիտ չինել մարդկանց նկատմամբ։ Սիրելիս, ես ուզում եմ անել այն ամենը, ինչ արժանի է մարդ կոչվածին։ Ես կլինեմ արժանավոր՝ հայրենիքիս

ու մարդկանց համար, այն մարդկանց համար, որոնք ինձ ցույց տվեցին ազնվության ճանապարհը։

Դու միշտ ինձ հետ ես. տխրության թե ուրախության ժամերին զգում եմ քեզ, ապրում եմ քեզնով և ավելի սիրելի են դառնում այն մարդիկ, որոնց սրտերը կարդացել ես դու։ Ես չեմ հեռանա այդ շրջանից, ես կսպասեմ քեզ կարոտով ու սիրով։ Գիտեմ, որ հաղթանակով կգաս տուն։

Մի մտածիր իմ և ծնողներիս մասին։ Ինչպես ես, նույնպես և նրանք ոչ մի բանի կարիք չունենք։

Հազար, հազար անգամ գրկում ու համբուրում եմ քեզ...

Քո Հռիփսիմե»։

4.

Տիգրանուհին, որ ընկերուհու սառնությունը զգալով, սկսել էր շատ հազվադեպ երևալ նրա մոտ, Վարդանից ստացված նոր նամակի մասին լսելով, այցելության եկավ նրան։

Հռիփսիմեն ուրախ էր, որ կրկին տեսնվում է Տիգրանուհու հետ։ Գրկելով նրան, ասաց.

— Շուտ ես խոսվում։ Առանց քեզ տխուր է սիրտս։

— Այնպես էիր կախում հոնքերդ, որ ակամայից սարսափում էի քեզանից։

— Բայց միթե՞ ամեն անգամ մարդ մի տրամադրության մեջ է լինում,— հաշտ եղանակով ասաց նա,— միթե՞ դու չգիտեիր, որ վաղուց Վարդանից նամակ չունեի և ոչ էլ որևէ տեղեկություն։ Սիրտս շատ անհանգիստ էր։

— Բայց միթե՞ մեղավոր եմ ես։ Ինձ թվում է, որ այդ չէր պատճառը։

— Է՜, մոռանանք։ Ինչ ուզում է լինի, մենք չենք կարող իրարից բաժանվել։ Ես սիրում եմ քեզ, իսկ դու... դու ավելի ես սիրում ինձ։

— Կարող է պատահել, որ ընդմիշտ բաժանվենք,— տխրությամբ պատասխանեց Տիգրանուհին։

Հռիփսիմեն ծիծաղեց։

— Ո՜չ։ Այդ արդեն անկարելի է։ Ոչ ո՛ք, ոչ ո՛ք չի կարող բաժանել մեզ իրարից։

— Ես սիրում եմ քեզ, վկա է աստված։ Բայց եթե դու շարու-

նակես տեսակցություններ ունենալ երդվյալ ամուրիի հետ, այն դեպքում անխուսափելի է մեր բաժանումը։ Կարծում ես չգիտեմ, որ դու տեսնվում ես նրա հետ։ Ասա, մի՞ շաբաթ առաջ նրա հետ չէի՞ր տրամվայի վագոնում։ Որպիսի հայացքով էր նա քեզ նայում, աստված իմ։ Տեսնելով նրա ժպիտը կրծքիս տակ սիրտս լալիս էր։

Հռիփսիմեի սիրուն դեմքը ջղաձգվեց. կարծես աներևույթ մի ձեռք սրբեց այնքան վեհ ու պայծառ հանգիստը, դողդողալ սկսեցին շրթունքները։

— Ես չգիտեի, որ դու ընդունակ ես նաև մարդկանց լրտեսելու։ Սխալվել եմ։ Ինչպես երևում է՝ ձեռնահաս ես այդ բանին։

— Այդ լրտեսել չի նշանակում։ Ինձ տանջում էր քո վերաբերմունքը։ Աստված իմ, մի՞թե դու չես մոռացել այդ գարշելուն։ Հասկացիր, եթե ոչ այսօր, ապա վաղը դու կանգնած կլինես խորտակման վիհի եզրին։ Նա վրեժխնդիր կլինի քեզանից։ Կգա Վարդանը, և դու ո՛չ միայն ամոթով կմնաս նրա առաջ, ա՛յլև քեզ ճանաչող շատերի առաջ։

— Այդ արդեն իմ գործն է,— գրգռված պատասխանեց Հռիփսիմեն,— ոչ ոքի իրավունք չի տրված խառնվել իմ ներքին գործերին։ Այո։ Ես դայակի կարիք չեմ զգում։

— Ցավում եմ, որ չես ճանաչում իսկական բարեկամիդ։

— Չեմ էլ ցանկանում ճանաչել։ Ես իմ սեփական խելքն ունեմ, դու՝ քոնը քեզ պահիր և մի համարձակվիր...

— Թող այդպես լինի։ Ինչ արած, կուրացել ես դու։ Բայց իմացիր, կգա ժամանակ, որ դու քեզ կատես։ Այս ասելով Տիգրանուհին ոտքի կանգնեց։

— Ես գնում եմ։ Ուրեմն չարն եմ, լավ։ Կյանքը ցույց կտա, թե ով է մեզանից ողջամիտը։

Հռիփսիմեն չփորձեց կանգնեցնել ընկերուհուն։ Երբ Տիգրանուհին ետևից փակեց դուռը, նա աչքերին սեղմեց թաշկինակը.

— Նույնիսկ սա էլ չի հասկանում ինձ...

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1.

Պատերազմի նախավերջին տարվա աշնանը մի անգամից դադարեցին Վարդանի նամակները։

Ամիսներ շարունակ ամուսնուց նամակ չստանալով, Հռիփսի-

մեն սոսկումով զգաց, որ կյանքը կարծես մի անգամից դատարկվեց իր համար։

Ընկերուհիների հորդորանքը, ամուսնու մտերիմների խորհուրդները չէին կարողանում փարատել նրա տխրությունը։

Հռիփսիմեն տագնապով լի նամակներ գրեց, հարցումներ տրավ։ Ժամանակներն այնպես էին, որ նա չստացավ և ո՛չ մի գոհացուցիչ պատասխան։

Նա ետ ստացավ իր գրած նամակը, որը հասցեագրել էր այն զորամասի դաշտային փոստակայանի համարով, որտեղից միշտ ստանում էր հույսով ու հավատով լի ամուսնու նամակները. «Վերադարձվում է հասցեատիրոջ բացակայության պատճառով»։ Եվ նա դառնագին լաց եղավ։

Վարդանի ընկերներն էլ ետ ստացան իրենց ուղարկած նամակները։ Սակայն ոչ ոք չէր հավատում, որ նա չկա, որ իրենք այլևս չեն տեսնելու նրան։

Գործարանում, լաբորատորիայում սմենքն աշխատում էին ամոքել Հռիփսիմեի սիրտը, պատմում էին տասնյակ, նույնիսկ հարյուրավոր դեպքեր, երբ այս կամ այն ռազմիկից մեկ, նույնիսկ երկու տարով ո՛չ մի լուր չեն ունեցել հարազատները։ Միթե՞ թերթերը քիչ են գրում թշնամու թիկունքում գործող պարտիզանների մասին։ Մի գուցե Վարդանն էլ արժանացել է այդ բախտին։

Տիգրանուհին հայտնի միջադեպից հետո չէր ցանկանում տեսնել Հռիփսիմեին։ Նույնիսկ փողոցում հանդիպելիս անխոս անցնում էր նրա մոտից... Արևհատից լսելով Վարդանի մասին պտտվող լուրերը թե երկար ժամանակ է, ինչ նրանից նամակ չի ստացվում, կուլ տալով ընկերուհու կողմից իրեն հասցրած դառնությունը, այցելության գնաց նրան։ Հռիփսիմեն տխուր էր. տեսնելով ընկերուհուն արտասուքներով լցվեցին աչքերը։

— Հազի՞վ մտաբերեցիր,— շշնջաց նա։

Տիգրանուհին չպատասխանեց։ Նա երկար ժամանակ հարց ու փորձ էր անում Վարդանի մասին։

— Դատարկ բաներ են,— վերջում ասաց նա,— չարժե, որ դրա համար սիրտդ կոտրես։ Չէ՞ որ ես էլ մի տարուց ավելի է, ինչ նամակ չեմ ստանում ամուսնուցս։ Սակայն միտք չունեմ սուգ անելու։ Կարող է պատահել, որ նույնիսկ մինչև պատերազմի

վերջն էլ նամակ չստանամ։ Բայց մթթե՞ այդ նշանակում է, որ նա այլևս չկա։

Այդ օրվանից Տիգրանուհին հարմար առիթ բաց չէր թողնում տեսնվել Հռիփսիմեի հետ։ Նա հաճախակի իրենց տուն էր հրավիրում, ժամերով հետաքրքիր պատմություններ էր պատմում նրան։ Ծիծաղում էր երեք զավակների մայրը, որ հույսով ու հավատով էր լցված։ Տիգրանուհին սպասում էր պատերազմի հաղթական վախճանին։

Սակայն ամուսնու անհայտ վիճակը ստիպում էր Հռիփսիմեին ժամերով տարվել ծանր մտքերով։ Նա տխրում էր նաև լաբորատորիայում եղած ժամանակ։ Այդ նկատում էին աշխատանքի ընկերուհիները։

Լաբորատորիայի վարիչը, որ ջերմ սիրով սիրում էր Հռիփսիմեին, իր զարմանալի պատմություններով հաճախ ստիպում էր նրան չմտածել այլ բաների մասին, հուսալ, որ նա՝ Վարդանը հաղթանակով տուն կվերադառնա։

— Գիտես, Հռիփսիկ, ինչ հետաքրքիր բանի ականատես եղա օրերս։ Ուղղակի չէի հավատում աչքիս տեսածին։ Դե, լսիր, պատմեմ։ Մեր շենքումն է ապրում ծերունի Վարոսն իր պառավի հետ։ Նրանց որդին հին զինվորական է։ Պատերազմն սկսվելու օրվանից նրանք ոչ մի լուր չունեին նրանից։ Պառավը ծերուկին էր ասում. «Քա, վայ թե մեռնեմ ու չտեսնեմ տղիս»։ Ծերունին էր հիվանդանում ու ծանր բոպեներին պառավին ասում. «Է՜, շուն դառնա Հիտլերի հերը՝ տղիս գլուխը կերավ։ Այ պառավ, մեռնելու եմ ու նա մի բուռ հող էլ չի գցելու վրաս»։ Եվ ահա տուն եմ գնում ու ինչ տեսնեմ. պառավը բակի մեջտեղը երդում է ու պարում։ Խեղճ պառավ, անցավ մտքովս, երևի վշտից խելագարվել է։ Իսկ նա, ինձ որ տեսավ ուրախ ձայն տվեց. «Մի արի, տես, թե ինչ թուղթ է ուղարկել թառլան տղես»։

Այո։ Նա իր որդուց նամակ էր ստացել, իսկ նրա որդին հերոս է, կռվում է թշնամու թիկունքում։ Տեսնում ես, թե ինչեր են կատարվում պատերազմի ժամանակ։ Դու մի տանջիր քեզ։ Վարդան Սարիբեկովիչը կենդանի է ու հաղթանակով տուն կվերադառնա...

Հռիփսիմեն տխուր էր, դադարեց մեծ սենյակը հաճախելուց, փակեց դուռը և դռան ամբողջ երկայնքով բաց թողեց ծանր վարագույրը։

2.

Ձմռան վերջին ամիսն էր։ Աշխատանքից տուն դառնալով Հռիփսիմեն վառեց վառարանն ու նստեց կողքին։ Ընկել էր մթերի ծովը։ Հնչեց դռան զանգի ձայնը։ Նա սթափվեց, մռայլ դեմքով վեր կացավ նստած տեղից։

— Ուֆ, այս աղջիկն էլ օր ու հանգիստ չի տալիս,— փնթփնթաց նա,— ուսերին գցելով թեթև շալը, մոտեցավ դռանը, ետ գցեց փականքը և դժկամությամբ ասաց.

— Դե ներս արի, ինչ ես ցցվել դռան մոտ։

— Կարելի՞ է,— լսվեց Երվանդի բասը։

Հռիփսիմեն ցնցվեց, ետ-ետ գնաց։ Տիրապետելով իրեն կամացուկ ասաց.

— Խնդրեմ, ես կարծում էի Տիգրանուհին է, ներեցեք անքաղաքավարությանս համար, որ այդպես խոսեցի։

Վերարկուն հանելով Երվանդը հարցրեց.

— Ի՞նչ է, նա հաճախակի՞ է լինում քեզ մոտ։

— Գրեթե միշտ, այսօր էլ սպասում էի նրան և կարծեցի, որ նա էր զանգահարողը, դրա համար առանց հարցնելու բաց արեցի դուռը։

— Իսկ եթե նա գա և ինձ տեսնի քեզ մոտ, անհարմար չե՞ս զգա։

Հռիփսիմեն դառը ժպտաց.

— Կարծում եմ, ես եմ այս տան տերը,— ասաց նա։ Եթե չցանկանայի քեզ ընդունել, ապա ներս չէի հրավիրի։

— Զգացված եմ սիրելիս։ Դու միշտ էլ փայլել ես հոգուդ մաքրությամբ։ Այդ կինը փողոցում հանդիպելիս դևի նման փնչացնում է, կրճտացնում ատամները։ Ես համոզված եմ, որ նույնիսկ նա չի խորշի արյունս էլ թափելուց։

— Այդ ինչպես է Երվանդ Վառլամիչ, որ շնորհ բերեցիր ինձ մոտ,— տխրությամբ հարցրեց Հռիփսիմեն հրավիրելով նրան նստելու վառարանի մոտ։— Մրսած կլինես, տաքացիր։

— Վաղուց է, որ չէի տեսել քեզ։ Ինձ համար դժվար էր մտնել այս տունը։ Սակայն սիրտս ձգում էր և ահա եկա,— պատասխանեց Երվանդը, շնորհակալություն հայտնելով առաջարկած աթոռի համար։

Հռիփսիմեն լուռ էր։ Չնայած սենյակը հագեցված էր հաճելի ջերմությամբ, նա ինչ-որ սարսուռ էր զգում. նուրբ մատները հանգուցված էին ուսերին գցած թեթև շալի ծայրերին, կարծես վախենում էր, թե մեկը կխլի այն իրանից ու ինքը կդողա ցրտից։

— Անճանաչելի ես դարձել Հռիփսիկ, դժգույն է դեմքդ, կարծես հիվանդի մահճից նոր բարձրացած լինես։ Չլինի տկար ես,— լռությունը խզելով հարցրեց Երվանդը։

— Չէ, հիվանդ չեմ։ Միտք էլ չունեմ տկար լինելու։

— Տա աստված,— հայացքը չհեռացնելով երիտասարդ կնոջ դեմքից,— կրկին խոսեց Երվանդը։

— Չէի՞ր ցանկանա մի բաժակ թեյ,— հարցրեց Հռիփսիմեն։

— Հաճույքով։ Հիշիր, որքան ժամանակ է անցել այն օրից, երբ վերջին անգամ խմել եմ քո ձեռքով պատրաստած թեյը...

— Եվ չես մոռանում այդ։

— Ոչ, ոչինչ չեմ կարող մոռանալ։ Երևակայիր,— ծխախոտը վառելով շարունակեց Երվանդը,— հիշում եմ ամեն մանրունք, որը կապված է մեր սիրո պատմության հետ։ Այո։ Այն ինչ հիշեցնում է քեզ, միշտ վառ է իմ սրտում։ Կարող ես երևակայել, Հռիփսիկ, նույնիսկ չեմ հավատում, չեմ կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ դու իմը չես, որ մենք հավիտենապես բաժանված ենք իրարից։ Շատ հաճախ ինձ թվում է, որ այս բոլորը վատ երազ է։

— Ինչու տանջվել,— խորը հառաչելով պատասխանեց Հռիփսիմեն,— միթե՞ չես կարող...

— Այդ հարցրու սրտիցս։ Ինչպե՞ս կարող եմ մոռանալ քեզ։

— Դու հյուր ես իմ տանը և ես ուրախ եմ դրա համար։ Ինչո՞ւ ես ուզում պղտորել մտքերս, ինչո՞ւ ես ուզում տանջել ինձ. միթե քիչ եմ տանջվել ես։ Եթե սիրում ես ինձ, թողնենք այս խոսակցությունը։

— Հասկանում եմ քեզ։ Խուսափում ես ուղղակի պատասխան տալուց, և այդ սարսափելի է ինձ համար։ Այո, օտար եմ դարձել քեզ համար։

Հռիփսիմեն գլուխը կախ լսում էր Երվանդին։ Նա վախենում էր նայել այն մարդու դեմքին, որի համար տանջվել էր շարունակ։

— Ների՛ր սիրելիս, ների՛ր որ խանգարում եմ քեզ, բայց դու էլ պարտավոր ես հասկանալ ինձ։ Միշտ քեզ եմ հիշել և այսօր եկել եմ, որ մեկ ընդմիշտ վերջ տաս տառապանքներիս։

— Այս բոլորը ծանր է ինձ համար,— կարկամելով խոսեց Հռիփսիմեն։— Ինձ ո՛չ ոք, ո՛չ ոք չի հասկանում։

— Եղիր վճռական սիրելիս։ Դու կարող ես երջանիկ լինել, երջանկությունը մի վանիր քեզանից։

— Երջանի՞կ... ի՞նչ երջանկության մասին կարող է խոսք լինել, որը պիտի ստեղծվի մեկ ուրիշի դժբախտության գնով։

Երվանդը ոտքի կանգնեց։

— Ես գնում եմ,— ասաց նա,— երբ խաղաղ կլինի հոգիդ, մտածիր ասածներիս մասին։

3.

Հռիփսիմեն հանգցրեց լույսը։ Գիշերը ալոտանում էր։ Ջերմությամբ հագեցած ննջասենյակում, ուր խաղաղություն էր տիրում, անկողնու փափկության մեջ ծանր մտքերով տառապում էր երիտասարդ կինը։

— Ո՛չ, ո՛չ, Վարդանը կա, նա կգա,— շշնջաց նա և դեմքը թաղելով բարձերի մեջ, ազատություն տվեց արցունքներին։

4.

Մի քանի օր անց, երբ լաբորատորիայում աշխատանքը վերջացնելուց հետո Հռիփսիմեն տուն էր վերադառնում, հանդիպեց Տիգրանուհուն։

— Մոռացել ես ինձ,— հոգնածի հայացքով ընկերուհուն նայելով ասաց նա։

— Մոռանա՞լ, չէ, ես քեզ չեմ մոռանալ, բայց խճճվել եմ տան հոգսերի մեջ։ Դժվար է դրությունս։ Ծանր հիվանդ է մեծ տղաս, Հակոբից էլ նամակ չկա ու չկա։ Չգիտեմ որի հոգսը տանեմ։ Պառավն էլ իր ախ ու վախով սիրտս կերավ։

Հռիփսիմեն դառը ժպտաց։

— Ի՞նչ է, հիմա էլ ե՞ս քեզ հուսադրեմ։

— Այո։ Մտերիմ մարդու ամեն մի խոսքը սպեղանի է ցաված սրտիս համար։

— Գնանք մեզ մոտ, հետո միասին ձեր տունը կգնանք,— այդ

ասելով Հռիփսիմեն թևանցով արեց Տիգրանուհուն։ Աստիճաններից բարձրանալիս հարևանի բնակարանի նախսմուտքի դուռը կիսով չափ բացվեց ու այնտեղից դուրս նայեց տասնամյա աղջկա թուխ դեմքը։

— Մորաքույր Հռիփսիմե, դուք նամակ ունեք։ Մամաս աշխատանքի գնաց և պատվիրեց, որ եթե դուք գաք նամակն իսկույն հանձնեմ ձեզ։

— Իսկ եթե Վարդանի՞ց լինի նամակը,— ուրախությունից փայլելով հարցրեց Տիգրանուհին,— ասա քանի՞ համբույր կտաս։

— Է՜, մեզ ո՞վ է տվել նման բախտավորություն։ Երևի ծնողներից է։

Նամակը Վարդանից չէր։

Երբ երկուսով տուն մտան, Հռիփսիմեն բաց արեց նամակն ու սկսեց մտքի մեջ կարդալ։ Նրա կողքին կանգնած Տիգրանուհին նույնպես լուռ հայացքով կարդում էր նամակը.

«Շատ հարգելի տիկին Հռիփսիմե.

Դուք ինձ ճանաչում եք դեռ անցյալ տարվանից, երբ եղա ձեզ մոտ, ես Վարդանի ընկերն եմ, ավագ լեյտենանտ Տիրատուրյանը։

Պարտքի զգացումն ստիպում է գրել այս նամակը Ձեզ։ Ցավում եմ, որ ինձ չի վիճակվել հաղորդել ուրախալի լուր։ Ձեռքերս դողում են, երբ գրում եմ այս տողերը։ Բայց չգրել, չեմ կարող։ Ձեր ամուսնու՝ իմ մտերիմ ընկերոջ հետ մենք պայմանավորվել էինք դժբախտության դեպքում՝ մեզանից կենդանի մնացողը գրի տուժողի ընտանիքին։ Եվ սրտիս դառը կսկիծով հայտնում եմ, որ այդ վիճակվեց ինձ՝ հաղորդել ձեզ այնպիսի մի լուր, որ տրխրությամբ ու վշտով կհամակի ձեր ազնիվ սիրտը...

Ես բաժանվեցի ձեր ամուսնուց, ավելի շուտ դաժան կռվում մենք բաժանվեցինք, վերջին պահին չկարողացանք տեսնել միմյանց։ Այդ այն օրերին էր, երբ մենք հասանք Կարպատները։ Այդ լեռներից հարավ-արևմուտք, ուր կատաղի կռիվներ էին տեղի ունենում, հարձակվողների շարքումն էր արդեն նրա գումարտակը։ Նույն գիշերը, երբ պատահեց այն, ինչի մասին հարկ եմ համարում պատմել ձեզ, նա ինձ կանչեց իր մոտ և հրամայեց, որ ես իմ վաշտով կանգնեմ թշնամու ձախ թևում։

Ստանալով նրա հրամանը, ես հեռացա։ Գիշերվա մի պահ մեր

դումարտակի դեմ կենտրոնացած կատաղի կրակով բարձրացան գերմանական «մեռած գանգեր» դիվիզիայի երկու գումարտակները։ Եղավ ծանր մի գոտեմարտ։ Երբ տեղ հասան օգնական ուժեր, և երբ թշնամին տրորելով յուրայինների դիակները, փախուստի դիմեց, նույնիսկ չկարողանալով հավաքել վիրավորներին, մենք այլևս չգտանք մեր սիրելի հրամանատարին։ Նրա հետ անհետ կորան շտաբային երեք սպաներ, մի քանի տասնյակից ավելի զինվորներ, որոնց դիակները չգտնվեցին սպանվածների մեջ։ Ի՞նչ պատահեց նրա և բախտակից մարդկանց հետ, ես չեմ կարող ասել։ Այդ անհայտ է և մեզ համար։ Պատերազմում ամեն բան պատահում է։

Սեղմում եմ ձեր ձեռքը։ Վրեժխնդիր կլինենք։ Առաջին հնարավոր դեպքում կուղարկեմ նրա անձնական իրերը, որ ամենայն սրբությամբ պահում եմ ինձ մոտ...»։

— Ուրեմն չկա Վարդանը, օ՛, աստված իմ, մարդիկ այդ մասին ինձանից վաղ էին իմացել։ Հռիփսիմեն գլուխը դրած նամակի վրա հեկեկաց։ Դառնագին լալիս էր և Տիգրանուհին։ Նա արտասուքներից խեղդվելով ասում էր.

— Բայց նա չի գրել, որ սպանվել է, ուշքի արի։

— Միթե՞ ես այլևս չեմ տեսնելու նրան,— դառն արտասուքների միջից հեկեկում էր Հռիփսիմեն...

Սակայն երբ անցան առաջին օրերի կսկծալի ժամերը, երիտասարդ կինը սկսեց հաճախակի մտածել այդ նամակի մասին, կարդում էր օրը մի քանի անգամ և հայացքն ու միտքը պտտվում էր նամակի այն տողերի վրա, ուր ասված էր. «...ինչ պատահեց նրան և նրա բախտակից մարդկանց հետ, ես չեմ կարող ձեզ ասել, այդ անհայտ է և մեզ համար։ Պատերազմում ամեն բան պատահում է...»։

Նա ծնողներից թաքցրեց բոթաբեր նամակը։ Հաճախակի նամակներ էր գրում ծերունիներին, նույնիսկ հուսադրում նրանց, որ Վարդանը կա և կգա։

Զմռան վերջերին Մոսկվայից ստացվեց հարցման պատասխանը.

«... Ձեր ամուսնու անունը գտնվում է անհայտ կորածների ցուցակում։ Լրացուցիչ տեղեկություններ ստացվելու դեպքում կըհայտնվի Ձեզ...»։

Հռիփսիմեն ցավով ընդունեց այդ լուրը։ Սակայն այն

դարձավ կարևոր փաստարկ Տիգրանուհու համար, որն ամեն անգամ Վարդանի մասին խոսելիս ասում էր.

— Դու սիրելիս, այլևս տխրելու ոչ մի հիմք չունես։ Վարդանը կա, նա կգա։

Լաբորատորիայի փողոցը նայող պատի վրա բրոնզափայլ կամարով շրջանակի միջից ամենքին էր նայում խաղաղ ու առնական դեմքով Վարդանի նկարը։ Գործարանի երիտասարդներն ամեն օր այնտեղ ավելացնում էին ռազմաճակատներում կռվող քաջակորով իրենց ընկերների նկարները։

Այդ օրերին էր։

Աշխատանքից տուն վերադառնալիս Հռիփսիմեն փողոցում նկատեց Երվանդին, Երվանդն էլ նրան տեսավ, սակայն ներքին մի սառնություն երիտասարդ կնոջը հակադիր մայթը մղեց։ Նրա աչքի առաջից չէր հեռանում ամուսնու պատկերը։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

1.

Բացվում էր գարունը։

Գարնան բացվելուն հետ մայրաքաղաքը թոթափել սկսեց պատերազմի ծանր բեռը։ Այլևս խավար չէին նրա գիշերները։

Իջնում էր գարնանային թխպոտ երեկոն և քաղաքը շողում էր լույսերի մեջ, մարդիկ փողոց էին դուրս գալիս զբոսանքի։

Գարնան առաջին օրերին, մեծ հայրենիքի հետ, ի պատիվ սովետական զորքերի տարած փայլուն հաղթանակների Արարատյան դաշտավայրից հարյուր հրանոթներ ողջույնի համազարկեր տվեցին։ Մայրաքաղաքի երկնակամարը հավերժական ձյունածածկ Մասիսի հետ շողաց երփներանգ լույսերից։ Հաղթանակի գարունն էր իր կանաչ թևերը պարզում լեռնաստանների վրա։

Գարնան բացվելու հետ գործարանում, լաբորատորիայում լուրեր պտտվեցին, որ ժողկոմատում պատրաստվում են ձեռնարկությունների առաջավոր մարդկանց Մոսկվա կառավարական պարգևի ներկայացնել։

Այդ օրերին Հռիփսիմեին տեսության էին եկել ծնողները և նա ուրախ էր նրանց գալստյան առթիվ։ Ազատ ժամերը ամբողջովին տրամադրում էր նրանց, աշխատում էր, որ տխուր չերևա նրանց

աչքում, օգնում էր մորը տնային գործերում, կատակում հոր հետ։

— Է՜, ինչ եղավ խալիդ,— մի օր էլ ծիծաղելով հարցրեց ուստա Աբգարը։

— Կիսատ թողեցի։ Շատ եմ զբաղված, հայրիկ։

— Մի սենյակիդ դուռը բաց տեսնեմ։ Ո՞վ գիտե, ձեռք էլ չես տվել։

Հռիփսիմեն ծիծաղեց։

— Չէ, մի քիչ գործել եմ։ Սենյակի բանալին չգիտեմ որտեղ եմ դցել, կգտնեմ, բաց կանեմ։

— Կիսատ չթողնես, գործիր աղջիկս, հունարդ ցույց տուր։

Հռիփսիմեն զգում էր, որ գնալով հայրը մոռայլվում էր։ Տանը եղած ժամանակ ծալապատիկ նստում էր բազմոցի վրա ու տխուր հայացքով նայում Վարդանի նկարին, շրխկացնելով համրիչի խոշոր հատիկները նա, կարծես, վերանում էր աշխարհից։

2.

Ուստա Աբգարին չէին ուրախացնում գորգագործական վարչությունում եղած բարենպաստ կարծիքները իր գլխավորած արհեստանոցի մասին։ Եվ երբ նրան առաջարկեցին կառավարական նոր պատվեր՝ գործելու մեծածավալ գորգ ժողովրդական բանաստեղծի դիմանկարով, եզրերին պատկերել նրա ստեղծագործություններից առանձին տեսարաններ, նա լռությամբ պատասխանեց։

Այդ զարմացրեց վարչության ղեկավարներին։ Ժողովրդական բանաստեղծը ուստայի մոտիկ մարդն էր։ Կանաչ քաղաքում ով չէր տեսել նրանց երկուսին խնձորի այգում նստած։ Նա սիրում էր իր բարեկամին...

— Սիրտս տխուր է,— երկար լռությունից հետո հառաչելով ասաց նա։

— Բայց այդ մեծ պատիվ է ձեզ համար, ուստա՛,— հուզմունքով խոսեց նկարիչը, որը ներկայացրել էր ապագա գորգի զարդանկարները։

— Կհասկնամ տղաս, շատ էլ կուզեմ գործել...

Ու կրկին լռեց։

— Ուստա Աբգար, ախր ինքը՝ մեծ բանաստեղծը կվիրավորվի, երբ մի ուրիշը գործի այդ գործը։ Չէ որ դուք բարեկամներ եք,— նկատեց վարչության պետը։

— Լավ, կգործեմ։ Ո՞վ գիտե, մի գուցե երկու ուրախություն միատեղ տեսնենք,— վերջում, ոտքի կանգնելով ասաց նա։

Ուստա Աբգարի միտքը տարված էր Վարդանով։ Միթե՞ հանգչելու է Սարիբեկի օջախի ծուխը, մտածում էր նա։ Նրա համար ծանր էր մտածել այդ մասին։ Փոխվել էր նաև Հռիփսիմեն։ Ո՞ւր է նրա ուրախ աչքերի փայլը։ Այլևս այնպես հպարտ ու նազելի չէ կեցվածքը։ Մենության ժամերին ուստան նախատում էր ինքն իրեն.

«— Է՜, Աբգար, քիչ ես հետաքրքրվում աղջկանդ վիճակով։ Թող մայրը մնա նրա մոտ, դու կարող ես առանց նրան էլ ապրել»։

Ուստա Աբգարը, որ միշտ իր հարազատների հետ էր բաժանում ուրախությունը, գորգագործական վարչությունից տուն վերադառնալով, խոսք անդամ բաց չարեց այն մեծ պատվի մասին, որին արժանացրել էին իրեն։ Իսկ եթե Վարդանից ուրախալի մի լուր ունենար, որպիսի հանդիսավորությամբ կնշեր այդ օրը...

Ծնողների ներկայությունը, որ առաջին օրերին ուրախություն էր պատճառում Հռիփսիմեին, սկսեց ճնշող դառնալ։ Ինչո՞ւ նրանք այնքան շատ են խոսում իր մենակ լինելու մասին, ինչո՞ւ հայրը օր-օրի վրա ավելի մռայլ է դառնում։ Միթե՞ նրանք որևէ ստույգ բան գիտեն Վարդանի մասին և այն թաքցնում են իրենից։ Երևի եկել են մխիթարելո՞ւ։ Մի գուցե նրանք վերջացա՞ծ են համարում ամեն բան և կրկին փորձելու են իրենց հետ տանել իրեն։ Դառը մտքերը կրկին ալեկոծել սկսեցին երիտասարդ կնոջ սիրտը և նա սկսեց դժկամություն ցույց տալ, ավելի ուշ վերադառնալ լաբորատորիայից։

3.

Ուշ երեկո էր։ Ուստա Աբգարը սեղանի մոտ նստած կարդում էր օրվա թերթը։ Հնչեց դռան զանգի ձայնը։

— Ո՞ւմ եք ուզում,— դռան մոտ տեսնելով բարձրահասակ, անծանոթ մարդուն, հարցրեց պառավը։

— Հռիփսիմե Աբգարովնային։ Արդյոք նա տա՞նն է։

— Տանն է, համեցեք,— վարանոտով պատասխանեց մայրը։— Ի՞նչ է, գործարանի՞ց եք։

— Ոչ մայրիկ։ Անձնական գործ ունեմ հետը։

Ուստան միջանցքում խոսակցության ձայներ լսելով, գլուխը բարձրացրեց լրագից։ Դռների մեջ երևաց Երվանդը՝ գլխարկը ձեռքին։ Նա խոնարհորեն ողջունեց ծերուկին։

— Ողջույն պապաշա։ Երևի չճանաչեցիք։ Ես...

Ուստա Աբգարը խայթվածի նման վեր թռավ նստած տեղից։

— Յա։ Դու էստեղ,— հազիվ կարողացավ արտասանել նա։

Այդ պահին իր ննջարանի դռների մեջ երևաց Հռիփսիմեն։

— Տո սա երա՞զ է,— դողդողացող ձայնով հարցրեց ուստա Աբգարը։

— Ի՞նչ երազ, պապա։ Միթե չճանաչեցիր։ Ինժեներ Երվանդն է։

— Յա՛, դեռ խոսում ես, ի՞նչ գործ ունի քո տանը։

— Ես, պապաշա, գործով անցա։ Եկա, որ շնորհավորեմ Հռիփսիմե Աբգարովնային։

— Դու իմ անունս մի տու, ինձ հետ գործ չունես, երեսը նրանից դարձնելով մոլտաց ծերուկը և ֆրկին ձեռքը վերցրեց լրագիրը։

Հռիփսիմեն մոտեցավ Երվանդին։

— Համեցեք, նստեք Երվանդ Վառլամովիչ։

Երվանդը շնորհակալություն հայտնելով, նստեց առաջարկած աթոռին։

— Ի սրտե շնորհավորում եմ Հռիփսիմե Աբգարովնա։

— Էլի իմ անունը...,— ատամների արանքից փնչաց ուստան։

Երիտասարդ կինը նշանակալից հայացքով նայեց հորը։

— Իսկ ինչ առիթով եք շնորհավորո՞ւմ ինձ, Երվանդ Վառլամովիչ։

— Միթե՞ չեք լսել։ Նոր, միայն մի ժամ առաջ ռադիոն հաղորդեց Սնունդ Արդյունաբերության աշխատողներին շքանշաններով պարգևատրելու մասին։ Ձեզ ևս պարգևատրել են «Պատվո նշան» շքանշանով։ Շնորհավորում եմ։

— Զգացված եմ։

Երվանդը ոտքի կանգնեց։

— Ո՞ւր,— հարցրեց Հռիփսիմեն։

— Շտապում եմ, սիրելիս։ Հարկավոր է ինստիտուտ գնալ։

— Սիրելիս, չէ մի...,— անսովոր ձայնով գոռաց ուստա Աբդարը և ձեռքը խփեց սեղանին,— իմ աղջիկը քո սիրելին չի կարող լինել, որտեղից եկել ես, էնտեղ էլ գնա,— ցույց տալով դուռը ֆշշաց նա։

Հռիփսիմեն սոսկաց հոր խոսքերից։

— Հայրիկ, միթե՞ կարելի է։ Նստեցեք խնդրեմ Երվանդ Վառլամովիչ,— մի գավաթ կոնյակ անուշ արեք։— Այդ ասելով նա փուքիկոտ քայլերով մոտեցավ պահարանին։

Թեյամանը ձեռքին ներս մտավ մայրը։

— Շնորհակալ եմ, Հռիփսիմե, շտապում եմ։

— Ինչի կվռազեք։ Նստեք թեյ խմենք,— անծանոթի խոսքերը լսելով ասաց մայրը։

— Ձեզանից ես շնորհակալ եմ։

Երվանդը դիմեց միջանցքը տանող դուռը, Հռիփսիմեն հետևեց նրան։ Արդեն միջանցքում նրանք լսեցին ծերունու հոխորտանքները։

— Թե նամուսով կնիկ լիներիր շայնիկը գյադի գլխին կզարկեիր, իսկ դու՝ «խնդրեմ, նստեք թեյ խմեք»։

— Քա, ո՞վ էր,— զարմացած հարցրեց կինը։

— Այդ հանողը։

Արտասանդուղքի գլխին Երվանդը բաժանվեց Հռիփսիմեից։

— Հայրդ նույնն է մնացել,— ասաց նա։

— Նույնն էլ կմնա,— նրա պարզած ձեռքը սեղմելով պատասխանեց Հռիփսիմեն։— Խնդրում եմ ներող եղեք։

4.

Միջանցքում Հռիփսիմեն լսելով հոր կատաղած խոսքերը, դռան մոտ կանգ առավ։ Բռնելով ճակատը, նա հենվեց պատին, խորը հառաչեց։

Ուստան բարկացայտ գոռում էր.

— Քեզ ասում եմ աղջիկդ սիրեկան է խաղացնում։

— Բերանդ խերով բաց, ամոթ է, ինչ ես ձենդ գլուխդ գցել,— խուլ ձայնով խրատում էր կինը.— Էդ էր պակաս։ Ինչ վատ բան տեսար։ Վարդանի հին ընկերն է, համ էլ դու ես ասում եկել էր աղջկանդ շնորհավորելու։

— Տո, դու ինձ ես խրատում։ Վայ Աբգարի գլուխը մեռնի, որ կնիկն էլ նրան խելք պիտի սովորեցնի։ Քեզ ասում եմ՝ աղջիկդ սիրեկան է պահում։

— Սո՛ւս, սո՛ւս, անիրավ։ Սավսեմ խելքդ թոցրիր։

Հռիփսիմեն այլևս համբերել չկարողանալով, զայրագին բաց արեց դուռը։ Ուստան լսելով կնոջ վերջին խոսքերը, ցատկեց նըստած տեղից, մի ձեռքով բռնելով կնոջ օձիքից, իր հսկայական բռունցքը բարձրացրեց նրա վրա.

— Ի՞նչ է պատահել, հայրիկ, այդ ում վրա ես ձեռք բարձրացնում։

— Յա, տո դու էլ ես իմ վրա խոսում,— բացագանչեց Ուստան,— թե, որ էդպես է, ես գնացի։

Աղջիկը դողաց։

— Ինչ եմ արել, ինչ եմ արել,— հեկեկաց նա։— Ինչո՞ւ եք խավարացնում օրս։

Մայրը մոտեցավ նրան, թեվը մտած տարավ նրան իր ննջարանը։

— Դե, ես գնացի։ Էս տունը այլևս խորթ է ինձ համար։ Երկու ժամից հետո կգամ, մեր ունեցած չունեցածը կապիր։ Թե դու էլ չես ուզի գալ, քեզնից էլ դատարկ կնստեմ։ Ինձ Աբգար կասեն, ես է՛լ աղջիկ չունեմ. ես թքել եմ հարամ կաթնակերի վրա, մարդը դուշմանի դեմ է կռվում, ինքը ուրիշին է սիրում,— այդ ասելով նա այնպես թափով դուռը փակեց իր ետևից, որ պահարանում ամանեղենը զնգզնգաց։

— Օֆ, տրաքվեց սիրտս,— լսելով փակվող դռան զարկը մորմոքաց կինը։— Էս երկնային պատիժ էր, որ մեր գլխին եկավ...

— Ի՞նչ եմ արել, ասեք մեղքս, ի՞նչ եմ արել,— հուզմունքից ու արտասուքներից խեղդվելով ճչաց Հռիփսիմեն ու գլուխն առավ ձեռքերի մեջ։ Ինչ է, ես իրավունք չունե՞մ մարդկանց հետ խոսելու։

Մայրը սրբեց աչքերը։

— Ով է ասում, որ իրավունք չունես։ Հերդ ճիշտ է ասում, ի՞նչ գործ ունի Երվանդը քո տանը։ Իսկ եթե վաղը մարդդ գա։

— Ես խոմ նրան չէի խնդրել։ Կամ էլ նա ինչ է արել։ Որպես հին ծանոթ, եկել էր շնորհավորելու։ Մի՞թե՞ այդ հանցանք է։ Սիրտս այլևս չի դիմանա այս բոլորին։ Ամբողջ պատերազմի ըն-

թացքում միայն մեկ անգամ բախտ վիճակվեց ուրախանալ, էն էլ սևացրիք գլխիս։

Եվ այլևս չկարողանալով զսպել իրեն, Հռիփսիմեն ազատություն տվեց արտասուքներին։

Մայրը հորդորում էր նրան.

— Հերդ տեղ էլ չի գնա, արխեին մնա։ Մենք նամուսի համար մեռած մարդիկ ենք։ Հորդ էլ մի մեղադրի։ Նա էդպես բան տանողը չի, որ տամարը բռնեց, նա սատանեն էլ թարս կհեծնի։ Դու հանդըստացիր աղջիկս, ես նրա հետ կխոսեմ։

5.

Ուշ գիշերին ուստա Աբգարը ծեծեց տան դուռը։ Կինն շտապեց բաց անելու։ Հռիփսիմեն մոր հետ միջանցք դուրս եկավ։

— Ային-օյինը բերեք, մնացողը չեմ,—գինուց օրորվելով բաց դռան առաջ կանգնած դռռաց նա։

Հռիփսիմեն մոտեցավ մորը։

— Դու տուն գնա,— ասաց նա և բռնեց ամուսնու թևից։

— Էս ինչ օրի ես ընկել։ Մի քիչ, քիչ կխմեիր։

— Դարդիցս եմ խմել, դարդիցս։ Քեզի ասի երթանք։

— Դու հըլա մի ներս արի, այ մարդ։ Ես ամեն բան իմացա, ախր նա Վարդանի ընկերն է...

— Ընկե՞ր,— ուստին ցնցեց անասելի քրքիջը,— տո, ընկեր ասիր, վայ քո միամիտ գլխին, սիրուն կնկա հետ ամեն ջահել էլ ընկերություն կանի։ Բա էդ շան ծիծ կերածը ինչո՞ւ չէր երևում, քանի ասլան փեսաս կռիվ չէր գնացել, հ՞ը։ Դե՛ խոսիր, ինչո՞ւ լեզուդ փաթ ընկավ։

Միշտ բարի, կարճահասակ, սիրունատես ծերունու դեմքը կարմրել էր գինուց, նա խոսելիս խռխռում էր, ցուցահանելով վզի երակների լարվածությունը, որոնք կարծես կարմրած մաշկի տակ ոլորված ճիպոտներ լինեին։

— Ընկեր, բա՛։ Տո ես նրան դրողի ծոցը կուղարկեմ։

Կինն աղաչանքով ներս տարավ մարդուն։ Հռիփսիմեն տեսնելով հոր վիճակը սփրթնած դեմքով անկյունում կանգնած մտածում էր՝ ինչպես կարող է փոխվել մարդը։ Հարազատ հայրը իրեն է նայում թշնամական հայացքով, ուզում է հեռանալ այն տնից, որը

մի ժամանակ նրա ուրախության վայրն էր։ Ուրեմն խորն էր հոր վիշտը։ Երվանդի երևալը վիրավորել էր նրա հպարտ ինքնասիրությունը, տրորել սրտի ամենանուրբ լարը...

— Ուրեմն դու էլ չես ուզում գա՞լ,— կրկին ոտքի կանգնելով գոռաց ուստան,— լավ, քեզանից էլ դատարկ կնստեմ։

Երբ հայրը օրորվելով գնաց դեպի դուռը, Հռիփսիմեն ընկավ նրա առաջ։

— Միթե՞ ինձ չես սիրում, հայրիկ։

— Հեռու ինձանից, դու հոգեախպորս տղի պատիվը գետնովն ես տալիս։ Ես է՛լ աղջիկ չունեմ։

Հռիփսիմեն սկսեց հեկեկալ, ծնկի եկավ նրա առաջ։

— Հայրիկ ջան, քո արև, Վարդանի արևը վկա, ոչինչ չկա մեր մեջ, նա պատահական եկավ։

— Չեմ ուզում, չեմ ուզում, որ նա էս օջախը ոտք դնի։

— Չի դա, հայրիկ ջան, էլ չի գա, ես թույլ չեմ տա։

Մայրը բարձրացրեց աղջկան։

— Բավական է,— զայրույթով նայելով ամուսնու կարմրած դեմքին, լացակումած ասաց նա,— տանջեցիր երեխիս։ Հանգստացիր։

— Հիմա կհանգստանամ,— վերստին իր տեղը նստելով և ծանր տնքալով ասաց նա։— Ասա՛, Հռիփսիկ, նա էլ էս տունը չի մտնի հա։

— Երդվում եմ, հայրիկ, իմ մասին այդ կարծիք ունենալը հանցանք կլինի սրտիդ համար։ Այո, նա էլ այս տունը չի մտնի։

Հռիփսիմեն հանեց հոր գլխարկն ու վերարկուն։

— Լիմոնով չայ խմի, կհանգստանաս,— ասաց կինը։

— Շնորհակալ եմ պատվիդ համար, երկուսիդ էլ շնորհակալ եմ։ Վա՜յ, վա՜յ Աբգար, դու էս աշխարքում էլ ապրելու իրավունք չունես։

Ուստան գլուխը դնելով սեղանին սկսեց հեկեկալ։ Նրա նիհար ուսերը ցնցվում էին, կարծես ներսում մի բան էր քանդվում։

— Բերեք, մի Վարդանիս նկարը բերեք տեսնեմ, որ սիրտս հանգստանա։

Վարդանի զինվորական համազգեստով նկարը դեմը դրած նա երկար ժամանակ լալիս էր ու խոսում նրա հետ։

— Նշանիդ մեռնեմ, ազիզ ախպոր տղա, թե սաղ ես, մի ձեն

հանի։ Ախր, մենք քեզ համար ենք տանջվում, դու մեր համար դնացիր, գոնե մի ժառանգ թողած լիներիր...

Լուսադեմին Վարդանի նկարը կրծքին դրած ուստա Աբգարը քուն մտավ։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ Ա.ՌԱՋԻՆ

1.

Ծնողների հեռանալուց հետո էլ Հռիփսիմեն երկար ժամանակ չէր կարողանում հոգեկան հանդիստ գտնել այն ծանր հարվածից, այն բուռն ապրումներից հետո, որ ունեցել էր այդ օրերին։

Հայրը նրանից բաժանվեց արտաքուստ ցույց տալով, որ մոռացել է Երվանդի հետ պատահածը, սակայն Հռիփսիմեն գիտեր, որ կրկին թունավորեց հարազատների կյանքը։ Որքա՞ն է տանջվելու մայրը։ Բայց ի՞նչ կարող է անել ինքը։ Ինչպես նրանց սրտից հանի կասկածը։ Եվ այդ տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Երվանդի սերը մայրամուտ էր ապրում իր սրտում, իսկ նորածագ արեգակի նման ճառագում է Վարդանի սերը։ Ոչ, ո՛չ, ծնողները պարտավոր են հավատալ իր անկեղծությանը։ Այլևս չկա իր համար Երվանդը։ Կա Վարդանը և ինքն սպասելու է նրան։ Այո, նա չի հեռանա այն մարդկանց շրջանից, ուր նրա անունը հնչում է որպես նվիրական սիրո արտահայտություն, այն մարդկանց շրջանից, որոնք ատում են կեղծիքն ու խաբեությունը, որոնց հոգիները պարզ են և խոհերը պայծառ, որոնք տագնապի դաժան օրերին հայրենիքին, նրա պաշտպաններին տվեցին այն, ինչ թանկ էր իրենց սրտին, հրաժարվեցին հանգստից։ Նա չի հեռանա այդ մարդկանց շրջանից և հույսը սրտում կսպասի ամուսնուն, որ նա դա, վայելի իր սերը։ Ինքը՝ Հռիփսիմեն երբեք պատճառ չի դառնա, որ Վարդանն իր հպարտ գլուխը կախի մարդկանց առաջ։

Երկար խորհելուց հետո Հռիփսիմեն ծնողներին գրեց հետևյալ նամակը։

«... Իմ սիրելի հայրիկ, և անգին մայրիկ ջան։

Ձեր գնալուց հետո էլ սիրտս ցավում է, չեմ կարողանում հանգստանալ։ Իսկապես, ինչպե՞ս պատահեց այս բոլորը։ Ես չեմ կարողանում հաշիվ տալ ինձ։ Ես կցանկանայի, որ դու, հայրիկ

ջան, չմնայիր այն թյուր կարծիքին, որը, գիտեմ, հիմա էլ տանջում է քեզ։ Իմ մասին մի մտածիր այդպես. այդ հանցանք է։ Ես ձեր աղջիկն եմ և դուք պարտավոր եք հավատալ ինձ, իմ ազնվությանը։ Այժմ ինձ համար Վարդանի անունն է նվիրական։ Եթե ես չսիրեի և չհասկանայի Վարդանին, ապա չէի գնա գործարան, չէի մոտենա այն մարդկանց որոնք իրենց հոգով ու գործերով նոր հույս ներշնչեցին, կյանքի կոչեցին ինձ։ Դառն է ինձ համար, շատ դառն է մտածել, որ հայրը հարազատ աղջկա օջախից հեռացավ կասկածը սրտում և այժմ էլ մտածում է այն մասին, թե նա անհավատարիմ է գտնվել հայրենիքի պաշտպանի նկատմամբ։ Հանիր այդ կասկածը սրտիցդ հայրիկ, և համոզված եղիր, որ ես անմեղ եմ։

Իմ անգին մայրիկ, շատ ես տանջվել իմ պատճառով, շատ անքուն գիշերներ ես լուսացրել։ Սիրտս կտրտվում է, երբ հիշում եմ տանջված դեմքդ։ Մամ ջան, մի մտածիր իմ մասին, հարամ չեմ անի այն կաթը, որ տվել ես ինձ։ Մի մտածիր և Վարդանիս մասին։ Սիրտս ասում է, որ նա կա և կգա ու դրա համար էլ ես չեմ տրխրում։ Ինչ օգուտ տխրությունից։ Շուտ-շուտ նամակ գրեք ինձ, միք տանջվի ինձ համար։ Եթե Վարդանից որևէ նոր տեղեկություն ստանամ, կհայտնեմ ձեզ...»։

Հռիփսիմեն Տիգրանուհուց դաղտնի պահեց հոր և Երվանդի միջև պատահածը։

2.

Գործարանում, լաբորատորիայում շարունակվում էր լարված աշխատանքը։ Որքան մոտենում էր պատերազմի հաղթական վախճանի օրը, մարդիկ այնքան ավելի ջերմ սիրով էին շրջապատում Հռիփսիմեին։ Հռիփսիմեն արտաքուստ հանգիստ ու խաղաղ էր պահում իրեն։ Նա ցույց չէր տալիս սիրտը կրծող ծանր վիշտն այն մարդկանց առաջ, որոնց համար թանկ էր Վարդանի անունը։ Նա սկսեց հաճախակի լինել Տիգրանուհու մոտ։ Հռիփսիմեին սիրով ընդունում էին ընկերուհու ամուսնու ծնողները, որոնք իրենց պարզ խոսքերով ցանկանում էին ամոքել երիտասարդ կնոջ սիրտը։

— Աշխարհ է, պատերազմ։ Աշխարհ՝կմնա, պատերազմ՝կվերջանա ու մեր զարիբները տուն կգան,— ասում էր ծերուկը, շրջիկացնելով համրիչի հատիկները, կարծես իր մտքերն էր հաշվում համաչափ շրխկոցի հետ։

— Մի օր էլ մեզ համար արև կդարկի,— խրատում էր պառավը։

Եվ Հռիփսիմեն սիրով լսում էր նրանց խորհուրդները։

— Մի տխրի աղջիկս, լեն պահի սիրտդ, քո էրիկն էլ կգա։

— Ինչ կանեիր մայրիկ, եթե հանկարծ դուռը բացվեր ու ներս մտներ Հակոբդ։

— Ինչ կանեի։ է՜, որդի՛։ Աշխարքի չափ կուրախանայի, կելնեի նրա ոտքերը կսպագնեի։ Ո՞վ գիտե ինչեր կանեի։ Թող մի բարի խաբար գա, կյանքս էլ մատաղ կանեմ նրան։

Եվ եկավ այդ բարի լուրը։

Երկու ընկերուհիները նստած Հռիփսիմեի տան դեղատեսիլ պատշգամբում զրույցով էին տարված, երբ Տիգրանուհու ութնամյա տղան հևասպառ կանչեց.

— Մամա, շուտ հասիր, պապայից թուղթ եկավ։ Պապան գալիս է, տատի ուշքը գնաց, պապը վռազ կանչում է։

Երկու ընկերուհիներն իրար նայեցին։ Հռիփսիմեն տարածեց թևերն ու գրկեց Տիգրանուհուն։

— Աչքդ լույս, հոգի՛ս, Հակոբդ գալիս է։

Նրանք փողոց դուրս եկան։

— Արե՜ք, արե՜ք, ա բալեք, պառավս ձեռքից գնաց,— տեսնելով նրանց գոչեց ծերունին։

Պառավին ուշքի բերեցին, նա մի քանի կաթիլ ջուր կուլ տալուց հետո, թույլ ձայնով խնդրեց.

— Կարդացեք տղիս գիրը, բարձր կարդացեք, թող աշխարհը լսի։

— Մայրիկ, դե խոսքդ կատարիր,— ծիծաղելով ասաց Հռիփսիմեն,— դե աշխարհի չափ ուրախացիր։

— Կուրախանամ, կյանքս էլ նրան մատաղ կանեմ։ Դու էլ մուրազիդ կհասնես, բալա ջան։

Ծերունիների ուրախությունը, ընկերուհու պայծառ ժպիտը, երեք մանուկների բերկրանքն ու խնդությունը համակել էին և Հռիփսիմեի սիրտը։ Ծանը խոհերը տեղի էին տալիս մտքի զարմանալի պայծառության, հույսի ու սպասումի քաղցրության։

Մի օր էլ Հռիփսիմեն բաց արեց իր մեծ սենյակի դուռը, ետ գցեց կիսատ գործած գորգի վրայից ծածկոցը։ Նայում էր գորգի եզրերին հյուսած վարդերին ու մտքով թռչում հայրական տունը։

Այնպես թարմ ու իրական էին իր գործած վարդերը, կարծես իրենց այգում բուրող վարդերը լինեին դրանք։

3.

Հռիփսիմեի սիրտը այլևս այնպես տխրություն չէր ապրում։

Տիգրանուհին, ամուսնուց լուր ստանալուց հետո, ավելի հաճախակի էր լինում նրա մոտ, այնպիսի ջերմությամբ, այնպիսի հավատով էր խոսում Վարդանի վերադարձի մասին, որ Հռիփսիմեին թվում էր, ինքը չի ստացել ամուսնու ընկերոջ նամակը, որ երբեք էլ ինքը ետ չի ստացել իր գրած նամակները։

Ամեն անգամ, երբ լաբորատորիա էր մտնում, կարծես մի աներևույթ ձեռք սրբում էր դեմքի տխրությունը։ Պայծառ ժպիտից փայլում էր նրա դեմքը, սիրով ողջունում էր ընկերուհիներին, մասնակցում նրանց զրույցներին։ Հռիփսիմեին չէր մոռանում Արևհատը, երկու-երեք օրը մեկ անգամ նա հայտնվում էր լաբորատորիայում մի քանի բոպեով, հարց ու փորձ անում, հետաքրքրվում նրա առողջությունով։

— Հռիփսիմե ջան, ախր ինչո՞ւ չես գալիս մեր տունը։ Մայրիկս շատ է ուզում քեզ տեսնել։ Մի բան էլ կա, որի մասին չեմ ասում։ Երբ կգաս, կասեմ։

Մի օր էլ Հռիփսիմեն հայտնվեց Արևհատենց տանը։

Արևհատի մայրը ուրախությունից փայլող դեմքով գրկեց, համբուրեց երիտասարդ կնոջը, կարծես իր հարազատը լիներ նա։

— Արի, գնա, ուրախացիր, ինչ կարիք կա տխուր լինելու,— ասում էր նա։

Արևհատը սեղանի վրա դրեց նկարների փայլուն կազմով ալբոմը։

— Տես, թե որպիսի մտերիմներ են եղել Վարդանն ու Սահակը։

Հռիփսիմեն խորին հետաքրքրությամբ նայում էր լուսանկարների շարքը. ահա նրանք տասնամյա մանուկներ, գրքերը ձեռքներին նկարվել են մանկատան շենքի աստիճանների վրա։ Երկրորդ նկարը՝ դարձյալ նրանք պատանեկական պայծառ դեմքերով։ Ահա և մի ուրիշ նկար։ Որսորդական հրացաններով զինված երկուսով կանգնած են Սևանի ժայռոտ ափին ու բարձրացող ալիքն է թա-

վալվում նրանց ոտքերի տակ։ Եվս մի նկար ... Հռիփսիմեն ավելի խոնարհեց գլուխը։ Միթե՞ աչքերը չեն խաբում իրեն. ռազմական օդանավի կողքին կանգնած են երկուսը զինվորական համազգեստներով։ Վարդանի կրծքին զույգ շքանշաններ։

Նա բարձրացրեց գլուխն ու նայեց Արևհատին։

— Հետաքրքիր է։ Ես այս նկարը չեմ ստացել։

Ուշ երեկոյան Հռիփսիմեն հրաժեշտ տվեց իր նոր բարեկամներին։ Մինչ կենտրոնական հրապարակը նրան ուղեկցում էր Արևհատը։

— Մի մոռանա մեզ։ Տեսար մայրիկս ինչպես էր խնդրում։ Միթե՞ այդ նկարները տեսնելուց հետո ինքդ քեզ հարց չտվեցիր, թե այդ ինչպե՞ս է, որ Վարդանն ու Սահակը այդքան մոտ ընկերներ են եղել, իսկ մենք երկուսով նրանց այստեղ եղած ժամանակ նույնիսկ միմյանց չէինք ճանաչում։

— Այո, տարօրինակ է։ Դու ինձանից շատ ես ապրելու, ճիշտն ասած, ես էի ուզում այդ հարցը տալ քեզ։

— Ըստ էության շատ անհաճո է ընկերների բաժանման պատմությունը։ Այդ կապված է և քեզ հետ։ Կարծեմ ճանաչում ես Երվանդ Սալյանին։

— Ճանաչում եմ։

— Երվանդը, Վարդանի ու Սահակի ամենամտերիմ ընկերներից մեկն էր։ Մի օր նա շրջանից մեզ մոտ եկավ և պատմեց, որ իբր Վարդանը մոռանալով ամեն ինչ, ոտնահարելով ընկերական սրբությունը, տիրել է իր սիրածին, այսինքն քեզ։ Այդ շատ զայրացրեց Սահակին։ Եվ ահա երկու ընկերներ հանդիպում են։ Սահակը նույնիսկ չի ուզում լսել Վարդանին, նա իր խոսքերով վիրավորում է նրա ինքնասիրությունը։ Վարդանն էլ իր հերթին անպատվում է նրան։ Այդ օրվանից նրանք բաժանվեցին։ Սահակը գործարանում աշխատում էր կադրերի պատրաստման գծով։ Երբ Վարդանը նշանակվեց դիրեկտորի տեղակալ, նա չցանկացավ աշխատել Վարդանի հետ։ Շատ ընկերներ միջամտեցին, սակայն նրանց մտերմական հարաբերությունն այնպես էլ չվերականգնվեց։ Ինչպես տեսնում ես, ռազմաճակատում նորից գտել են իրար, և ես շատ ու շատ ուրախ եմ դրա համար։

Հռիփսիմեն լուռ մնաց։

— Վարդանը մեզ բոլորիս համար մնում է թանկագին բարե-

կամ, և մենք էլ այսուհետև կլինենք հարազատ քույրեր,— ավելի կիպ թևանցուկ անելով Հռիփսիմեին, իր միտքն ավարտեց Արևհատը,— դու համաձա՞յն ես դրան։

Հռիփսիմեն ժպտաց։

— Ես շատ ուրախ եմ անկեղծությանդ համար,— ասաց նա,— սակայն կցանկանայի փարատել թյուր կարծիքը։ Վարդանը Երվանդից չի խլել նրա սիրածին, նա այնքան աղնիվ էր, որ չէր կարող ոտնահարել ընկերական սրբությունը։

Արևհատից բաժանվելուց հետո տխրությունը կրկին համակեց Հռիփսիմեի սիրտը։ Մի՞թե ես չեմ կարող գեթ մի վայրկյան ուրախ լինել։ Մինչև ե՞րբ ուրվականի նման իմ ետևից շրջի Երվանդը։ Չէ որ նա կարող է սիրել մեկ ուրիշին, մտածում էր նա։

4.

Պատերազմի մոտալուտ վախճանի և հաղթանակի մասին գործարանում մարդիկ սկսեցին ավելի հաճախակի խոսել և ամեն մի սիրտ, որ ապրել էր վիշտ ու զրկանք և հաղթանակ էր երազել, սպասում էր այդ օրվան։

Այդ օրվանը լի հույսով ու հավատով սպասում էր և Հռիփսիմեն։

Մի օր, երբ Հռիփսիմեն աշխատանքից տուն էր վերադառնում, ակամտես եղավ բակում բարձրացած աղմուկի։ Ներքևի հարկի սենյակի զույգ պատուհանների առաջ խռնվել էին մարդիկ։

— Ի՞նչ է պատահել,— մոտենալով այդ հարկում ապրող բժշկի հաստլիկ կնոջը, հարցրեց նա։

— Մի՞թե չեք լսել։

— Նո՞ր բան է։

— Հիմա նոր բաներ ամեն օր և ամեն մի փողոցում են լինում,— սեղմելով նրա ձեռքը ուրախ կատակեց հաստլիկը,— մեր դունապանի որդին, որից վաղուց, շատ վաղուց լուր չկար, հայտնվել է Հարավ-Սլավիայում։ Ծնողներին գրած նամակում նա հայտնում է, որ ինքը ողջ և առողջ է, շուտով տուն կգա։

Բժշկի կինը այդ ասելով անուշ ժպտաց, սակայն Հռիփսիմեի դունաթափվելն ու հուզմունքը նկատելով չկարողացավ շարունակել միտքը։

— Ի՞նչ պատահեց ձեզ, Հռիփսիմե Աբգարովնա,— քաղաքավարությամբ բռնելով նրա թևը ասաց նա,— գնանք մեզ մոտ, հանգստացեք խնդրեմ։

— Շնորհակալ եմ,— հազիվ շշնջալով պատասխանեց Հռիփսիմեն,— ինչ որ վատ զգացի։

— Այդ թուլության նշան է, երևի շատ եք աշխատում։

Հռիփսիմեն ներողություն խնդրելով երերուն քայլերով հեռացավ նրանից։ «... Կռվել է հարավսլավյան բանակում և շուտով տուն է գալու...», կարծես դեռ ականջում հնչում էին հաստլիկ կնոջ խոսքերը, հետո մտքերն սկսեցին խառնվել։ Այդ ի՞նչ նախազգացում էր, որ ինքն ունեցավ, ինչո՞ւ այդ լուրը լսելիս, այնպես արագ բաբախեց սիրտը...

Ողջ գիշեր նա մտածում էր դռնապանի որդուց ստացված նամակի մասին։

Առավոտյան Հռիփսիմեն հայտնվեց ուրախությունից խենթացած ծերունիների մոտ։ Շնորհավորեց նրանց, ապա խնդրեց նամակը, որ սիրով նրան հանձնեց պառավը։

— Առ, կարդա, ես սրա գրողի ոտի տակին հողը պագնեմ, մի տես, ինչ է գրել ասլան բալաս։ Տառոցը քո մարդուն լինի, որդի։

Այո, նամակը Հարավ-Սլավիայից էր, զարմանալի ուրախ նամակ էր։ Հռիփսիմեն մի քանի անգամ հուզմունքով կարդաց այն։ Պայծառ ու գերող ժպիտը դեմքին, ծերունիների տանից դուրս եկավ Հռիփսիմեն։ Նրա հոգին լաց չէր լինում այն օրերի պես, երբ դեռ պատերազմ չէր գնացել Վարդանը, մի զմայլանք էր պարուրել նրա էությունը։ Հույսը ջերմ շողերով էր տաքացնում նրա սիրտը։ Շատ էր կարոտել Վարդանին։ Ինչպե՞ս ինքն ուզում է, որ նորից կրծքի տակ հարազատ ու մոտ զգար այն զարկը, որ զգաց ամուսնական երկրորդ տարում։ Օ՜, եթե գար Վարդանը։

Բարձրանում էր իր դեմ Վարդանը խոհը դեմքին, ժպտերես։ Ահա նա ջութակ է նվագում և սիրո մեղեդին է հուզում իր հոգին։ Ահա նա հրացանը գրկած վազում է որսի ետևից և տուն է վերադառնում ընկերների հետ։ Այս ամենը կինո-ժապավենի պես անցնում էր նրա մտքով. մի գուցե և պարտիզան է Վարդանը, մի գուցե երկար մորուք է թողել։ Ինչքան լավ կլինի պարտիզանական տարազով տուն մտնի...

Երբ մի օր Տիգրանուհուն նա պատմում էր իր զգացմունքների մասին, ընկերուհին ասաց.

— Այդ սիրո ուժն, է, որ քեզ հավատ է տալիս։ Ես գիտեմ, որ կա Վարդանը, նա կգա։

ԴԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1.

Եկավ հաղթանակի օրը...

Մայիսյան գիշերը հանգիստ էր, խաղաղ ու խորը, հմայիչ իր խորհրդավորությամբ։

Գիշերվա ուշ ժամին, երբ աստղերն ավելի էին փայլում անհուն ու մութ երկնակամարում, Հռիփսիմեն նստած լաբորատորիայի բաց լուսամուտի առաջ գրանցումներ էր կատարում վերջին անալիզի մասին։ Հանկարծ գործարանի բակում սկիզբ առավ մի անսովոր իրարանցում։ Մեկը մյուսի ետևից լայն բացվեցին լուսամուտները, հետո աղմուկը գնալով սաստկացավ, կարծես մութ գիշերը տեղի տվեց առավոտին և Հռիփսիմեին թվաց, որ ինքը երբեք էլ գիշեր չի ապրել։

Ցնծության ձայները, փողոցները լցվող մարդիկ, հրթիռների խաղը, նվագն ու երգը մի անգամից խառնվեցին իրար։ Կանգնած լուսամուտի մոտ ծառերի արանքից նա նայում էր այդ անսովոր տեսարանին։ Լաբորատորիայի ընդարձակ սրահը վազեցին Արևհատն ու նրա ծեր վարպետը։

— Հաղթանա՜կ, Հռիփսիկս,— գրկելով և ջերմորեն համբուրվելով նրա հետ, բացագանչեց Արևհատը։

— Հաղթանա՜կ, աղջիկս,— ուրախությունից փայլելով գոչեց վարպետը, գրկեց համբուրեց ճակատը, մազերը։

Ծերունկը խենթացած երիտասարդի պես պարեց նրանց առաջ։

— Գնա՜նք, դուրս գնա՜նք,— Հռիփսիմեի թևից քաշելով կանչեց Արևհատը։— Բոլորը փողոց են շտապում։

— Դուք գնացեք, ես կգամ,— հուզմունքից դողալով ասաց Հռիփսիմեն։

Ծերունին ու Արևհատը դուրս վազեցին։ Ներսից խմբերով ներս էին գալիս մարդիկ, սեղմում նրա ձեռքը, շնորհավորում մեծ հաղթանակի համար։

— Կգա և մեր սիրելին,— գրկախառնվելով նրա հետ բացագանչեց լաբորատորիայի վարիչը, որ հաղթանակի լուրը լսելով, գործարանից շտապել էր նրա մոտ։

Երբ ցնծության աղաղակներով մարդիկ հեռացան, Հռիփսիմեն աչքերին սեղմեց թաշկինակը։ Այդ ուրախության արցունքներ էին, որոնց ազատություն տվեց նա։

Վերջացավ ծանր մղձավանջը, մարդկությունը կյանքի նոր դարուն է ապրելու, Հռիփսիմեի շուրթերը ջերմորեն շշնջացին։

— Արդյոք ես կտեսնե՞մ նրան...

Ընդհատելով աշխատանքը, նա ևս փողոց շտապեց։ Քայլում էր բազմամարդ, աղմկոտ փողոցներով և կրծքի տակ թունդ էր առնում սիրտը։ Վերջացավ պատերազմը, հաղթանակով վերջացավ։ Որքան է երազել այդ օրը։

Վեհաշուք էր նրա քայլվածքը, հպարտ էր կեցվածքը։ Աշխարհի ու մարդկանց հետ նա ապրում էր դարուն ու հաղթանակ։ Հույսով ու հավատով լի էր աչքերի պայծառ հայացքը։

2.

Չնայած ողջ գիշերը Հռիփսիմեն անքուն էր լուսացրել, տուն մտնելով նոր զվարթություն զգաց։ Բաց արեց լուսամուտները, դուրս եկավ պատշգամբը, ուր խոնարհված ծառի ճյուղերի վրա, թփերի մեջ, լուսաբացի հետ ճռվողել էին սկսել սարյակները, հետո կարծես մի բան հիշելով ժպտաց, ներս մտավ։ Փոքրիկ սեղանի գզրոցի միջից վերցրեց բանալին, մոտեցավ մեծ սենյակի դռանը, ետ գցեց վարագույրի ծալքը, բաց անելով դուռը ներս մտավ։

— Ի զուր չեմ շարունակում... Կգա նա, հարկավոր է այս նվերը ևս...

Դուռը բախեցին, ապա անհանգիստ սկսեց զնգզնգալ զանգը։ Հռիփսիմեն հանցանքի մեջ բռնված պատանու նման մի վայրկյան վարանած մնաց։ Հետո շտապով կիսադարձ գորգի վրա դնելով նկարը, դուրս ելավ սենյակից, բանալիով փակեց դուռը։ Կրկին ծվծվաց զանգը։ Նա նախամուտք ելավ։

— Ո՞վ է։

— Ով պիտի լինի,— լսվեց Տիգրանուհու ձայնը,— բաց արա, թե չէ դուռդ կջարդեմ։

Դռան բացվելն ու ընկերուհիների գրկախառնվելը մեկ եղավ։

— Հաղթանակ, հաղթանակ բերողներին մեռնեմ,— չդադարելով Հռիփսիմեին համբուրելուց, հուզմունքով ասաց նա։

— Դե, ներս գնանք, տես պատրաստությունով եմ եկել։ Այսօր

տոն է, հաղթանակի տոն, և մենք երկուսով մի լավ պիտի խմենք։

Հռիփսիմեն ծիծաղեց։

— Ուրեմն պատրաստությունո՞վ ես եկել։

— Իհարկե,— սեղանի վրա դնելով գամբյուղը ասաց նա,— մի տես փողոցներում ինչ են անում մարդիկ։ Մենք ումնից ենք պակաս։ Կեսրայրս, երբ լսեց հաղթանակի լուրը, տանից ծլկվեց։ Նոր միայն վերադարձավ։ Խմել է ու հնդկահավի պես ուռել։ Պառավի հետ կատակներ է անում, թոռներին շալակած ման է գալիս բակում։

Տիգրանուհին սեղանի վրա դրեց գինով լի շիշը, կանաչեղեն, եփած միս, պանիր ու մի տուփ ձկան պահածո։

— Դու բաժակներն ու ափսեները բեր,— հրամայեց նա։

Երբ ամեն ինչ պատրաստ էր, երկուսով սեղան նստեցին։

— Հաղթանակի ու հաղթողների կենացը,— գավաթը գլխից բարձր պահելով բարեմաղթեց Տիգրանուհին և մի շնչով դատարկեց այն։

Հետո առանձին առանձին խմեցին Վարդանի ու Հակոբի կենացը, նրանց լավը կամեցողների, ընկերների ու բարեկամների կենացները։ Երգում էր Տիգրանուհին ու նրա մեղմանուշ ձայնը դուրս էր թռչում բաց պատուհաններից, խառնվում փողոցներում զբոսնողների ուրախ երգերին ու աղաղակներին։

Տուն արի՛, շուտ արի՛
Անուշիկ յար ջա՛ն...

Ընկերուհու դնալուց հետո Հռիփսիմեն շմոտեցավ սեղանին։ Խմած մի քանի գավաթ գինին օրորում էր նրան։ Հանվելով մտավ անկողին, սակայն քունը մոտ չէր գալիս աչքերին։ Հոլանի բազուկները դրած հարուստ մաղերով գլխի տակ, հաճելի թմրության մեջ ընկած, երազային աչքերով նա նայում էր ամուսնու նկարին. նրա շուրթերը շշնջացին.

Տուն արի՛, շուտ արի՛...

3.

Հաղթանակի լուրը վերածնեց մայրաքաղաքում ապրող մարդկանց։ Ամենուր շարունակվում էր երգը, ծիծաղը և թվում էր, որ այդ մարդիկ ոչ վիշտ, ոչ էլ զրկանքներ են տեսել, կարծես զարթնել էին կոշմարային երազից հետո։

Գարնանային պայծառ երեկոներից մեկն էր։ Հռիփսիմեն, նստած պատշգամբի կանաչ վրանի տակ, նայում էր փողոցի աշխույժ երթևեկությանը, երբ հնչեց դռան զանգը։

Նա բաց արեց դուռը։

— Կարելի՞ է ձեզ մոտ,— ժպտալով հարցրեց ժողկոմը։

— Խնդրեմ,— լայն բաց անելով դուռը, հուզմունքով ասաց նա։

Հռիփսիմեի ձեռքը սեղմելուց հետո, Վահան Նիկիտիչը կատակով ասաց.

— Հարկ չկա ներկայացնելու այս երկուսին, կարծեմ դուք հին ծանոթներ եք։

Հռիփսիմեն համբուրվեց Սոֆիա Ալեքսեևնայի ու նրա տասնութամյա սիրունատես աղջկա հետ, ապա հյուրերին առաջնորդեց դեպի պատշգամբ։

— Կատարյալ դրախտ է եղել ձեզ մոտ,— ասաց ժողկոմը,— այս կանաչ վրանը արժե ամեն տեսակ դղյակ։ Այստեղ մարդ կարող է շնչել ազատ ու իրեն զգալ բնության գրկում։

— Վարդանն էլ շատ էր սիրում պատշգամբում նստել և հիանալ կանաչ վրանով,— ժպիտով պատասխանեց Հռիփսիմեն։

— Դուք ճշմարիտ եք, Հռիփսիմե Աբգարովնա։ Հավատացեք, որ այդ պատահականություն չէ։ Վարդան Սարիբեկովիչը ծառ ու ծաղկով պատեց և մեր գործարանը։ Օրերս Մոսկվայից հյուրեր էին եկել, նրանք հիացմունքով խոսեցին մեր գործարանի մասին։ Նստ անվանի մի պրոֆեսոր, ի միջի այլոց ասաց. «Ձեր պատրաստած պահածոներից ես վարդի բուրմունք եմ առնում»։

— Ողջունենք այդ,— ասաց Սոֆիա Ալեքսեևնան,— դուք ամեն տեղ խոսում եք պահածոների մասին։ Ես, Հռիփսիմե Աբգարովնա, նպատակով եմ եկել ձեզ մոտ։ Լուրջ կոիվ ունեմ ձեզ հետ։

— Ո՞ր հանցանքիս համար,— ծիծաղելով հարցրեց Հռիփսիմեն։

— Չորս տարուն մոտ է, ինչ Վարդան Սարիբեկովիչը գնացել է պատերազմ, և դուք ոչ մի անգամ շնորհ չեք բերել մեզ մոտ։

— Գիտեք, շատ զբաղված եմ լինում։ Առավոտյան աշխատանքի եմ գնում և վերադառնում եմ միայն երեկոյան, պատահում է աշխատում եմ նաև գիշերները։

— Այդ արդեն պատճառաբանություն չէ,— կարծես կնոջը

օգնության հասնելով, խոսեց ժողկոմը։— Միթե օրերից մի օր ժամանակ չեղավ։

— Դուք միանգամայն ճիշտ եք Վահան Նիկիտիչ,— օրինական հպարտությամբ վրա բերեց Սոֆիա Ալեքսեևնան։

— Այո, այո,— պնդեց իր խոսքը Վահան Նիկիտիչը,— դուք, Հռիփսիմե Աբգարովնա, իրավունք չունեք մոռանալու մեզ։ Ասենք դուք էլ մի փոքր հանցավոր եք Սոֆիա Ալեքսեևնա,— ձայնը ցածրացնելով շարունակեց Վահան Նիկիտիչը։— Դուք ևս պարտավոր էիք տեսության գալ նրան։

Սոֆիա Ալեքսեևնան ու Հռիփսիմեն ծիծաղեցին։

— Գոնե քաջություն ունենայիր մինչև վերջ պաշտպանել ինձ,— սպիտակ պարանոցը սրբելով ասաց կինը։

— Ես արդարամիտ դատավոր եմ։ Երկուսդ էլ հանցավոր եք։ Կարծում եմ, որ այսուհետև դուք, Հռիփսիմե Աբգարովնա, հաճախակի կլինեք մեզ մոտ և մենք էլ ձեզ մոտ, այսինքն առանց ինձ։ Ինձ կներեք, ես զբաղված մարդ եմ։ Սկսվում է աշխատանքի այնպիսի մի ժամանակաշրջան, որ ես գլուխս քորելու էլ ժամանակ չեմ ունենա։

Կրկին հնչեց դռան զանգը։

— Այդ երևի ընկերուհիս է,— ոտքի կանգնելով ասաց Հռիփսիմեն և ներողություն խնդրելով հյուրերից, դուրս ելավ պատշգամբից։

Նախամուտքում լսվեց Տիգրան Սիմոնիչի բասը.

— Ուրեմն մենք ուշացել ենք,— ծիծաղելով ասաց նա,— և այդ էլ քո հանցանքով։ Այ կնիկ, ասացի մի քիչ շուտ դուրս դանք տնից, իսկ դու քոնը պնդեցիր և տես Վահան Նիկիտիչն ու Սոֆիա Ալեքսեևնան մեզանից առաջ են անցել։

Վահան Նիկիտիչը բարձրաձայն ծիծաղեց։

— Բայց ձեր պատշգամբը կտեղավորի՞ իմ գերդաստանը,— ճանապարհ տալով կնոջն ու երեք տղաներին, հարցրեց Տիգրան Սիմոնիչը։

Փոքրիկ տղան պատշգամբում Հռիփսիմեին հանձնեց գեղեցիկ մի ծաղկեփունջ։

— Հաղթանակի ծաղկեփունջ,— ասաց նա ու կարմրեց,— ես եմ գնել ձեզ համար։ Կպահեք, մինչև հորեղբայր Վարդանը դա։

Վահան Նիկիտիչը ծափահարեց։

— Խելոքն է երևում,— ասաց նա։

Մինչև ուշ երեկո հյուրերը մնացին պատշգամբում։ Գնալիս Վահան Նիկիտիչն ասաց.

— Ես այս մի բաժակ թեյն այնպիսի ախորժակով խմեցի, որ կարծես ողջ կյանքիս մեջ առաջին անգամ եմ թեյ խմում։ Հուսանք, որ այս պատշգամբում էլ Վարդան Սարիբեկովիչի հետ շուտով նարդի կխաղանք։

Հյուրերը դնալիս խոսք առին Հռիփսիմեից, որ նա ևս այցելի իրենց...

4.

Հռիփսիմեն ստացել էր ծնողների ուրախ նամակը։

«Մեր ազիզ բալիկ ջան.

Վերջացավ կռիվը։ Աշխարքն ուրախություն է ապրում, դու էլ ուրախացիր, մեր բալիկ։ Գիտես, որ մենք ապրում ենք քո ուրախության ու բախտավորության համար։ Էս տարի էնպես սիրուն ծաղկել են մեր այգու ծառերը, որ կարծես երկնքից ձյուն են թափել ծառերի վրա, անուշ հոտից մարդ չի կշտանում։ Լավ կլիներ մի քանի օրով դայիր, սիրտդ էստեղ ավելի ուրախ կլիներ։ Երկու խնձորի ծառի վրա նշան արինք՝ մեկը քեզ մեկն էլ Վարդանի համար։ Կգաք երկուսով ու ձեր ձեռքով կքաղեք բերքը։

Սիրտդ լեն պահի մեր ազիզ բալիկ, մեծ է աշխարքն ու հույսն էլ շատ։

Քնելու ժամանակ բալկոնի դուռը բաց չթողնես, կմրսես, քեզ լավ պահի։ Թե որևէ բանի կարիք կունենաս, մեզ իմաց տուր։ Երկուսով համբուրում ենք սիրուն թշերդ, նախշուն աչքերդ...

Քո ծնողներ՝ Աբգար և Շողակաթ»։

Հռիփսիմեն ուրախ էր։ Նա նամակը տվեց Տիգրանուհուն կարդալու։ Ուրախ ու գոհ էր, որ ծնողներն ապրում են հաշտ, որ չի սրտասվում մայրը։ Հաղթանակը,— մտածում էր նա,— հաշտեցրեց ծնողների խռոված սիրտը, մի գուցե նոր ուրախություն բերի և իմ սրտին...

Նստած պատշգամբում նա երազում էր այդ ուրախ օրը, երբ

ներքևում մայթի վրա նկատեց Երվանդին, որը շտապով սանդրղքատունը մտավ։ Հռիփսիմեն լսեց և նրա ծանր քայլվածքի ձայները, սակայն անշարժ մնաց։ Հնչեց զանգի ձայնը, նա չբարձրացավ նստած տեղից, խոնարհեց գլուխն ու ընկավ մտքերի ծովը...

Ինչո՞ւ ամեն անգամ, երբ միտքը տարված է լինում Վարդանով, հանդես է գալիս Երվանդը... Միթե՞ ինքը չի տեսնելու նրան, որին երազել է պատերազմի երկար ու ձիգ տարիներին... Այո, այդպես էր։ Չորս տարի առաջ Վարդանը ռազմաճակատ գնաց և այդ չորս տարիներին իր միտքն ու հոգին տարվեցին նրանով։ Ամուսնու հոգու վեհությունը, սրտի մաքրությունն ու պայծառությունը, անկեղծ սերը, նոր զգացումներ, սեր ծնեցին նրա սրտում և Երվանդի ներկայությունը լոկ բորբոքեց Վարդանի նկատմամբ տածած սերը... Խուլ աչքերով նա պատկերացրեց իրար դեմ— հանդիման կանգնած խնձորի զույգ ծառերը, որոնց ծաղիկների բույրը կարծես շնչեց ինքը...

Ոչ, ինքն այլևս չի սիրում Երվանդին և սիրտը տագնապով չխփեց, երբ նա հայտնվեց մայթերի վրա, երբ լսեց նրա քայլվածքի ծանր ոտնաձայները, երբ հնչեց դռան զանգը։ Կարծես մի ներքին ուժ դամեց նրան նստած տեղում։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1.

Ամառային հովասուն երեկոն էր կախվել մայրաքաղաքի վրա։ Հռիփսիմեն աշխատանքից հետո իր սովորության համաձայն նորից նստած էր պատշգամբում։

Չորս տարի առաջ, ճիշտ նույն օրը, երեկոյան այդ ժամին ռազմաճակատ մեկնելուց առաջ կանգնած կանաչ վրանի տակ իր ջութակն էր խոսեցնում Վարդանը։ Նա հիշեց և եղանակը, նուրբ ու գրավիչ էր այն։ Չորս տարի առաջ նրա վերջին նվագի տակ ինքը բարձրացրեց գլուխն ու նայեց նրա դեմքին։ Այո, այդ չորս տարի առաջ էր...

Հնչեց դռան զանգը, Հռիփսիմեն ոտքի կանգնեց

— Էլի նա։

— Դո՞ւ ես Տիգուշ,— դուրս գալով նախամուտք,— հարցրեց նա։

— Բաց արեք դուռը, տիկին։

— Ո՞ւմն եք ուզում։

— Ոսկանյանին։ Հեռագիր ունեք։

— Հեռագի՞ր։ Ո՞ւմնից,— դողացող ձեռքերով բաց անելով դուռը հարցրեց նա։

— Ստորագրեցեք, խնդրեմ։

Հռիփսիմեն աչքն անցկացրեց հեռագիրը։ Նրա թույլ ճիչը ղարմանք չպատճառեց հեռագրատան աշխատակցին։ Նա ուրախ ժպտաց։

— Ստորագրեցեք, խնդրեմ, առանց սրան չի լինի,—իր խնդիրը կրկնեց հեռագրաբերը,— այսօր շատ հեռագրեր ունեմ, շտապել է պետք։

Հռիփսիմեն ինքն էլ չիմացավ, թե ինչպես ստորագրեց ստացման թերթիկը։ Բայց ի՞նչ պատահեց, կարծես սիրտը մի պահ դադարեց գործելուց, ոտքերը չէին հնազանդվում իրեն։ Նա ուզեց մի քայլ անել, չկարողացավ, հեռագիրը կրծքին սեղմած սկսեց հեկեկալ։

Աստիճանների վրա երևաց Տիգրանուհին։ Հռիփսիմեի աչքերի առաջ խառնվեց ամեն ինչ։ Նա ուզեց հիշել այդ դեմքը։ Այո՛, Նա էր, իր ընկերուհին։ Տիգրանուհին գրկեց նրան։

— Ի՞նչ է պատահել, ջանիկս, տագնապով հարցրեց նա։

— Հեռագիր... Առ, կարդա։

— Ո՞ւմնից, Վարդանի՞ց, աստված իմ ճչաց նա։

Հռիփսիմեն դողում էր հուզմունքից։

— Ջուր,— դժդուլն շրթունքների արանքից միայն կարողացավ արտասանել նա։

— Ես քեզ ասում էի, տեսնում ես, իսկ դու լաց ես լինում։ Ուրախանալ է պետք։ Օ՜, ես հիմա քեզանից ավելի բախտավոր եմ։ Վերջ արտասուքներիդ։

2.

— Վեր կաց,— երբ տանն էին, ասաց Տիգրանուհին, քաշելով նրա թևից,— պետք է ուրախացնել մեր բոլոր բարեկամներին, պետք է թնդացնել ծնողներիդ սիրտը։

— Չեմ կարող, չեմ կարող տեղիցս բարձրանալ։ Ինձ թվում է, որ այս երազ է, մտածմունքներիս արդյունք։

Տիգրանուհին արտասուքների միջից ծիծաղեց։

— Երազ, հա՞, հա՞, հա՞, իսկ հեռագի՞րը։ Այստեղ պարզ գրված է՝ «Բելգրադից, ողջ և առողջ եմ, սպասիր նամակի։ Վարդան»։

— Ես կխելագարվեմ,— ոտքի կանգնելով խոսեց Հռիփսիմեն, սիրտս դժվար թե դիմանա այս ուրախությանը։

— Դու դեռ նոր պիտի փայլես,— հիացմունքով խոսեց Տիգրանուհին։

— Տիգուշ, խնդրում եմ ինձ մենակ չթողնես, չեմ կարող մենակ մնալ, աղերսեց նա,— գլուխս դեռ պտտվում է։

— Եթե փայտով էլ ծեծելու լինես, ես այստեղից գնացողը չեմ,— ասաց նա և ապա ձեռքերը կանթելով կողերին հարցրեց.

— Դե, սիրունիկս, ասա, ինչպես ես դիմավորելու նրան։

— Ինչպե՞ս։ Ինքս էլ չգիտեմ։

— Իսկ ես գիտեմ։ Ահա այսպես. մի օր էլ կգա հեռագիր՝ «Դիմավորիր այսինչ օրը, այսինչ գնացքին» և դու կհագնես կապույտ շորդ, թևիդ կկապես ոսկե ժամացույցդ ու կբուրես վարդի նման։ Շրջապատված հարյուրավոր մարդկանցով, որոնց մեջ և կլինեն դեղեցիկ կանայք, որոնք քեզ կնայեն ու կհառաչեն թե ինչու քեզ նման դեղեցիկ չեն, դու կդիմավորես նրան։ Այս, և դու կնաղես։ Վաղոնից ցած կիջնի Վարդանը։ Ահա այսպես,— այդ ասելով նա մի քայլ առաջ եկավ, տարածեց թևերն ու ընկավ Հռիփսիկի գիրկը, համբուրեց նրա աջ այտը ու գլուխը դրեց կրծքին,— ահա այսպես կգրկես նրան և երջանկությունից կփակես աչքերդ։

— Թող, ի սեր աստծո, դու արդեն էքստազի մեջ ես գտնվում, — ծիծաղելով ասաց նա։

— Միթե՞ այդպես չի լինելու։

— Թող դա, կտեսնենք։

— Իսկ այժմ ինձ, Հակոբ մեծի կնոջը հարկավոր է ուրախության բաժակ բարձրացնել։ Ամուսնյակս գրում է, որ շուտով կժամանի քաղաքս։

Մինչ կես գիշեր նրանք զրույց էին անում, հետո հեռագիրը կազմեցին ծնողներին, զատ զատ նամակ գրեցին նրանց։ Տիգրանուհին իր նամակում գրեց. «... այնպես, որ Վարդանը շուտով կգա։ Էն լավ, լավ խնձորներից, տանձերից մի-մի արկղ, համ էլ վարդի մուրաբա կբերեք հետներդ, երբ նոր հեռագիր կտանք...»։

— Լավ բան եմ գրել չէ,—ծիծաղելով հարցրեց Հռիփսիմեին,— Ճիշտն ասած Վարդանը այդ բաների կարիքը չի զգա, բայց իմ սիրտը շատ է ուզում։

Երկուսով էլ ծիծաղեցին։

Ողջ գիշեր Հռիփսիմեն չկարողացավ աչք փակել։

3.

Վարդանից ստացած հեռագրի լուրը գործարանում մարդիկ ընդունեցին ջերմորեն։ Արևհատը, լաբորատորիայի վարիչն ու այնտեղի աշխատողները Հռիփսիմեին դրկում էին, համբուրում։

— Իսկ դու տխրում էիր, թե կորավ մարդը,— ասում էր Արևհատը։

— Մի օր էլ քեզ տեսել են արտասվելիս, ծիծաղելով պատմում էր լաբորատորիայի վարիչը։ Տեսնողն էլ Տիգրան Սիմոնիչն է եղել։ Դու այնքան տարված ես եղել մտքերով, որ նույնիսկ չես լսել դռան բացվելու ձայնը։ Նա ինքը պատմեց ինձ։ Խեղճ մարդն այնպես էր ազդվել, որ ամենքիս էլ նախատինք տվեց. «Դուք,— ասում էր նա,— չեք կարողանում այնպիսի ջերմ ու անկեղծ շրջան ստեղծել, որ Հռիփսիմեն չտխրի։ Այո, ինձ էլ բաժին ընկավ այդ կշտամբանքից։

Հռիփսիմեն ուրախ էր։

— Գիտեք, անկախ իմ կամքից, երբեմն պատահում էր։ Օ՜, շատ դժվար էր։

Երկու օր շարունակ Ոսկանյանների տունը կարծես ուխտատեղի էր դարձել. առաջին օրը նրան այցելության եկավ իր ընտանիքով Տիգրան Սիմոնիչը։

— Կարծում եմ, այս անգամ մենք չենք ուշացել,— շնորհավորելով Հռիփսիմեին, քնատ մարդու ձայնով խոսեց նա,— ժողկոմից էլ առաջ անցանք։ Այո, միթե՞ այդպես չէ, ես նրա ձայնը չեմ լսում։

— Դու պետք է պատրաստվես, սիրելիս,— համբուրվելով նրա հետ ասաց դիրեկտորի կինը,— մեր սիրելուն, Վարդան Սարիբեկովիչին պետք է դիմավորել արժանավայել կերպով։ Չէ՞ որ նա գալիս է։

Հռիփսիմեին շնորհավորելու էին եկել և Վահան Նիկիտիչն ու Սոֆիա Ալեքսեևնան իրենց աղջկա հետ միասին։ Եկել էին Տիգրա-

նուհու ամուսնու՝ Հակոբի ծեր ծնողները։ Ընկերուհու կեսրայրի կատարը տաք էր։

— Բախտդ բացվեց աղջիկս,— Հռիփսիմեի ճակատը համբուրելով ասաց ծերուկը,— գիտես, ոնց ուրախացանք, ոնց որ աշխարքը մեզ տվեցին։— Թու մոռացա, մի բաժակ էլ պիտի խմեի, որ խելքս տեղը գա։

— Ես Վարդանի հոգուն մեռնեմ, բա նա կորող մարդ է,— ասաց պառավը ծալապատիկ նստելով բազմոցի վրա։

Հռիփսիմեն հյուրերին ընդունում էր գրկաբաց, ջերմորեն, ամենքին պատմում հեռագրի բովանդակությունը։

— Սպասում եմ նամակի, տեսնենք որտեղ է գտնվում,— ասում էր նա։

— Մի հեռագիրը տվեք տեսնեմ,— սեղմելով Հռիփսիմեի ձեռքը ասաց Վահան Նիկիտիչը...

— Հեռագի՞րը,— Հռիփսիմեն շփոթվեց,— հեռագիրը գործարանում առան ձեռքիցս, ամենքն էլ ուզում էին իրենց սեփական աչքերով կարդալ այն։

Վահան Նիկիտիչը ծիծաղեց։

— Տեսնում եք, Հռիփսիմե Աբգարովնա, ոչ միայն դուք էիք նրա մասին մտածում, այլ մենք բոլորս։ Կգա Վարդան Սարիբեկովիչը և կգլխավորի նորակառույց կոմբինատի աշխատանքը։ Օ՜խ,— ծանր տնքաց նա,— երանի շուտ գար։ Մի շաբաթ էլ չէի թողնի, որ հանգստանա։

4.

Հեռագրին հաջորդեց Վարդանի նամակը։

«Իմ սիրելի Հռիփսիմե.

Ով գիտե որպիսի դառնություններ ես ապրել այս մեկ տարվա ընթացքում... Բայց հանցանքը իմը չէ։ Ես էլ էի տանջվում։ Ոչ մի հնար չունեի իմ գոյության մասին քեզ հաղորդելու, որ դու չվշտանայիր։

Կարպատյան լեռներում ծանր մարտեր մղվեցին։ Մի գիշեր գրոհի բարձրացավ թշնամին, մեր դեմ հանելով երեք անգամ ավելի ուժեր։ Մեր դեմ սպանիչ կրակ բաց արեցին տասնյակ հրանոթներից, թշնամին տանկերի ու ինքնագնաց հրանոթների պաշտպանության տակ հարձակման անցավ։ Նահանջել մենք չէինք կա-

բող... Բոլոր ուժերը դասավորելուց հետո, հրամայեցի իմ տեղակալին, որ նա պաշտպանվի, իսկ ես ինձ հետ վերցնելով մի դասակ զինված ավտոմատ հրացաններով, գնդացիրներով ու նռնակներով, անցա Թշնամու Թիկունքը։ Մինչ լուսաբաց կռվում էինք։ Լուսաբացին զեկուցեցին, որ մեր շուրջը Թշնամին սեղմում է օղակը։ Պետք էր ելք փնտրել, և մենք պատռելով օղակը դուրս եկանք անտառի մեջ։ Շատ էինք հեռացել մեր ուժերից։ Գտնվում էինք Թշնամու գլխավոր ուժերի Թիկունքում։ Այդ օրվանից սկսվեցին մեր դեգերումները անծանոթ անտառներում ու ճահիճներում։ Ցերեկները պահվում էինք, իսկ գիշերները շարժվում դեպի արևմուտք՝ ճանապարհին դատաստան տեսնելով Թշնամու մանր խմբավորումների հետ։ Մեկամսյա Թափառումներից հետո մի օր մեզ միացան մի խումբ պարտիզաններ, և մենք ծանր փորձություններից հետո միացանք Հարավսլավյան ժողովրդական բանակին։

Այդ օրվանից ձեռք ձեռքի տված նրանց հետ կռվեցինք գերմանական ֆաշիստների դեմ։

Եկավ սպասած օրը։ Մեր խմբավորումը միացավ Կարմիր Բանակի հարձակվող հիմնական զորամասերի հետ։ Մեր միավորման հրամանատարությունն ինձ սիրով ընդունեց։

Սկսվեց կատաղի ճակատամարտը Բելգրադի ազատագրման համար։ Քաղաքի գրավման ժամանակ փողոցային մի կռվում ծանր վիրավորվեցի։ Պառկած եմ նույն քաղաքի զինվորական հիվանդանոցում։

Այժմ այսքանը։ Շնորհավորում եմ քեզ, Թանկագինս, մեծ հաղթանակի համար և երազում եմ մեր մոտալուտ հանդիպումը։

Օ՜, որքան բաներ ունեմ քեզ պատմելու։ Չորս տարի է անցել։ Չորս երկար ու արյունով լի տարիներ։ Թշնամու Թիկունքում, ուր ամեն վայրկյան մահն էր սավառնում մեր գլխի վրա, միշտ դու անբաժան էիր ինձնից։ Սիրտս ասում էր, որ ես կանցնեմ այս կրակների միջով, կլինի հաղթանակ և մենք կհանդիպենք իրար։ Հազար, հազար անգամ համբուրում եմ քեզ, մայրիկին ու հայրիկին, մեր սիրելի Տիգրանուհուն և բոլոր նրանց, ովքեր հարցնում ու հիշում են ինձ։

Քո Վարդան»։

5.

Վարդանի նամակն ստանալուց հետո երբ անցան հուզումնալից ժամերը, Հռիփսիմեն աշխատանքից հետո, դուրս չէր գալիս մեծ սենյակից։ Նա գործում էր կիսատ թողած գորգը։

Ամուսնու նամակը նա ուղարկեց ծնողներին։

«— Սիրելի հայրիկ ու մամա ջան,— գրել էր նա,— ուղարկում եմ Վարդանիս նամակը։ Երբ Վարդանը գալու լինի անպայման դուք էլ կգաք։

Շուտով նա ստացավ ծնողների պատասխան նամակը։

«Մեր բալիկ, սիրունիկ մեր նախշուն Հռիփսիկ ջան.

Կարդացինք Վարդանի նամակն ու ուրախությունից կուշտ լաց եղանք։ Սաղ քաղաքը մեր տունն էր թափվել։ Վերջապես մենք էլ ուրախության արժանացանք, թող էդ ուրախությունը ամենին հասնի։ Ամեն օր իջնում ենք բաղը ու մեր ուրախությունը ձեր երկուսի ծառերն են։ Էնպես են պտղակալել, որ ասել չենք կարող։

Վարդանի նամակն ստանալու օրից մինչև հիմա քեֆի մեջ ենք։

Գնացինք հոգեախպորս գերեզմանը տեսնելու, ծաղկունք սերմեր ցանեցինք։ Վարդանս որ դա հոր գերեզմանը ծաղիկներով զարդարված կլինի։

Ուրախացի, բալիկ ջան, հմի ուրախանալու հերթը մերն է։ Մերդ ասում է դազգահը դուրս գցի, դու գործողը չես։ Մեծ սենյակդ սարքի առջվան պես, որ Վարդանս գա։ տեսնի ու ուրախանա։

Կգրկենք, կհամբուրենք քեզ. կսպասենք քո նոր ուրախությանը։

քո հեր ու մեր՝ Աբգար և Շողակաթ»։

Հռիփսիմեն ծնողների նամակը կարդաց մի քանի անգամ, ժպտաց ինքն իրեն.

— Լավ, տեսնենք մերս, ինձանից գործող դուրս կգա, թե չէ.

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

1.

Վարդանի գալու մասին հեռագիրը ստանալու գիշերը Հռիփսիմեն չկարողացավ աչք փակել։ Նա զբաղված էր դազգահից նոր

դուրս բերած գորգի վրայի ավելորդ թելերը կտրատելով։ Լուսաբացին գորգը մի քանի տակ ծալելով ծածկեց հաստ ծածկոցով։ Վաղ առավոտյան Տիգրանուհու հետ դասավորեցին մեծ սենյակի իրերը...

— Ես այս սենյակը այլևս բաց չեմ անելու մինչև տուն չմտնի Վարդանը,— ասաց նա։

— Վարդանը քեզ է կարոտել և ոչ թե սենյակին,— ծիծաղելով պատասխանեց Տիգրանուհին։

Հռիփսիմեն իր օգնականների հետ գործի անցավ։ Մեծ սենյակի ամբողջ երկայնքով շարվեցին սեղաններ, որոնք ծածկվեցին ձյունափայլ սփռոցներով։

Գիշերը, երբ Տիգրանուհին, Արևհատը և Վարդանի քարտուղարուհի Սոնյան գնացին իրենց տները հանգստանալու, Հռիփսիմեն դուրս բերեց գորգը։ Նախօրոք պատրաստած օղերը հագցնելով մեխերին, հարդարեց այն, հետո փակեց դուռը, իջեցրեց վարագույրները։

Առավոտյան, երբ հայտնվեցին նրանք, Հռիփսիմեն ասաց.

— Ամեն ինչ պատրաստում ենք խոհանոցում, միանգամից ներս կտանենք, երբ բոլորը նստած կլինեն։

— Թող այդպես լինի,— ժպտալով ասաց Արևհատը։

— Մի բան կա, որ թաքցնում ես ինձանից,— թեքվելով ընկերուհու կողմը շշուկով խոսեց Տիգրանուհին։

— Երեք ժամից հետո բաց կանեմ սենյակի դուռը և դու կտեսնես, որ ոչ մի գաղտնիք չունեմ,— գրկելով նրան ասաց Հռիփսիմեն։

— Կայարան գնալու ժամանակը չէ՞,— հարցրեց Տիգրանուհին։

— Երկու ժամից հետո կգա առաջին գնացքը, պետք է դիմավորել ծնողներիս,— ասաց Հռիփսիմեն։

Դրսում լսվեց մեքենայի ազդանշանի ձայնը։

— Դե՞, սիրելի Արևհատ, մենք գնացինք,— բռնելով Տիգրանուհու ձեռքից ասաց Հռիփսիմեն,— կգանք մեծ զորքով։

— Գնացեք, և ոչ մի բանի մասին չմտածեք։ Ես թաց տեղը պառկողը չեմ,— ծիծաղելով պատասխանեց Արևհատը։

2.

Երկաթուղային կայարանում Վարդանին դիմավորելու համար հավաքվել էին ժողկոմատի, գործարանի աշխատողները։ Այնտեղ էին Վահան Նիկիտիչը, Տիգրան Սիմոնիչը իրենց ընտանիքներով և շատ ուրիշներ։

Ծանր փնչոցով կառամատույցի երկրորդ գծի վրա կանգնեց առաջին գնացքը։ Հռիփսիմեն, Տիգրանուհու հետ, ընդառաջ գնաց վագոնից ցած իջնող ծնողներին։

— Աչքդ լույս, բալիկ ջան,— փաթաթվելով աղջկան արտասուքների միջից հազիվ կարողացավ արտասանել մայրը։

— Լաց լինելու ժամանակը չէ,— փնթփնթաց ուստան,— ուրախանալ է պետք,— ասաց նա ու համբուրվելով Հռիփսիմեի հետ, ուրախ ձայնով հարցրեց.

— Քանի օրից հետո է գալու Վարդանս։

Տիգրանուհին ինչ որ բան ուզեց ասել, նա նույնիսկ բաց արեց բերանը, սակայն նկատելով Հռիփսիմեի անհանգստությունը, լռեց։

— Շուտ կլինի, հայրիկ ջան։

— Գիտեմ, որ կգա, համա ասա շուտ գա։ Տաս օր քեֆ եմ անելու հետը։

— Լավացել ես Հռիփսիկ ջան,— գորովանքով ասաց մայրը,— ա՜խ, ինչքան տանջվեցիր, աչքերս քոռանան...

— Էլի վսվսաց, ասի վերջ տուր։ Ուրախանալ է պետք,— ասաց ուստան, ապա դառնալով Հռիփսիմեին ժպտաց,— հմի մշակ կբռնեմ մեր բերածը տանելու, կվռազեմ աղջիկս, կուզեմ շուտ հասնենք տունդ։

Տիգրանուհին բարձրաձայն ծիծաղեց։

— Լավ չե՞մ ասում աղջիկս,— գունավոր թաշկինակով քրտնած դեմքը սրբելով հարցրեց ուստա Աբգարը։

— Մի վռազի, մի, շատ չի քաշի՝ փեսայիդ հետ կխմես,— այլևս չկարողանալով իրեն պահել, փաթաթվելով հորը ասաց Հռիփսիմեն։— Մի ժամից այստեղ կլինի Վարդանը։

— Յա՜, Շողակաթս, լսեցի՞ր ինչ ասավ։ Վարդանս Բաքվի պոյեզով է գալիս, ուր որ է էստեղ կլինի։

Այդ լուրը անհուն հրճվանք պատճառեց ծերունի գորգագոր-

ծին։ Նա մոռացավ մշակ կանչելը, ինքն սկսեց բերած ճամբրուկները փոխադրել։

— Տեսնում ես, մամ ջան,— մտնելով մոր թևը ասաց Հռիփսիմեն,— որքան մարդիկ են եկել Վարդանին դիմավորելու։

— Հա, բալա ջան։ Վարդանը բոլորի համար ազիզ մարդ է։ Բա հաղթող մարդուն էլ ի՞նչպես կդիմավորեն։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1.

Մինչդեռ կայարանում հավաքված հարազատները խնդությունով համակված հաշվում էին մոտեցող յուրաքանչյուր վագոնը, փոխգնդապետ Ոսկանյանը, կանգնած վագոնի բաց լուսամուտի առաջ, կարոտած հայացքով դիտում էր գնացքի դեմը պտտվող Արարատյան դաշտավայրը, ուր մարմանդ ծուխն էր բարձրանում շեներից, այդիներում բերքով իմաստավորվում էին ծառերը, կանոնավոր շարքերով դեպի վեր էին ձգվել բամբակենու ազնիվ բույսերը իրենց ծաղիկների սպիտակ ու նարնջագույն աչիկներով ժպտալով արևին։ Հարուստ բերքով նազում էին ցորենի հասուն արտերը։ Բոլորը, բոլորը և՛ ծառ, և՛ թուփ, և՛ ծփացող ցորենի արտերը հարազատ էին, այնքան գերող, որ նա չնկատեց, թե երբ գնացքը մտավ քաղաքի արվարձանը, ուր լիաթոք ծխում էին գործարանների ծխնելույզները։

Փոխվել էր Վարդանը։ Լիքը դեմքի վրա ծիծեռնակի սուր թևերի նման փայլում էին բեղերը, քունքի մազերի մեջ երևում էին սպիտակ թելիկները, լայն կրծքի վրա շողշողում էր շքանշանների շարքը։

Շոդեկառքը սուլեց,— գնացքը կանգ առավ առաջին դծի վրա։

— Վարդանը,— վագոնի բաց դռնակի հարթակի վրա տեսնելով նրան, կանչեց Տիգրանուհին։

Բազմությունը շարժվեց վագոնների կողմը։

— Պառավս, դու մեր իրերին նայիր, ես վազեցի փեսիս մոտ, կասես եկավ,— ասաց ուստա Աբգարն ու չսպասելով կնոջ պատասխանին, բադի նման օրորվելով, մարդկանց հրելով առաջ վազեց։

— Տո, մի թողեք է,— Հռիփսիմեի թևից քաշելով կանչեց նա,— դուք տանն էլ կպագվեք, հերթը իմս է...

Եվ ընդհանուր ծիծաղի տակ ուստան իր գրկի մեջ առավ Վարդանին։

— Վայ, լուս դառնա հորդ դերեզմանը տղա, վայ քու արևին մեռնեմ,— կանչում էր նա աչքերից թափելով արցունքները։

Շրջապատված բարեկամներով՝ Վարդանը դուրս եկավ կայարանից։

— Գնում ենք իմ մեքենայով,— ասաց Վահան Նիկիտիչը, մտնելով նրա թևը։

Վարդանը կանգ առավ։

— Ինչո՞ւ կանգնեցիր,—հարցրեց Վահան Նիկիտիչը,— աներդ էլ կգա մեզ հետ, մի վախենա,—և իր զննող հայացքով փնտրեց ու գտավ ուստա Աբգարին—գնանք, ուստա Աբգար, ուրախանալ է պետք։

Մեկը մյուսի ետևից սլացան մեքենաները։ Վարդանը հայացքը չէր կտրում փողոցներից։

— Հոյակապ արձան է,— մեծ հրապարակից անցնելու ժամանակ ասաց Վարդանը, ցույց տալով Լենինի արձանը։

— Նոր ու հոյակապ կդառնա մեր քաղաքը,— պատասխանեց Վահան Նիկիտիչը։

Տուն հասնելով առաջինը մեքենայից իջավ Հռիփսիմեն։

Արևհատը Վարդանին դիմավորեց ինչպես հարազատ եղբորը։

— Եվ դու ինձ չես մոռացել,—սեղմելով իր նախկին քարտուղարուհու ձեռքը ասաց Վարդանը,— բոլորիդ էլ ողջ և առողջ եմ տեսնում։ Շատ ուրախ եմ։

Հյուրերը դուրս ելան պատշգամբ։

— Վարդան Սարիբեկովիչ, երկու օրից հետո կրկին գալու եմ ձեզ մոտ և այս սքանչելի, կանաչ վրանի տակ խաղալու ենք նարդի,— հիշելով իր խոսքը, ասաց Վահան Նիկիտիչը։ Հավատացեք, տանողը ես եմ լինելու։ Ձեք հավատում։ Կտեսնեք։

— Ձեք մոռանա և ինձ,— ասաց Տիգրան Սիմոնիչը։

Ուրախ ժպիտը դեմքին ամուսնուն մոտեցավ Հռիփսիմեն։

— Վաղուց է, ինչ երեսովդ չես տվել Երևանի ջուրը, այժմ լվացարանը քեզ է սպասում։

Վարդանը ծիծաղելով հետևեց կնոջը։

Հյուրերն ուրախ զրույցով էին զբաղված, մինչդեռ ուստա Աբգարը անհանգստանում էր։ Այլևս չկարողանալով իրեն զսպել, գրպանը դնելով համրիչը, բարձր ձայնով դիմեց աղջկան.

— Հռիփսիկս, ախր մի սեղան բաց արա։ Ուրախանալ է պետք։

Հռիփսիմեն կարծես դրան էր սպասում, լայն ժպտաց։ Մոտենալով մեծ սենյակի դռանը, ետ քաշեց վարագույրները, գրպանից հանելով բանալին բաց արեց դուռը, դիմեց հորը, ապա հյուրերին.

— Հայրիկ ջան, սեղանը դեռ վաղ առավոտվանից է պատրաստ,— խնդրեմ, համեցեք։

Հյուրերը Վահան Նիկիտիչի գլխավորությամբ ներս մտան շքեղորեն զարդարված մեծ սենյակը և բոլորի հայացքները կարծես մի զորավոր ուժով գամվեցին հանդիպակաց պատին։ Նրանց դեմ բազմերանգ գույների ներդաշնակ խաղով փայլում էր մի նոր գորգ։ Նրբակերտ գորգի վրա Առաջնորդի նկարն էր գործված, իսկ գորգի եզրերին վարդեր, ցողաթաթախ վարդեր էին գործված և որպես մանկան պայծառ աչքեր՝ բոլորին ժպտում էին «Բարի գալուստ իմ սիրեցյալին» բառերը։

— Յա՜, էս երազ է,— ընդհանուր և հանդիսավոր լռության մեջ հնչեց Աբգարի ձայնը։

Հանկարծ սենյակը թնդաց ծափերից, մարդիկ բարձրացրին բաժակները, լսվեցին ուժեղ բացագանչություններ։

— Սիրո և գեղեցկության կենացը։

— Հաղթողների կենացը։

— Սիրո ուժի կենացը,— արտասվաթոր աչքերը սրբելով գոչեց ուստա Աբգարը։

Եվ խնդությունը ծայր առավ Ոսկանյանների հարկի տակ։

1946—47 թ.

Արտաշատ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Նովելներ

1. Երեքը 5
2. Վիլլի 27
3. Լեոնցին 39
4. Զինվորի նամակը 49
5. Քանհինգ տարեկանը 55
6. Փարոսավարը 60
7. Իմ ընկեր Սուրենը 63
8. Անակնկալ հանդիպում 70
9. Առաջին անձրևը 86
10. Կարմրածաղիկ դեղձենին 91

II. Վիպասքներ

1. Ձկնորանները 98
2. Սիրո ուժը 131

Պատ. խմբագիր՝ Վ. ՊԱՐՏԻԶՈՒՆԻ
Տեխ. խմբագիր՝ Ս. ԼԱԹՈՅԱՆ
Սոնտրոլ սրբագրիչ՝ Ե. ՊՏՈՒՂՅԱՆ

ՎՖ 01215 պատվեր 548, տիրաժ 4000, տպագրական 14 մամ.։
Հանձնված է արտադրության 22/X148 թ. Ստորագրված է տպագր.

ՀՍՍՌ Մինիստրների սովետին կից Պոլիգրաֆ և Հրատ. Վարչության
I տպարան, Երևան, Լենինի փող. № 65. Երևան

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
49	7 վ.	Նա փնթփնթում էր	Սահերյանը փնթփնթում էր
62	4 ն.	Նրանց աստղակիր	Իրենց աստղակիր
82	3 վ.	Եղբորը	Եղբոր

Նովելները և վրիպակները

Վ.

Հան

ՀՍՍՌ Մինիստրների սովետին կից Պոլիգրաֆ և Հրատ. Վարչության
Լ տպարան, Երևան, Լենինի փող. № 65, Երևան





ԳԻՆԸ 8 Վ.
ԿԱՌՄԸ 2 Ռ.